



NAÏRI



2003



نایری



ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՈՆԵՆՔ  
ՀԱՅ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԽՐԵԱԼՆԵՐՈՒՆ

ՅՈՎՃԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(ԿՐԵԺ ՈՂԻՔԵՆԵԱՆ)

## ՈՈՒԹԵՆ ՍԵՒԱԿԻ ԲԱՑԱՌԻԿ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆԸ

ՈՈՒԹԵՆ ՍԵՒԱԿԻ 1902-1905 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ, ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱԾԱԿԵՐՏՈՒԹԵԱՆ ԾՐՋԱՆԻՆ ԳՐԱԾ  
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՒ ՈՒԽՈՒՆՆԱՏԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, «ԶԱՅՆԵՐ» ՀՈՐԱԳՐՈՎ ՏԵՏՐԱԿԻ ՄԸ ՄԵԶ ԿԱՄՓՈՓԵ...  
...ԵՒ ԱՅՍ ՏԵՏՐԱԿԻՆ ԱՌԱՋԻՆ ԷԶԻՆ ՎՐԱՅ ՀԵՏԵՒԵԱԼ ՏՈՂԵՐԸ Կ'ԱՐՁԱՆԱԳՐԵ.

### Խ Օ Ս Ք Ս Ը

«ԶԱՅՆԵՐ»Ը ՓՈՋՐԻԿ ՄԵԿ ՀԱԿԱՑՈՑՆ Է ԱՐՁԱԿ ԵՒ ՈՏԱՆԱԴՈՐ ԱՅՆ ՄԻ ՑԱԽԻ ՓՈՐՁԵՐՈՒՆ ԶՈՐՍ ԱՐՏԱԴՐԱԾ ԵՄ ԱԾԱԿԵՐՏ  
ԾՐՋԱՆԻՆ: ԳՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԹՈԹՈՎՈՒՄՆԵՐ ԵՆ ԱՍՈՆՔ. ԶՈՒԴՐԿ ՈՐԵՐԵ ԱՐԺԱՆԻՉՔ... ԹԵՐԵՒՆ ՍԱԿԱՅՆ. ՓԵՏՈՒԻՆ ՕՐ ՄԸ...  
1905 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1 ՈՈՒԹԵՆ 8. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

**ՀԱՅԱԿԻ**

ՔԵՐԱԿՈՒՆԻԱՆ ԵՎ ՀԱՅԱԿՈՒՆԻԱՆ ՎՐԱՅԲՐՅԱՆ

Տիգրան Զաքարյան

1902 - 3905

Խոհեմարդ Հայության պատճեն

— իսով յը —

Հայութը կայիլ ով եղանակու գոյաց և առաջա  
ուր ով բարձր զարդ աշխատանք ու աշխատանք  
գալիք. ուստի երկար ու առաջ լցու ով աշխատանք  
պահ, ասից աշխատանք ու ով ...  
1905 ԲԵՐԵՒՄ, 1 Տիգրան Զաքարյան

Տ. Զ. Զ.

Այս ի՞նչ անհաւատալի նախատեսութիւն էր:

Որովհետեւ, 84 տարիներ յետոյ՝ 1989-ին, հեռաւոր Գանատայի Թորոնթօ քաղաքին մէջ, փնտռեցինք և գտանք Ռուբէն Սեւակի այս անտիպ բանաստեղծութիւններու և ուսումնասիրութիւններու երկու տետրակները և ամփոփեցինք զանոնք Նիսի Ռ. Սեւակի Ցիշատակի Տան մէջ:

Հրաշքի նման դիպուածները, և եթէ կ'ուզէք ըսենք՝ անհաւատալի դիպուածները, երբեմն կեանքի ընթացքը կը փոխեն:

1986-թ. ներուն էր: Նիսի մէջ, մեզի դրացի նախկին Պոլսեցի տիկին մը և իր ամուսինը, Թորոնթօ այցելութեան կ'երթան, իրենց մէկ ազգականին՝ նկարիչ Եհվապաշեանին: Եւ անոնց տան մէջ կը ծանօթանան, կրկին նախկին Պոլսեցի Սեղա և Պետրոս Զօպեաններուն:

Մեր դրացի տիկինը բաւական խօսուն կին մըն էր: Ան, Զօպեաններուն կը պատմէ, Նիսի հայկական կեանքէն դրուագներ. և նաեւ կ'ըսէ, թէ «Նիսի մէջ, անցեալ տարի, Դանիէլ Վարուժանի յիշատակին հանդէս մը կազմակերպեցինք: Հոկտեմբեր 1985-ին ալ՝ Ռուբէն Սեւակի ծննդեան 100-ամեակը տօնեցինք մեծ հանդիսութեամբ»:

Երբ Ռուբէն Սեւակի մասին խօսք կ'անցնի, Տիկ. Սեղա Զօպեան, որ Պոլսահայ ծանօթ հրապարակագիր և «Մարմարա» թերթի հիմնադիր- խմբագրապետ Սուրէն Շամլեանին դուստրն է, մեր դրացի տիկնոց կ'ըսէ, թէ՝ «Մենք, Ռուբէն Սեւակի անտիպ ձեռագիր բանաստեղծութիւններու տետրակները ունինք: Այս ձեռագիրները 1939-ին, Պոլսոյ մէջ, հայրս՝ Սուրէն Շամլեան գնած է Ռուբէն Սեւակի ԵՂԲՕՐ-ՌՐԴԻՒԾ»:

Մեր դրացի տիկինը, այս խօսքերուն վրայ, կ'այլայլի և «Անկարելի է Տիկին Զօպեան» կ'ըսէ, աւելցնելով. «Ռուբէն Սեւակի եղբօրորդին մեր դրացին է Նիսի մէջ, և ան, ո'չ թէ Ռուբէն Սեւակի ձեռագիրները կը ծախսէ, այլ, ընդհակառակը, Ռուբէն Սեւակի մասին ինչ որ կայ, կը հաւաքէ: Եւ Նիսի մէջ, Ռուբէն Սեւակի յիշատակին Տուն-Թանգարան մը մէջտեղ բերած է»:

«Նայեցէք, կ'ըսէ Տիկ. Զօպեան, ես վաղը, Ռուբէն Սեւակի ձեռագիրներէն քանի մը էջ պատճենահանեմ և ձեզի տամ: Եւ զանոնք ցոյց տուէք ձեր դրացին եղող Ռուբէն Սեւակի եղբօրորդիին»:

\* \*

Թորոնթոյէն վերադառնալէ յետոյ, մեր դրացի տիկինը, շատ սրտնեղ հոգեվիճակով մը մեզի պատմեց Թորոնթոյի մէջ, Տիկ. Սեղա Զօպեանին ըսածները, և տուաւ պատճենա-

հանուած երկու էջ, Ռուբէն Սեւակի ձեռագիրներէն:

Ապշուրեամբ և յուզումով նայեցանք պատճեններուն: Այո՛, այո՛. Ռուբէն Սեւակի ձեռագիրներն էին: Ռուբէն Սեւակի «Զայներ» խորագրով քերթուածներու և ուսումնասիրութիւններու անտիպ տետրակին առաջին էջերուն պատճեններն էին:

Եւ առաջին էջին վերի կողմը, շատ յստակ ձեւով, հետեւեալ արձանագրութիւնը կար՝ «ԱՅՍ ՏԵՏՐԱԿԸ ԳՆԱԾ ԵՄ Ո. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ԵՂԲՈՐՈՐԴԻԵՆ»

11-1-1939-ԻՆ «ԺԱՄԱՆԱԿ»Ի ԽՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ

ՍՈՒՐԵՆ ԾԱՍԼԵԱՆ»

Արա Պետրոսյան Խաչ Խ Թ. Շտեֆանով Խմբագրատ  
11-1-1939 Կ. «Խամարդ և բժանքաբան  
Սուրեն Ծասլեան»

Զիս մը հանդարտելէ և ամփոփուելէ յետոյ. մեր դրացի տիկնոց հետեւեալ բացատրութիւնը տալու ջանացինք.

«Նայեցէք, Տիկին, դուք շատ իրաւունք ունիք նեղուելու Տիկին Սեղա Զօպեանին ըսածներէն կարծելով. որ Ռուբէն Սեւակի ձեռագիրները իրենց հօրը ծախող «Եղբօրորդին». որուն կ'ակնարկուի, մենք ենք:

Որովհետեւ դուք չեիք գիտեր, թէ Ռուբէն Սեւակ ուրիշ եղբայր և ուրիշ եղբօրորդի մը ուներ:

Իրապէս ալ, Սուրեն Ծամլեան՝ Ռուբէն Սեւակին անտիպ ձեռագիրներու տետրակները Ռուբէն Սեւակի եղբօրորդիէն գնած է: Բայց, այստեղ մատնանշուած եղբօրորդին. մենք չենք, այլ՝ Ռուբէն Սեւակի մեծ եղբօրը՝ թերովք Զիլինկիրեանին միակ զաւակը եղող ԱՐԱՄ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ է:

Որովհետեւ, Ռուբէն Սեւակի նահատակութենէն յետոյ. անոր Պոլսոյ տան մէջ ինչ որ մնացած էր. իր եղբայրը՝ թերովք Զիլինկիրեանը զանոնք փրկած էր կորուստէ և փոխադրած, բոլորն ալ, բանկալթիի իր բնակարանը»:

\*\*

Այստեղ ստիպուած կ'ըլլանք, թերովք Զիլինկիրեանի ընտանիքին վերաբերեալ կարգ մը անձնական խնդիրներուն և ասոնց ներքին ծալքերուն մասին [ակամայ և ցաւով] տեղեկութիւններ տալ, որպէս պատմական ճշմարտութիւն:

Որովհետեւ թերովք Զիլինկիրեանի մանչ զաւակը եղող Արամ Զիլինկիրեանին անունը՝ շատ մօտէն կապուած է Ռուբէն Սեւակի ձեռագիրներուն և արխիլին հետ: Եւ որովհետեւ Արամ Զիլինկիրեանը՝ Զիլինկիրեան ընտանիքին



► «Անառակ Որդին» եղած է:

Ռուբեն Սեւակի 26 օգոստոս 1915-ին, Զանովը-ի մէջ նահատակուելէն յետոյ, իր Գերմանացի տիկինը՝ ժաննի Սեւակ, Պոլսոյ-Գերմանական դեսպանատունէն իր ամուսին սպաննուելուն լուրը կ'առնէ և, խելագարուած հոգեվիճակով մը, ամէն բան, իր տան մէջ, եղածին պէս կը ծգէ և, իր մօր և երկու զաւակներուն հետ, Պոլսէն շոգեկառքով Զուիցերիա կը մեկնի:

Եւ Ռուբեն Սեւակի ընտանիքին Պոլսոյ Բանկաթը թաղամասի Նալպանտ փողոցը գտնուող բնակարանը, երկար ատեն անտէր կը մնայ:

Այդ պատերազմի տարիներուն, Զիլինկիրեան ընտանիքը՝ Պոլսոյ մէջ բնակող մէկը չկար: Զիլինկիրեան ընտանիքը՝ բոլորն ալ, Պոլսէն 70 քլմ. դէպի արեւմուտք, Թրակիոյ մէջ գտնուող Սիլիվրի գիւղաքաղաքը կը բնակէին: Եւ քանի որ, պատերազմի տարիներուն, ճամբաները փակ էին, ոչ մէկը կրնար Պոլիս երթալ:

Միջոց մը ետք, Ռուբեն Սեւակի մեծ եղբայրը եղող քերովբէ Զիլինկիրեանը, կը յաջողի, իր ընտանիքով, Սիլիվրիէն Պոլիս երթալ: Եւ Բանկաթը թաղամասը՝ Օհանեաններուն պատկանող շենքին մէջ, յարկաբաժին մը կը վարձէ և ընտանեօք հոն կը հաստատուին:

Եւ իբր Ռուբեն Սեւակի եղբայրը, իր բնակարանէն շատ հեռու չգտնուող Ռ. Սեւակին անտէր տունին մէջ ինչ որ մնացած է, կը հաւաքէ և իր տունը կը փոխադրէ:

Այս ձեւով կը փրկուին նաեւ, Ռուբեն Սեւակի արխիւն մաս մը և ձեռագիր գրութիւններ:

\*\*

Քերովբէ Զիլինկիրեան ամուսնացած էր Սիլիվրի-ի մէջ, Զապէլ անունով հայ կնոջ մը հետ՝ գեղեցկադէմ, բայց նիհարակազմ և հիւանդկախ: Եւ Զապէլին ծննդաբերած բոլոր զաւակները, ծնելնէն քիչ յետոյ, կը մեռնէին:

Եւ վերջապէս տարիներ յետոյ՝ 1910-ին ծնած մանչ զաւակ մը չի մահանար, կ'ապրի: Այս զաւակը Արամ Չիլինկիրեանն է: Ընտանիքին միակ զաւակը: Հայրը և մայրը կը գուրգուրան Արամին վրայ և զինք կը շփացնեն: Մանաւանդ՝ մայրը: Չէ՞ որ, իր միակ վերապրող զաւակն է Արամ:

Պատերազմը 1918-ին կ'աւարտի: Եւ Արամ, արդէն 8 տարեկան, գեղեցկադէմ մանչ մըն է: Բայց շատ, շատ անառակ: Հրեշտականման դէմք մը ունի, բայց՝ չար հոգի մը:

Մայրը, իր հօրմէն կը պահէ Արամին կատարած չար արարքները, որովհետեւ հայրը շատ խիստ կը պատժէր: Եւ Զապէլին սիրտը չէր դիմանար Արամին թափած արցունքներուն....:

Թերեւս ալ, Զապէլին այս շատ փափուկ մայրական սիրտը, յանցանքի բաժին մը ունի: Արամին չարութիւնները հօրմէն պահելով, զինք աւելի ազատ ձգեց իր արարքներուն մէջ:

Մինչ այդ՝ 1922-ին, քեմալական ուժերը Մարմարա ծովուն շուրջ կը հասնին: Եւ Սիլիվրի-ի քրիստոնեայ ժողովուրդը կ'սկսի փախչիլ: Մէկ մասը՝ դէպի Յունաստան և Պուլկարիա, իսկ միւս մասն ալ, աւելի ապահով կարծելով՝ դէպի Պոլիս: Նոյնպէս՝ Չիլինկիրեաններու ընտանիքն ալ, Սիլիվրի-էն խոյս տալով, Պոլիս կ'երթայ:

Սեւակին քոյրը՝ Էֆթիկ, իր զաւակներուն և ամուսին՝ ՕԳԾիկ Յակորովիչին հետ Պոլիս, Օսմանպէյի մէջ, յարկաբաժին մը կը վարձեն:

Եւ այս ձեւով Արամ, Պոլիս հաստատուող ազգականներուն գուրգուրանքը կը վայելէ:

Մանաւանդ՝ իր հօրաքրոջ մեծ աղջիկը՝ Ատրինէ Յակորովիչ, շատ կը հետաքրքրուի Արամով:

Ատրինէն, իբր զարգացած և մտաւրական օրիորդ մը, հոգեբոյժի մը պէս կը զբաղի Արամով յուսալից, որ պիտի յղկէ և բարեփոխէ Արամին նկարագիրը:

Երբ Արամ, չար արարք մը կը գործէ, Ատրինէ իր քով կը կանչէ Արամը, կը խրատէ զինք հանդարտութեամբ, անուշ լեզուով կը խօսի անոր հետ և կը հասկցնէ, թէ ըրածը գէշ բան մըն է:

Արամ ներողութիւն կը խնդրէ, և արտասուելով կը խոստանայ, որ անգամ մըն ալ նոյն ընթացքը պիտի չունենայ:

Բայց, Ատրինէ ապշութեամբ կը տեսնէ, որ Արամ, նոյն յանցանքը, քանի մը ժամ յետոյ, կրկնած է:

Ատրինէ, վերջին յոյսով մը, Արամը հոգեբոյժ բժիշկի մը կը

տանի: Եւ բժիշկը, Արամը քննելէ յետոյ, իր ախտաճանազումը կը յայտնէ Ատրինէին՝ «Այս տղան հոգեկան հիւանդ մընէ: Չի՞ բուժուիր»:

\*\*

Արամ 1928-ին, 18 տարեկան երիտասարդ մըն է և Բանկալթը-ի Մխիթարեաններուն վարժարանը կը յաճախէ:

Այդ օրերու Մխիթարեան վարժարանի ուսուցիչներէն՝ Հայր Գրիգորիս Սանեան, Ատրինէ Թակոբովիչը դպրոց կը կանչէ և անոր կ'ըսէ, թէ՝ «Բանկալթը-ի Մխիթարեան վարժարանի աշակերտներուն ծեռքը, Ռուբէն Սեւակի 1908-թ. ներուն Լոգանէն Գերմանիա՝ իր ապագայ կնոջ՝ Ժանիին գրած բացիկները տեսանք»:

Աշակերտները ըսին, թէ այս բացիկները իրենց ծախած է Արամ Չիլինկիրեանը: Կը խնդրենք՝ արգելք եղէք»:

Ինչպէս արգելք կրնային ըլլալ այս psychopathetic-ին. այս հոգեկան հիւանդին:

Միջոց մը ետք, այս «գլխէն հիւանդ» Արամը. իրենց տունէն ապրանքներ դուրս կը հանէ և կը ծախէ: Նոյնիսկ, իր մօր կարի մեքենան ալ, օր մը կը վաճառէ:

Մայրը շատ կը ցաւի իր տղուն այս Վիճակները տեսնելով: Արդէն տկարակազմ է և թոքատապէ կը տառապի: Եւ տարի մը յետոյ, երիտասարդ տարիքին կը մահանայ:

Արամ, այդ տարիներուն, 25 տարեկան է, և ոչ մէկ դպրոց աւարտած:

Քանի մը տարի Robert College գացած է միայն. և ոչ մէկ վկայական ունի:

Բայց, իբր թէ Ռոպէրթ Գոլենէն շրջանաւարտ ճարտարագէտ՝ իր անունով այցետոմսեր տպել կու տայ: Եւ ինքզինք ճարտարագէտ ներկայացնելով՝ անօրէն շատ գործեր կը կատարէ: Եւ յետոյ՝ կ'սկսի իր հօրը ստորագրութիւնը կեղծել և անոր անունով դրամներ գանձել: Եւ. ի վերջոյ, կը ձեռնարկէ ուրիշ խարդախութեան մը՝ հօրը անունով մուլհակներ կ'ստորագրէ:

Արամին այս կեղծարարութիւնները, քանի մը տարի ետք. իր հօր սնանկանալուն պատճառ կ'ըլլան: Եւ 1946-ին. այս ցատվ, հայրն ալ կը մահանայ:

Արամին մասին մեր գիտցած վերջին «սխրագործութիւնը» հետեւեալն է.— Շիշլի-ի հայկական գերեզմանատան մէջ գտնուող իր մօր և հօր գերեզմաններն ալ կը ծախէ:

\*\*

Արամ Զիլինկիրեան՝ մեր ընտանիքին «Անառակ Որդի»ն էր:

Եւ Զիլինկիրեան ընտանիքը, երբ տեղեակ եղաւ Արամին կեղծարարութիւններուն՝ անոր հետ իր բոլոր կապերը խզեց: Մեր ընտանիքի անդամներէն ոչ մէկը Արամին հետ կը տեսնուէր: Չետով մը ան, մեր կողմէ. նզովուած էր: Արամն ալ արդէն, երես չունէր մեզի մօտենալու: Բայց տեղեկացանք. թէ երբեմն կը խօսի եղեր իր հօրաքրոջ աղջիկը եղող քրիստին Սալերի-ին հետ: Նկատելով, որ քրիստին Սալերին. Արամին հետ, մանկութեան տարիներուն. շատ մօտ ընկեր-ընկերուհիներ եղած էին:

Քրիստին Սալերին օր մը կը հարցնէ Արամին.

«Ըսէ, Արամ, դուն բնաւ խիղճ չունի՞ս: Ինչպէ՞ս կրցար ծախել հօրդ և մօրդ գերեզմանները»:

Եւ Արամ, սա անխիղճ պատասխանը կու տայ. — «ԶԳԵՇՆՉ ՀԻՄԱ ՄԵՌԵԼՆԵՐԸ: ՈՂՋԵՐՈՒԽ ՆԱՅԻՆՉ»:

\*\*

Մենք, Ռուբէն Սեւակէն մնացած մասունքները հաւաքել սկսանք Պոլսոյ մէջ, 1945-ին:

Եւ միայն այդ տարիներուն տեղեակ եղանք, որ Արամ Զիլինկիրեան, իրենց տան մէջ գտնուող Ռուբէն Սեւակի ձեռագիրներուն մեծ մասը ծախած է Պոլսոյ ծանօթ մտաւորական-ներէն Թորոս Ազատեանին:

Թ. Ազատեան կը կտակէ իր կնոջ, որ յետ մահու. իր ունեցած բոլոր ձեռագիրները, Հայաստան ուղարկուին:

Եւ 1955-ին, Թորոս Ազատեանի Պոլսոյ մէջ մահանալէն յետոյ, իր ազնիւ տիկինը ամուսնին կտակը կը կատարէ. և բոլոր ձեռագիրները Երեւանի Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան և Արուեստի թանգարանը կ'ուղարկէ:

Մինչեւ 1986, մենք տեղեակ չենք, որ Ռուբէն Սեւակի ուսանողութեան տարիներուն գրած բանաստեղծութիւններու և ուսումնասիրութիւններու երկու տետրակներ գոյութիւն



## ▶▶ ունեցած են:

Երբ, հրաշալի դիպուածով մը տեղեկացանք, որ Թորոնթոյի Զօպեան ընտանիքին քով Ռուբէն Սեւակի երկու անտիպ ձեռագիր տետրակները կը գտնուին, անմիջապէս Պետրոս Զօպեանին հետ հաղորդակցութեան մտանք՝ այս երկու տետրակները Ռուբէն Սեւակի Ցիշատակի Տան մէջ ամփոփելու համար:

Երկար թղթակցութիւններէ ու հեռաճայնային խօսակցութիւններէ յետոյ, Վերջապէս, Պրճ. Պետրոս Զօպեանին հետ համաճայնութեան մը յանգեցանք:

Եւ 14 Դեկտեմբեր 1989-ին, Ժընեվէն օդանաւ նստելով մեկնեցանք դէպի Ամերիկա: Հակառակ, որ երդում ըրած էինք, ամերիկեան հող ոտք չդնել: Որովհետեւ համոզուած էինք [եւ մինչեւ հիմա ալ կը հաւատանք], որ ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ թօնսասր եւ թուրքիութ բարեկաս ու ԶԻՆԱԿԻԾ ԵՐԿԻՐ ՄԸՆ է:

Բայց, Ռուբէն Սեւակի ձեռագիրները առնելու սիրոյց՝ մեր երդումը դրժեցինք և գացինք Ամերիկա, յետոյ՝ Թորոնթօ և Վերջապէս՝ Զօպեաններուն բնակարանը հասանք:

Տէր և Տիկին Սեղա և Պետրոս Զօպեան Մեզ շատ սիրալիր ընդունեցին: Մենք ալ իրենց շնորհակալութիւն յայտնեցինք, որ ճիշդ 50 տարիներու լետողութեամբ, Սուրբ Շամլեան և Պետրոս Զօպեան ընտանիքները մեծ գուրգուրանքով պահպանած էին Ռուբէն Սեւակին երկու ձեռագիր տետրակները:

Եւ Պետրոս Զօպեանի հետ համաձայնագիր մը ստորագրեցինք:

Ըստ այս համաձայնագրին՝ Պրն. Զօպեան մեզի յանձնեց Ռուբէն Սեւակի երկու ձեռագիր տետրակները:

Եւ նաեւ, դարձեալ ըստ այս պայմանագրութեան, Պրն. Պ. Զօպեան, Ռուբէն Սեւակի ձեռագիր երկու տետրակներէն հինգ հարազատ օրինակներ պատրաստած էր: Այս օրինակներուն Ա.ը մնաց Պրն. Պետրոս Զօպեանի գրադարանին մէջ, Բ.ը ուղարկուեցաւ Երեւան՝ Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան և Արուեստի թանգարանին, Գ.ը ուղարկուեցաւ Անթիլիասի Կաթողիկոսութեան մատենադարանը, Դ.ն և Ե.ն ալ յանձնուեցան մեզի:

Պրն. Պետրոս Զօպեան, 2 Յունիս 1990-թ.ին, Պոլսոյ «Մարմարա» օրաթերթին մէջ շատ հետաքրքրական գրութիւն մը հրատարակեց, որուն մէջ ան, Ռուբէն Սեւակի երկու ձեռագիր տետրակներուն հարազատ պատմութիւնը կու տար: Մէջբերենք զայն:

## ՊԵՏՐՈՍ ԶՕՊԵԱՆ

### ՌՈՒԲԷՆ ՍԵՎԱԿԻ ՏԵՏՐԱԿՆԵՐԸ ՑԱՆՑՑՑ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Օգտուելով Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոս Ն.Ս.-Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի Թորոնթո ներկայութենէն, ուզեցինք Հանդիպում մը ունենալ Նորին Վեհափառութեան հետ:

Իրենց Թորոնթո այցելութեան առաջին իսկ օրէն, սկսած էինք մեր դիմումներուն որպէսզի կարենայինք գոնէ կէս ժամուան տեսակցութիւն մը ապահովել Վեհափառին հետ: Ինձի ապահովութիւն տուեր էին, որ եկեղեցին օծումէն յետոյ, Վեհափառը 3-4 օր եւս պիտի մնար Թորոնթո. Հետեւաբար կարելի պիտի ըլլար կարգադրել մեր Հանդիպումը: Օրեր սահեր-անցեր էին: Երեքշաբթի օրն ալ երեկոյին էր Հասած, բայց տակաւին անկարելի եղած էր կապ Հաստատել Վեհափառին հետ: Օրուան ժամերուն պանդոկը չէր Ան, իսկ ես, մինչեւ այդ օրը, չէի ուզած անհանգիստ ընել **»»**

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԵՐՈՒՆ [ԻԲԲ ԹԷ] ԶԳԻՏՑԱՇ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ԱՄԵՐԻԿԱՆ ԻՆՉՈ՞Ի ԱՑՍՔԱՆ ՃՆՇՈՒՄ ԿԸ ԲԱՆԵՑՆԵ  
ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ,

ՈՐ ԱՆՊՆՔ ԹՈՒՐԵՐԻԱՆ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԷԶ ԱՌՆԵՆ:  
ԿԱՍԿԱՇ ԶԿԱՅ, ԹԷ ԹՈՒՐԵՐՈՒՆ ՍԵՒ ԱՉՔԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՉԷ:

Որովհետեւ Ամերիկան, 500 միլիոննոց Եւրոպական միութենէն վախնալ սկսած է՝ Ամերիկային մրցակից պիտի ըլլան ըսելով:

Ամերիկան 1991-ին՝ Սովետական Միութիւնը, համայնավարութեան պատրուակով կործանեց:

Եւրոպական միութեան համար այս տեսակ պատրուակ մը չի կրնար գործածել :

Ամերիկային նպատակը՝ Թուրքերը Եւրոպական միութեան մէջ մտցնելով, անոնց Troie-ի Ձի-ին դերը կատարել տալ է, որ Եւրոպան ներսէն փլցնեն:

Թուրք ղեկավարները՝ Ճէնկիզ Խանին, Թամբրլանդին և արիւնարրու Օսմաննան Սովորաններուն շառաւիլներն են:

Ամերիկան շատ լաւ գիտէ, թէ՝ Թուրքերը, Եւրոպական Միութեան մէջ մտնելէ յետոյ, բար-բարի վրայ չեն ծգեր:

Այդ պատճառաւ է, որ Ամերիկան, ժամ առաջ, Թուրքերուն Եւրոպական միութեան մէջ մտցնելը կ'ուզէ:

Մանաւանդ, ֆրանսայի Նախկին հանրապետութեան նախագահ՝ Վալերի Ժիսքար Տէսմէնին «Թուրքիան Եւրոպական միութեան մէջ չի կրնար մտնել» ըսելէն յետոյ, Ամերիկային «Փէշերը բոնկեցան»:

Ամերիկայի Պաշտպանութեան նախարարին առաջին օգնականը՝ Փոլ Վոլֆովից, Լուստոնի մէջ իր տուած յայտարարութեամբ, Եւրոպացիներուն հրաման արձակեր է՝

«Թուրքերը գրկարաց ընդունեցէք»:

Յետոյ, երկարօրէն թուրքերուն գովասանքները ըրեր է՝ Եւրոպացիներուն, և յետոյ Անգարա մեկներ է:

Գիտէք, որ Փետրուարը կը մօտենայ:

Իրաքի վրայ յարձակման թուականին շատ բան չմնաց:

Ան՝ Անգարայի մէջ, իրաքի գրաւման պատրաստութեան վերջին մանրամասնութիւններուն շուրջ տեսակցութիւններ պիտի ունենայ:

Լուստոնի մէջ, Թուրքերը այնքան գովելէ ետք, ասոնք, Անգարայի մէջ, Վոլֆովիցին բոլոր ըսաճները պիտի ընդունին:

Աշխարհն, ոչ մէկ ատեն, այս աստիճան «պոռովիկ» շրջան մը անցուցած է:

Կասկած չի վերցներ, որ բոլոր այս մաքիաւելական ծրագիրները պատրաստողները՝ մեծ դրամատէրերուն հիմնած անտեսանելի սարդուստայնի կազմակերպութիւններն են:

Այս սարդուստայնի կազմակերպութիւնները, աշխարհի ժողովուրդներուն արիւնը կը բամեն:

Տեսնենք, մինչեւ Ե՞րբ պիտի շարունակուի այս ողբերգութիւնը:

Եթէ Եւրոպացիները քիչ մը խելք ունին՝ իսկական Եւրոպացիներ եղող՝ Ռուսերուն կը միանան:

Եւ միայն այս ատեն է, որ իսկական Եւրոպական մեծ միութիւնը կը ծնի:

Եւ այս ատեն, կեղծ ազատութիւններու պետութեան՝ Ամերիկայի մենատիրութեան վերջը կու գայ:

**TURKLERIN (SÖZDE) BILMEDIKLERİ GERCEKLERİ AÇIKLIYORUZ  
AMERİKA NIÇİN TURKIYENİN, AVRUPA BIRLIGINE  
ALINMASI İÇİN, AVRUPA DEVLETLERINI BU KADAR  
ZORLUYOR?**

**HER HALDE TÜRKLERİN KARA GÖZLERİ İÇİN DEGİL  
ÇÜNKÜ AMERİKA 500 MİLYONLUK BİRLEŞİK AVRUPA DEVLETLERİNDEN  
KORKUYOR. AMERİKAYA RAKİP OLUCAKLAR DIYE.**

AMERİKA 1991-DE SOVYETLER BİRLİĞİNİ "KOMÜNİSTLIK" BAHANESİ  
ILE YIKTI. AVRUPA BİRLİĞİ İÇİN BÖYLE BİR BAHANE BULAMAZ.

ONUN İÇİN, TÜRKLERİ AVRUPA BİRLİĞİNE SOKARAK, ONLARA TRUVA  
ATI ROLÜNÜ OYNATMAK İSTİYOR.

AVRUPAYI İÇİNDEN YİKMAK İÇİN. TÜRK İDARECİLERİ. CENGİZ HANIN.  
TIMURLENKİN VE KAN İÇİCI OSMANLI PADİSAHLARININ AHFADIDIR.

TÜRKLERİN, AVRUPA BİRLİĞİNE GİRDİKTEN SONRA TAS ÜSTÜNDE TAS  
BIRAKMIYACAKLARINI, AMERİKA ÇOK İYİ BİLİYOR.

ONUN İÇİN, AMERİKA, TÜRKLERİN BİR AN EVVEL AVRUPA BİRLİĞİNE  
GİRMESİSİ İSTİYOR.

HELE, ESKI FRANSIZ CUMHURBAŞKANI VALERI JISKAR DESTEN-IN  
"TÜRKİYE AVRUPAYA GIREMEZ" DEMESİNDEN SONRA AMERİKANIN ETEK-  
LERİ TUTUSTU.

AMERİKAN SAVUNMA BAKANININ BAS YARDIMCISI POL VOLFOVITS  
LONDRA'DA VERDİĞI DEMEÇTE AVRUPA BİRLİĞİNE EMRETMİS. "TÜRKLERE  
KUCAGINIZI AÇIN", ONDAN SONRA DA UZUN UZUN TÜRKLERİN METHINI  
YAPMIS AVRUPALILARA. VE SONRA ANKARAYA UÇMUS. MALÜM YA SUBAT  
AYI YAKLASIYOR. IRAKA HÜCUM TARİHİNE ÇOK BİR SEY KALMADI.  
ANKARADA İRAKİ ISGAL PLANLARININ SON HAZIRLIKLERINI GÖRÜSECEK.  
LONDRA'DA TÜRKLERİ BU KADAR METHETTİKTEN SONRA. TABII Kİ  
TÜRKLER ANKARADA VOLFOVITS-IN HER DEDİĞİNİ KABUL EDİCEKLER.

DÜNYA HİÇ BİR ZAMAN, BU KADAR KAHPE BİR DEYİR GEÇİRMEMİSTİR.  
SÜPHE YOK Kİ, BÜTÜN BU MAKYAVELİK PLANLARI HAZIRLIYANLAR.  
AMERİKADAKİ PARA BABALARININ KURDUGU GORÜNMEZ ÖRÜMCEK AGİ  
TESKİLATLATLARIDIR.

BU ÖRÜMCEK AGİ TESKİLATLARI DÜNYA MILLETLERİNİN KANINI EMIYOR.  
BAKALIM NE ZAMANA KADAR.

EGER, AVRUPANIN AKLI VARSA, EN HAKIKİ AVRUPA MILLETİ OLAN RUS-  
LARLA BIRLESİR.

VE ANCAK O ZAMAN, HAKIKİ BÜYÜK AVRUPA BİRLİĞİ DOĞAR  
VE O ZAMAN, SAHTE HÜRRIYETLER DEVLETİ AMERİKANIN DIKTATOR-  
LÜĞÜNÜN SONU GELİR.

**3. Q.**

► Նորին Վեհափառութիւնը հեռաձայնելով օրուան ուշ կամ կանուխ ժամերուն:

Չորեքշարթին վերջին յոյսն էր ինծի Համար. գիտէի, որ Հինգշարթի այլեւս շատ ուշ պիտի ըլլար: Մէկ կողմ դնելով փափկանը՝ կատութեան օրէնքները, առաւօտուն հեռաձայնեցի պանդոկ: Այս անգամ բախտաւոր էի, երբ Վեհափառին յայտնեցի փափաքս, սկսաւ մտածել. այդ օրը պիտի Հանդիպէր Օնթարիոյ Վարչապետին՝ դարձեալ խճողուած օր մը: «Երեկոյեան ժամը 6:30-ին պանդոկ եղիր, կը տեսնուինք» ըսաւ Վեհափառը:

★ ★ ★

Որոշեալ ժամուն պանդոկն ենք արդէն: Վեհափառը սիրով կ'ընդունի մեզ, կը հետաքրքրուի մեր որպիսութեամբ: Գիտենք, որ սահմանափակ ժամանակը շատ սուղ է, հետեւարար կ'ուզենք անմիջապէս նիւթի մէջ մտնել:

Ն. Ս. Օծութեան կը յայտնենք, թէ մեր այս այցելութիւնը ունէր քանի մը նպատակներ: Նախ կ'ուզէինք մեր յարգանքը մատուցանել Նորին Վեհափառութեան, կ'ուզէինք նաեւ բարի վայելում մաղթել իրենց նորակերտ եկեղեցիի օծման առիթով և երրորդը՝ կ'ուզէինք անձնապէս Նորին Վեհափառութեան յանձնել Հարազատ օրինակները Ողբացեալ գրագէտ Ռ. Սեւակի ձեռագիր տետրակներուն, որոնք մեր գրադարանին մաս կը կազմէին աւելի քան քառասուն տարիներէ ի վեր:

«Մարմարա»ի Հիմնադիրը՝ Ս. Շամլեան, այդ տետրակները գնած էր Ռուբէն Սեւակի եղբօրորդի Արամ Զիլինկիրեանէն:

Վերջին տարիներուն բարեկամէ մը պատահմամբ իմացեր էինք, որ Նիսի մէջ կ'ապրէր Ռ. Սեւակի եղբօրորդի Յովհաննէս Զիլինկիրեան, որ Ռ. Սեւակի անուան թանգարանի մը մէջ հաւաքած էր ողբ. գրագէտի մասունքները:

Աւելի յետոյ, առիթ ունեցանք ծանօթանալու Պրն. Յովհաննէս Զիլինկիրեանի և 1989 Դեկտեմբերի 26-ին, հետեւեալ Համաձայնագրով իրենց յանձնեցինք ձեռագիր տետրակներու բնագիրները:

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

**Մեծանուն գրագէտ Ռուբէն Սեւակի երկու ձեռագիր տետրակները որոնք ողբ. Սուրէն Շամլեանի կողմէ 1939 թուականին գընւած էին Ռ. Սեւակի եղբօր որդի Արամ Զիլինկիրեանէն, յիսուն տարիներէ ի վեր խնամքով պահուած կը մնային մեր գրադարանին մէջ:**

**Ողբ. Գրագէտի երկերուն նուիրուած երկու Հրատարակութիւններ - մին Երեւանէն և միւսը Անթիլիասէն- կը մատնանշէին գրագէտի անյայտ մնացած երկու տետրակները: Երբ Համոզում գոյացուցինք, թէ ակնարկուած այդ տետրակները մեր քով գտնուող ձեռագիր տետրակներն էին, մտածեցինք որ Հայ գրականութեան Հաշւոյն շատ աւելի նպատակայարմար պիտի ըլլար, եթէ անոնք լոյս աշխարհ բերուէին և միանային Ռուբէն Սեւակի այն մասունքներուն, որոնք ի մի Հաւաքուած էին ողբ. գրագէտի ուրիշ մէկ եղբօր որդւոյն՝ Պրն. Յովհ. Զիլինկիրեանի ջանքերով, նիսի մէջ:**

**Այսօր, այս Համաձայնագրով, մենք Պրն. Զիլինկիրեանին յանձնեցինք վերոյիշեալ երկու ձեռագիր տետրակները, Թորոնթոյի մեր բնակարանին մէջ:**

**Պրն. Զիլինկիրեան Համաձայն գտնուեցաւ մեզի Հետ, որպէսզի այդ երկու տետրակներէն առնուած Հարազատ օրինակներ պատրաստուին մեր կողմէ և ուղարկուին Երեւանի ու Անթիլիասի մատենադարաններուն: Այդ նպատակաւ, մենք պատրաստեցինք երկու տետրակներէն Հինգական օրինակ, իւրաքանչիւրը թուագրուած 1-էն 5: Այդ օրինակներէն թիւ 1 թուագրուածը պիտի մնայ մեր մօտ, մեր գրադարանին մէջ: Թիւ 2 թուագրուած օրինակները պիտի ուղակուին Երեւան, Ե. Զարենցի անուան Գրականութեան և Արուեստի թանգարանին, թիւ 3 թուագրուածները պիտի ուղարկըւին Անթիլիասի մատենադարանին, իսկ թիւ 4 և թիւ 5 օրինակները պիտի տրամադրուին Պրն. Զիլինկիրեանին:**

**Այս Համաձայնագրը պատրաստուեցաւ և ստորագրուեցաւ 26 Դեկտ. 1989-ին Թորոնթոյի մէջ:**

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ**

**ՊԵՏՐՈՍ ԶՈՒԱՆ**

**Ինչպէս յիշուած է Համաձայնագրին մէջ՝ մենք պատրաստած էինք ձեռագիր երկու տետրակներու Հարազատ օրինակները, բայց մինչեւ այսօր չկարողացանք զանոնք Հայաստան կամ Անթիլիաս ուղարկել պարզապէս անոր Համար, որ չէինք կրցած վստահիլ փոսթին:**

**Հետեւաբար, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.ի Թորոնթօ այցելութիւնը բացառիկ առիթը կ'ընծայէր մեզի որպէսզի իրականացնենք մեր փափաքը:**

**Վեհափառ նախ աչքէ կ'անցընէ Համաձայնագրին պարունա-**

կութիւնը և կ'արտայայտէ իր գոհունակութիւնը, որով լոյս աշխարհ կը բերուէին Ռ. Սեւակի երկու տետրակները:

Մենք տակաւին կը սպասենք այն բարերաստիկ օրուան, երբ տետրակներուն միւս օրինակները պիտի երթան Հայաստան, իրենց տեղը գրաւելու համար, եղիշէ Զարենցի անուան Գրականութեան և Արուեստի Թանգարանին մէջ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Արամ Զիլինկիրեանին Պոլսոյ մէջ, Ռուբէն Սեւակի ձեռագիրներուն Թորոս Ազատեանին և Սուլրէն Շամլեանին ծախածթուականներէն (1939) ի վեր մինչեւ այսօր, 63 տարիներ անցած են: Եւ հիմա մենք, Արամ Զիլինկիրեանին կատարած արարքները, հոգեկան դատաստանէ մը անցընել կ'ուզենք: Երբեք չենք կրնար ներել Արամին, իր հօր և մօր կատարած չարիքները: Մանաւանդ՝ իր պատճառած հոգեկան տառապանքները իր բարի և հիւանդ մօր, որ իր տղուն սայթաքումները տեսնելով օրէ օր հիւծեցաւ:

Արամին կեանքի պատմութիւնը, իսկական սրտայոյգ թատրոնգութիւն մըն է, զանազան արարներէ բաղկացած:

Այստեղ ջանանք կեդրոնանալ, մեզի համար կարեւոր արարներէն մէկուն՝ Ռուբէն Սեւակի ձեռագիրներու վաճառքին ➤

## ԲԱՑ ՆԱՄԱԿ

**ՄԵԾ ՏԻՏՈՍՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ  
ՄԵԾԱՊԱՏԻՒ ՀԱՅ ԿՐՈՆԱԿԱՆՆԵՐ**

Բնաւ խղճի խայր՝ չունեցա՞ք՝ երբ տեսաք, ձեր քաջալերած, հայու անուն կրող Պոլսոյ թրքացած Պատրիարքին՝ եւրոպայի մէջ Թուրքերուն ի նպաստ կատարած աշխատանքները:

**“İÇİMİZDEKİ HAIN”**

[ՄԵՐ ՄԷԶ ԳՏՆՈՒՂ ԴԱՒԱԾԱՆԸ]

“HÜRRİYET” ՊՈԼԻ - 4 - 10-2000

**ԵՐԿՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ = ԵՐԿՈՒ ԴԱՒԱԾԱՆ  
ԱՌԱՋԻՆԸ ԱՌՈՒ ՎԱՐԴԱՊԵՏ ԵԽՈԽՈՒԹ ԱԳՊՈՒԼՈՒԹ.**

ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ-

**ԵՐԿՐՈՐԴ ՊՈԼՍՈՏ ՊԱՏՐԻԱՐԵ ՄԵԽՐՈԴ ՄՈՒԹԱՖԵԱՆ  
ՀԱՅԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ**

«ՆԱՅԻՐԻ»-1-10-2000

ՅՈՎՃԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

14018 ՈՐԻՔԵԼԵԱՆ



ՅԱԿԵՐԸ ԵՐԱՄՏԱԳՐՏՈՒԹԵՐՆ ԲԵՋԻ  
ԵՊՈՒՍՈՒ ՎԱՐԴԱՊԵՏ



ՏԱՐԻՏԵԱՆ ՆՁՈՎՔ ԲԵՋԻ  
ՊԱՏՐԻԱՐԵ Մ.ՄՈՒԹԱՖԵԱՆ

Բնաւ չմտածեցի՞ք վանք մը քաշուիլ և Ձեր մեղքերը քաւել՝ Թուրքերուն կամակատար այս Պատրիարքին հետ գործակցած ըլլալուուդ համար:

Բնաւ չմտածեցի՞ք հրաժարիլ՝ Թուրքերուն պատուերով շարժող այս պատրիարքին. Էջմիածինի դէմ տարած աշխատանքներուն ձեր մեղսակցութեան համար:

Ռուբէն Սեւակ ջատ իրաւունք ունէր. Երբ կըսէր՝

«Ղեկին զրուխը կը նստեցնենք մեր էն ախտազին. Էն այլասերած. էն անպէտ ծնունդները»:

Եւ մենք կը հաւատանք. որ այս ախտազին. այլասերած և անպէտ ծնունդներուն մաս կը կազմէք:

ՅՈՎՃԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ

►► Վրայ:

Կասկած չկայ,թէ Արամ, այս ձեռագիրները ծախած էր,  
դրամ ապահովելու նպատակով:

Ժողովրդական առածը կ'ըսէ. «ԲՈԼՈՐ ԶԱՐԻՔՆԵՐԵՆ,  
ԲԱՐԻՔ ՄԸ ԿԸ ԾՆԻ»

Արամ որո՞ւ ծախեց այս ձեռագիրները. Պոլսոյ ամենէն  
ծանօթ երկու մտաւորականներէն՝ Թորոս Ազատեանին և Սու-  
րէն Շամլեանին: Ինչպէ՞ս գտաւ Արամ այս անձնաւորութիւն-  
ները: Մանրամասնութիւնները մեզի ծանօթ չեն. բայց՝ գտաւ:  
Եւ անո՞նց ծախեց: Բայց, նոյն ատեն, ձեւով մը փրկեց այս  
ձեռագիրները հաւանական կորուստէ:

Մտածենք պահ մը՝ եթէ Արամ այս ձեռագիրները ծախած  
չըլլար, և անոնք մնային այդ տան մէջ, հիւանդ պատսպարող  
և տառապանքի այդ տունին մէջ, երկու պարզ տետրակներ,  
թուղթի կտորներու նման կրնային զամրիւղ նետուիլ: Եւ յա-  
փառեան կրնային կորսուիլ այս մասունքները: Ինչպէս որ  
կորսուեցաւ Ռուբէն Սեւակի արխիվին կարեւոր մէկ մասը:

Եւ հիմա, ջանանք նշել, Արամ Չիլինկիրեանի կողմէ Ռու-  
բէն Սեւակի ձեռագիրներուն Թորոս Ազատեանին և Սուրէն  
Շամլեանին ծախուելուն «բարիքները»: Տարօրինակ՝ բայց  
իրաւ:

Մեծ մասամբ, ձեռագիրներուն Արամի կողմէ ծախուելուն  
շնորհիւ, հրատարակուեցան՝

1.— Երեւանի մէջ 1965-ին, Փրօֆ. Եղուարդ Զրբաշեանի  
«Ռուբէն Սեւակ - Ստեղծագործութեան Համառօտ Ակնարկ»  
գիրքը,

2.— Երեւանի մէջ, 1972-ին, Վլատիմիր Կիրակոսեանին  
«Ռուբէն Սեւակ- Կեանքը և Ստեղծագործութիւնը» գիրքը.

3.- Երեւանի մէջ, 1985-ին, Ալեքսանտր Թոփչեանի «Ռուբէն Սեւակ - Երկեր» հատորը,

4.- ԱՕթիլիասի մէջ, 1986-ին, Պրն. Խաչիկ Տէտէեանի գլխաւորութեամբ, Հայց. Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան [Հ.Ե.Հ.Ո.Մ.] «Ռուբէն Սեւակ- Երկեր» հատորը.

5.- Երեւանի մէջ, 1992-ին, Ալեքսանտր Թոփչեանի «Ռուբէն Սեւակ, Անտիպ Էջեր- Աշակերտական Տետրակից» գիրքը,

6.- Երեւանի մէջ, 1995-ին, Ալեքսանտր Թոփչեանի «Ռուբէն Սեւակ-Անտիպ Էջեր» գիրքը:

Եւ հիմա, ջանանք խորհրդածել ու հարց տալ... Արդեօ՞ք կրնանք, գոնէ քիչ մը ներել, Արամ Զիլինկիրեանին կատարած չարիքները- ձեռագիրներուն անոր կողմէ ծախուելուն շնորհիւ կատարուած «բարիքներուն» պատճառաւ:



\*\*

### ՎԵՐՋԻՆ ԱՐԱՐ

Արամ, իր գործած չարիքներուն հետեւանքով, ձեւով մը իր հօր՝ Ձերովքէ Զիլինկիրեանին յահուան պատճառ եղած էր: Բայց Արամ, նոր Ձերովքէ Զիլինկիրեան մը մէջտեղ բերաւ:

Կը կարծուէր, թէ Արամ, մեռելներուն կարեւորութիւն չի տար: Սխալ էր:

Արամ, իր առաջին ամուսնութենէն, մանչ զաւակ մը ունեցաւ: Եւ անոր անունը «Ձերովքէ» դրաւ:

Արամ, իր հօր՝ Ձերովքէ Զիլինկիրեանին սնանկութեան պատճառ եղած էր:

Բայց, Արամին մանչ զաւակը՝ նոր Ձերովքէ Զիլինկիրեանը, այսօր Թուրքիոյ ամենէն հարուստ անձնաւորութիւններէն մէկն է:

Աշխարհն անվերջ թատրոն մըն է: Յաճախ՝ անհասկնալի:  
(Ծարունակելի)

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱՂԼԵԱՆ

# ՀՈԿՏ. 27-Ի ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԱՌԵՂԾՈՒԱԾԱՅԻՆ «ԳՈՐԴԵԱՆ ՀԱՆԳՈՅՑՑ»

Ամօրալի և նուաստացուցիչ խեղկատակուրիւն է, անցնող շուրջ չորս տարիներու ընթացքին կատարուած հետաքննուրիւնները Հայրենի արդարադատութեան մարմիններուն կողմէ սարդւած SOAP-OPERA-ին՝ նման ամերիկեան O.J. Simpson-ի դատավարութեան: Ինչո՞ւ կը ճգճգուի այս զգուելի և կեղծաւոր դատավարութիւնը... ի՞նչ փաստելու համար... ի՞նչը և որո՞նց ծածկելու համար: Եթէ հայրենի արդարադատութիւնը զանազան ԱՐՏԱՔԻՆ քէ ՆԵՐՔԻՆ ԵՇՄԱՆ տակ ի վիճակի չէ, արտօնութիւն չունի, բոյլատրուած չէ նշմարտութիւնը բացայայտելու, ուրեմն բոլ միանգամայն վերջ տայ այս զգուելի, հոգեմաշող, ապսպրանքի տակ գործող անպատուարեր զաւեշտախաղին, որ կ'երկարի ժողովուրդը յիմարի տեղ դնելով՝ ինքզինք ձեւացնելով շայլամ:

Արեւի լոյսին պէս պայծառ ու յստակ էր ոնիրը զոր մանրակըրկիտ կերպով, որպէս "BREAKING NEWS". ուղղակի հաղորդուեցաւ միշազգային բոլոր հեռուստացոյցերով միանգամայն և դէպֆին վայրէն իսկ, ապշեցնելով մարդկութիւնը համայն աշխարհի և մանաւանդ՝ հայերս: Զարմանալին այն էր՝ արդեօ՞ք օտար լրատուական [հեռուստացոյց] ընկերութիւնները անկասկած, նաեւ հայրենիքինը նախօրոք զգուշացուած էին պատահելիքին մասին, որ դէպքէն մի բանի բոպէ անց արդէն՝ CNN, BBC, NBC, TV5 և շատ ուրիշներ սկսան դէպֆին վայրէն ուղղակի հաղորդման, կազմ ու պատրաստ, հանդիսատես ըլլալով եղեռնագործութեան բոլոր մանրամասնութիւններուն, և արհեստավարժորէն նկարահանեցին եղածը, կարծէք Hollywood-եան. Cowboy-ական քէ ոն-

հանեցին եղածը, կարծէ Հոլլիվուդ-եան. Cowboյ-ական թէ ոն-  
րային ֆիլմի մը նկարահանումը ըլլար: Ոճրագործները, անկաշ-  
կանդ, հանդարտ, սառնասրտօրէն զգետնեցին իրենց թիրախները.  
և անարգելք, հանդարտօրէն հեռացան... շշմեցնելով ամէնին:

Եթէ դատական հետաքննութիւններու ողբերգական գաւեշտա-  
խաղը կը կատարուի պարզապէս Եւրոպական Խորհուրդի և «Ժո-  
ղովրդավար» ԱՄՆ-ի պարտադրած ստրկացուցիչ պայմանները  
լրացնելու համար, որպէսզի Հայաստանը իրաւունք և արտօնու-  
թիւն ստանայ ամդամ ըլլալու ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԱԶԳԵՐՈՒ լերկիր-  
ներու ակումբին... Այդ ակումբին կեդրոնական հիմնադիր եր-  
կիրները կը վայելեն առանձնաշնորհումներ, օրինակ՝ մէկ ամիս  
առաջ ԱՄՆ-ի դատական բարձր մարմինը մահուան վճիռ արձա-  
կեց Պահիստանցի Ամալ Քասիին դէմ, որ ինը տարիներ առաջ  
ոնիր էր գործած ամերիկայի մէջ, սպաննելով ամերիկան  
գաղտնի սպասարկութեան (CIA) պատկանող երկու գործակալ-  
ներ: Ամալ Քասիին lethal սրսկումով սպաննուեցաւ պաշտօնապէս:  
Ելեկտրական արոռուվ, կազախուցով, բոյնի սրսկումով, հեռար-  
ձակ հորիրներով և այլն, գեր-հզօր և զօրաւոր, «բաղաբակիր»  
անդամներուն արտօնուած է սպաննել, սակայն ո՞չ փոքրերուն և  
տկարներուն, նոյնի՞սկ եթէ ատնիք իրաւունք ունենան:

Աշխարհի բոլոր կրօններն ալ կը զգուշացնեն մարդ անհատը,  
պատուիրելով որպէս օրէնք... Մի՛ ՍՊԱՆՆԵՐ... ՍՈՒՐԴ ՊԱՏԵԱՆԸ  
ԴԻ՛... «ՍՈՒՐ ԲԱՐՁՐԱՑՆՈՂԸ ՍՈՒՐՈՎ ԱԼ ՊԻՏԻ ՍՊԱՆՆԸ-  
ԻՒ»... ևայլն: ՍՊԱՆՆԵԼԸ ՀԶՕՐՆԵՐՈՒՆ ԱՐՏՕՆՈՒԱԾ է մի մի-  
այն... որպէս «բաղաբակրութեան պաշտպաններու» մենաշնորհ...  
Մեծ գիտնական Այնշրայնի յարաբերականութեան օրէնքը ի զօ-  
րու է այստեղ եւս... նման «նայիրի»ի խմբագրականին՝  
«ՅԻՇՈՂՆ Է ՄԵՂԱՒՈՐԸ, ՈՉ ԹԷ... ՄՈՒՑՆԵԼ ՈՒԶՈՂԸ»:

27.11.2002 Տուպայ



*ten / ten*  
MODERN SHOES EST.



ETS. ten/ten POUR LA FABRICATION DE CHAUSSURES MODERNES

ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՈՒԵՆՔ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐՈՒՆ

**Ի՞ՆՉ Է ՈՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԵՒ  
ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ  
ԻՍԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ**

ՈՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ, ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ ԵՒ  
ԻՐԵՆՑ ԵՐԵՑ ԸՆԿԵՐՆԵՐԸ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 26  
ՕԳՈՍՏՈՍ 1915-ԻՆ, ԶԱՆՂԵՐԸ-ԷՆ ԱՅԱԾ ԳԱՅՈՂ  
ՃԱՄՐՈՒՆ ՎՐԱՅ, ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆՈՒԹ  
ՃԵՄԱԼ ՕՂՈՒՁԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԵԱՄԲ,  
ԹՈՒՐԵ ԴԱՀԻՁՆԵՐՈՒ ԿՈՂՄԵ:

ՈՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԵՒ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ  
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ՝ ԴԱՇՆԱԿ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՂԱՆԴԱԻՈՐՆԵՐԸ, ԸՆՍ ԻՐԵՆՑ  
ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ, ԽԵՂԱԹԻԻՐԵԹԻՆ ԵՒ ԻՐԵՆՑ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԴԱՆԻԵԼ  
ՎԱՐՈՒԺԱՆԸ ՀԵՐՈՍԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՍՊԵԼ ՄԸ  
ՅՈՐԻՆԵՑԻՆ. ԵՒ ԱՅՍ ԱՌԱՍՊԵԼԸ ԱՅՍ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԹՈՒԹԱԿՆԵՐԸ ՏԱՐԱԾԵՑԻՆ  
ԱՄԷՆ ԿՈՂՄ, ԻԲՐ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ:

ՄԵՆՔ ԱՅՍ ԳՐՈՒԹԵԱՄԲ, ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ  
ԱՌԱՍՊԵԼԻՆ ՄԷՋ, ՈՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻՆ ԴԷՍ  
ԿԱՏԱՐՈՒԱԾ ԱՆԻՐԱԻՈՒԹԵՆԵԼՆ ԱՑԼԵԻՆ  
ԸՆԴՎԶԵԼՈՎ, ՊԻՏԻ ԶԱՆԱՆՔ  
ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԷՋՏԵԴ ՀԱՆԵԼ՝ ՄԻՆՉԵՒ  
ՀԻՄԱ ԶԼՐԱՊԱՐԱԿՈՒԱԾ ԵՒ ԾԱՏԵՐՈՒՆ ԱՆԾԱՆՈԹ  
ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐՈՎ, ՅԱՆԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ:

ՅՈՎՃԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
ԻՐԷԺ ՈՈՒԲԷՆԵԱՆ

ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԵՐԻՆԸ ԿԸ ԶՈՒԵԼԵ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒՐԴԵԱ

**Ի՞ՆՉ Է ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ԵՒ  
ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ  
ԻՍԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ**

ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿ, ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ ԵՒ  
ԻՐԵՆՑ ԵՐԵՑ ԸՆԿԵՐՆԵՐԸ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 26  
ՕԳՈՆՏՈՒ 1915-ԻՆ, ԶԱՆԴՀԸ-ԷՆ ԱՅԱԾ ԳԱՅՈՂ  
ՃԱՄՐՈՒՆ ՎՐԱՅ, ԻԹԹԻՆՏԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ  
ՃԵՄԱՆ ՕՐՈՒՁՐ ՎԱՐԳԱԴՐՈՒԹԵԱՄԲ,  
ԹՈՒՐՑ ԴԱՀԻՑՆԵՐՈՒ ԿՈՂՄԵ:

ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ԵՒ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ  
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԴԱԾՆԱԿ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐԱՆԴԱԻՈՐՆԵՐԸ, ԸՆՏ ԻՐԵՆՑ  
ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ, ԽԵՂԱԹԻՒՐԵՖԻՆ ԵՒ ԻՐԵՆՑ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ԴԱՆԻԵԼ  
ՎԱՐՈՒԺԱՆԸ ՀԵՐՈՍԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՌԱՍՊԵԼ ՄԸ  
ՅՈՐԻՆԵՑԻՆ. ԵՒ ԱՅՍ ԱՌԱՍՊԵԼԸ ԱՅՍ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԹՈՒԹԱՎԿՆԵՐԸ ՏԱՐԱԾԵՖԻՆ  
ԱՄԵՆ ԿՈՂՄ, ԻԲՐ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ:

ՄԵՆՔ ԱՅՍ ԳՐՈՒԹԵԱՄԲ, ԴԱԾՆԱԿՑԱԿԱՆ  
ԱՌԱՍՊԵԼԻՆ ՄԷՋ, ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻՆ ԴԷՄ  
ԿԱՏԱՐՈՒԱԾ ԱՆԻՐԱԻՈՒԹԵՆԵԼՆ ԱՅԼԵՒՆ  
ԸՆԴԿՁԵԼՈՎ, ՊԻՏԻ ԶԱՆԱՆՔ  
ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԷՋՏԵԴ ՀԱՆԵԼ, ՄԻՆՉԵՒ  
ՀԻՄԱ ԶԼՐԱՊԱՐԱԿՈՒԱԾ ԵՒ ԾԱՏԵՐՈՒՆ ԱՆԾԱՆՈԹ  
ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐՈՎ, ՑԱՆՈՒՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ:

ՅՈՎԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
ԻՎՐԵԴ ՈՈՒԲԵՆԵԱՆ

Մեր համոզումով, 24 Ապրիլ 1915-ի Եղեռնի մտալո-  
րականներուն նահատակութեան պատ-  
մութեան մասին, ամենաճշգրիտ մեկնա-  
բանութիւնը կատարած է՝ մեծ հայրենա-  
սէր, բանաստեղծ և գրագէտ Անդրանիկ  
Շառուկեանը:

13 Հոկտեմբեր 1985-ին, Նիսի մէջ, Ռու-  
բէն Սեւակի ծննդեան 100-ամեակի հանդի-  
սութեան նախագահն և բանախօսը եղող  
Անդրանիկ Շառուկեան այդ օր, ի միջայլոց,  
հետեւեալ բացատրութիւնները տուաւ.

«Մեր բոլոր նահատակ մտաւորականնե-  
րուն համար «ՆԱՀԱՏԱԿՈՒԵՑԱՆ» կ'ըսենք,  
և այդպէս կը վերջանայ:

Արդեօք ոճրագործները ի՞նչ ձեւով խոշ-  
տանգած են նահատակները:

Այս մասին զանազան վկայութիւններ,  
զանազան գրութիւններ կան, քիչ մը սուտ,  
քիչ մը իրաւ: Անոնք նուիրագործուած են:

Մեզի համար պարզ է. նահատակուեցան  
բոլորն ալ և սուրբեր դարձան:

Բայց, բարեբախտաբար, Ռուբէն Սեւակի  
կեանքին մէջ, դրուագ մըն ալ կայ, մինչեւ իր  
մահուան սեմը:

Ուրիշ նահատակ մտաւորականներուն  
մասին չկայ այս բանը, Դ. Վարուժանի կամ  
Սիամանթոյի և կամ Ռուբէն Զարդարեանի  
մասին չկայ:

Բայց, Ռուբէն Սեւակի մասին, իրական  
պատմութիւն մը կայ:

Չանդըրը-ի մէջ մեծատունի մը, ազդե-  
ցիկ մարդու մը աղջիկը հիւանդ է, և Ռուբէն  
Սեւակ կը բժշկէ այդ աղջիկը:

Բայց աղջիկը կը սիրահարուի Ռուբէն  
Սեւակին:

Եւ աղջկան հայրը Ռուբէն Սեւակին կ'ըսէ՝  
«Չեր ճակատագիրը ճշդուած է. ձեզ սպան-  
նելու պիտի տանին: Եկո՛ւր թրքացիր, աղջը-  
կան հետ ալ ամուսնացիր: Այս պարագային  
բեզ կրնամ ազատել»:

Հակառակ, որ Ռուբէն Սեւակի մտաւորական ընկերները, բանտի ընկերները,  
իրեն կը թելադրեն, կը պնդեն և կը փորձեն համոզել զինք ամէն գնով, ըսելով՝  
«հոգ չէ. վնաս չունի այլեւս. թրքացիր, կին մըն ալ առ. ի՞նչ կ'ըլլայ»: Բայց Ռ.  
Սեւակ կը մերժէ: «Թրքանալը վատութիւն է» կ'ըսէ:

Իր մահէն անմիջապէս յետոյ, Ռուբէն Սեւակի անունը երրորդութեան մը հետ  
կապուեցաւ՝ Դանիէլ Վարուժան, Սիամանթօ, Ռուբէն Սեւակ»:

Անդրանիկ Շառուկեանի 24 Ապրիլ 1915-ի մտաւորական նահատակներու մասին այս շատ իրատես մեկնաբանութեան յետոյ, պիտի ջանանք նշել՝ Ռուբեն Սեւակի նահատակութեան մասին, Զանդըրը-ի մէջ անոր աքսորեալ բախտակից ընկերներուն վկայութիւնները, կարգ մը յապատումներով [պահելով բնագրին հարազատութիւնը]

## ԶԱՆԴՐԸ ԱՔՍՈՐՈՒԱԾ ԵՒ ՎԵՐԱՊՐՈՂ ՄՏԱԿՈՐԱԿԱՆ

ՄԻՋԱՑԵԼ ՇԱՄՏԱՆՁԵԱՆԻ ՎԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ԶԱՆԴՐԸ ՎԵՐԹԻՇՈՒՄՆԵՐ

«Այս երեք զոհերը, որոնց հետ անձնական շատ մը յիշատակներով կապուած են, և որոնց եղերական վախճանը միշտ սրտիս մէջ կ'արիւնի, եղած են Դանիէլ Վարուժան, Տիրան Շելեկեան և Ռուբեն Սեւակ:

1915 Յունիսի վերջերը, առաջին կարաւանին մեկնելէն և

տասն և ինը հոգիներու ալ Պոլիս վերադարձը արտօնուելէ յետոյ, մէկուկէս ամիսի չափ, միասին ապրեցայ Սեւակին հետ:

Ես, ուրիշ վեց հոգիներու հետ, միասին կ'ապրէի: Բոլոր ընկերներս ալ, առանց բացառութեան, մաս կը կազմէին Պոլիս վերադառնալու արտօնուածներուն. Սեւակ ալ, այդ օրերուն, նոր հասած էր Զանդըրը, ուրեմն, անմիջապէս որոշեցինք մեր կենակցութիւնը:

Պոլսէն ծանօթ էր ինծի իր դիւրահաղորդ և զուարթ հոգին: Տօնական զուարթախորութեամբը լեցուած էր տուներնիս: Այդ ատեններուն [Յուլիսի սկիզբները] տակաւին չէինք գիտեր առաջին կարաւանին վիճակուած բախտը, և անտեղեակ էինք տակաւին թուրքին եղեռնի կամքին:

Իսլամին ծոմապահութիւնը սկսած էր արդէն, և ծայր տուած եղեռնի ապերասանութիւնը:

Զարդերու չարաշուք զրոյցներ սկսած էին մեր ականջը հասնիլ: Այդ միջոցներուն էր, որ օր մը, մեծ իրարանցումի մը մէջ տեսայ զինքը:

Այն տեսակ խօսք մը տարածուած էր աքսորականներուն մէջ, թէ մահմետականութիւնը ընդունողը ազատ պիտի արձակուէր:

Այդ ատենները, առաջին կարաւանը մեկնած էր արդէն և եօթանասուն հոգիի չափ մնացած էինք: Ամբողջ երկու օր, խեղճ աշխատեցաւ, համոզելու համար տկար հոգիները, որ մահը մահմետականացումէն աւելի աղէկ է, և զատգատ երդում ընել տուաւ ամէն անոնց, որոնց հոգիի ուժին վրայ կասկած ունէր, թէ հաւատարիմ պիտի մնան իրենց լոյս-հաւատքին:

Երբ մեր կարաւանը Զանդըրը հասաւ, մեր մէջը ութը բժիշկներ կային, իսկ Զանդըրի մէջ բժիշկ չկար բնաւ: Մեր բժիշկ ընկերները իրենց արուեստը, տեղույն բնակիչներուն բարւոյն ի գործ դրին:

Պոլիս մեկնումներէ յետոյ, երեք բժիշկներ մնացած էին: Այդ երեքէն ամենէն աւելի փնտուածն էր Սեւակ: Զանդըրին մէջ կանոնատրապէս բժշկութեամբ կը զբաղէր:

Տօքթ. Տինանեան, Պոլիս վերադառնալուն առիթով, Սեւակին յանձնած էր վերադառնութիւնը թուրք աղջկան մը, որուն վրայ ինքը վիրաբուժական գործողութիւն մը կատարած էր: Այդ աղջկան հայրն էր Զէթէնի Արապանը Իսմայիլ:

Տօքթ. Տինանեանի մեկնու-  
թեն յետոյ, Սեւակ կանոնա-  
լոր կերպով կը շարունակէր իր բժշկա-  
կան այցելութիւնները այդ աղջկան:

Օր մը, կէսօրէն բաւական վերջը. տա-  
կաւին ճաշի չէր եկած: Ճիշդ կէսօրին  
ճաշի համար տունը կը գտնուէինք,  
իրարու չսպասելու համար: Տրուած ըլլալով  
իր ճշդապահութիւնը՝ արտասովոր բան մըն  
էր եղածը: Ես, գրեթէ մտահոգ, իրեն կը  
սպասէի, ճաշասեղանին գլուխը:

Վերջապէս եկաւ. բոլորովին անսովոր  
կերպով իրեն համար. անխօս էր: Տքնու-  
թիւնէ դեռ նոր դուրս եկողի մը յոգնածու-  
թիւնը ուներ դէմքին արտայայտութիւնը:  
այտնապէս չարչարուած էր: Սեղանի վրայ  
սն մը չխօսեցաւ: Երրորդ մը կար մեզի սե-  
ղանակից: Երրորդին մեկնելէն յետոյ, երբ  
առանձին մնացինք, խոստովանելու պէտ-  
քէն ճնշուած մէկու երկշոտութեամբ սկսաւ  
պատմել ինձի, թէ ինչպէս դարմանուող  
թուրք աղջկան հօրը կողմէ տուն կանչուե-  
լով երկու ժամ վար դրուած էր: Ապերախ-  
տը նկարագրած էր. թէ ինչպէս հայկական  
ջարդերը մոլուցքով մը կատարուելու վրայ  
էին, թէ ամէն օր նմանօրինակ հրամաննե-  
րու կը սպասուէր Զանդըրը հայերուն  
ամար, հետեւաբար իր խանդաղատանքի  
բացումները պարզելով տօքթէօրին. կը հա-  
մոզէր զինքը, ընդունիլ մահմետականու-  
թիւնը, քանի ուշ չէր: Պտտցուցած էր զին-  
քը իր տան բոլոր մութ անկիւնները և խոր-  
հորդաւոր նկուղները. ջատուկ մօրը՝ Տօք-  
թէօրին ճակատը համբուրել տուած էր. և  
յետոյ, գրեթէ արտօնած զինքը որ մեկնի.  
հրաիրելով որ մինչեւ 24 ժամ, զինուրագ-  
րութեան ճիւղի նախագահին դիմէ, իր  
կրօնափոխ եղած ըլլալը յայտնելու համար:

Հետեւեալ օրը Պայրամ էր: Սեւակ, ճակտի  
պարկեցած քրտինքով մը պատմեց ինձի. թէ

ինչպէս ոգորած էր. համոզելու համար այդ անողոքը. թէ այդպիսի պահանջում  
մը չներկայացուի իրեն, թէ ինքը որքան կը սիրեր կեանքը՝ իր զաւակներուն հա-  
մար, ուստի չէր ուզեր մեռնիլ: Մեկնած ատենը, հեթանոսը նորեն շեշտած էր.  
թէ սպասուած հրամանը կրնար նոյնիսկ քսանեչորս ժամէն առաջ հասնի. հե-  
տեւաբար պէտք էր աճապարել, պաշտօնական դիմումը ընելու համար զինուո-  
րագրութեան ճիւղի պետին:

Սպառնալիքին դեմ կարելի չէր անտարբեր մնալ. որովհետեւ տեղեակ էինը եղենին համատարած թաւալումին, որուն երեք - չորս օր առաջ. Էնկիւրի իր երկու հազարէ աւելի լաւագոյն այրերը զոհ տուած էր: Մենք որոշումը տալու համար չմտածեցինք իսկ, որովհետեւ մէկ հատիկ էր ան:

Սեւակ, երբեք իրմէ սպասուած դիմումը չըրաւ զինուորականութեան ճիւղի պետին:

Մեր ընկերները խուճապի չմատնելու համար. գաղտնի պահեցինք միջադեպ, մեզի գաղտնակից առնելով միայն Տիրան Զէլէկեանը:

Բայց մեր հոգիները, սկսած էին արդէն, տաժանութեան մթնոլորտին մէջ թեւածող մահուան սարսափը ծծել: Մեր տունը քաղաքին եզրն էր. գրեթէ դուրսը: Որոշեցինք քաղաքին մէջ փոխադրուիլ. և գացնք տեղաւորուիլ մեր դժբախտ մէկնող ընկերներէն թափուր մնացած տուն մը:

Չանդըրը իթթիհատի պատասխանառու քարտուղարին ջանքերով. տեղոյն միթքարըֆը, Ասաֆ պէյ ուրիշ տեղ փոխադրուեցաւ. որովհետեւ յայտնապէս հայերու հանդէպ բարեացակամ վարմունք մը ցոյց կու տար:

Ասաֆէն վերջ, փոխանորդաբար Չանդըրը միթքարըֆութեան պաշտօնը կը վարէր, Զասթէմունիի վիլայէթին ոստիկան զինուորաներուն ընդհանուր հրամանատարը:

Սեւակ, միթքարըֆի փոխանորդին հետ շատ մտերիմ յարաբերութեան մէջ էր:

Երկրորդ կարաւանն ալ տուինք մենէ, անօրէնութեան ճամբաներուն. և անոր յուղարկ երթալէ մեր վերադարձին. կառավարչատուն հրաւիրուեցանք զեկոյցի մը տեղեկանալու համար: Երեսունեւոթը հոգի մնացած էինք. մեր մէջ հաշուելով Սեւակը, Վարուժանն ու Զէլէկեանը:

Երեսուն և եօթը հոգիներու ցանկ մը եկած էր: Ասոնք ազատ պիտի ձգուեին և Պոլսէ զատ ուզած տեղերնին երթալու ազատ պիտի ըլլային: Այս ցանկին անուններէն հինգին տէրերը կամ Պոլսս վերադարձած էին, կամ թէ մենէ մեկնող կարաւաններէն մէկին կամ միւսին մաս կազմած: Ասոր փոխարէն. մեր ընկերներէն հինգին անունները կը պակսէին ցանկին մէջ:

Այդ հինգ մեր սիրելիներուն մէջ էին նաև մեր սիրելագոյն Վարուժանն ու Սեւակը:

Ասոնք՝ Պոլսս, թէ իրենց ընտանիքներուն և թէ՝ ներքին գործոց նախարարութեան դիմում ըրին հեռագրով, որպէս զի իրենք ալ մեզի պէս նկատուին:

Մինչ այն, իթթիհատի պատասխանառու քարտուղարին ջանքերով. որոշուեցաւ որ այդ հինգը մեր Այաշի ընկերներուն թիվ փոխադրուին: Որոշում կայացած էր, Չանդըրը մէջ հայ աքսորական չթողով:

Քաղաքային և զինուորական գերիներ սկսած էին հասնիլ քաղաք:

Ծատ նշանակալից պարագայ մըն է վերջին տեղեկացածս թէ. մեր հինգ ընկերները Այաշ փոխադրելու որոշումը տրուած թուականին. Այաշի մեր ընկերները ա'լ չկային յափտենապէս:

Սեւակ օգտուելով կառավարչի փոխանորդին հետ ունեցած իր մտերմական յարաբերութիւններէն, իրենց մէկնումի օրը. երկու երեք անգամ յետածգել տըւաւ, եղած դիմումներու վրայ Պոլսէն գալիք պատասխանի մը սպասելով: Ոչ մէկ պատասխան:

Վերջապէս Օգոստոս 13/26 1915, Հինգշաբթի առաւօտ մը, նախորդ գիշերը Սեւակ հրաժեշտ առած էր կառավարչի փոխանորդէն, հինգ հոգին երկու կառըով ճամբայ ելաւ, մէկ հեծեալ ոստիկան-զինուորով և մէկ ոստիկանով: Միւթէսարըֆի փոխանորդը ամէն բարեացակամ կարգադրութիւն ըրած էր, Սեւակը և իր ընկերները ողջամբ Այաշ հասցնելու համար: Կառապանը եկած էր / Ճէք 3/

## Ի՞ՆՉ Է ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ԵՒ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ... (Ծար. էջ 2-ԷՇ)

արդէն, շատ ժամանակ չունեինք խորհելու, և ճամբայ ելանք, մեկնողներու ժամադրավայրը, քաղաքին կամուրջը փութալու: Անլուսին Օգոստոսնեան պայծառ երկնքի մը տակ, դեռ չճեղքուած մութին յանձնեցինք մեր ընկերները:

Նոյն իրիկունը, ժամը 12-ին, անոնց սպանման լուրը, թիւնէյն հեռաձայնով եկեր էր Զանուրը: Տեղույն ուսիկան զինուորներու հրամանատար Նորեկտուին և իթթիհատի պատասխանատու-քարտուղարը՝ Օղուզ; հեռաձայնի տեղը գտնուելով, քրքիջով ընդուներ էին գոյժը:

Գիշերը՝ կառավարչի փոխանորդը, եղեռնէն կատողած, մանաւանդ իր սիրական բարեկամին սպանութենէն այլայլած, ներկայութեանը կը կանչէ Նորեկտուտինը և իր ծանր կասկածները կը յայտնէ: Այդ միջոցին Ռէշիտ փաշա տակաւին կը շարունակէր կուսակալ մնալ Վիլյակրին, և ձեւական հետապնդումներ կատարուելով, իբր սպանիչ տասնեմէկ խեղճուկ գիղացիներ բերուեցան Զանուրըի բանտը:

Հետեւեալ օրը, Ուրբաթ, կառավարչի փոխանորդին մօտ մեր դիմումին, տեղեկացանք այս մանրամասնութիւններուն, ու տեղեկացանք նաև, մահէն դառնագոյն իրողութեան, այն թէ առտուն իսկ, հինգ զոհներուն մեկնելէն 24 ժամ վերջ, Պոլսէն հեռագիր մը եկած էր, արտօնող որ այդ հինգն ալ միւս 32-ին պէս նկատուին: Տրուած չէ երբեք մարդուն, չարաբախտութեան անողոք անհւը կասեցնել:

Թետոյ, ստուգապէս տեղեկացայ, որ չէրէ Արապաճի հսմայիլ, մեր հինգ ընկերներուն ժամանելէն երկու ժամ առաջ, երեւած է թիւնէյ, գիղացիները գլուխ հաւաքած, բանի մը համոզելու աշխատելով, ու յետոյ իր ճամբան շարունակած է դէպի էնկիրի:

## ՄԻԹԱՑԵԼ ԾԱՍՏԱՆՃԵԱՆ

### ՑՈՒՇԱՐՁԱՆ ԱՊՐԻԼ ՏԱՍՆԸՄԸԿԻ


ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ «ԱՊՐԻԼ  
ՏԱՍՆԸՄԸԿԻ ՍԳԱՀԱՆԴԵՍԻ  
ՑԱՆՑԱԽՈՒՄԲ» իԱ ԿՈՂՄԻ  
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 1919

\*  
ԶԱՆԴՐԸ ԱՔՍՈՐՈՒԱԾ ԵՒ  
ՎԵՐԱՊՐՈՂ ՄՏԱԽՈՐԱԿԱՆ

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ  
ՈՎԿ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՅ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պարագաները այնպէս բերին, որ ամենազարհուրելի պայմաններու մէջ գործուած այս ոճիրը անպատիժ չմնայ: Թուրք սպայ մը, Մէհմէտ Իզզէթ պէյ, զինուորական հրամանատար Զանուրըի, իրեն համար պատույ խնդիր մը դարձուց ոչ միայն ոճրագործներուն, այլև անոնց ընկերներուն բնաշնջումը և այս գործը գլուխ հանեց անողորմաբար, հետապնդելով և սպանելով բոլորն ալ, անոնց պետէն մինչեւ յետինը մեղսակիցներուն, և ասիկա տաքը տաքին, շատ կարճ ատենուան մը մէջ:

Այս ոճրագործները սակայն պարզ գործիքներ էին: Բուն յանցաւորն էր Իթթիհատի Զանուրըի պատասխանատու քարտուղար (Զեաթիպի Մէսուլ) Շէմալ Օղուզ պէյ, որ անձամբ կազմակերպած էր Վարուժանի և ընկերներուն սպանութեան գործը և որուն ձեռքը, թիւրտ Ալօ ու իր ընկերները գործակատարի մը դերը միայն ունեցած էին: Թէեւ, 1918-ի զինադադարէն ետք ձերբակալուելով Պոլսոյ մէջ, դատուեցաւ պատերազմական ատեանի մը առջեւ, բայց ձեւական պատիժի մը ենթարկուեցաւ և գէթ, ինծի յայտնի չէ, թէ ինչ վախճան ունեցաւ: Կատարուած դատավարութիւնը պարզ գայթակղութիւն մըն էր ինքնին և անոր ամէնէն ընդվզեցուցիչ դրուագներէն մէկը եղաւ այն անհաւատալի պարագան,



որ մեզի հետ Զանդըրը աքսորուած հայ սեղանաւոր մը, Յովհաննէս Թէրլէմէզեան դատարանին առջեւ բարի վկայութիւն տուաւ ի նպաստ այդ մեծ ոճագործին, ինչպէս արդար զգուանքով մը արձանագրեցին Պոլսոյ այն ատենուան հայերէն թերթերը:

\*\*

Վարուժանի և Տօքթ. Ռ. Չիլինկիրեան-Սեւակի խումբը նահատակուելու համար ճամբայ չհանուած, Մէհմէտ Իզզէթ պէյ պատուոյ խօսք տուած էր Տօքթ. Ռուբէն Չիլինկիրեանին, թէ ողջ-առողջ պիտի հասնի Պոլիս և թէ որեւէ վտանգ չկայ ոչ իրեն և ոչ ալ իր ընկերներուն համար: Ըսեմ, որ Տօքթ. Ռ. Չիլինկիրեան շատ յարգ կը վայելէր Զանդըրը մէջ: Մեզի հետ գտնուող բժիշկները մեծ մասով գացեր էին: Ինքն ալ չափազանց համակրելի էր և ասկէ զատ՝ Միւթեսարըֆ Ասաֆ պէյը ազատեց թունաւորուած ատենը, որով ձեռքէ ձեռք կը խլէին զինքը:

Եւ սակայն, հակառակ Իզզէթ պէյի խոստումին, սպանութիւնները գործուեցան:

Իզզէթ պէյ, այս եղածը լսելուն պէս կատղած է: Յայտնաբար ամբաստանած է տեղւոյն իթթիհատականները, որոնք իրմէ զէնք ուզեր էին և չկրնալով ստանալ, հաւաքեր էին քաղաքի բնակիչներէն:

Որովհետեւ, երբ ընդհանուր զինահաւաքութիւն եղաւ, հայոց զէնքերը վարդին, նոյնիսկ յետին դաշոյնը, իսկ թուրքերուն զէնքերը, նոյնիսկ արգիլուածները, վերադարձուցին նոյնութեամբ: Բարկացած Իզզէթ պէյ անմիջապէս հեռագիր մը կը որկէ Գասթէմունի Ռէշիտ փաշային, բողոքելով եղածին դէմ և աւելցընելով, որ «Նամուսըասքէրիէմի փայմալ էթտիլէր» [զինուորական պատիւսունակոխեցին]: Եթէ այս բողոքը չըլլար, ապահովաբար պիտի սպանիչներուն բոլոր միւս մնացածները:

Իզզէթ պէյ չբաւականացաւ բողոքի այս հեռագրով, այլ ինք անձամբ գնաց թիւնէյ, քննութիւն կատարեց և Զիւրտ Ալոյէն զատ միւսները, ինչպէս փոլիս-Միւկէյմանը ձերբակալելով որկեց Էնկիրի, այն ալ այն պատճառով, որ Պոլսոյ գերմանական դեսպանատունը պահանջած էր սպանիչներուն պատժուիլը:

Վարուժանէն և Ռ. Սեւակէն զատ, միեւնոյն խումբին միւս նահատակները եղան ՕԾԾիկ Մաղազանեան, երկաթագործ Վահան Զէհեայեան և Պոլսոյ Օրթագիւղէն հացագործ Արթին աղա:

\*\*

1919 Դեկտեմբերին, Իթթիհատի Զանդըրըի պատասխանատու քարտուղար Շեմալ Օղուզ պէյ, որ Վարուժանի և ընկերներուն սպանութեան գործը կազմակերպած էր, և ասոր գործակիցը՝ Զանդըրըի ոստիկան-զինուորներու հրամանատար համբաւաւոր «Քեմիք Ջըրան» ոսկոր կտրող Նուրետտին պէյը հրապարակով դատաստանի Ենթարկութեան էսատ փաշայի նախագահութեամբ գումարուած պատերազմական ատեանի մը առջեւ, Պոլսոյ մէջ:

Շեմալ Օղուզ Պոլսոյ մէջ ձերբակալութեաւ անգլ. ոստիկանութեան կողմէ: Իր և իր Գասթէմունիի պաշտօնակցին՝ Հասան Ֆէհմիի ջանքերով, պաշտօնանկ եղած էր Գասթէմունիի կուսակալ Ռէշիտ փաշան, որ հակառակած էր հայոց տեղահանութեան: Զերբակալուած միջոցին Պոլսոյ թերթերը գրեցին, թէ կէս միլիոն ոսկիի հարստութիւն մը ունէր: Զանդըրըի մէջ ընդհ. տնօրէն էր պետական գուլպայի գործարանին, որ գլխաւորաբար զինուորներու յատուկ գուլպաներ կը պատրաստէր: Ամբողջ շրջանակին պարենաւորման գործերն ալ իր ձեռքէն կ'անցնէին:

Ամբաստանուած էր նաեւ մեծ զեղծումներու համար, իր իսկ թուրք ընկերներուն կողմէ:

Գտնուած է Ատանա 1909-ին, կոտորածի տարին:

Ահա այս հրէշն էր, որ պատժական ատեանին կողմէ դատապարտութեաւ 5 տարի և 4 ամսուան թիապարտութեան, 9 Փետր. 1920-ին, իսկ Նուրետտին՝ 6 տարի և 8 ամսուան, իր բացակայութեան դատուած ըլլալուն համար:

Այս դատավարութեան ընթացքին վկայութիւն տուաւ Գասպար Զերազ, որ կը գտնուէր Զանդըրըի աքսորականներուն մէջ: Գ. Զերազ, Զանդըրէն վերադարձին տեսած էր այն վայրը, ուր մորթուուած էին 5 նահատակները. բլուրի մը ստորոտը: Տեսած էր տարբաղադրուած դիակները նահատակներուն. որոնք շատ թեթեւ թաղուած էին և յորդառատ անձրեւները հողին մակերեսը հանած էին զանոնք: Ոճիրը գլուխ հանած էր չեթէճի ոստիկան Խամայիլը, որուն հիւանդ աղջիկը մահէն ազատած էր Տօքթ. Ռուբէն Զիլինկիրեան:

Զոհերը Պոլսէն հեռագրի կը սպասէին Պոլսիս վերադարձուելու համար:

Հեռագիրը եկած էր զոհերը նամբայ չհանուած, բայց Օղուզ գաղտնի պահած էր զայն, որպէսզի գլուխ հանէ ոճիրը:

Նոյն ատեանին վկայութիւն տուած էր նաեւ Օհան Խախիկին (Ծարք էջ 8)

**ԿԵ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԹԵՐՈՒՆ [ԻԲԻ ԹԵ] ՀԳԻՏՑԱՌ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

**ԳԱՅԼ ԵԻ ԳԱՌՆՈՒԿԻԿԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԳԻՒԵ՞Ր ԱՐԴԵՈՅ:**

Գայլը, գառնուկին կ'ըսէ. «Ճուրս կը պղտորես»:

Գառնուկը կը պատասխանէ. «Պարոն գայլ, ջուրդ ինչպէ՞ս կրնայ պղտորիլ. դուն ջուրին վերի կողմն ես. ես ալ վարի կողմը»:

Գայլը կ'ըսէ. «Պղտորես կամ չպղտորես՝ ես քեզի պիտի ուտեմ»:

Ամերիկան, Իրաքի մէջ, իրր թէ զանգուածային բնաջնջման գէնքեր կան պատրուակելով, Իրաքի վրայ յարձակելու կը պատրաստուի:

Իրաքի մէջ փնտուուքներ կատարող ընսիչներուն պետը HANS BLIX 10 Յունուար 2003-ին, Ապահովութեան Խորհուրդին անդամներուն յայտարարութիւն մը կու տայ և կ'ըսէ թէ՝ «Իրաքի մէջ զանգուածային բնաջնջման գէնքեր չգտանք»:

Ամերիկեան Արտաքին Գործոց Նախարար COLIN POWELL այս մասին տուած պատասխանին մէջ կ'ըսէ թէ՝ «Իրաքը զարնելու համար՝ անպայման անոր յանցանքի վրայ բռնուիլը պայման չէ»:

Իրաքին, յանցանքի վրայ չըսնուիլը ըսել չէ, թէ անհիկա յանցաւոր չէ և իրեն պարտադրուած պայմանները չէ բռնարարած»:

Այս խօսքերը ի՞նչ տարրերութիւն ունին «Գայլ և Գառնուկի» պատմութեան մէջ գայլին ըսածներէն:

Ամերիկային նպատակը՝ Իրաքը «ուտել» է: Իրաքը զանգուածային բնաջնջման գէնքեր ունենայ կամ չունենայ, տարրերութիւն չ'ըներ:

Ամերիկան Փետրուար ամսուն մէջ Իրաքի վրայ պիտի յարձակի:

Ամերիկան՝ Իրաքի «PETROLE»ին պէտք ունի:

11 Սեպտեմբեր 2001-ի Նիւ-Եորքի մէջ կատարուած ողբերգութենէն յետոյ, Ամերիկան այլև, Սառւիթ-Արարիոյ վրայ չի կրնար վստահիլ:

Այդ պատճառաւ, Աշխարհի երկրորդ մեծ PETROLE-ի պահեստները ունեցող Իրաքի վրայ Ամերիկան, յառաջիկայ շարաթներուն, յարձակման կը պատրաստուի:

Ամերիկան «Աշխարհին Տէրը» ըլլալու հանգամանքը տեւականացնելու համար, Իրաքը ծեռք անցընելը պայման կը նկատէ:

Այս մտայնութեան անունը, պարզապէս մեր գիտցած չափերով՝ «Վայրենիներու անօրէնութիւն» է:

Այս առիթէն օգտուելով, թուրքերը Իրաքէն գողօն կորզելու կը պատրաստուին:

Թուրքերը իրենց «Քերքիւթի բեթրուի երազը» մէջտեղ նետեցին կրկին:

Բայց Ամերիկան երրեք չի թոյլատրեր:

Թուրքերուն «ուժի» տիրանալը՝ Ամերիկային գործին չի գար: Թուրքերը միշտ Ամերիկային կարու մնալու են:

Եթէ թուրքերը «ուժի» տիրանան, Ամերիկային հակաշոէն դուրս կ'ելլեն:

Ամերիկացիները՝ թուրքերուն ի՞նչ ըլլալը շատ լաւ գիտեն:

Այդ պատճառաւ, թուրքերը «ոչ պիտի երկնեան և ոչ ալ պիտի կարծնան»:

Թուրքեր՝ սին երազներ մի տեսնէք: Յետոյ յուսախար կ'ըլլաք:

**8. 2.**

**TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDIKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ  
KURT VE KUZU HİKAYESİ**

**KURT VE KUZU HİKAYESİNİ BİLİR-BİLİRMİSİNİZ?**

**KURT, KUZUYA "SUYUMU BULANDIRIYORSUN" DEMİS.**

**KUZU CEVAP VERMİŞ "AMAN KURT EFENDİ. SUYUN NASIL BULANIR? SEN. SUYUN YUKARI TARA-FINDASIN, BEN ASAGI TARAFINDA"**

**KURT CEVAP VERİR. "BULANDIRSAN DA BULANDIRMASAN DA, BEN SENİ YIYECEM"**

**AMERİKA, İRAKTA KİLE İMHA SILAHİ VAR BAHANESİ İLE İRAKA HÜCUM ETMIYE HAZırlANIYOR.  
IRAKI KONTROL EDEN DENETCİLERİN BASI HANS BLIX, 10 OCAK 2003-DE VERDİĞİ DEMECTE  
GÜVENLİK KONSEYİ ÜYELERİNE "IRAKTA KİLE İMHA SILAHINA RASTLAMADIKLARINI" SÖYLEMİŞ.**

**AMERİKAN DIS ISLERİ BAKANI COLIN POWELL VERDİĞİ CEVAPTA "IRAKI VURMAK İÇİN İLLE DE SUÇ  
ÜSTÜ GEREKMЕZ. SUÇ ÜSTÜ YAPILAMAMASI, SUÇUN ISLENMEDİĞİ, İRAKİN YÜKÜMLÜLÜKLERİNİ  
ÇİGNEMEDİĞİ ANLAMINA GELMEZ" DEMİS.**

**BU SÖZLERİN, KURT VE KUZU HİKAYESİNDEN KURDUN SÖYLEDİKLERİNDEN NE FARKI VAR?**

**AMERİKANIN NIYETİ İRAKİ "YEMEK" İRAKİN, KİLE İMHA SILAHİ OLSA DA. OLMASA DA FARK  
ETMEZ.**

**AMERİKA, SUBAT AYINDA İRAKA HÜCUM EDECEK.**

**AMERİKANIN İRAK PETROLİNE İHTİYACI VAR.**

**11 EYLÜL 2001 NEW YORK FACIASINDAN SONRA AMERİKA, SUUDİ-ARABİSTANA ARTIK GÜVENEMEZ.  
ONUN İÇİN, DÜNYANIN İKİNCİ PETROL RESERVİNE SAHIP OLAN İRAKA, ÖNÜMÜZDEKİ HAFTALARDA  
AMERİKA HÜCUM ETMIYE HAZırlANIYOR.**

**"DÜNYANIN HAKİMİ" OLMIYA DEVAM ETMESİ İÇİN, AMERİKA, İRAKİ ELE GECİRMESİ SART GÖRÜYOR.  
BİZİM BİLDİĞİMİZ, BUNA "ORMAN KANUNU" DERLER.**

**BU ARADA, TÜRKLER DE İRAKTAN PARSA KOPARMAYA HEVESLİ.**

**TÜRKLERİN "KERKÜK PETROLÜ RÜYASI" YENİDEN DIRİLDİ.**

**FAKAT AMERİKA, BUNA MÜSAADE ETMEZ.**

**TÜRKLERİN KUVVET KAZANMASI, AMERİKANIN ISINE GELMEZ.**

**TÜRKLER DAIMA AMERİKAYA MUHTAC KALMALIDIR. YOKSA TÜRKLER, AMERİKANIN KONTROLİN-  
DEN ÇIKAR.**

**TÜRKLERİN "NE OLDUGUNU" AMERİKALILAR ÇOK İYİ BILİR.**

**ONUN İÇİN TÜRKİYE, NE UZANICAK NE DE KISALICAKTIR.**

**TÜRKLER, BOSUNA HEVES ETMEYİN.**

**SONRA "HEVESİNİZ KURSAGINIZDA KALIR".**

B. Q.

## Ի՞ՆՉ Է ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ԵՒ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ... (Չար. էջ 3-ԷԳ)

Վարդապետ) Կարապետեան, Վարուժանի և ընկերներուն, ինչպէս նաև Տիրան Զէլէկեանի սպանութեանց պարագաներուն մասին:

Ինչպէս ըսի, զինուորագրութեան Զանդըրը ճիւղին պետը՝ Իզգեթ պէյ, որ նախախնամութիւն մը եղած էր բոլոր աջսորականներուն համար, պատուոյ խնդիր դարձուց իրեն համար՝ գործուած ոնիրը և ամբողջովին բնացինց ըրաւ թիւրտ Ալօն և անոր հրամաններուն տակ գտնուող հրոսախումբը:

Դ. Վարուժանի, Ռ. Սեւակի և իրենց ընկերներուն սպանութեան մանրամասնութիւնները ճշդուեցան 1918-ի զինադադարէն ետքը, երբ, իրեւ ականատես խոստովանութիւններ ըրաւ՝ զանոնք դէպի սպանութեան վայրը փոխադրած թուրք կառապանը: Զոհերը դաշունահար մորթուած էին Զանդըրէն քանի մը ժամ հեռու անտառակի մը մուտքին, բլուրի մը ստորոտը, 26 Օգոստոս 1915-ին:

ԱՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ

«ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵԳԻՐՁԸ» - 1959 Պէյրութ-Լիբանան

\*\*

ԶԱՆԴՐԸ ԱՔՍՈՐՈՒԱԾ ԵՒ ՎԵՐԱՊՐՈԴ.

ՊՈԼՍՈՅ «ԲԻՒԶԱՆԴԻՈՆ» ԹԵՐԹԻՆ ԽՄԲԱԳՐԱՊԵՏ  
ԲԻՒԶԱՆԴ ԶԷԶԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

ԴԺՈՒ ԶԻՆ ՆԱԽԱԴՈՒՌԸ

Աքսորի վերջին ընկերնիս որուն աչքերը համբուրեցի՝ Վարուժանն էր. ան. որուն վիճակուած էր, Սեւակի հետ միատեղ, նահատակուիլ էնկիւրիի ճամբուն վրայ, տնօրէնութեամբ իթթիհատական գործիչ ճէմալ Օղուզի, ինչպէս 1920-ին պարզուեցաւ նոյնիսկ Պոլսոյ պատերազմական ատեանին առջեւ: Թէեւ իր մասին անհաշտ, ուրիշներու համար թոյլատու էր: - Զանդըրը Արապանի պաշըն պատիկ գիւղի մենծ աղան էր:

Անոր աղջկէը կը խնամէր Տօքթ. Բ. Տինանեան, որու մեկնումեն ետքը, Սեւակ (Տօքթ. Զիլինկիրեան) էր որ գլուխ հանեց դարմանումը:

Գեղեցկադէմ երիտասարդ մըն էր Սեւակ, և թրքուհին անոր սիրահարեցաւ:

Հայրը հասկցուց բժիշկին թէ իր ազգակիցները ջնջելու հրաման՝ կայ, բայց եթէ իսլամութիւն ընդունի և կարգուի այն աղջկան հետ որուն կեանքը ազատած էր, ինք ալ կը խոստանար իր փեսան փրկել վերահաս աղէտէն:

Սեւակ խորհուրդ հարցուց ընկերներուն: Ամէնքն ալ Յունիս ամսուն հասնող գոյժերէն զգածուած, զինք խրատեցին առժամապէս համակերպելու: Զէլէկեան ալ համամիտ գտնուեցաւ «զի ամէն բանէ առաջ իր կեանքը պէտք էր»:

Բայց Սեւակ «ԹՐՉԱՆԱԼԸ ՆՈՒԱՍՏԱՆԱԼ Է» ըսելով մերժեց, մանաւանդ որ կարգուած էր և իր կինը աշխոյժ Գերմանուի մ'էր որ կ'աշխատէր իրեն համար. բայց տարաբախտ Սեւակ գուցէ չիմացաւ. թէ որպիսի ճիւաղ մ'էր նոյնինքն Վանկէնհայմ, որ «չէր ուզեր երեսը տեսնել հայու մը կինը եղած Գերմանուի մը»:

1921, Յուլիս-Կ.Պոլիս

ԲԻՒԶԱՆԴ ԶԷԶԵԱՆ

ԹԵՌԴԻԿ - «ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՅՈՅՑԸ» 1922

\*\*

«ՆԱՅԻՐԻ» յառաջիկայ թիւին մէջ պիտի ջանանք տալ, Զանդըրը աքսորւած և վերապրողներէն՝ Բժիշկ Վահան Ալբունեանին և Յովհան Ծայր. Վարդապետ Կարապետեանին Ռուբէն Սեւակի Զանդըրը մէջ ունեցած հերոսական կեանքին և նահատակութեան մասին վկայութիւնները:

Եւ նաև՝ Գրիգորիս Ծայր. Վարդապետ Պալաքեանին և Բժիշկ Ս. Զարեւանդին իրար հակասող վկայութիւնները՝ Ռուբէն Սեւակը և Դանիէլ Վարուժանը դէպի նահատակութեան վայրը առաջնորդող նոյն կառապանին յայտարարութիւններուն մասին:

Եւ վերջապէս՝ Պոլսոյ Գերմանական դեսպանատան 8 Դեկտեմբեր 1915 թուակիր տեղեկագիրը, որ շատ տարբեր ձեւով կը ներկայացնէ Ռուբէն Սեւակի նահատակութեան պարագաները:

## ՊԵՎ ՏԵՍԱԾ Է ԱՅՍՊԻՍԻ ՀԱՐՍԱՆԻՔ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ

Հասկցանք, որ յաջորդ Հիւրանոցը աւելի յարմարաւէտ սենեակներով օժտուած է, բայց քառապատիկ վճարումով: Ոմանք ուզեցին գանգատիլ. բայց գրիչ Նուպարը կանխեց ամէն գանգատ— ինչ որ դրամով է, մտահոգիչ չէ'...

Փոխադրուեցանք նոր Հիւրանոց:

Տեսնուեցանք սրբազնին, քահանայ Հօր, դպիրներուն և սարկաւագին Հետ: Հանելի էր աղն իմաստով մանաւանդ, որ մեր Հայկական փոքր խումբը վեց Հոգիներու յաւելում մը ունեցաւ: Կարծէք Սանճագեան Հողին վրայ մէկ միջիոնի Հասած ըլլապինք: Չէ՞ որ Սարոյեանը Հանճարեղօրէն ըսած է— Երբ երկու Հայ իրարու Հանդիպին, աշխարհի որեւէ մէկ անկեան մէջ, կը ստեղծեն Հայաստան մը. թէեւ ուրիշներ ալ [չար լեզուներ] անդած են, որ եթէ երկուքը վերածուի երեքի, կը ծնին երեք կուսակցութիւններ, մէկական անդամով [ետիս գացէք վայրերաններ, այսօրուան Հայաստանի հարիւր կուսակցութիւնները օրինակ մի՛ բերէք]: Գարնան, կը ծաղկին նշենիները միլիոնաւոր ծաղիկներով, բայց ահա քամի մը, կարկուտը կը թափէ բիւրաւորները պատ ծաղիկներուն: Հիմա, Հայաստանի Գարունն է. ծաղկած են բազում կուսակցութիւններ, անոնցմէ քանի՛ն պիտի կարենան գոյատեւել... անկասկած՝ քիչերը:

Բարձրացանք Գըրըգիսան. անլուլու կոկորդապատառ երգելով. կատակ չէ. Պէլանցի Նուպարին Հարս կը տանէինք՝ Մարացի Տիգրանուլին, որ իր Հօրը մասին այնքան Հետաքրքրական եղելութիւններ պատմեց եղեռնի կապակցութեամբ և տարագրութեան մասին: Կ'երգէինք թէ՛ Մայաթ Նովայէն, թէ՛ Կոմիտասէն, թէ՛ Խսահակեանի երգի վերածուած բանաստեղծութիւններէն:

Յանկարծ, Մըրգիրին քոյրը՝ Արմենուլին ըսաւ— Ժամանակին, ինչո՞ւ չեմ գիտեր, Հայէպ թէ Պէլանցի, բոլոր Հարսանիքներու ժամանակ կ'երգէին երգ մը— «Լուսին չկար, մութ գիշեր էր, մի խումբ կ'երթար արագ-արագ»— թէ ի՞նչ կապ կար պատ երգին և Հարսանիքին միջեւ չհասկցայ:

Այդպէս էր: Մենք ալ յիշեցինք ու խնդացինք:

Թիւրք վարորդը իր զարմանքը չէր պաշեր մեր երգացանկի առատութեան դիմաց - Խսկէնտէրուն - Գըրըգիսան ճամբան չատ կարճ էր, մեր անվերջանալի երգերուն Համար:

Այո, եկեղեցին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչը, մաքրուած էր տասնամեակներու կեղտէն: Եռախորան եկեղեցին մաքրութեամբ կը փայլէր: Հարս ու փեսային գլխուն, որպէս «Երուսաղէմ» մտնող զոյգի, ծիթենիի տերեւներէ կազմուած թագեր դրուեցան— Տէ՞ր ես»: «Այո՛, մինչեւ մահ»: Այո՛, կարծեմ Նուպար կամացուկ մը ըսաւ— Շատը գնաց, քիչը մնաց»: Երկարաւեւ պսակ մըն էր:

Եկեղեցի փութացած էին մի քանի տասնեակ թիւրք կիներ ու աղջիկներ, որոնք արարողութեան մասին բացատրութիւններ կ'ուզէին- անդադար կը բացատրէինք:

Կարպիս Գավիլանը, Նուպարին քեռորդին, այս գիւղին մէջ տուն ունէր:

Պատակին ներկայ Թագուշի մայրիկը 85 տարեկան էր, իսկ Գըրըգիսան կը մնար Ապպուտ Մարտիկեանը, կը մնար, ըսելու Համար, թէ աշխարհի վրայ տակաւին կան Հայեր:

Սովորաբար, Ս. Պատիկի խորհուրդին արարողութիւնը կրնայ տեւել կէս ժամ. այստեղ տեւեց երկար: Կ'երեւի Արամ Եպս. Աթաշեանը կ'ուզէր ամուր կապել զոյգը. 43 տարին ի՞նչ էր որ, Հայ զոյգի մը Համար: Ապագային, թող տօնէին իրենց ամուսնութեան Հարիւրամեակը: Խնչո՞ւ, Մաթուսաղա երկարակեացը Նուպարէն լա՞ւ մարդ էր:


Սկիզբ երկար տեւեց Հարսնացուին Հագուիլը- անմեղութեան սպիտակ զգեստը: Նուպարը Ամերիկայէն Հագուած եկած էր. քանի կը սիրէր ամէն բանի մէջ աճապարել. միայն պսակուելու մէջ դանդաղած էր, այդ ալ քիչ մը՝ միայն 43 տարի:

:իսլունմոկ մր ջհ պշտկվծ .Ո Սժդուննոյ զվարեցաղ մշյ  
-տատիկ մի նգուեռմմը : Դպրոցաւու մզդուրազո Յվմէ ուսմաց մր մրուզը յափակուրազո  
նքր մս ՚չիզո իսլամնոյ զվարեռմմը լուզգուո մշմունոցոկ մմունուո ու նումի ումզզ  
-մշումմը մուտզ վզուժ վր մշգումուտ մի Շժու մկ ՚քուսո գովը յազուզզի մու մր սուզ  
քուսմուտզզ վնասունոցի մու ՚ուզ միունուզ զվաբնուզի նունու մշ քունուզունուզ

Հառու Վավերանո մէ քուզտ իւ //

...քոնտենտը պվասխ նուզու ուղ մը իտու, զոկոկինու նշու վզուվենմակ, 'պլուի

«:תְּפִילָה וְבָרֵךְ» וְ«תְּפִלָּה וְבָרֵךְ»



-մոն հետևել մս՝ զվլուգմբարք՝ ժղվիլա վզուու տրուշ վլուու ըժուուի եռու դէնուտուուստ գուլի մկ մս՝ ուուստ շլկուտ զվմզմբա տեղու 08 վզուիութ շլ 2002՝ ժուց պէկուցի վլզգուզմանցու նստագումուտ եռմի ւսմզզիուզուուուտ զվնզնզի նվմաւուրաշ մսնվմք Ռ վզուուի նմանք

:Ազրկվելուսկիթներ՝ դասմզգմաժվարությը յգբ մորուց ուղղված է ամպոզիվիշտը  
-ուսարությունը նույն ձևով է մասնաւությունը մի զորքների ուղղությունը  
:Ազգանությունը համար մասնաւությունը նույն ձևով է մասնաւությունը

-ուղղութ ժամփ - մկո  
- մի գոգոմուտ ժղվիմզ  
վիշն մեցրզի իսմզժ  
- նու տսժդրանմու զուռ  
րոգմում ժուռը զվ-06  
մու կվմնոր նու վդրամզք  
նզվր մոյու զոգզյութ  
- զկոմոկիմզ ու զոգըյուզ  
- նսսու վեռոզի ու ոմու  
զոնդրաբով մզգնուզզէ  
:զոնդրանմու իսկրանու  
մեզնչի վզեռմբուզ

:զՀԴՊՈՅ  
-սոյ վկնգՆզկից զուլի ճան  
-ոյ վզուվեմմէ զվիտե  
-ւի ուհուուիով մազգուու  
մկ հըլ ՚ըր շուի ունեու

Ժողովական պատճենները պահպանվում են ՀՀ պատմական ժառանգության պահպանիչ կողմէ

Հայկական գիւղը, ուր Արամ ծափ. Աթէշեան, առիթը պատեհ նկատելով, պատարագ մը պիտի մատուցէր Հայոց վերանորոգուած մատրան մէջ:

Երբ ոտքի ելանք մեկնելու համար, տեսանք, թէ մեզ Հիւրընկալող ճաշարանին դէմն ու դէմը, բլուրին վրայ, կայ եկեղեցի մը. Հայկական է ըսին. երկու Նուպարներուն միացայ մօտէն տեսնելու համար եկեղեցին, որ աւելի քան կէս դարէ ի վեր լքուած վիճակ մը ունէր: Փակ էին դոները: Հով մը կարծէք, մեր շուրջբոլորը կը տարածէր վաղեմի շարականներ: Խաչակնքելով վար իջանք, երբ գրիչ Նուպարը իր ձեռքէն անբաժան նօթի տետրակին մէջ կ'ընէր նոր նշումներ ու կ'ըսէր... Այս բլուրը ուր կանգուն մնացած է Հայոց եկեղեցին, Պէյլանը կը բաժնէր երկուքի. բլուրի վրայի մեր տեսած տուները Հայոց թաղը կը ներկայացնէին, իսկ ձորին մէջ կ'ապրէին թիւրքերը: Սա տեսած բնակարանիդ որ կարմրագոյն է, տէրը մեզի Հետ պիտի ըլլայ այսօր:

Վագրֆ Հայագիւղի կիսալեցուն մատուռը մտանք երկիւղածութեամբ: Դարաւոր Հայ կեանքը այս Հողին վրայ շարունակել կը փորձէր իր եկեղեցիով: Գիւղը Հայկական դպրոց չունէր: Մնող նոր սերունդը իր Հայեացքը կ'ուղղէր Պոլիս և անկէ ալ անդին: Գիւղին մէջ կը մնային տարիքու մարդիկ, կանայք: Բայց այս գիւղը բանաստեղծ մըն ալ տուած էր՝ Արսէն Ճանեանը, որ Պոլսոյ մէջ ուսանելէ ետք մեկնած էր Հայաստան ու կը մնար Երեւանի մէջ:

Մատրան մէջ զգեստաւորուած գտանք տէր Հայրը. մինչ պատարագէն ետք Արքադանն էր քարոզիլը, որ ներկաներուն թրքերէնով կը բացատրէր կարեւորութիւնը Հաւատք չընծայելու հինէն եկող մնամէջ սովորութիւններու: Ուզեցինք այցելութիւն մը տալ գիւղին գերեզմանատուն: Տեսանք ողջերը՝ բոլորն ալ թրքախօս. անշուշտ կը գործածէին բարբառը ու մեր խօսած Հայերէնը դժուար կը հասկնային: Մեռեալներուն Հետ եւս խօսիլ ուզեցինք: Հոն, իր յակիտենական քունին մէջ գտանք Տէր Գարթունեանը, որուն տղուն՝ Խորէնին կնքահայրը եղած էինք Պէյրութի մէջ: Տէր Գարթունեանը տասնամեակներով Հովուած էր իր Հօտը այս գիւղին մէջ ու մտած յաւիտենական քուն 92 տարեկանին, առանց լսելու, որ իր տղան՝ Խորէնը մահացած էր իսկ թոռնութիւն կ'ապրէր Գերմանիոյ մէջ իր ճակատագիրը յանձնած գերմանացի ամուսինին: Գո՞շ ես Տէր Գարթունեան, որ Գերմանիա ապրող թոռնութիւն լէ մոռցած իր մայրենի լեզուն և անցեալները նամակ ալ գրած էր իր՝ կնքահօր՝ մեզի ի Հայէպ, առանց ուղղագրական սխալի:

Այս շրջանը այժմ թիւրքերը կոչած են Սաման Տաղ: Գիւղին մէջ Հայ տուն մը պաղ թանով կը Հիւրասիրէ բոլորս: Տան երիտասարդ աղջիկը նշանուած է, Հարս պիտի երթայ Գերմանիա: Բարձրադիր այս տունէն կը դիտենք մինչեւ Հորիզոն տարածուող բլուրներն ու ձորերը, անտառները... Հիասքանչ տեսարան. օ՛, Հրաշք բնութիւն, մեր առօրեային մէջ որքան Հեռու կ'ապրինք քենէ:

Կ'անցնինք Խըտըրապէկէն: Դէմքերնիս կը լուանք պաղպաջուն Հոսող ջուրով, որ մօտիկն է Հոչակաւոր չինարի ծառին, որուն փշակին մէջ Հանգիստ կարելի է նստիլ և նարտ խաղալ:

Կը յիշենք վաղամեռիկ խըտըրապէկցի գրող Եղ. Պոյաճեանը, որ այս Հողին ծնունդն էր:  
(Շար. 2)

**ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՈՒԵՆՉ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐՈՒՆ**

ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿ, ՄԵՐԺԵԼՈՎ ԹՐՔԱՆԱԼՈՒ  
ԳՆՈՎ ԱԶԱՏՈՒԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԸ, ՆԱՀԱՏԱԿՈՒԵՑԱԻ  
26 ՕԳՈՍՏՈՍ 1915-ԻՆ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ ԿՈՂՄԵ:  
ԲԱՅՑ ՀԱՅԵՐԸ ԿԸ ԾԱՐՈՒՆԱԿԵՆ ԱՄԷՆ ՕՐ ՆԱՀԱՏԱԿԵԼ  
ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ՀՈԳԻՆ ԹՐքԱԿԱՅԵԼ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ  
ԵՆԹԱՐԿԵԼՈՎ ԱՆՈՐ ԱՆՈՒՆԸ ԵԻ ՅԻՇԱՏԱԿԸ:  
ԱՊՐԻԼ 1985 - ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԸ ԵԻ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԸ  
ԴԵՊԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԸ ԱՌԱՋՆՈՐԴՈՂ  
ԹՈՒՐՔ ԿԱՌԱՊԱՆԻՆ ՅԱՅՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ  
ԻՐԱՐ ՀԱԿԱՍՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆՈՅՆ ԿԱՌԱՊԱՆԻՆ ԸՍԱԾՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ,  
«ՀԱՅ ԳՈՂԳՈԹԱՆ» ԳԻՐՁԻՆ ՀԵՂԻՆԱԿ՝ ԳՐԻԳՈՐԻԱՆ  
Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՂՅԵՏՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԱՔԵԱՆԻՆ  
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ [Էջ 199].—  
«...ԱՍՈՆՑՄԵ ՄԻԱՅՆ ՎԱՐՈՒԺԱՆ  
ԱՆՁՆԱՊԱԾՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿԸ ԴԻՄԵ, ԵԻ ԻԲՐ  
ՊԱՏԻԺ ՈՃՐԱԳՈՐԾԻՆ ԴԱՆԱԿՈՎ ԴՈՒՐՍ ԹԱՓԵԼԵ  
ՎԵՐԶ ՓՈՐՈՏԻՅԵԸ, ԿԸ ՓՈՐԵՆ ՆԱԵՒ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ  
ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ԱԶԲԵՐԸ...»:

ՆՈՅՆ ԹՈՒՐՔ ԿԱՌԱՊԱՆԻՆ ԸՍԱԾՆԵՐՈՒՆ  
ՄԱՍԻՆ «ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԵԻ ՏՕՔԹ. Ո.  
ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ ԽԵՒԱԿԻ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ»  
ԳԻՐՁԻՆ ՀԵՂԻՆԱԿ՝ ԲԺԻԾԿ Ա. ԶԱՐԵՒԱՆԴԻՆ  
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ [Էջ 59].—  
«... ԲՈՆԻ ՄԵՐԿԱՅՆԵԼՈՒ ՓՈՐՁԻ ՄԸ ԴԵՍ ՍԵՒԱԿ  
Կ'ԸՄԲՈՍՄԱՆԱՅ, ԻՍԿ ՎԱՐՈՒԺԱՆ, ՍՏՈՅԻԿԵԱՆ  
ԻՄԱՍՏՈՒՆԻ ՄԸ ՊԵՍ, ՀԱՄԱԿԵՐՊՈՂ ՈԳԻՈՎ ՄԸ ԿԸ  
ՀՆԱԶԱՆԴԻ...»

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԵԺ ՈՈՒԲԵՆԵԱՆ]

Զրիստոնէական կրօնին  
և մանաւանդ Զրիստոսի  
հանդէպ հայերուն ծայրայեղ ջերմեռան-  
դութեամբ պաշտամունքի առաջնա-  
կարգ պատճառներէն մէկն ալ, մեր հա-  
մոզումով, հետեւեալ իրականութիւնն է:

Որովհետեւ, Զրիստոսի նման, հայերն  
ալ տեւական չարչարուեցան օտար  
բռնակալներու խժութիւններէն և մա-  
նաւանդ, 9 դարեր տեւողութեամբ,  
թրջական բարբարոսութիւններէն:

Եւ Զրիստոսի մէջ, հայերը տեսան, իրենց  
ապրած տառապալից կեանքը մշտնջենա-  
կան:

Մենք պիտի ըսենք աւելին: Այո, հայերը  
ապրեցան՝ Զրիստոսի տառապալից կեանքը  
դարերով... բայց... բայց առանց Զրիստոսի  
Յարութեան:

Այո, Զրիստոս չարչարուեցաւ և խաչուե-  
ցաւ: Բայց Յարութիւն առաւ:

Եւ «Յարութիւն» առած թուականէն մին-  
չեւ այսօր, շուրջ 2000 տարիներէ ի վեր  
Զրիստոս ամէն օր և ամէն միշտ տեղ կը  
փառաբանուի և կը պաշտուի:

Մինչդեռ հայ ազգը դարեր տեւողու-  
թեամբ, Զրիստոսի նման ամէն օր խաչուելէ  
յետոյ, մինչեւ այսօր «Յարութիւն» չէ  
առած, և արդարութիւն չէ տեսած:

Այն մեծ հայ ազգը, որ Զրիստոսէ 100  
տարիներ առաջ՝ Մեծն Տիգրանի կայսրութեա-  
շրջանին այն ատենուան աշխարհին գրեթէ  
կէսին տէրն էր, բայց դարերով թուրքերուն  
կողմէ խաչուելէ. և 1915-ին ալ վերջին մա-  
հացու հարուածը ստանալով ցեղասպանու-  
թեան ենթարկուելէ յետոյ, այսօր, այդ մեծ  
ազգը, փոքր աւատապետութեան մը վե-  
րածուած է: Եւ հոգիով ու մարմնով իսկա-  
կան հոգեվարքի կեանք մը կ'ապրի:

Եւ ամէնէն ցաւալին՝ հայ ազգին խաչե-  
լութիւնը և ցեղասպանութիւնը գրեթէ մոռ-  
ցըւած է:

Եւ ցեղասպան թուրքը [իբր թէ], քաղա-  
քակիրք կոչուած պետութիւններուն կողմէ,  
մինչեւ այսօր չէ պատժուած:

Ընդհակառակը, իբր մեծ և զօրաւոր պետութիւն՝ յարգանք կը վայելէ:

Բայց ամէնէն անհաւատալին՝ խաչելութեան և եղեռնի ենթարկուած հայ ազ-  
գին վերապրողներուն ցուցաբերած անտարբերութիւնն է:

Հայ անհատին [թիչ բացառութիւններով] իր հայրենիքին կորուստին և իր  
ազգին ցեղասպանութեան ենթարկուելուն հանդէպ ցուցաբերած անտարբերու-  
թիւնը՝ իրապէս պժգալ է:

Մենք, այս գաղափարները շատ անգամ յայտնած ենք, և միշտ ալ պիտի շարունակենք յայտնել:

Եթէ դուք, ձեր մէջ, հայկականութեան հոգի մը ունիք, չէք կրնար անտարբեր մնալ, ձեր ազգին ենթարկուած տառապանքներուն և անարդարութիւններուն հանդէա:

Մենք, այս պատճառաւ, այս գաղափարները պիտի կրկնենք ամէն օր, ամէն ժամ՝ իբր «աղօթք», իբր «Հաւատամք»:

Պիտի ընդվզինք՝ անարդարութեան դէմ: Պիտի պախարակենք և պիտի դատապարտենք դաւաճանները:

Եւ պիտի պաշտպանենք հերոսները և հերոսներուն Յիշատակները:

Եւ պիտի չքոյլատրենք, որ անոնց սուրբ Յիշատակները սրբապղծուին հայ ազգին թշնամիներուն կողմէ:

Այս անիրաւուած հերոսներէն մէկը՝ Ռուբէն Սեւակն է:

Իր ապրած շրջանին, իր ընկերները կը փառաբանէին Ռուբէն Սեւակը:

Հետեւեալ տողերը այսօր ապացոյցն են՝ «Աթէնա Խմաստութեան շիքը դրած է անոր ուղեղին մէջ, Եսկիւլապ բժշկութեան խորհուրդը, Հերմէս ալ կայծը պերճախօսութեան»:

Մանաւանդ Չանդրը-ի մէջ, Ռուբէն Սեւակին ցուցաբերած հերոսական կեցուածքը, առասպելական պատմութեան մը պէս տարածուած էր 1918-էն յետոյ, զինադադարի տարիներուն, Պոլսոյ հայութեան մէջ:

1919-ին առանձնապէս Ռուբէն Սեւակի Յիշատակին Պոլսոյ մէջ կատարուած Յուշահանդէսը, ասոր ապացոյցն է:

Այդ տարիներուն Պոլսոյ հայկական թերթերը, Ռուբէն Սեւակին հերոսական պատմութիւններով լեցուն են:

Բայց յետոյ, տարիներ անցան: Եւ ժամանակը շատ, շատ բաներ փոխեց: Եւ արեւմտեան պետութիւններուն գործակալները եղող այն ատենուան հայ ղեկավարները «ծախեցին» հայուն հայրենիքը:

Այո, 1918-1920 տարիներուն, Հայաստանի արեւմտասէր դաշնակցական ղեկավարները իսկական իմաստով ծախեցին Հայաստանը:

1920-էն յետոյ, Եղեռնին պատճառաւ մէջտեղ ելած «Սփիտոք»ին պատմութիւնը, հայկական պատմութեան ամենէն «սեւ» էցերն էին:

Այդ տարիներուն, Սփիտոքի մէջ բոլոր արժէքները իրենց իմաստը կորսնցուցին:

Ազգասիրութիւնը և դաւաճանութիւնը գրեթէ նոյնացան:

Ո՞վ էր ազգասէրը, ո՞վ էր հայրենասէրը և ո՞վ էր դաւաճանը:

Բոլորն ալ իրար խառնուած էին: Դաւաճանը՝ ազգասէրի տեղ անցած էր: Եւ հայրենասէրը՝ դաւաճան կը համարուէր:

Եւ այս խառնարանին մէջ հերոսներուն տեղ չկար: Եւ հերոսները մոռցուեցան: Մոռցուող հերոսներէն մէկն ալ Ռուբէն Սեւակն էր...

Եւ այս մէծ հերոսին անունը՝ դաշնակցական թերթերուն մէջ, իր քանի մը խորհրդապաշտ ու քնարական բանաստեղծութիւններով կը յիշատակուէր միայն:

Ռուբէն Սեւակի Յիշատակին դէմ, անհաւատալի հարուած մըն ալ 1950-ր. Երուն, Սովետական Հայաստանի մէջ տրուեցաւ:

Անգիտակից գիտնական մը՝ Ռուբէն Զարեան անունով, Երեւանի մէջ լիայ գրականութեան մէջ իր պատճառած վնասները կը մնան անջնջելի) սխալ մը գործեց և Երիտասարդ բանաստեղծի մը «Սեւակ» անունը տուաւ: Եւ այս «Նոր Սեւակ»ը փառաբանեցին դաշնակցականները:

Մանաւանդ՝ «Նոր Սեւակ»ին արկածով՝ մահանալին յետոյ, այս կուսակցութիւնը Սովետական Միութեան դէմ պայքարի նոր պատրուակ մը գտած եղաւ, և իր անփորձութեան պատճառաւ մեքենայի արկածով մահացած «Նոր Սեւակ»ը «Ռուսերը սպաննեցին» ըսելով առասպել մը յօրինեցին և հերոսացուցին դժբախտ գրողը: Իսկական հերոս Ռուբէն Սեւակը գիտակցաբար մոացութեան ենթարկելէ յետոյ, այս «Նոր»ը անիրաւորէն հերոսացնելնին, իրենց շատ տարիներէ ի վեր շարունակուող հայվնաս, իբր թէ «ազգասիրական» քաղաքականութեան նմոյշներէն մէկն է:

Մենք, Վերջնականապէս Պոլսէն հեռանալի յետոյ՝ 1976-էն ի վեր, մեր կարողութեան չափերով աշխատեցանք մոռացութենէն փրկել Ռուբէն Սեւակին Յիշատակը:

Եւ մանաւանդ՝ ջանացինք մէջտեղ հանել Ռուբէն Սեւակին, հերոս հայրենասէր բանաստեղծին իսկական կերպարը:

Այստեղ երախտագիտական պարտք կը լկատենք շնորհակալութիւն յայտնել՝ Ռ. Սեւակի յիշատակը վառ պահելու աշխատանքներուն սատար հանդիսացողներուն: Մանաւանդ՝ մեր գաղափարակից եղբօր՝ հայրենասէր խմբագրապետ Ժիրայր Նայիրին: Ռուբէն Սեւակի ծանօթացման աշխատանքներուն մէջ՝ իր կատարած դերը ամոռանալի է:

Կուզենք այստեղ շնորհակալութիւն յայտնել նաեւ, Պէյրութի Սահակեան Գոլեճի մէջ, Ռուբէն Սեւակի անուան մատենադարան մը մէջտեղ բերող հայրենասէր բանաստեղծ-մտաւորական Պրն. Պէաջ Սիմոնեանին:

Երեւանի մէջ, Ռուբէն Սեւակի մասին հրատարակած բազմաթիւ գիրքերով և զանազան ելոյթներով բացատիկ աշխատանք տարած գրականագէտ Պրն. Ալեքսանտր Թոփչեանին: Նաև իր ասմունքներով Ռուբէն Սեւակը վերապրեցնող վաստակաւոր արուեստագիտուհի՝ Անահիտ Թոփչեանին:

Նոյնպէս՝ Երեւանի մէջ, Ռուբէն Սեւակի անուան դպրոց Աը Աէջտեղ բերելու գաղափարը յղացող և ներկայի Ռուբէն Սեւակի անուան դպրոցին տնօրէնուհի Տիկին Շուլիա Ղազարեանին:

Եւ նաեւ՝ հայ մշակոյթի բոլոր այն նուիրեալներուն, որոնք նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակին յիշատակը պանծացուցին իրենց հրատարակած գիրքերով, ներկայացուցած թատերգութիւններով, յօդուածներով, ռատիոյէ և կամ հեռատեսիլէ ելոյթներով։ Խորին յարգանք և շնորհակալութիւն իրենց։

Այստեղ պարտականութիւն կը նկատենք յիշատակել անձնաւորութիւն մը (առանց անունը տալու), որ 1965-թ. ներուն Պոլսոյ մէջ (այսուհետեւ թրքական լուծին տակ գտնուող Պոլսոյ մէջ) առաջին անգամ ըլլալով։ Ռուբէն Սեւակի մասին բանախօսութիւն մը կատարելու բացառիկ քաջութիւնը ցուցաբերած էր։ Այս անձը բարին իսկական իմաստով՝ կը պաշտէր Ռուբէն Սեւակը։

Եւ ան, մինչեւ այսօր ոչ մէկուն կատարած գործը գլուխ հանեց 1975-թ. ներուն, Փարիզի համալսարանին մէջ, հայագէտ փրօֆ. Ֆէյտիի ուսուցման տարիներուն, իբր իր դոկտորականի թէզ ներկայացուց շատ լայնածաւալ ուսումնասիրութիւն մը, որուն նիւթն էր՝ «Ռուբէն Սեւակի գրական ստեղծագործութիւնը»։

Դժբախտաբար ըսենք, որ Ռուբէն Սեւակի մասին այս բացառիկ ուսումնասիրութիւնը, զանազան պատճառներով, մինչև օրս չէ հրատարակուած։

\* \*

«Նայիրի»ի 1995-ի առաջին թիւերէն սկսեալ ջանացինք, Ռուբէն Սեւակի մասին, մասամբ ալ միայն մեր գիտցած տեղեկութիւնները և եղելութիւնները հրապարակել։

«Նայիրի»ի 1 Յունուար 2003 թուակիր «Բացառիկ»էն սկսեալ ալ, կը ջանանք Ռուբէն Սեւակին կեանքին և նաև ստեղծագործութեան մասին, մինչև հիմա անյայտ մնացած և մեծ մասամբ շատերուն անծանօթ իրողութիւնները հրապարակել։

Այս հրապարակումներուն մէջ կան այնպիսի մանրամասնութիւններ և եղելութիւններ որոնք, իբր Ռուբէն Սեւակի ընտանիքին մաս կազմող մը. միայն մեզի ծանօթ էին։

Եւ հոգեկան մեծ գորունակութիւն պիտի զգանք, եթէ յաջողինք, ամբողջութեամբ հրապարակել, Ռուբէն Սեւակի մասին ցարդ բոլորովին անծանօթ մնացած տեղեկութիւնները, մեր... անվերադարձ մեկնումէն առաջ։

\* \*

«Նայիրի»ի նախորդ (185) թիւին մէջ հրապարակեցինք Ռ. Սեւակի Զանդը-ի աքսորավայրին մէջ ապրած հերոսական՝ կեանքի մասին. Միջայէլ Ծամտաննեանի, Արամ Անտոննեանի և Բիւզանդ Զէշեանի տուած ականատեսի զարհութելի, սրտայոյգ վկայութիւնները։

«Նայիրի»ի այս թիւին մէջ (186) ալ պիտի շարունակենք տալ Զանդը-ի մէջ Ռուբէն Սեւակին բախտակից, աքսորեալ, բայց վերապրող ընկերներուն ականատեսի վկայութիւնները՝

ԶԱՆԴՐԸ ԱՔՍՈՐՈՒԱԾ ԵՒ ՎԵՐԱՊՐՈՂ ԲԺԻՇԿ ՎԱՀԱՆ ԱԼԹՈՒՆԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

«ՅԻԾԱՏԱԿՆԵՐ  
Ռ. ՍԵՒԱԿԻ ՎԵՐՁԻՆ  
ՕՐԵՐԵՆ»

**ՑԻՇԱՏԱԿՆԵՐ Ռ. ՍԵՒԱԿԻ ՎԵՐՁԻՆ ՕՐԵՐԵՆ**

«Փօսթայի օր» - այդպէս սիրած էինք կոչել շաբթուան այն երկու /→էջ 3/

## ՈՌԻԲԵՆ ՍԵՒԱԿ, ՄԵՐԺԵԼՈՎ ԹՐՅԱՆԱԼՈՒ ԳՆՈՎ ... (Ծար. էջ 2-ԷԱ)

օրերը, ուր մենք Զանդըրը-ի աքսորականներս, տարբեր տրամադրութիւններով արթնցած, արշալոյսին իսկ նամակատուն կը վազէինք. Պոլսէն եկած նամակները վայրկեան մը առաջ լափելու համար: Կ'արժէր տեսնել այդ վայրկեանը, ամէնքս ալ նոյն թղթատարով երկտող մը, յուսադրիչ բառ մը պարունակող գրութիւն մը ունենալ կը յուսայինք, բառեր՝ որոնք կրնային անգութ գրաքննիչին աչքեն վրիպած ըլլալ: Խիստ մեծ կ'ըլլար մեր յուսախաբութիւնը, երբ ցրուիչին ձեռքին մէջ հազիւ 10 նամակ կը տեսնէինք: Նամակները ստանալէ վերջ գունդագունդ կ'երթայինք Հաճի Պապային գետեզերեայ և ծառախիտ սրճարանը՝ աքսորեալներու լիուարի օրուան մեծ ժամադրավայրը, եկած նամակներու վերլուծումներէն յուսադրուելու համար:

**Փառապի օք մըն էր. ըստ սովորութեան գետեզրը հաւաքուած էինք: Ոմանք թերք կը կարդային, ուրիշներ նարտով զբաղած էին, իսկ մենք. Վարուժանին շուրջը հաւաքուած. թուրք բանաստեղծութեան մասին իր քննադատութիւններուն կ'ունկնդրէինք: Յանկարծ, աքսորականներու մէջ, ուրախութեան ճիշ մը փրթաւ. «Սեւակը, Սեւակը» կը պոռային:**

Ընդ առաջ վազեցինք, դէմքերը կը ճառագայթէին, ինքն ալ շատ զուարթ էր: Ծատ տարօրինակ բան էր մեր ուրախութիւնը, որովհետեւ լուրջ պատճառ մը չունեինք հրճուելու: Բայց ներքին բնազդ մը մեզ զուարթ ըլլալու կը մղէր, թերևս Սեւակէն բարի լուրեր առնելու մեծ յոյսն էր իրապէս այդ պատճառը:

Հարցումներու տեղատարափը ատոր ապացոյցն էր: Ու Սեւակ կը սկսի մանրամասնօրէն պատմել իր ձերբակալման ուշանալուն պատճառը, մատնութեամբ միայն ձեռք անցուիլը, Միւտիւրիյէթի մէջ քաշածները, զինուրական հագուստներուն բզքտուելու պարագան ևայլն: Ամենէն տիսուր դէպքերն իսկ անփութօրէն և զուարթութեամբ կը նկարագրէր. ասիկա Զիլինկիրեանին բնատուր յատկութիւնն էր: Իր համոզումը այն էր, որ մինչև պատերազմին վերջաւորութիւնը մեզ համար Պոլիս դառնալ անկարելի էր, բայց կեանքերնիս վտանքի տակ չէր կրնար ըլլալ, քանի որ գործին մէջ Գերմանները կային:

Սեւակի շենշող և ընկերական ազնիւ բնաւորութիւնը պատճառ եղած էր, որ մենք ալ չբարոյալքուեինք, որով իր իսկ թելադրութեամբ գետեզերեայ պարտէզներու մէջ փոքր պտոյտներ կը կազմակերպէինք. Իոն հեքիաթներու մրցումը կը սկսէր և բնականաբար առաջնութիւնը ինքը կը խլէր միշտ:

Գալով Զանդըրըցի թուրքերուն, քիչ առ քիչ սկսած էին Սեւակը աստուածացընել, այնքան շատցած էին հրաշքները, իր բժշկական բարձր կարողութիւնները ի սպաս դրած, անդուլ անդադար կ'աշխատէր: Դրամը կարեւորութիւն չունէր. «Պէտք է այս մարդիկը երախտապարտ թողունք, որպէսզի չկարենան մեզի չարից հասցնել» կ'ըսէր: Թերեւս իրաւունք ունէր:

Պոլիս վերադարձողներու կծիկը քակուիլ սկսած էր, և ասիկա բարերար նշան մըն էր թէ՝ մեր կեանքերուն պիտի խնայուէին. առաջին խումբին բաժանումը մեր յոյսերը ցնդեցուցած էր. այդ բաժանումը ամենէն յուզիչը՝ յուսահատեցուցիչը եղաւ. յիսուն երկու ընկերները դէպի Տիարպէջիր և Տէր Զօր դրկուելու համար մեզմէ կը բաժնէին և այս՝ բնականաբար լաւ նշան մը չէր, մնացեալներս սկսած էինք ահաբեկիլ:

Զանազան մեկնութիւններ կու տայինք Տէր Զօր դրկուողներու մասին, որոնք պարզ ենթադրութիւններ էին, քանի որ հրամանը ուղղակի կեղրոննէն կու գար: Այդ միջոցներուն Սեւակ սկսած էր տիսուր և մտածկոտ ըլլալ. իր զգայուն հոգին ճնշող գաղտնիք մը կորզած էր. իր շէնշող բնաւորութիւնը մելամաղձոտ ըրած էր զինքը. գաղտնապահ էր, որով չէինք կրնար հոգիին թափանցել:

1915 Օգոստոսի կիսուն էր: 25 հոգինոց ցանկ մը եկած էր, չորսերնիս Պոլիս պիտի վերադառնայինք, իսկ մնացեալները Տիարպէջիր պիտի երթային: Յաջորդ առաւտու խմբովին մեկնիլ ստիպուած էինք, ուստի սկսած պատրաստուիլ: Նոյն գիշերը Չիլինկիրեանը զիս տեսնելու եկած էր, կ'ուզէր գաղտնի տեսակցութիւն մը ունենալ. հետաքրքրութեամբ կ'ընդունիմ առաջարկը, ուստի դուրս կ'ելլենք բացօդեայ տեղ մը երթալու համար:

— Լաւ մտիկ ըրէ Վահան, — կ'ըսէ ինձ թրթոուն ծայնով մը, — ես մահուան դատապարտուած եմ, ասով հանդերձ կեանքս քու ճարպիկութենեն կախում ունի. աշխատէ՛, որպէսզի ժամ առաջ ազատուիմ...»:

Կը սարսուամ և կակազելով, հազիւ «Ի՞նչ կ'ըսես, տօքթորս» միայն կրնամ ըսել: — Այո, — կը շարունակէ Սեւակ, — կա՞մ պէտք է որ գրական անուանս պէս հոգիս ալ սեւցնեմ և կամ՝ մեռնիմ: Ուխտած եմ, — կը կրկնէ, — մեռնիլ, բայց երբեք հոգիս չսեւցնել: Բան մը չեմ հասկնար, կը մրմնջեմ ապշահար: «Այո, Վահանս, — կը շարունակէ նա, — բառ առ բառ միտքդ պահէ որպէսզի լաւ հասկցընես: «Հոս, Իթթիհատական Չեթէ Ռէիսի Արապաճը Պաշը ըսուած արարածին աղջիկը անյոյս վիճակի մէջ հիւանդ էր, խնամելու համար զիս կանչեցին. լաւ առիթ մըն էր, այդ կարգի գազան մը ծեռք ծգելու, ուստի ամեն ճիգ և ջանք ի գործ դրի աղջիկը ստոյգ մահուընէ մը փրկելու, յաջողութիւնս կատարեալ եղաւ, աղջիկը բուժուած էր: Ժամանակ մը վերջ այդ մարդակերպ անասունը զիս տուն հրաւիրեց, սենեակին մէջ առանձին էինք. սկսաւ շնորհակալ ըլլալ, և խօսքը շարունակելով ըսաւ. «Աղջկան կեանքը ինձ շնորհած ըլլալուդ յաւիտեան երախտապարտ եմ, ուստի կը փափաքիմ, որ ես ալ փոխարինեմ. ահա առիթը ներկա-

յացած է: Պոլսոյ կեդրոնը մահուանդ վճիռը արծակած և գործադրութիւնը հոս հրամայուած է: Բայց դուն անհոգ եղիր, քանի որ դուն աղջիկս ազատեցիր, ես քեզ պիտի ազատեմ. միակ մէկ պայմանաւ. այսինքն պէտք է անմիջապէս իսլամանաս և աղջիկս կնութեան առնես: Արդէն մեղք չէ՝ որ քեզի պէս գեղեցիկ և ֆիտան մէկը կեավոր մնայ»: – Բայց Պէյ, – ըսի, – ես արդէն ամուսնացած եմ կինս գերմանուհի է, Ֆօն Տէր Կոլց փաշային թիկնապահներէն գերման սպայի մը քոյրն է, երկու զաւկի ալ հայր եմ, այդ ինչպէ՞ս կարելի է: – Էհ, լաւ, – պատասխանեց անայլայլօրէն, – շատ մեղք պիտի ըլլայ երիտասարդութեանդ որովհետեւ վստահ եղիր. եթէ նոյնիսկ յաջողիս Պոլիս երթալու հրաման առնել քաղաքէն դուրս ելլելուդ անպայման պիտի սպաննուիս. ուրեմն, 15 օր միջոց կու տամ, լաւ խորհի՛:

Ալ պատասխանել անօգուտ էր. «Ծատ լաւ» ըսի ու մեկնեցայ»: .....

Խորհուրդ տուի, որ արժամապէս համակերպի:

Սեւակ ընկնուած էր, բարկացած և սրտնեղած ըլլալը որոշ էր, ինձմէ այդ տեսակ խորհուրդ չէր սպասեր:

Զանի մը օր առաջ, Տիրան քէլէկեանին ալ խորհուրդ հարցուցած էր. ան ալ կեանքը ազատելու նպատակաւ, իսլամանալու միջոցը միայն ցոյց տուած էր:

Սակայն ես, ըմբռնելով ծախող դերիս ծանրութիւնը՝ «Իրաւունք ունիս տօքթորս, – ըսի, – քու զգացումիդ գործը չէ այդ, փակենք այդ խնդիրը և գանք մեր ընելիքին. ըսէ տեսնեմ. ինչպէ՞ս պիտի կարենամ քեզի օգտակար ըլլալ»: Սեւակ հանդարտած էր. «Տղայութիւն պէտք չէ. – ըսաւ: – Պոլիս երթալուդ առաջին գործդ պիտի ըլլայ Բերա ելլել ու Կոմիտաս Վարդապետը առնելով մեզի երթալ. հոն տիկնոցս պատմել ամէն բան, նա գիտէ թէ ուր պիտի դիմէ, ինձի ապահով կերպով ուրիշ տեղ մը փոխադրելու ճարը գտնելու, հոգ չէ թէ բանտարկուած և շղթայուած ըլլամ, բաւ է որ սա ճնշիչ մթնոլորտէն ազատիմ»:

Իր խնդիրքը առանց յապաղելու կէտ առ կէտ գործադրելու խոստումով, կը համբուրուինք և կը բաժնուինք:

Երկու օրուան ճամբորդութենէ վերջ կը հասնինք Էնկիւրիւ, ուր փոխանակ կայարան առաջնորդուելու, կը բանտարկուինք: Օրեր կ'անցնին. տակաւին Էնկիւրիւ ենք. յոոի նախազգացումներ զիս կը պաշարեն: Սեւակի դէմքը աչքիս առջևէն չի հեռանար. կարծես «խոստմնազանց» ըսել կ'ուզէ. բանտի կեանքը կը սկսի տակաւ անտանելի դառնալ. ոճրագործ բանտարկեալները, որոնք թուրքեր են, անպատկառօրէն կը պատմեն; թէ ինչպէս սպաննած են այն հարիւրաւոր հայե-

ըս, որոնք այս բանտէն ճամբայ հանուած էին, և կ'առաջարկէին մեր դրամները իրենց տալ, որպէսզի առանց չարչարելու մեկ հարուածով սպաննեն....: Վերջապէս՝ Օգոստոս 30-ի այն չարաշուք օրը, կես գիշերին, մեր ձեռքերը կապուած հանուեցանք դէպի անծանօթ ուղղութեամբ, մեզի կը հետեւէին ոստիկան զինուրներ և մեր սպաննութեան յատուկ զենքեր կրող արհաւրալից կառքեր. մօտաւրապէս 750 հոգի էինք. 18 ժամուան ճամբորդութենէ մը վերջ. հասանք ԳարաԿէտիկ ըսուած գիտը, ուր Սեւակի սպանման տխուր գոյժին տեղեկացանք:

Չանդըրը-էն Օգոստոս 26-ին Էնկիրիւ՝ մեզ հետ Գարա-Կէտիկ գտնուող սափրիչն էր որ, մանրամասն կը պատմէր Սեւակի, Վարուժանի և երեք ընկերներուն սպանման պարագաները:

Չէթէ Ռէիսին իր երախտագիտութիւնը յայտնած էր խժդօրէն սպաններ տալով Սեւակն ու ընկերները:

Ահա այսպէս Սեւակ զոհուելով, իր ուխտը կը կատարէր չսեւցնելու համար իր հոգին:

Յարգանք իր անբիծ հոգիին...»:

Բժիշկ Վահան Ալթունեան - «Հայ Բուժակ» Կ. Պոլիս

Խմբագիր՝ Բժիշկ Մ. Գարակէօզեան 4. տարի -թիւ 3 - 4 -Մարտ Ապրիլ 1920:

\* \*

Չանդըրը-ի աքսորեալ և վերապրողներէն բժիշկ Վահան Ալթունեանին՝ Ռուբէն Սեւակի մասին ականատեսի այս բացառիկ վկայութիւնը կարդալէ յետոյ՝ չյուզուիլ և ցեղասպան թուրքին դէմ չընդվզիլը անկարելի է.....

«Նայիրի»ի յառաջիկայ թիւերուն մէջ պիտի շարունակենք հրապարակել Չանդըրը աքսորուած և վերապրող հայ մտաւրականներուն, Ռուբէն Սեւակի մասին ականատեսի վկայութիւնները:

## ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ...

### ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Յունուար 2003-ի առաջին օրերուն, Փարիզի Հայաստան օրաթերթին մէջ, Դոկտ. Արէլ Քահանայ Մանուկեանի կողմէ Հայ. Եկեղեցին Բարեկարգութեան մասին շատ հետաքրքրական յօդուածաշարք մը Հրատարակուեցաւ:

Յարգելի կրօնականը, այս խորիմաստ գրութեան մէջ, Հայ. Եկեղեցին (Ժառ. էք 6 )

## TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ

### AMERİKANIN KURBAN BAYRAMI

MÜSLÜMANLAR, SUBAT AYINDA KURBAN BAYRAMINA HAZIRLANIYORLAR.

KOYUN KURBAN EDECEKLER.

AMERİKA DA SUBAT AYINDA KURBAN BAYRAMINA HAZIRLIK YAPTIYOR.

IRAK HALKINI KURBAN ETMEEYE HAZIRLANIYOR.

FAKAT, AMERİKA NIÇİN "SADDAM, SADDAM" DIYE TUTTURMUS?

SADDAM KİM? AMERİKAN- C.I.A.-NIN ADAMI. BEN LADEN GİBİ, GENERAL NOIREGA GİBİ.

1979-DA SADDAMI, AMERİKA İKTİDARA GETİRDİ. İRAKTAKİ KOMÜΝİSTLERİ TEMİZLESİN DİYE.

VE 1979-DA SADDAM İKTİDARA GELDİKTEN SONRA, AMERİKANIN EMRIYLE, İRAKTA ONBINLERCE KOMÜΝİSTİ ÖLDÜRDÜ.

SONRA YINE AMERİKANIN EMRI İLE SADDAM 1980-DE İRANA HÜCÜM ETTİ.

SENELERCE SÜREN BU HARBDE YÜZBINLERCE MASUM İNSAN ÖLDÜ.

BU DA O ZAMANKİ AMERİKAN KURBAN BAYRAMI.

SIMDI AMERİKA SUBAT AYINDA KENDİ YETİSTİRMESİ SADDAMI KURBAN EDEREK İRAK PETROLLERİNİ ELE GECİRMEYE HAZIRLANIYOR.

BÜTÜN BU PALAVRALARIN "YOK SADDAMIN KİTLE İMHA SILAHİ VAR, YOK SADDAMIN KİMYASAL SILAHİ VAR" YALANLARININ ARKASINDA GİZLENEN AMERİKANIN ASİL GAYESİ.

1. İRAK PETROLLERİNİ ELE GECİRMEK.

2. İSRAİLE DÜSMAN SON ARAP DEVLETİ OLAN İRAKİ YİKMAK.

ONDAN SONRA SÖYLENENLER, HEPSİ "LAŞ GÜZAF" HEPSİ YALAN, HEPSİ PALAVRA.

ASİRLARDAN BERİ DEVAM EDEN, KAPITALİSTLERİN ZAVALLI MİLLETLERİN KANINI EMME SIYASETİ, AYNEN DEVAM EDİYOR.

DEĞİSEN, YALNIZ ELBİSELER, SILAHALAR VE SÖZLER.

YAZIK, ÇOK YAZIK İRAK HALKINA. 1990-DAN BERİ DEVAM EDEN AMERİKAN ABLUKASINDAN DOLAYI İRAKTA YÜZBINLERCE İNSAN ÖLDÜ. SUBAT 2003-TEKİ KURBAN BAYRAMINDADA, YENİ AMERİKANIN KURBANI OLUCAKLAR.

**8. Զ.**

## ԿԵ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԲԵՐՈՒՆ [ԻԲԲ թէ] ՀԳԻՏՑԱՍ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԵԱՆ “KURBAN”Ի ՏՈՆԵ

Միւսլիմանները, յառաջիկայ Փետրուար ամսուն մէջ, “KURBAN”Ի տօնին կը պատրաստուին. ոչխար պիտի գոհարերեն:

Ամերիկան ալ Փետրուար ամսուան մէջ, “KURBAN”Ի տօնին համար պատրաստութիւններ կը կատարե՝

Իրաքի ժողովուրդը գոհարերելու կը պատրաստուի:

Բայց, Ամերիկան ինչո՞ւ այսրան «Սատտամ, Սատտամ» կ'ըսէ ու կ'ըսէ տեւական:

Ո՞վ է Սատտամը. Ամերիկան C.I.A. կազմակերպութեան մարդն է՝ Պեն Լատենի նման, գօրավար Նոհրէկայի նման:

1979-ին Ամերիկան, Սատտամը իշխանութեան բերաւ, Իրաքի մէջ գտնուող համայնավարները «Ճարքէ» ըսելով:

Սատտամ 1979-ին, իշխանութեան գալէ յետոյ, Ամերիկայի հրամանով, տասնեակ հազարներով համայնավար սպաննեց: Յետոյ, կրկին Ամերիկայի հրամանով, Սատտամ Իրանի վրայ յարձակեցաւ:

Տարիներ տեսող այս պատերազմին՝ հարիւր հազարներով անմեղ մարդիկ մահացան:

Այս ալ Ամերիկային ա՛յն ատենուան “KURBAN”Ի տօնն է:

Այս միջոցին Ամերիկան, Փետրուար ամսուան մէջ, իրենց մարդու եղող Սատտամը «գոհարերելով». Իրաքի «Քեթրուլը» ծեռք անցընելու կը պատրաստուի:

Բոլոր այս պոչաւոր սուտերուն՝ «Հէ, Սատտամը զանգուածային քաշընջման գէնքեր ունի. Հէ, Սատտամը քիմիական գէնքեր ունի» — այս սուտ ամրաստանութիւններուն ետեւը թաքնուած Ամերիկային բուն նպատակն է՝

1.— Իրաքի քարիղի հորերը ծեռք անցընել:

2.— Խորայէի մահացու թշնամի վերջին արարական պետութիւնը կործանել:

Ասկէ դուրս բոլոր ըսուածները ծարոտուքներ են, բոլորն ալ սուտ պատճառարանութիւններ են:

Դարերէ ի վեր շարունակուող, դրամատէրերուն խեղծ ժողովուրդներուն արիւնը քամող քաղաքականութիւնը նոյնութեամբ կը շարունակուի. Փոխուողները միայն հագուստները, գէնքերը և խօսքերն են: Մեղք, շատ մեղք Իրաքի ժողովուրդին:

1990-թէն ի վեր շարունակուող Ամերիկան շրջափակումին պատճառաւ, Իրաքի մէջ հարիւր հազարներով անմեղ մարդիկ մահացան:

Փետրուար 2003-ի՝ “KURBAN”Ի տօնին ալ, կրկին Ամերիկային գոհը պիտի ըլլան:

**8. Զ.**

## ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ... ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻԻ... (Ժար. Էջ 3-ԷՇ)

բարեկարգութեան հարցին մէջ, մանաւանդ անպէտ կուսակրօնութեան վերաբերեալ իր գաղափարները կը յայտնէր. եւ Հայ. եկեղեցական կանոնները բարեփոխման ենթարկելու ամհրաժեշտութիւնը կը ջատագովէր:

Բայց, մենք կը հաւատանք, թէ այսօրուան Հայ. եկեղեցիին ամենակարեւոր հարցը եկեղեցական օրէնքները փոխելու հարցը չէ, այլ՝ Հայ կրօնականներուն որակը բարձրացնելու, բարձրաստիճաններուն մտայնութիւնը փոխելու, մանաւանդ «Բարձր Աթոռ»ներ գրաւող Հայ Առաջնորդներուն հայրենասիրութեան «Ոգի»ին հարցն է:

Դոկտ. Արէլ Քահանան իր գրութեան մէջ, մասնաւորապէս, երեք Հայ կրօնապետներուն՝ Հայ. եկեղեցական օրէնքներուն բարեփոխութեան մասին. յայտնած գաղափարները կը նշէ՝ Առաջինը՝ «Պոլսոյ պատրիարքներէն Մ. Օրմանեանն է:

Կարմիր Սուլթան՝ արիւնարրու Ապտիւլհամիտին շրջանէն Պատրիարք եղած Օրմանեանը 1908-թին, Պոլսահայ ժողովուրդին կողմէ պաշտօնէն վար առնուեցաւ:

Եւ ժողովուրդը Օրմանեանին երեսին թքնեց. եւ Օրմանեանը Հայ ժողովուրդին կողմէ բզբաժուկ ազատեցաւ՝ Թալաթի նման ցեղասպան փաշաներու կողմէ:

Դոկտ. Արէլ Քահանային մասնաւորապէս մեծ ակնածանքով յիշած և անոր գաղափարները դրուատած երկրորդ կրօնապետը՝ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսն է, որ Հայաստանի իր քարոզներուն և ելոյթներուն մէջ, «Ամերիկացիներուն մարդը» եղող Լեւոն Տէր Պետրոսեանին հրահանգով՝ Սովետական Հայաստանը և Համայնավար Հայերը «կը քարկոծէր» ու կ'անուանարկէր մոռնալով, որ ինք Լեւ. Տէր Պետրոսեանին կաթողիկոսը չէր, այլ բոլոր Հայերուն կաթողիկոսն էր. ըլլան անոնք Համայնավար, Հնչակեան, ուամկավար կամ անկուսակցական... ի՞նչ գոյն ալ ունենան:

Դոկտ. Արէլ Քահանայ Մանուկեանին մեծ գնահատանքներով յիշած և անոր գաղափարները ներքողած երրորդ Հայ կրօնապետը Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ն է: Ըսելիք չունինք Վեհին անձնական արժանիքներուն մասին: Բայց ցաւով կը յիշենք, որ ինք էր անցեալ տարի ժընեւի «Էօգիւմենիկ» Համաժողովին ընթացքին, բեմին վրայ դրուած պատույ սեղանին շուրջ նատողը, Պոլսոյ «Թրքացած» Պատրիարքին հետ: Գիտնալով Հանդերձ որ ինքզինք նաեւ «Թուրք» նկատող Պատրիարքը էջմիածնի դէմ անշատողական կեցուածք ունի, բայց նորէն ալ միւռունօր Հնէքի Հրաւիրեց թրքութեան ծառայող այս կրօնապետը, ինչ որ ճիշդ չէր, և օրին, այս մասին ցաւով արտայայտուած էինք:

Մենք կը հաւատանք, որ Հայ. եկեղեցին ներս, կանոնական բարեկարգութիւններ կատարելի առաջ, Հայ եկեղեցականները, Հայկական «ոգի»ով, Հաւատաքնութեան ենթարկել պէտք է:

### ՓԱՐԻԶ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՈՂ «ԱՇԽԱՐՀ» ԹԵՐԹԻ ՄԱՍԻՆ

1959-թ. ներուն, Աւետիս Ալեքսանեանի կողմէ Փարիզի մէջ Հրատարակուիլ սկսած «Աշխարհ» թերթին սրտանց կը հաւատայինք, որ ան Հայրենասէր թերթ մըն էր:

Աւետիս Ալեքսանեանի մահանալին յետոյ, խմբագրապետութիւնը ստանձնող Պարգև Նամիկեանի շրջանին, «Աշխարհ» թերթին Հայրենասիրութեան մասին կասկածներ ունեցանք՝ տեսնելով անոր մէջ պատեհապաշտ գրութիւններ:

Ասոր ալ մահանալին յետոյ, «Աշխարհ» թերթին խմբագրապետը Գէորգ Սարեանը եղաւ:

Բայց, 14 Դեկտեմբեր 2002 թուակիր «Աշխարհ» թերթին մէջ, «իր ինքնութեամբ Հայրենասէր շրջանակներուն շատ լաւ ծանօթ» Ամերիկացի Մոնթէ Մելքոնեանին ծննդեան 45-րդ տարեդարձը յիշատակող դրութիւնը կարդալէ յետոյ, այլևս կը հաւատանք, որ այսօրուան «Աշխարհ» թերթը Աւետիս Ալեքսանեանին հիմնած «Աշխարհ»ն ըլլալէ շատ, շատ հեռու է:

## ՃԱՐԸ՝ ԲՈՆԻ ՈՒԺՈՎ ԶԵ՛

Տայնատղմե՛ր, տայնատղմե՛ր, երկարեայ, արոմակիր.  
Կրակ, ծծումք փշող վիշտաշունչ թնդանօրներ  
Թատերական ներկայացմամբ տարածուեցան...  
Մարդիկ, ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ, ըստն ու զարմացան:

Մարտանուե՛ր հրարձակ, սարսափեցնող, մահարեր,  
Ռմրակոծող ճագերն իր բեւալոր կռնակած,  
Մովերէ ծով համատարած, անազորյն մկանուած,  
Պատրաստ հարուածելու, անհամբեր և լարուած:

21-րդ դարու մուր ու անփառունակ նախաշեմին,  
Իրք թէ հաղափակիրը նոր աշխարհ օրէնքին  
Առատանեն դոները կրակով բացուեցան,  
Հատուցում տրուեցաւ հոգին ծախողին.  
Իսկ... կամքը պաշտպանո՞ղին՝ զլխուն կացին:

Իրաւունքդ արդար թէ պաշտպանես.  
Վնասակար, վտանգաւոր աւերող ես...  
Բոնութեան կեղծ ու սուտին համակիր չե՞ս.  
Քաղաքակիրը աշխարհի փշրանցներուն  
Նողոնորք համրոյներուն արժանի չես:

Մարդկութեան զլխին կրակ ու բոց բափելո՞վ,  
Քանդել... վիշտ, մահ ու արիւն տարածելո՞վ...  
Կը փորձեն յառաջադէմ վարչակարգ պարզեւել  
Կամ... խարել, համոզել և արդարութիւնը հարուածել:

Քանզի, հզօրութիւնը իր մէջ ունի տկարութիւն...  
Կը փորձէ շահիլ, իրեն ի նպաստ կողմնակցութիւն.  
Մնծութեանը մէջ շփոր և դժուար կացութիւն.  
Զգոյշ և վերապահ... տանի կայ ըմրոստութիւն:

Բնածինային հարուածը մահատարած առսկալի՝  
Արդիական ոումբերավն իր բունաւոր և սարսափելի.  
Պիտ տարածուի շրջակայ երկրէ երկիր և անխոտիր.  
Օդն ու ջուրը ախտալի և դիակներ մոխրակոյտի.  
  
Պատճառելով հակամարդկային մեծագոյն ոնիք, աններելի...  
Արեւելը դժոխի... Արեւմուտքն ալ՝ դրախտի...

Կոյս բնուրեան ծիածանը դէպի փնացումի.  
Աներեւակայելի... կա՛յ միրէ ասկէ մեծ սխալ ահռելի:

Ինչո՞ւ համար, ընդդիմադիրները բազմացան,  
Քանի... վտանգը թէ զարնողին է, թէ ալ զարնուղին,  
Այս տագնապին մէջ միայն խելքն է յաղրական...  
Փոստ կամուրջէն անցնողը կը մատնուի պարտութեան:



Այսօրուայ աշխարհի,  
Իի՞ն ու տգէտ  
նախկինը չէ...  
Մարդիկ միլիոններով  
շատցան և զարգացան.  
Ազգեր, զաղափար,  
փորձ, սովոր ու կաց  
ունեցան.

Ընդդիմութեան բանը  
իրենց իրաւունքն է  
անձնական:

Կարելի չէ հասկնալ.  
թէ նարը բռնի ուժով  
չէ...  
Ոխերմութիւնն սով.  
ցաւ, աւեր կը  
պատճառէ,

Մարդիկ այլեւս յոգնած են ու մահը նպատակ է...  
Խորել լեցուած, պայրող ոումբի հաւասար է:

Արեւելը երբեք Արեւմուտին նմանը չէ.  
Հինէն եկած... հոգիով կոփուած պայխար է.  
Անկեղծ սրտով, քարի մտելով թէ մօտենաս.  
Հացին կէսը բաժին կուտայ. երէ... զինք հասկնաւ:

Ճշմարիտը հասկնալ շա՛տ զիւրին և շա՛տ դժուա՞ր է...  
Ումանց համար իրաւ կեանմն է ումանց՝ ախղաղի ծայն...  
Խաղաղութիւնը խաչեալ Յարութեան համաձայն  
Պետ է խորտակէ չարիքը և վերափին դատնայ Յաղրական:  
Գյորուր, 2003 ԲԻՒԶԱՆԴ Տ. ԽԱԽԱՄԵԱՆ

# GREECE, CYPRUS, TURKEY, ISRAEL AND MR. BUSH'S IMMINENT WAR ON IRAQ

January 22, 2003

On December 12, 2002, The Republic of Cyprus was among the ten new members admitted to the European Union (EU) in a ceremony held in Copenhagen. Recep Tayyip Erdogan, the head of the AK Partisi (the Justice and Development Party) which came to power in the elections of December 03, 2002, was also present. He had come to plead with the heads of government of the 15-member European Union to obtain a date as to when negotiations for the admittance of Turkey to the EU could start.

The decision reached was that in December 2004, the EU would review the progress achieved by Turkey in implementing the promised criteria and then give a date or deny entrance.

The AK Party won the elections conducted according to the electoral law introduced in 1980 by the Turkish generals after the coup which overthrew the legitimate government. The generals at that time were headed by Kenan Evren who has now retired in Marmaris on the Aegean Coast; he has the armed protection granted to all previous presidents of Turkey. Before abandoning the government, the generals declared themselves "SENATORS FOR LIFE" with the salary of a senator which also gave them all immunity from prosecution for life.

Kenan Evren is originally from the Balkans, and had in those times declared that the Armenians were an "insignificant tribe like the gypsies which came from Thrace into Anatolia and that the Armenians in history never had a ruling government in Anatolia"....

According to Evren's electoral law, polls had indicated that only the AK Party would be able to surmount the necessary threshold; the AK Party was seen as the definitive winner; therefore, all liberals, all intellectuals and all businessmen voted for the CHP (the Republican Peoples Party) headed now by Deniz Baykal. Although the CHP was founded by Ataturk, the founder of modern Turkey, it could not achieve more than a few percent, just enough to enter the government and become the coalition partner.

The AK Party mustered a little over 20%, but still that was the majority of the vote. This party has its origin in Islamic roots and it was expected that once in power they would introduce an Islamic agenda which ultimately would clash with the military establishment. The military is still the greatest power in Tayyip Erdogan, while being Mayor of Istanbul, had recited a poem with Islamic content, sufficient to lead him to prison for four months and the prohibition to hold government office. Therefore, he could not be elected Premier. Nevertheless, he visited all European capitals and was immediately invited to Washington by the Bush Administration.

**Dear Mr. Antranik M. Daghlian:**

**Many thanks for the flattering compliments expressed in the New Year's issue of "Nairi".**

**All the compliments have to go to Mr. Jirair Tossounian, who, as editor of "Nairi", assumes all responsibility for the articles printed.**

**As you very well know, many countries with various sensibilities, be it political, or historical, or social, or ideological or religious, feel the necessity to impose censorship of the press. Again, Mr. Jirair Tossounian is the one who shows the courage to face this challenge.**

**Below is a small example as it appeared in the "New York Times" of January 18, 2003 and was reported by AP (Associated Press) :**

## MIDDLE EAST

**JORDAN: PAPER SHUT FOR SEX ARTICLE** The government closed the Crescent weekly newspaper and detained three journalists for an article that discussed the sex life of the Prophet Muhammad and his favorite wife, Aisha, an editor at the paper said. Officials detained the editor in chief, a senior assistant editor and the writer of the article for 15 days, the official Petra news agency reported. The journalists were accused of "harming the dignity of Prophet Muhammad's wife Aisha," harming the government and destabilizing society.

(AP)

Abdullah Gul is now the premier but according to another provision of the electoral law, Mr. Erdogan can be elected a representative of Parliament in February and then he might be elected Premier.

Kofi Annan, the Secretary General of the United Nations, had submitted a plan for the solution of the Cyprus problem. Mr. Annan had expected the acceptance of the plan by both sides, so that a United Cyprus could be accepted into the European Union. Rauf Denktash, the leader of the Turkish community in Cyprus and the bullhorn of the Turkish military of Ankara which occupies the northern part of Cyprus with a 40,000-men-force, was undergoing open-heart-surgery in New York; showing his illness as a pretext at that time, he pretended not to have enough time to examine the Annan-document which he has outright rejected during the past few days. The government of Athens and the Greek government of Cyprus accepted the Annan plan as a basis for negotiations.

In the meantime, the Turkish Cypriots in the North have demonstrated several times against Denktash asking for his retirement and asking for the acceptance of a peace plan for the unification of the Island. The demonstrators have been estimated to be 30 to 50 thousand. The Turkish Cypriots amounted to 80,000 at the time of the invasion. The Turkish side claims to have a population ranging from 150 - 250,000; nobody knows the actual figure nor have the results of a Turkish census been disclosed showing how many Turks are Cyprus-born and how many have been resettled from Anatolia. Since the settlers would not demonstrate, it is estimated that 30 - 50% of the real Turkish Cypriots have been demonstrating!

They are demonstrating because they are economically deprived and because they want to join the European Union like the rest of the Island.

In the Turkish Parliament, the foreign minister, Mr. Yakis said: "Do you realize that you are occupying a part of the European Union..." Deniz Baykal, the coalition partner, replied: "Out of the 65 million Turks, the foreign minister should be the last one who said these words..."

Kofi Annan extended the deadline for solving the Cyprus problem according to his plan to February 26, 2003. Cyprus is holding presidential elections on February 16, 2003. Mr. Glafkos Kleridis who had announced that he would withdraw from politics, put his candidacy again in order to be able to conduct the negotiations for the unification of the divided island to find a solution for the benefit of all Cypriots, "The Greek-Cypriots, the Turkish-Cypriots, the Maronites, the Armenians and the Latins". (These are exactly his words).

Mr. Christofias, President of the Cypriot Parliament and head of the AKEL Communist Party said that tough negotiations are necessary because the United States is tilting toward Turkey because of Turkey's strategical position in the forthcoming war with Iraq.

It is very interesting to analyze why so suddenly the newly elected AK Party put all his horses on joining the European Union and on solving the Cyprus problem. The simple answer is: they are testing the grounds of their existence.

AK claims not to have an Islamic agenda. The future will show if that is true. In order to counter these claims, AK was clever enough to embrace frantically the joining into the European Union. Yes, of course, Turkey would benefit enormously if she could join the EU; the AK Party know that, and most Turks know that. And all of them do know that they are still not ready for joining. However, they advocate furiously the joining because they know that their main enemy objecting to the joining is the Turkish MILITARY. The Military is challenging their mere existence and they would prohibit the AK PARTY immediately if they could. Why should the military give up its privileges and be subjugated to the civilian politicians? Such a thing is unthinkable for the Turkish military.

The occupation of Cyprus is the brainchild of the Turkish Military. Ecevit, the Turkish Premier in 1974, the time when the island was invaded by Turkish forces, was just following orders and was guided by his mentor, Henry Kissinger. The Turkish Military is the only dictatorial ruler in Northern Cyprus and they would rather die than retreat. How would they accept a solution for a unified Cyprus? The essence of any kind of military is command from the top to the bottom. The Turkish Military Establishment does not recognize the Turkish Civilian Authority. Would they now submit to the civilians and accept orders from civilians?

With these thoughts in mind, the government of the AK Party opted immediately for the solution

of the Cyprus problems and criticized Denktash asking him to resign by announcing that "the solution of the Cyprus problem can not be the caprice of Denktash!" Denktash is the bullhorn of the Turkish military who declared the demonstrator as "flies which I can wipe out with a stroke of my hand! To which Annan replied: "When the people speak, their leaders have to listen..."

Greece has assumed the Presidency of the EU in the beginning of 2003. Since Greece is FOR the solution of Cyprus, Tayyip Erdogan and his party have approached the Premier, Simitis, and the Foreign Minister, George Papandreou, to intervene with their good offices for the admission of Turkey in the E.U.

Greece is now a staunch supporter of Turkey's membership in the E.U. Greece prefers a [solution](#) (p. 12)

ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՈՆԵՆՔ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԽՐԵԱԼ

## ՆԱՀԱՏԱԿ ՈՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

ԵՒ ԻՐԵՆ ԲԱԽՏԱԿԻՅ, ԶԱՆԴՐԸ ԱՔՍՈՐՈՒԱԾ  
ԲԱՅՑ ՎԵՐԱՊՐՈՂ ԵՐԵՔ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԸ՝

- 1.- ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ
- 2.- ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՊԵՏ ՊԱԼԱԶԵԱՆ
- 3.- ՑՈՎՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

24 ԱՊՐԻԼ 1915-Ի ԱՔՍՈՐԵԱԼ ԵՐԵՔ  
ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐՈՒՆ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԵՒ  
ՈՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ  
ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(ՎՐԵԺ ՈՈՒԲԷՆԵԱՆ)


ԱՌԱՋԻՆ ԿՐՈՆԱԿԱՆԸ՝  
ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ  
ՍՈՂՈՄՈՆԵԱՆ

Ոուբէն Սեւակի և Կոմիտաս Վարդա-  
պետի առաջին հանդիպումը տեղի կ'ու-  
նենայ Յունիս 1907-ին, Զուհցերիոյ Լո-  
զան քաղաքին մէջ:

Կը հրապարակենք այս հանդիպումը  
յաւրժացնող լուսանկարը:

Մեծ հաւանականութեամբ՝ այս պատ-  
կերը նկարահանուած է Լոզանի պատ-  
մական CATHEDRALE-ին առջեւ, ուր կ'երեւան,  
ձախին աջ՝ բժշկական ուսանող Ազատեան,  
բժշկական ուսանող Ռուբէն Սեւակ, բանա-  
տեղծ Արշակ Զօպանեան, Կոմիտաս Վար-  
դապետ Սողոմոնեան, բժիշկ Ղազարոսեան  
և դերասան Իրէցեան:

Այս՝ համեմատաբար աւելի խաղաղ օրե-  
րէն յետոյ, շատ տառապալից շրջան մը



կ'ապրի Հայ Ազգը: Կու գան սեւ օրեր: Եւ քանի մը տարի յետոյ՝ 1914-ի պատերազմը կը սկսի և կը հասնի դժոխային օրը՝ 24 Ապրիլ 1915-ը:

Կոմիտաս առաջին աքսորեալներուն մէջ է: Կը դրկուի Զանդըրը: Բայց իր դիրաքեկ մնային կառոյցը չի դիմանար այս չարչարանքի օրերուն:

Իր բարեկամները և համակիրները, Պոլսոյ մէջ կ'աշխատին Կոմիտաս Վարդապետը ազատելու այս դժոխյան մէջ է: Եւ Կոմիտաս՝ Մայիսի վերջաւորութեան, Զանդըրը մէջ ազատ արձակուելով, Պոլսոն կը վերադառնայ: Բայց ան, այլևս «Հին Կոմիտասը» չէ: Մոտային խանգարումներու առաջին նշանները սկսած են արդէն:

Մինչ այդ, Ռուբեկն Սեւակ ընտանեօք, Թունիս 1914-ի սկիզբները, Լոզանէն Պոլիս կը վերադառնայ: Եւ ի՞նչ չար բախս՝ քանի մը օր յետոյ, Թունիս 1914-ի վերջաւորութեան, Առաջին Աշխարհամարտը կ'սկսի: Ռուբեկն Սեւակ, ստիպողաբար կը գինուորագրուի Օսմանեան բանակին մէջ, իր բժիշկ-հարիւրապետ:

Բայց, 24 Ապրիլ 1915-ի առաջին ծերբակալուղթներուն մէջ, Ռուբեկն Սեւակը չկայ:

Իր կնոջ գերմանացի ըլլալը և իր Օսմանեան բանակի հարիւրապետ-բժիշկ ըլլալը պատճառ եղած են հաւանաբար, իր ծերբակալման ուշացմանը:

Եւ այս յապահումը Ռուբեկն Սեւակ, իրեն համար նուաստացուցիչ պարագայ նկատած է:

Իր մտաւրական ընկերներէն Զիթունին ին վկայութիւնը կայ այս մասին.՝ «24 Ապրիլ 1915-ի յաջորդող օրերուն. Ռուբեկն Սեւակին հանդիպեցայ, Պոլսոյ Պահէ գայ Գաբըը հրապարակը: Եւ անհօծի սա խոսքերով իր ցաւը

<b>ՎԿԱՅԱԳԻՐ</b>		<b>ՄԿՐՏՈՒԹԵԱՆ</b>
<b>ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՅ ՌՈՒՐՔԻՈՅ</b>		
Անուն Սերուային	Հեռև շունչեալուն	
Հայրը	Ռուբեկ Յավենանեան շինուալուն	
Մայրը	Խենի Ֆանն Արքան	
Սենդ. Բէն-Վայը	Խորհուուց 19.7.1919	
Սկրութեան Բէն	19.6.1915	
Սկրութեան Վայը	Ա. Լուսուարէ. Հայո. Անկան. Բանեալուն	
Սկրութեան Բնայ	Ա. Անտոն. Բնայ. Խանուալուն	
Կեմանայր	Տ. Խանուա. Խոյ. Զինորքնեան	
Պատրիարքարանի Մայը տոմարի թիւ	Հ. 6286	
Եկեղեցւոյ տոմարի թիւ	253-192	
Կը հաստատեմ որ վերոյիշեալ անձ Սկրութեան է ըստ օրինի և պատմական անդամ Հայ Եկեղեցին: 8 տոնեան 1994		
		<i>Տաճակ Առքի Հայութեան Անդամ Պատրիարքական Գլուխուրը</i>

<b>ՎԿԱՅԱԳԻՐ</b>		<b>ՄԿՐՏՈՒԹԵԱՆ</b>
<b>ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՅ ՌՈՒՐՔԻՈՅ</b>		
Անուն Սերուային	Ռուբեկ	շունչեալուն
Հայրը	Ռուբեկ Յավենանեան	շինուալուն
Մայրը	Խենի Ֆանն	Արքան
Սենդ. Բէն-Վայը	Խորհուուց	19.6.1915
Սկրութեան Բէն		19.6.1915
Սկրութեան Վայը	Ա. Լուսուարէ	Հայո. Անկան. Բանեալուն
Սկրութեան Բնայ	Ա. Անտոն.	Բնայ. Խանուալուն
Կեմանայր	Տ. Խանուա.	Խոյ. Զինորքնեան
Պատրիարքարանի Մայը տոմարի թիւ	Հ. 6286	
Եկեղեցւոյ տոմարի թիւ	253-192	
Կը հաստատեմ որ վերոյիշեալ անձ Սկրութեան է ըստ օրինի և պատմական անդամ Հայ Եկեղեցին: 8 տոնեան 1994		
		<i>Տաճակ Առքի Հայութեան Անդամ Պատրիարքական Գլուխուրը</i>

արտայայտեց:  
 «ՄԵԶԻ ԱՍՕԹ  
 ԶԷ», ՈՐ ՍԵՆՉ  
 Դ Ե Ռ Լ Ո Ս  
 Ե Ն Զ»:

\*\*

Այստեղ առաջին անգամ ըլլալով կը հրապարակ են նրան, Ռուբեկն Սեւակի գաւակներուն մկրտութեան վկայագիրները:  
 Մկրտութիւնը կատարուած է Պոլսոյ այն շըրջանին Բանկալթի կոչուած բաղամասը գտնո-

ւո՞ Սուրբ Լուսատորիչ եկեղեցին մէջ: [Այս եկեղեցին այսօր գոյութիւն չունի, որովհետեւ 1930-ներուն, Թուրքերուն կողմէ, ճամբար բանալու պատրուակով, քանդուած է]:

Մկրտութիւնը կատարուած է 19 Ցունիս  
1915 բուհականից:

Ուշադրութիւն ըրեւ մկրտութեան քուա-  
կանից՝ 24 Ապրիլ 1915-էն գրեթէ 2 ամիս-  
ներ յետոյ: Ուուրէց Սեւակ դեռ չէ ծերբա-  
կալուած: Եւ ո՞վեր են կօքահայրները:


Ծամիրամին կնքահայրը՝ Օսմանեան պետութեան թղթատարութեան նախարար Ուկան Մարտիկեանն է: Խակ Լետոնին կնքահայրը՝ Կոմիտաս վարդապետ Գեորգեանը [Կոմիտասին հօր անունը Գեորգ էր]:

Կոմիտաս, Զանգըրը-ի դժոխքեց վերադառնելէց յետոյ, Եերկայ գտնուած է իր բարեկամ՝ Ռուբեց Սեւակի զաւակներուն մկրտութեան և կԾքահայրը եղած է Լեւոնից:

Եւ այդ թուականքէց 3 օր ետք, 22 Յունիս 1915-ին. կէս գիշերէն յետոյ. Թուրք ոստիկանները Ռուբէն Սեւակին Պոլսոյ Բանկալթը Նալպանտ փողոցը գտնուող բնակարանը կու գան և զինք կը տանին:

Եւ խելագարած ժանցի Սեւակ, իր ամուսնից տարրութելէց անմիջապէս յետոյ՝ 23 Յունիս 1915-ի առաւօտեան ժամը 3:30-ից. Լոզան բնակող իր ընտանիքին ահազանգի հեռագիր մը կ'ուղարկէ.

«ԱՆՄԻԶԱՊԵՍ ԵԿՈՒՐ, ՄԱՅՐԻԿ» ԺԱՆՏԻ



Եւ Զուիցերիայէն՝ մայրը շուտով կը հասնի Պոլիս: Եւ իբր Գերմանացի. դիմումներ կը կատարէ Գերմանական դեսպանատունը, որ մահուընէ ազատէ իր փեսային: Բայց թիչ ժամանակ յետոյ. կը հասկնայ իրականութիւնը. Գերմանացիները մեղսակից են Թուրքերուն. հայերուն դէմ կատարուած ողբերգութիւններուն մէջ:

Եւ Սեպտեմբեր 1915-ի կէսերուց, զարհուրելի և ահաւոր լուրջ կը հասնի: Պոլսոյ գերմանական դեսպանատունը իրենց կը տեղեկացնէ, թէ՝ «Ռուբէն Սեւակ 26 Օգոստոս 1915-ին, Զանդերը-ի շուրջ, «աւագակներու» կողմէ սպաննուած է»:

Եւ Տիկին Ապէլ, իր աղջիկը՝ ժամսին և քոռները՝ Լեւոնը և Շամիրամը առնելով, 16 Սեպտեմբեր 1915-ին Զոհացերիա կը Վերադառնա:

•

Մինչ այդ, Կոմիտաս վարդապետին Պոլսոյ մէջ, մտային վիճակը օրէ օր աւելի կը վատրարանայ:

Եւ զինադադարէն յետոյ՝ 1919-ին Կոմիտաս վարդապետը, բուժութելու համար. Փարիզ կը փոխադրեն: Եւ ան, Փարիզի հոգեբուժական հիւանդանոցներէն մէկուն մէջ կ'ապրի, աւելի ճիշտ՝ ամէն օր կը «մեռն» մինչեւ 1935... Եւ ժաննի Սեւակն ալ, իր զաւակներուն՝ Լեւոնին և Շամիրամին հետ. մինչեւ 1919 թուականը Լոզան՝ իր ընտանիքին քով կը բնակին:

Յետոյ՝ 1919-ին ժաննի, իր զաւակները առնելով, Փարիզ կը մեկնի:

Այստեղ պիտի նշենք, Շամիրամ Սեւակի Փարիզի մէջ իրենց ապրած կեանքէն մեզի պատմած շատ տխուր դրուագներէն մէկը. «1925-թ. Շերուն էր: Կիրակի օր մը. մայրս մեզ տարաւ Փարիզի ժամ Կուժոն փողոցը գտնուող հայկական եկեղեցին:

Մայրս տեղեկացած էր, որ այն Կիրակին Կոմիտաս վարդապետը եկեղեցի պիտի բերեն:

Պաշտօնեային ըսինք. թէ Կոմիտաս Վարդապետը տեսնել կ'ուզենք: Եւ առաջնորդութեանք եկեղեցիին յարակից հիւրասրահը:

Հոն՝ պաշտօնեան մեզ ներկայացուց Կոմիտաս Վարդապետին ըսելով՝ «Հայր Սուրբ, Ռուբէն Սեւակին այրին և երկու զաւակներն են՝ Շամիրամը և Լեւոնը: Լեւոնին ալ կնքահայրն էք եղեր»:

Կոմիտաս Վարդապետ պատասխան չտուաւ: Բան մը չկրցաւ ըսել: Միայն. իր աչքերը մեր վրայ յառած էր, տեւակա՞ն:

Այդ ձեւով բաւական երկար և լուր վայրկեաններ անցան:

Բայց, միջոց մը ետք նկատեցի, որ Կոմիտասին աչքերէն արցունքներ կը հոսէին այտերուն վրայ:

Կոմիտաս Վարդապետին այն օրուան արցունքոտ աչքերը՝ յիշողութեանս մէջ քանդակուած կը մնան»:

## ԵՐԿՐՈՐԴ ԿՐՈՆԱԿԱՆԸ

Ռուբէն Սեւակին բախտակից. Զանդըրը աքսորուած. բայց վերապրող՝ Ցովհան Շ. Վարդապետ Կարապետեանի վկայութիւնը:

Զանդըրը-ի մէջ Ռուբէն Սեւակի հերոսական (մեր համոզումով) կեանքին մասին, ամենէն իրապաշտ և խորաթափանց վկայութիւնը կատարած է՝ Ցովհան Շ. Վրդ. Կարապետեանը:

Հայկականութեան խոր հաւատքով գրուած այս վկայութեան մէջ ան, Ռուբէն Սեւակի մասին, պաշտամունքի հասնող հիացումով կ'արտայայտովի: Եւ Ռուբէն Սեւակը կը նկատէ՝ «ՄԱՐՄՆԱՅԻՆ ՀԱՅ ԾԵՂԻՆ ՀԱԻԱՏՁԻ ԴԻՒՅԱԶՈՒԹԵԱՆ»:

Այս խօսքերով Ց. Կարապետեան Վրդ.Ռ. Ռ. Սեւակը կը նոյնացնէ՝ Վարդանանցի հերոսներուն հետ:

Ո՞վ է հայր Ցովհան: 1888-ին Պրուսա ծնած, մտաւորական պատութիի մը զաւակն է, որ Պարտիզակի Ամեր. Գոլէնը և Պոլսոյ Ռոպէրը Գոլէնը աւարտելէ յետոյ, Ամերիկա կը մեկնի և Գոլոմպիայի համալսարանէն M.A. աստիճանով շրջանաւարտ կ'ըլլայ:

Ամերիկայի մէջ, հայ եկեղեցու ծառայելու կոչում զգալով՝ յարանուանափոխ կ'ըլլայ, և 1914-ին Էջմիածնի մէջ, Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ Արեհայ կը ծեռնադրուի և յետոյ ալ՝ Վարդապետ:

1914-ին, կը պաշտօնավարէ Պոլս, իբր Պատրիարքին անձնական քարտուղար:

24 Ապրիլ 1915-ին, Թուրք ոստիկանութեան կողմէ կը ծերբակալուի և կ'աքսորփի Զանդըրը: Եւ հոն կ'ապրի Ռուբէն Սեւակի և միւս մտաւորականներուն /→էջ 3/

## ՆԱՀԱՏԱԿ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ... (Ծար. էջ 2-ԷԳ)

հետ, եղեռնի ամբողջ արհաւիրքը: Բարեբախտաբար, միջամտութիւններու շնորհիւ, կը փրկուի ստոյգ մահէ:

1918-ին Պոլիս է, և Պատրիարքարանին դիւանապետութեան պաշտօնին կը կոչուի, և յետոյ, Խզմիրի առաջնորդական տեղապահի պաշտօնը կ'ստանձնէ:

Բայց թրքական հալածանքը և եղեռնը կը շարունակուին: Եւ 1921-ին կը մեկնի Ամերիկա և Նիւ Եռոքի Ս. Լուսաւորիչ մայր եկեղեցին մէջ կը քարոզէ:

Աւելի ուշ, պարագաներու բերմամբ, կարգաթող կ'ըլլայ:

Համառոտ ձեւով այս է մեծ մտաւորականին, թունդ հայրենասէր Թովհանցէս Կարապետեանի տառապալից կեանքին պատմութիւնը:

Եւ հիմա կը հրապարակենք իր 21 Թունդար 1922-ին, Ամերիկայի «Հայաստանի Կոչնակ»ի մէջ հրատարակուած Ռուբէն Սեւակի մասին վկայութիւնը:

«ԷՇ ՄԸ ԱԶՍՈՐԱԿԱՆԻ ՑԻՇԱՏԱԿՎԵՐԷՍ»

1915 ԱՊՐԻԼ - 1918 ՆՈՅԵՄԲԵՐԻ «ՍԵՒԱԿԻ ԱՆՍԱՀ ՑԻՇԱՏԱԿԻՆ»

Չանդըրը հովիտը ոռոգող գետակին եզերքը՝ բարտիներու գծաւոր ստուերին տակ, կը ճեմէինք Թուլիսի առաւօտ մը, Տօքք. Ռուբէն Չիլինկիրեան [Սեւակ] ու ես, ըմբոշնելով անզուգական վայելքները գաղափարային ընկերակցութեան: Խօսակիցս կը վերլուծէր անհրաժեշտ պայմանները ազգային վերածնունդի:

Աքսորական կեանքի ճնշող մթնոլորտը՝ իր բոլոր սպառնական երեւոյթներով փայփայած չէր մեր լաւատեսութիւնը: Հակառակ «Իթթիհատի» հայաջինջ քաղաքանութեան արհաւրալից կիրարկումին՝ որու սկսեր էինք տակաւ վերահասու ըլլալ շրջող գրոյցներու և քաղաքական ուրիշ ցուցմունքներու հիման վրայ, երկուքս ալ անխախտ կը պահէինք հաւատքը Հայ ապագայի լուսազարդումին: Վայրկեան մը իսկ չէինք տարակուսիր, թէ տիրող ճգնաժամային կացութիւնը վերջապէս դէպի Ազատութիւն պիտի առաջնորդէր Ազգը: Կը մնար նոր արշալոյսը ողջունել նոր կենսունակութեամբ:

Քաղաքակիրք ազգերու շարքին մէջ հայուն գրաւած անվիճելի դիրքը աւելի եւս ամրապնդելու և միւս կողմէ դարաւոր բոնակալութեանց ազգային Ակարագրին վրայ դրոշմած տխուր հետքերը ջնջելու համար, կ'զգայինք ամէնալուրջ գործունեութեան մը պէտքը:

Կը մտածէինք, թէ հայ իրականութեան ամէն խաւրուն և շրջանակներուն մէջ ներարկուելու էր այլևս դարուս ոգին, որպէսզի արդիանար ազգային մտայնութիւնն ու գործելակերպը և միանգամ ընդմիշտ ջախջախուեին կապանքները կոյր աւանդամոլութեան:

Բարեկարգչական ու շինարար այս աշխատութեանց տեսիլը զմեզ կ'ոգեւորէր ծայր աստիճան: Չէ՞ որ, երկուքս ալ նուիրուածներ էինք, նոյն նպատակին ու պատրաստ՝ ամէն զոհողութեան: Ծառայութեան շրջանը անշուշտ պիտի չ'ուշանար: Հայութեան երկնակամարը մթագնող ամպերը պիտի փարատէին վերջապէս, ու զայն արիւնող շանթերն ալ յագուրդ տային իրենց կատաղութեան:

Իրերու բնականոն վիճակը երբ վերահաստատուէր, ասպարէզ պիտի իջնէինք անպայման:

Մեր խօսակցութիւնը հասած էր այս կետին, երբ Տօքթորը յանկարծ լրեց: Հոգեկան խռովք մը նշմարեցի իր ընդհանուր արտայայտութեանը մէջ: Կը դիտէի որ կոկորդին մասնները կու տալու ծանօթ պրկումները կը կրկնէին ջղայնաբար:

Ի՞նչ էր այն մտածումը զոր կը Վարանէր արտայայտել: Հարցուցի իր յուզման պատճառը:

«Հայր Սուլը», ըսաւ մեղմ ու խեղդուկ ձայնով. «Ինձ այնպէս կը թուի, թէ մահը հեռու չէ՝ բնաւ մեզմէ»: Նախազգացո՞ւմ մըն էր արդեօք, որ կ'ունենար: Անմիջապէս կոչում ըրի իր քիչ առաջուան խանդավառ զգացումներուն և ըսի, թէ իրաւունք չուներ յուսահատ ըլլալու:

Մասնաւորապէս ծանրացայ սա տրամաբանութեան վրայ, թէ քանի որ շուրջ քսան տարի պատրաստուեր էինք ծառայելու համար Ազգին կամ Եկեղեցին, պէտք էր թոյլատրուիլ մեզ քոնէ քսան ամիս գործել:

Մահուան հանդէաւ ունեցած պաղ արիւնս առաւելապէս արդիւնք ըլլալով տեսական հայեցողութեան ու հոգեկան տրամադրութեան՝ դժբախտաբար չէր արդարանար. այնքան մեզ շրջապատող իրերադրութեանց տեսակէտէն: Ամիսի մը չափ առաջ մեր բախտակիցներէն յիսուն երկու հոգի ճամբայ հանուած էին դէպի Տէր Զօր, չափազանց տիսուր պարագաներու տակ և արդէն տարածայնութիւնները կը բազմանային իրենց Գաղատիայէ քիչ անդին խժդժալի կոտորման: Ո՞վ կրնար երաշխաւորել թէ յաջորդ առաւտուն իսկ, նոր ցանկ մը պիտի չի ծանուցանէր Տէր Զօր դրկուելիքներու, որոնց մէջ գտնուէինք նաև երկուքս կամ ուրիշ բախտակիցներ: Ասկէ զատ, քաղաքին թուրք բնակչութեան մտայնութիւնը հետզհետէ կը լարուէր հայերու դէմ, տեղի տալով անարգական նորանոր արտայայտութեանց: Տարակոյս չկար, թէ մահուան ու կեանքի մէջ օրօրուելու շրջանն էր այս:

Տօքթորը կացութեան ծանրութիւնը լրջօրէն ըմբռնած՝ չէր ուզեր բաժնուիլ մահուան տեսիլէն:

— «Թշուառականները մեզ պիտի սպաննեն. բայց մենք պիտի չմեռնինք: Քանզի մեր գաղափարականները մինչեւ վերջը պիտի ապրին:

Կարելի չէ ջնջել այն ոգին, որ մղեց մեզ Ամերիկայի կամ Չուիցերիոյ հանգիստէն հրաժարելով գալ ու օգնել մեր սիրեցեալ Ազգին:

Ես կը հաւատամ, թէ անմահութիւն է ծրարուած զոհաբեր ծառայութեան մէջ»:

Այս բառերը արտասանուեցան ասպետական այնպիսի շեշտով մը, որ յատկանըշական էր Սեւակի մշտավառ կորովին: Գաղափարապաշտութիւնը նոր յաղթանակ մը կը տանէր այդ պահուն: Ցուզիչ էր մեր տեսակցութեան արդիւնքը:

Մահ կամ կեանք: Որոշած էինք հաւատարիմ մնալ մեր կոչման: Հանդարտութեամբ պիտի սպասէինք անակնկալներու յայտնութեան:

ԱԶՍՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՋԸ ՓՈՐՁԱՔԱՐՄԸ ԵՐ ԱՐԺԱՆԻՉԵՆԵՐՈՒ: ԱՄԷՆ ԱՆԶԻ ՑԱՅՏ ԿՈՒ ԳԱՐ ԻՍԿԱԿԱՆ ԻՐ ԳՈՅՑՈՎ:

Ոմանց համբաւին պատուանդանը կը գայթէր անդարձ, մինչ ուրիշներ նոր կը կերտէին կոթողները առինքնող հիացման: Փոխադարձ գնահատումի այս առիթը կ'առաջնորդէր կազմութեանը բարեկամութեանց լաւագոյններուն: Տառապանքով նուիրագործուած այս եղբայրակցութիւնները տաճարներ էին մինիթարութեան ուր հաւատք, յոյս և սէր կը բոցավուէին լուսաճաճանչ՝ կարծես իբր հակապատկերներ մթնոլորտը պատող անարդարութեան խաւարին:

Զաղցր էր արդարեւ ցորեկը բոլորուիլ ծառերու հովանիին տակ և խրախուսել զիրար: Մինչ գիշերը անքուն ժամեր կ'օգտագործուէին կացութեան մասին աւելի լուրջ վերլուծումներով:

ԱՅգամ մը՝ հազիւ շաբաթ մը ետք այն տեսակցութիւնէ որու անդրադարձայ՝ երբ նստած էի Զանկը հանդիպակած բլրակներուն բացուող պատուհանիս առջև, ու կը մտածէի զիս կախելու այն սպառնալիքին վրայ որ նոյն առտուն՝ ներկայութեան պարտաւորիչ արձանագրութեան համար ոստիկանատուն գացած միջոցիս ըրած էին շուկային մէջ երկու անզուսապ թուրքեր, յանկարծ սենեակ մտաւ Տօքթ. Զիլինկիրեան:

Սովորականէն աւելի մոայլ էր կերպարանքը: «Առաջարկ մը ունիմ ընելիք» յայտարարեց առանց յառաջընթաց խօսքերու: «Կը լսեմ, թէ Գաղատիոյ կողմերը իսլամացած են կարգ մը հայեր: Զեմ ուզեր որ մեր ընկերներէն ոեւէ մէկը այդպիսի տկարացում ունենայ ապագայ հաւանական ճնշումներու առջև. ուստի կը թելադրեմ որ դուն, իբր հոգեւորական, կանչես հոս գտնուողները և երդում առնես իւրաքանչիւրէն, թէ հաստատ պիտի պահեն քրիստոնէական հաւատքնին»:

Զանացի հանդարտեցնել Տօքթորը և բացատրեցի անպատեհութիւնները որ կային այդօրինակ արարողութեան մէջ, նկատի ունենալով մանաւանդ ժամանակին փափկութիւնը և մեր ընկերները անհարկի յուզման չմատնելու անհրաժեշտութիւնը: Համակերպեցաւ չպնդել իր տեսակետին վրայ. և սակայն, այդ միջադէպը կարծես կանխաձայնութիւն մըն էր մօտալուտ սարսափներու:

\* \*

Ծատ չանցած՝ կացութիւնը ստացաւ ամենասուր հանգամանք: Փողոցի թուրք տղաքը լաւագոյն ջերմաչափն էին հայահալած մոլեգնութեան: Լուսանքի սովորական տեղատարափը հիմա կը փոխուէր բիրտ ջարկոծման: Կոտորածի նախապատրաստութեան զրոյցներ կ'սկսէին աւելի ազատորէն շրջիլ: Գիշեր մը, ինքնապաշտպանութեան միջոցներու մասին խորհրդակցելու վրայ էի Պ. Տիրան Զէլէկեանի հետ, երբ Տօքթ. Զիլինկիրեան անակնկալ այցելութիւն մը տալով յայտնեց. թէ եկած էր ծանրակշիռ յայտնութիւններ ընելու: Փոքրիկ կանթեղին աղօտ լոյսը իր տժգունած դէմքին աւելի ամպոտ մէկ կիսաստուերը կը շրջագծէր պատին վրայ:

“Իա՞ սը լրութերւս տրրցց սեստակրս սէջ:

Իրարու նայեցանք հոգեկան խոր ներքնաթափանցումներով: Վերջապէս լսեցինք դաւադրութեան մը զարհուրելի նկարագրութիւնը:

Տօքթորին յուզեալ շեշտը դեռ կը հնչէ ականջիս փղձկեցուցիչ հակազդեցութեամբ:

Չանկըրը մէջ կառապան մը կար, որ ծանօթ էր իբր հեղինակ սանձարձակ արարքներու: «Իթթիհատական» ոճրապարտ խմբակը յանձին՝ իրեն գտած էր հլու գործիք մը զոր կը շոյէր ու կը շփացնէր մեծ հեռատեսութեամբ:

Կառապան Խսմայիլի մէկ աղջիկը Վիրաբուժական յաջող գործողութեան մը ենթարկուած էր Տօքթ. Բարսեղ Տիգանեանի ծեռքով ու վերջինին Պոլիս դառնալին ետք, հիւանդը փոխանորդաբար կը դարմանուէր Տօքթ. Չիլինկիրեանի կողմէ:

Այդ, ըստ վերջինին պատմութեան, նոյն օրը, երբ գացած էր հիւանդին այցելելու, կառապանը յանդգներ էր բանտարկել զինք տան խաւարամած գետնայարկը պահանջելով, որ իսկոյն իսլամանայ: «Ինծի նայէ-, պոռացեր է ճիւաղը Տօքթորին երեսն ի վեր-, ձեզ ամէնքդ թիւնէյի մէջ պիտի սպաննենք: Ձեզ սիրելուս համար կ'ուզեմ կեանքդ փրկել: «Հագգ Տինը» ընդունէ՛: Հակառակ պարագային աղէկ գիտցիր, որ կտոր կտոր պիտի ըլլաս»:

Տօքթորը, հաւատարիմ իր առջի օրուան ուխտին, արիաբար դիմադրեր էր տրամաբանութեան ուժով: Կառապանին յամառ պնդումը իր առաջարկին անմիջական գործադրութեան մասին մաքառումը երկարեր էր երկու ժամէն աւելի: Ճգնաժամային այս դրութենէն նողոպրելու համար. Տօքթորը գաղափարը յղացեր էր առաջարկելու կառապանին, որ թոյլ տայ իրեն քաղաքի զինուորական հրամանատարին հետ տեսակցիլ նոյն ուղղութեամբ: Օծիկը ազատելու այս հնարքը յաջողութեամբ պսակուած՝ ահա՛ եկեր էր ամէնուս ճակատագրին հետ սերտօրէն կապակցեալ նոր կացութեան վրայ խորհրդակցելու:

Ո՞վ կրնար այլևս անգիտանալ վայրկեանին վճռականութիւնը: Կ'զգայինք. թէ գոյութեան նժարը դէպի գերեզման կը հակէր աւելի քան երբեք:

Զիրար սրտապնդող մէկ քանի բառերէ ետք Պ. Զէլէկեան յիշեցուց, թէ յաջորդ օրը Ռամազանի Պայրամ ըլլալով, պատշաճ էր շնորհաւորական այցելութիւն տալ զինուորական հրամանատարին, և թելադրեց որ Տօքթորն ալ ընկերանայ որպէսզի կառապան Խսմայիլ գէթ պատրանքը ունենայ իր բաղձանքին իրագործման:

Անդրադարձանք նաև Չանկըրը փախուստ տալու կարելիութեանց. բայց չյաջողեցանք եզրակացութեան մը յանգիլ: Կար կէտ մը սակայն, որու շուրջ կատարեալ համաձայնութիւն կը տիրէր. եւ այդ ալ վեր բռնել էր ամէն գնով դրօշը քրիստոնէական հաւատթին: Զէլէկեան խաչակնքեց երկիւղածութեամբ: Խսկ Սեւակ իր բռունցքը ցցեց այն «մինարէ»ին ուղղութեամբ, որու պատշգամէն խոպոտ ձայն մը կը բարձրանար նոյն պահուն դէպի Ալլահն իսլամութեան:

\*\*\*

(Ծարք էջ 6)

**TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ  
“TÜRK” KİMDİR?**

1919-DA İSTANBULDA OSMANLI MECLISİNDE BIR RUM MEBUS, TÜRKLERİN NE OLDUGUNU SU CÜMLEL-ERLE İZAH ETMİŞTİ.

“BOZ KURT KARA KURT. KURT KURTTUR.

TÜRK DE, NE İSTERSE OLSUN, TÜRK TÜRKTÜRK”

1974 DE TÜRKİYE BASBAKANI ECEVİT KİBRİSİ ZAPT ETME FACIASININ İSMİNİ, “KİBRİS BARİS HAREKA-TI” KOYMUSTU.

IKİ GÜN EVVEL DE BUGÜNKÜ TÜRKİYE BASBAKANI ABDULLAH GÜL, SUBAT SONUNDA İRAKİ İSGAL HA-REKATI İÇİN SUNLARI SÖYLEMİŞ. “TÜRK ASKERİ HARBE İSTIRAK ETMEYECEK. YALNIZ KUZEY İRAKİ İSGAL EDECEK INSANI GAYELERLE KATLİAM OLMASIN DIYE”.

ABDULLAH GÜLÜN BU SÖZLERİNE KARGALAR BILE GÜLER.

HA 1974-DEKİ ECEVİT. HA 2003-DEKİ ABDULLAH GÜL. AYNI TÜRKLERDIR.

AYNI ZİHNİYET VE AYNI SAFSATALAR.

1974-DEKİ ECEVİTİN KİBRİS BARİS HAREKATINDA, ONBINLERCE MASUM KİBRİSLİ YUNAN AHALİSİ ÖL-MÜSTÜ.

BAKALIM ABDULLAH GÜLÜN, INSANI GAYELERLE KUZEY İRAKİ İSGAL HAREKATINDA NE KADAR KÜRT ÖLECEK?

**B. Q.**

**ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ [ԻԲԲ ԹԷ] ՀԳԻՏՑԱՌ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
Ո՞Վ Ե ԹՈՒՐՔԸ**

1919-ին Պոլսոյ Սամանեան Ազգային ժողովին մէջ, յոյն երեսփոխան մը, թուրքերուն ի՞նչ ըլլալը, հետեւեալ Նախադասութիւններով բացատրած էր՝ «Գորշ գայլ, կամ սեւ գայլ: Գայլը՝ գայլ է: Թուրքերուն ալ ի՞նչ ուզէ ըլլայ՝ թուրքը՝ թուրք է»:

1974-ին թուրքիոյ վարչապետը՝ Էծեվիտ, կիպրոսի գրաւման ողբերգութեան անունը՝ «Կիպրոսի խաղաղութեան գործողութիւն» տուած էր:

Երկու օր առաջ ալ, այսօրուան թուրքիոյ վարչապետը Ապտուլլա Կիլը՝ Փետրուարի վերջաւորութեան կատարուելիք իրաբի գրաւման գործողութեան համար ալ, սա բացատրութիւնը տուեր է՝ «Թրբական զինուրը, պատերազմի պիտի չմասնակցի»: Միայն հիւսիսային իրաբը պիտի գրաւէ՝ մարդկայնական նպատակներով. շարդ ըլլայ ըսելով:

Ապտուլլա Կիլին այս խօսքերուն ագուաները անգամ կը խնդան:

Ըլլայ 1974 թուականի Էծեւիտը, ըլլայ 2003 թուականի՝ այսօրուան Ապտուլլա Կիլը՝ նոյն թուրքերն են. նոյն մտայնութիւնը. նոյն ծարուտուքները:

1974-ի Էծեւիտի «Կիպրական խաղաղութեան գործողութեան», տասնեակ հազարներով կիպրացի-յոյն անմեղ ժողովուրդ սպաննուած էր:

Նայինք Ապտուլլա Կիլին մարդկայնական նպատակներով հիւսիսային իրաբը գրաւելու գործողութեան որբա՞ն բիւրտ պիտի սպաննուին:

**Յ. Պ.**

## ՆԱՅԱՏԱԿ ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿ ... (Ծար. էջ 3-էց)

Թաջորդ Կիրակի առաւօտուն, Չանկըրը Հայոց փոքրիկ մատուռին հնադարեան կոչնակը աղօթքի իր հրաւերովը մէկտեղ, կարծես ահազանգը կը հնչեցնէր մահուան անխուսափելիութեան: Տեղական փոքրաթիւ հայութիւնը որ ականատես էր եղած Պոլսէն խլուած աքսորական խումբին օրէ օր կոտորակուելուն, կը շարունակէր ջերմեռանդօրէն աղօթել մնացեալներուս փրկութեանը համար:

Զաղաքին օձապտոյտ ու ներ փողոցներէն լուտ և անշշուկ քալուածքով նոյնպէս դէպի Մատուռ կ'ուղղուէինք բախտակից երեսուն և հինգ ընկերներ - վերջին ներկայացուցիչներս Այաջ ու Չանկըրը քշուած երկու հարիւր իննսունի մօտ մտաւորական և եռանդուն հայութեան:

Արհաւիրքը կրօնական եռանդ էր արծարծած ամէն սրտի մէջ: Աւելի հիմնական պատճառը սակայն հրահրուող արթնութեան՝ ազգային բոլոր խաւերու և հոսանքներու մէջ տիրող ճշմարիտ եղբայրակցութիւնն էր: Հասարակաց թշնամիին դժոխային դաւերը ջնջած էին ներքին ամէն խտրականութիւն: Միասիրտ ու միակամ ինքնապաշտպանութիւն փորձող մեր խումբը բնական կը գտնէր իր ներշընչումը քաղել այն եկեղեցին, որ խորհրդանշած է միշտ ազգային միութիւնն ու գաղափարապաշտութիւնը:

Չանկըրը գօրանոցին գետնայարկի մէկ սրահը աղօթավայրի վերածուած էր բանտարկութեան շրջանին: Հոն, ամէն իրիկուն, հանգստեան ժամանակ, «Եկեսցէ»ի պաշտաման կարգը կը կատարուէր ու «Տէր Ողորմե՛ա» կ'երգուէր անօրինակ ջերմեռանդութեամբ: Խսկ աւելի ետքը քաղաքին անշուք այլ հնարոյր մատուռը դարձեր էր կիրակնօրեայ հաւաքավայրը իրենց հեռաւոր սիրելիներուն կարօտով տոշորող ու նահատակութեան սեմին վրայ անյողողող կանգնող նոյն վտարանդի խումբին:

Վերոյիշեալ Կիրակին, Ս. Պատարագի մատուցումը արցունք կը խլէր ամէն աչքերէ:

Մթնոլորտը ելեքտրականացած էր դէպի սպանդանոց առաջնորդուած մեր պատուական ընկերներուն սուգովը:

Կարծես քրիստոնէական հալածանքի առաջին դարերուն մէջ կ'ապրէինք:

Մատուռը իր ցած ծեղունով ու խորհրդաւոր լուսաւորումով գետնադամբանի (CATACOMBE) տպաւորութիւնը կը բողուր խսկապէս:

Մատուռին յառաջակողմը՝ դասին առջև ասպետական դիրքով կանգնած էր նոյն ինքն Տօքք. Չիլինկիրեան:

Կ'զգայի, թէ ինք, այդ վայրիկեանին, կը մարմնացնէր մեր ցեղին հաւատքի դիւցագնութիւնը: Երկիւդի նշոյլը անգամ չկար իր առնական դէմքին արտայայտութեանը մէջ: Երբ խորանին վարագոյրը երկրորդ անգամ բացուեցաւ ու սարկաւագը «Երկիւդի և հաւատով յառաջ մատիք և սրբութեամբ հաղորդեցարուք»ը եղանակեց, Սեւակ առաջինը եղաւ Ս. Հաղորդութիւնը ճաշակող:

Չեմ կրնար պահ մը իսկ մտքես հեռացնել իր այդ օրուան գրաւիչ վեհութիւնը: Կը նմանէր ինք այն յաղթական կաղնիին, որու բունը տապալել կը պատրաստուէին փայտահատներ:

Բայց ինք, անվրոյով կը դիտէր ապագան. քանզի իր արմատներուն խորութիւնը զուլալ աղբիւրներէ ոռոգուած՝ երաշխիքը կու տար վերստին բողբոջման:

Այսպէս ալ՝ Սեւակ վախ չունէր իր դահիճներէն: Անոնք կրնային իր մարմինը անշնչացնել, բայց իր հոգին յակատենական պատգամներ պիտի ունենար հայութեան ականցին հնչեցնելիք:

Ցովհան Ծ. Վրդ. Կարապետեան

7 Թունուար 1992, Ամերիկա «ՀԱՅԱՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ»  
(Վերջառաջին մասին)

*(7 Յանուար 1992)*

\*\*

Հայեր՝ Հայաստանի մէջ, կամ այլուր, հաւատացեալ կամ անհաւատ հայեր՝

Կրկին ու կրկին կարդացեք Ցովհան Ծ. Վրդ. Կարապետեանին Ռուբէն Սեւակի Չանկըրը աքսորավայրին մէջ հերոսական կեանքի մասին այս բացառիկ վկայութիւնը և նզովեցէք ու կրկին նզովեցէք Նահատակ Ռուբէն Սեւակի հոգին սրբապղծող անգիտակից հայերը:

## ԳԵՐԸ. Տ. ՑՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՆՈՒԷՐ ՀՈԳԵՒՐԱԿԱՆԸ

Գրեց՝ ՎԱՐԴԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԻՒԼԿԵՐԵԱՆ

Որքան վերաշուր կը բարացուցուի հոգետրականը իր երկնային սեւաթոյր տարազով, երբ իր հոգեկան և բարոյական արժանիքներուն կը միացնէ իր մտատր ձիրքերը գրական գնահատելի ստեղծագործութիւններով:

Վաղնջական դարաշրջաններուն, և դեռ յիսմամեակ մ'առաջ, մեր երախտաշատ վեղարակիր եկեղեցականները հաւասարապէս ջահատրում կու տային իրենց մտքի և հոգիի բարեմասնութիւններուն, ամբողջ իրենց կեանքը և ժամանակը սպառելով, հայ և օտար մատենագիրներու երկերու ընթերցումով և ուսումնասիրութեամբ:

Ներկայիս, տարիքի հասունութեան հասած, արքութեան գերաստինան տիտղոսով մտատրական հոգետրականներ հազիւ կը նկատուին իրենց մայրամուտի շողերուն մէջ: Մեծամասնութիւնը չունի բարձրագոյն ուսումնարաններէ վկայուած մեր երիտասարդ ու երէց քահանաներուն, ոչ քարոզելու շնորհը և ոչ ալ լայնատարր մտապաշարը:

ԱՅնք՝ պատասխանատու և պատկառազդու պաշտօններով կը ցուցադրեն իրենց վեղարին ու վերարկուին վրայ, պանակէներու շողարձակումը, մտային ստուերներու մէջ:

Երջանկայիշատակ Եղիշէ Դոփեան և Թորգում գրականագէտ պատրիարքները և դեռ կեանքի և պաշտօնի վրայ յամեցող փոքրարի բացառութիւններ՝ հասարակաց զգացումնեան փառահեղօրէն մեծարուեցան իրենց իմացական ու հոգեկան անկորնչելի վաստակով և ոչ թէ իրենց տարագին ու լայնախաչերուն շլացումովը:

Մեր ժամանակի ոգիին կարկառուն յատկանիշներն են կեղծատրութիւնը և աժան հիացումը, որով կը պատուտի ու կը քաջալերուի սովիեստներու սնապարծութիւնը:

Մերօրեայ հասարակութիւնը կը սիրէ գովել ու գնահատել, ինչ որ կը տեսնէ մարդկային կլայեկուած կերպարին վրայ: Եւ հոգ չ'ըներ, թէ ներսը՝ որ աստինան բորբոսած է իր գործած շահատակութիւններէն: Կարեւորը հոգետրականին վեղարը չէ, այլ զրովը: Կան, որ թիթեղի պէս պարապ կը հնչեն և կան, որ լեցուն:

Ներկայ բարոյազութիւն ժամանակներուն մարդոց սրտին մէջ տեղ չկայ, ոչ Աստուծոյ համար, ո՛չ Քրիստոսի համար և ո՛չ ալ հայութեան ու հայրենիքին համար: Պատմէշի վրայ ճշմարտութեան համար պայքարողները փոքրարի բացառութիւններ են, որ կը զոհեն ու կը զոհուին իրենց դրամով ու կեանքով:

Մարդուն ներաշխարհին անպարագրելի տարածութիւնները գրաւած են առաւ փախաւները և փարիսեցիական թթվամորով շաղախուած սովիեստները:

Ապօրինի պատեհութիւններէն օգտուտողները և հարստացողները հաւասարապէս, թէ՝ չարերն են և թէ բարիները, որոնց համար անիրաւ շահը դարձած է իտէալ:

★ ★ ★

Կ'ուզեմ այս գրութեամբ հասարակութեան ուշադրութեան և հիացումին յանձնել, արքութեան տիտղոսով և թեմակալ Առաջնորդի համգամանքով, երիտասարդ հոգետրական մը, Գերշ. Տ. Ցովնան

Այք. Տէրտէրեանը, որ տասը տարիներ, շարումակական վերընտրութիւններով կը հովուէ Գանատահայոց ընդարձակ թեմին ծովսերը, ցուցաբերելով՝ իր վարչական հարուստ փորձառութիւնը և արդիւնաշատ գործումէութիւնը, հօտին միահողոյն վըստահութեան ու սիրոյն մէջ ջերմօրէն գնահատուած իր իմացական ձիրքերով և հոգեւոր արժանիքներով:

Իր թեմական բազմաշխատ զբաղումներով և ծխական եկեղեցիներու յաճախահէա այցելութիւններով, իր վրայ հրափրած է ժողովրդային համատարած յարգանքը և համարումը:

Իր հեզաբարոյ տրամադրութիւններով և պատուակալ պաշտօնեաններու հետ սիրալիր յարաբերութիւններով, նուաճած է առանձնապէս բոլորին վստահութիւնը:

Սրբազնին համար, հաւաստացեալ հասարակութիւնը միակտուր ամբողջութիւն մըն է, առանց ընտրանի ու խոնարին դասակարգերու խտրութեան: ԱՅ՝ հեզադէմ հոգեւոր հայրն է, հաւասարապէս իր հօտին բոլոր զաւակներուն:

Կը գրեմ այս գնահատուամները իմ անձնական տպատրութիւններէս և բարեկամներու վաւերական վկայութիւններէ թելադրուած: ԱՅ՝ ստուգապէս Սրբազն է և կ'արդարացնէ այդ ՍՐԲԱՆՈՒՆԸ ճշմարիտ առումով:

Ունի, ո՞չ միայն իր պատասխանատու պաշտօնին գիտակցութիւնը, ու նաեւ՝ սխալին ու մեղքին գիտակցութիւնը:

Որպէս մտատրական հոգեւորական, հարուատ է մտապաշարով և հեղինակ եռահատոր քարոզագիրքերու, որոնց կը հաստատեն իր գրչին հասունութիւնը:

Իր փոքրակազմ մարմնին մէջ կը պարփակէ քրիստոնէական այն բոլոր բարեմասնութիւնները, որոնց կ'արժետրեն կրօնական ասպարէզին մէջ իր պատուաբեր ներկայութիւնը:

Ի՞՞նչ օգուտ է պարթեւ ու պարարտ մարմին մը ունենալ յղիացած որովայնով և հոգին ու միտքը յօրանշեն պարապութեան մէջ:

Բարեպաշտ ժողովութիւն համար քաջակորով ու բարի հովիւ մը ունենալը, որպէս հովանատր իր կեանքին վերեւ, առանձնաշնորհուած մըն է, իր երկնային պաշտօնով:

Ունկնդրեր նմ իր աստուածաշնչական և հոգելից բովանդակութեամբ իր քանի մը քարոզները՝ պարզ, վճիտ և գրափշ հայերէնով, զերծ՝ ուսուցիկ ու պայթուցիկ պոռթկումներէ:

Չունի անսանձ խօսելու վարժութիւնը և գիտէ համառօտել իր քարոզին տետղութիւնը, երբ ներզգայ ժամանակին ազդարարութիւնները, թէ պէտք է վերջացնէ:

Օատ քարոզիչներ լսած եմ, բառերու փորհարութենէ տառապող և մտածումներու պնդութենէ, որոնց շատախօսութիւնը, շիկացած զգացումներու գինովութենէն խթանուած, խոշտանգած են ձանձրոյթով իրենց ունկնդիրները:

Երբ Սրբազնը կը քարոզէ կամ կը խօսի, կը զգաս իր հայրենավառ հայասիրութեան և ջերմին բարեպաշտութեան անկեղծութիւնը:

Իր ժպիտը չի խարեր խօսակիցը, իր խօսքը և խոստումը չեն ստուերածեր իր պարկեշտութիւնը և իր ժամադրութիւնները չեն սպառեր յամեցողներու համբերութիւնը:

Քանի՛, քանի՛ եկեղեցականներ, այս վերջին յիսուն տարիներու ընթացքին, արցութեան շլացուցիչ տիտղոսներով, ոսկեծոյլ լանջախաչերով և սյանակէներով, միայն փայլատակում տուած են իրենց սքեմին, առանց հայ գրականութեան գանձատոսփին մէջ լումայ մը ձգելու:

Պատմութիւնը տող մը կամ շող մը պիտի չտայ իր էջերուն վրայ անոնց գոյութեան մասին: Խօչպէս որ անգոյութենէ եկան այս աշխարհը, յուսահատ ու անյիշա-

տակ պիտի վերադառնան անգոյութեան:

Այս աշխարհէն շատ բարիքներ ու վայելքներ առին՝ տուն, կալուած, հարստութիւն, պատիւներ, ժառանգ ու փառք, բայց բան մը չտոփին աշխարհին, և դժբախտ օր մը պիտի անցնին այս երկրի մթին հորիզոնէն անդին, աւաղելով իրենց ճակատագիրը:

Մեր գարունամեայ Սրբազանը, չեր կրնար վաղաժամ տարիքին արքութեան լուսափայլ մակդիրը տալ իր վեղարին, եթէ միայն սքեմով եկեղեցական ըլլար:

ԱՅ՝ Աստուծոյ բեմը նկատեց Երկինքի Ամպիոնը և այդ երկիտած հաւատքով կը գրէ, կը քարոզէ և կը լուսատրէ հաւատացեալ հոգիները:

Մեր հոգեւորականներէն ոմանց հուետորական քարոզները այն աստիճան կը Ժխորեն եկեղեցւոյ խաղաղաւէտ մթնոլորտը, որ կը մոռնան, թէ քարոզ է իրենց խօսածը և ոչ թէ հանրային բեմերէն արտասանուած ճառախօսութիւն:

Աստուծոյ սրբազան ամպիոնը լրջութիւն կը պարտադրէ քարոզիչին և կաշկանդում իր սանձարձակ արտայայտութիւններում:

Կրնանք հրապարակային ելոյթներու ընթացքին խնդալ և խնդացնել բազմութիւնները, բայց ոչ Աստուծոյ տաճարին մէջ, սրբագործուած Խորաններու վրայ, ուր՝ հակակշռուած պէտք է ըլլան, ո՞չ թէ մեր խօսքները, այլև մարմնական շարժումները:

Վիճակիս Առաջնորդ՝ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեան, 32 երկար տարիներ իր կարելիութեան և կարողութեան սահմաններուն մէջ արդիւնաւէտ գործունելութեան շրջաններ բոլորելէ ետք, յառաջիկայ Մայիսին կը նրամարի իր թեմակալ առաջնորդի պաշտօնէն և կը յանձնէ թեմը իր արժանաւոր յաջորդին:

Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, որ կը խորհիմ, թէ մեր ներկայ Առաջնորդին նախասիրած թեկնածուն է, կը յուսանք ընտրելիններու եռապատիկ ցանկին վրայ յատուկ ուշադրութիւն կը տրուի իր ընտրութեան:

Յովհաննէս անուն պալատական մը, որ աւագ խորհրդատուն էր Թէոտոս Կայսեր, խոր ատելութիւն ունէր Ոսկեբերան եպիսկոպոսին հանդէպ, այն պատճառով, որ իմաստուն հոգեւորականը շարունակ կը ծաղկէր արքայատան մէջ տիրող աշխարհիկ կեանքը և պալատականներուն ցոփակեաց բարքերը:

Օր մը, սաստիկ զայրացած, մօտեցաւ թագաւորին և իր վրդովումը յայտնեց:

— Վեհափառ տէր, պէտք է Ոսկեբերանին լեզուն կտրել, եթէ շարունակէ անուանարկել փորձել մեզի պէս ազնուականները: Ծատ կը վախնամ, որ օր մը՝ բարկութիւնս չկարենամ զսպել և սպաննեմ այդ անիծեալը:

— Զգոյշ կեցիր և լաւ մտիկ ըրէ, ինչ որ պիտի ըսեմ, ազդարարեց կայսրը: Եթէ դուն անոր մազին մէկ թելին դպչիս, ուղղակի դանիճին սուրին կը յանձնեմ գլուխ: Կրնամ քեզ նման եօթը ազնուականներ շինել՝ եօթը գիտացիններէ, բայց չեմ կրնար անոր պէս սուրբ մը շինել եօթը ազնուականներէ:

Որքան պիտի շնորհազարդուէր ու վսեմանար մերօրեայ բարոյապէս բորբոսած կեանքը, եթէ Երկինքի արգանդէն ծնած յոյն Ոսկեբերան Եպիսկոպոսին լուսափայլ կերպարովը, քանի մը հոգեւորական նմոյշներ ճառագայթին մարտիրոսացած հայութեան կեանքին վերեւ:

ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՈՒԵՆՔ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՒՐԵԱԼՆԵՐՈՒՆ

ԵԹԷ ՔԻՉ ՄԸ «ԱԶԳԱՅԻՆ ՈԳԻ» ՈՒՆԻՔ-  
ԾԱՏ ԴԻԷՐՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՀԱՍԿՆԱՅ, ԹԷ  
ԵՐԿՈՒ ՀԱՐԻՒՐ ՏԱՐԻԷ Ի ՎԵՐ,  
ԵՒ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՈՐ, ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ՈՒԺԵՐ  
ԿԸ ԾԱՐՈՒՆԱԿԵՆ, ՀԱՅ ԱԶԳԻՆ ԳԼԽՈՒՆ,  
ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԻՒՍԵԼ:

ԾԱՏ ԲՆԱԿԱՆ Է, ՈՐ ԱՅՍ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ  
ՈՒԺԵՐԸ ՊԻՏԻ ԶՅԻՆԾԱՏԱԿԵՆ ՈՈՒԹԵՆ ՍԵՒԱԿԻ  
ՆՄԱՆ «ՎԱՐԴԱՆԱՆՑԵԱՆ» ՀԵՐՈՍՆԵՐԸ:

ԱՅԼ, ՊԻՏԻ ՓԱՌԱՐԱՆԵՆ, ՎԱՍԱԿԱՏԻՊ  
ՄՈՆԹԷ ՄԵԼՔՈՆՆԵԱՆԸ ԵՒ ԻՐ ՆՄԱՆՆԵՐԸ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԷԺ ՈՈՒԹԵՆԵԱՆ]

Ցունուար 2003-ի առաջին օրերն էին: Բարեկամէ մը տեղեկացանք, թէ Ժընեվի սահմանակից ֆրանսական գիւղաքաղաքներէն Ferney-Voltaire-ի մէջ, "ARAM" անունով ֆիլմ մը կը ցուցադրուէր:

Մեր հարազատներով և բարեկամներով շտապեցինք որ երթանք ու տեսնենք այս հայ անուն կրող ժապաւէնը, որովհետեւ հազիւ քանի մը օր պիտի ցուցադրուէր:

Սրահը գրեթէ պարապ էր, և մեզմէ զատ մէկը չկար: Ցայտնի էր, որ տեղացի ֆրանսացի ժողովուրդը բնաւ չէր հետաքըրը քըրուած «Արամ»ով:

Ֆիլմը սկսաւ Արցախի մէջ կատարուած ուազմական գործողութիւններու տեսարաններով... Ցետոյ, անցաւ Երոպայի մէջ կատարուած հայկ. ահարեկչական դէպերէն մէկուն պատմութեան:

Մեր առաջին տպաւրութիւնը այն եղաւ, որ բեմադրութիւնը շատ լաւ էր, և ամէնէն արդիական միջոցները գործածուած էին՝ դիտողներուն հետաքըրը քայլ վառ պահելու համար:

Անձկութեամբ հետեւցանք ֆիլմին մէջի դէպերուն: Եւ մանաւանդ՝ ֆիլմին հերոսը եղող «Արամ»ին կողմէ թուրք ոճրապարտ գործակալներուն սահմանուած պատիժի գործադրութիւնը, արդարութեան ծարաւ մնր հոգիները յագեցուց:

Ֆիլմին վերջաւորութեան բոլորս ալ ուրախ էինք՝ ցեղասպան թուրք պետութեան այսօրուան դաշիճներուն զգետնուիլը տեսնելով:

Եւ հետեւեալ օրը կրկին գացինք, անգամ մըն ալ տեսնելու «Արամ»ը, աւելի լաւ հասկնալու համար ֆիլմին մանրամասնութիւնները և մանաւանդ՝ բեմադրիչին այս տեսակ ֆիլմ մը դարձնելուն բուն նպատակը:

Եւ միայն այն ատեն հասկցանք, որ ֆիլմը պատրաստուած էր Արեւմուտքի գործակալ Մոնթէ Մելքոնեանը հերոսացնելու նպատակաւ:

Այս ֆիլմը, մեր կարծիքով, ամէնէն արդիական միջոցներով և լաւ բեմադրութեամբ պատրաստուած, «Օշարակի քաժակ մըն էր՝ մէջը խարէութեան թոյն խառնուած». դաւադիր մը հայ ժողովուրդին իբր հերոս «կլեցնելու» համար:

Չէր բաւեր Հայաստանի մէջ, կեղծ ազատութեան տարիներուն, Լեւոն Տէր Պետրոսեանի կողմէ անոր «ազգային հերոս»ի վերածուիլը, իրեն համար յուշարձաններ կանգնուիլը, և հիմա, կարգը եկած էր, Սփիւրքի մէջ (ուր անոր ինչ ըլլալը շատերը գիտեն) զինք հերոսացնելու աշխատանքին:

Բնական է՝ այս պատրաստութիւններուն մէջ, առաջնակարգ դերը կը կատարէր Հայաստանի Ազատագրութեան Գաղտնի Բանակին նախկին Եւրոպայացուցիչը եղողը. որ յետոյ, օտար ճնշումներու տակ, միացած էր Մոնթէի հայավնաս շարժումին:

Վերջերս, Հայաստանի [մեզի համար սուրբ անուն մը եղող] Խաչատուր Արովեանի անուան-համալսարանին մէջ, այս գործակային ծննդեան տարեդարձը յիշատակելու համար, մեծ հանդիսութիւն կատարուած է. զինք ներկայացնելով իբր հերոս, ի ներկայութեան բոլոր փրօֆէսօրներուն:

Բնական է՝ այս պատրաստութիւններուն մէջ, առաջնակարգ դերը կը կատարէր Հայաստանի Ազատագրութեան Գաղտնի Բանակին Շախսկին Եւրոպայի Ենրկայացուցիչը եղողը. որ յետոյ, օտար ճնշումներու տակ, միացած էր Մոնթէի հայավնան շարժումին:

Վերջերս, Հայաստանի [մեզի համար սուրբ անուն մը եղող] Խաչատուր Արովեանի անուան համասարանին մէջ, այս գործակային ծեսնեան տարեղարձը յիշատակելու համար. մեծ հանդիսութիւն կատարուած է, զինք Շերկայացնելով իր հերոս, ի Շերկայութեան բոլոր փրօֆեսօրներուն:

Երկրի մը ժողովուրդը կրնայ տեղեակ չըլլալ շատ մը իրականութիւններու: Բայց, երբ այդ երկրին «Փրօֆեսօր» կոչուած մտաւորական դասը «անգիտակից» է՝ այն ատեն իրաւունք կ'ունենանք մտահոգուելու այդ երկրին ապագային համար:

Եւ մեզի համար, ամէնէն ցաւալին նկատելն է, որ այս Մոնթէի շատ մտերիմ ընկերներէն մէկը, իր նամակներէն մէկուն մէջ, «Սերժիկ» կը կոչէ Հայաստանի Շերկայի Պաշտպանութեան նախարարին: Անոր՝ որ օրերս, ՀՀ-ի մէջ տեղի ունեցող ընտրութիւններուն, «գործող նախագահ»ին ընտրապայքարը կը դեկավարէ:

Կը կարծենք, թէ այս տուեալները, շատ բան կը բացատրեն ու ենթադրել կաւտան Հայաստանի Շերկայ և ապագայ կացութեան մասին:

\*\*

«Անտեսանելի ուժերուն» կողմէ հայ ժողովուրդը մոլորեցնելու և իր միտքը թըմ-րեցնելու միտող քարոզչութեան մաս կը կազմէ անցեալ տարի հրապարակ հանուած-«Արարատ» անունը կրող Փիլմը:

Այս ժապաէնի մասին, «ՆԱՅԻՐԻ» ի թի 182-22 Հոկտեմբեր 2002-ին մէջ, յայտնած էինք մեր աննպաստ տպաւորութիւնը: Բայց կը տեսնենք, թէ այս Փիլմին համար Ամերիկայի քարոզչական ծանօթ կեղորնեներուն ազդեցութեան տակ մնացող վերացական գրականութեան և արուեստի սիրահարները, Սփիլտը շատ մը թերթերու մէջ կը գովաբանեն այս ժապաէնը, իբր գեղարուեստական ստեղծագործութիւն:

«Արուեստը արուեստին համար» սկզբունքի սիրահարներուն հարցնենք... Հայ ժողովուրդը ի՞նչ շահած է մինչեւ այսօր, կամ կրնայ շահիլ ապագային, նման անգոյն և ազգային յստակ խորք չունեցող, իր թիրախին չհասած Արուեստի աղանդաւորներէն: Միայն խարկանք և այլասերում:

Այս ժապաէնին համար նոյնինքն՝ Փիլմին թեմադրիչ Աթոմ Եկոյեանը կ'ըսէ թէ՝

«Ծառ բարդ ժապաէն մըն է»: Հայ ժողովուրդը ի՞նչ ընէ այս բարդ ժապաէնը:

Ծեղասպանութեան մասին Փիլմ պատրաստելու մտադրութիւն ունենալը լաւ է, բայց իր նպատակին ծառայած Փիլմ պատրաստած ըլլալ դեռ չի նշանակեր:

Զարդուած և անիրաւուած Ազգ մը պահանջն ունի պարզ, հասկնայի արտայալութեան, որ հայուն կամքն ու կորովը ամրապնդէ, հաղորդէ յաւելեալ ուժ իր հայ մնալու նպատակին, զօրացնէ, պահանջատէր հայուն յոյսի ճամբայ մը ցուցնէ որ ան յաջողութեամբ պայքարի անիրաւութեան և անարդարութեան դէմ:

Եւ «տուփի մէջ տուփ և կրկին տուփ» կոչուող ծանօթ հանելուկին նմանող այս ժապաէնին մէջի անտեսանելի բայց միշտ Շերկայ հերոսը, Արշիլ Կորժի անունով Շկարիչ մըն է, որուն կեանքը այս Փիլմին առաջնակարգ Շիթերէն մէկն է:

Բայց ո՞վ է Արշիլ Կորժի - բուն անունով Ոստանիկ-Մանուկ Աստոեան: Ծնած է 1904-ին, Վանայ լիճի շրջակայքը գտնուող «Հայոց Չոր» գիւղը: 1915-ի եղեռնի տարիներուն իր մօր հետ Երեւան ապաստանող Ոստանիկ, առաջին կրթութիւնը հայրենի հողին վրայ կ'ստանայ: Բայց 1920-ին՝ 16 տարեկանին, իր քրոջ հետ Ամերիկա կը գաղթէ: Եւ հոն, իր ունեցած նկարչական բնածին կարողութիւնները կը կատարելագործէ հետեւելով Նիւ Երքի Գեղարուեստի ուսումնարաններուն:

1935-էն սկսեալ իր գծագրութիւններով կը Շերկայանայ հանրութեան: Բայց իր անունը այլեւս Ոստանիկ Աստոեան չէ: Իրեն բոլորովին օտար՝ Արշիլ Կորժի անունը կ'առնէ: Եւ այն թուականէն սկսեալ, ան այլեւս հայ չէ, այլ՝ Թիֆլիսեցի Վրացի մը. Arshile Gorky անունով:

ԱՇԿ յետոյ, "Julien Levy" անունով Հրեայ կերպարուեստի վաճառական մը, իրեն հետ կապ կը հաստատէ և 1945-ին, Arshile Gorky-ին առաջին աննական ցուցահանդէսը կը սարցէ՝ միշտ զինք Վրացի Շկարիչ մը Շերկայացնելով:

Իր գծագրութիւնները՝ հրեաներուն նպատակին և կրօնին յարմար "Non Figuratif" և "Abstrait" պատառներ են:

Մինչեւ 1948 կը ստեղծագործէ և կ'արտադրէ մեծ մասամբ "Non-Figuratif" պատառներ և 1948-ին, ջղային նոպայէ մը ետք. ինքզինքը կախելով անձնասպան

### Կ'ըլլայ:

Ցետ մահու՝ իր պաստառներու մեջ մասը կը գնուի «Solomon R. Guggenheim» անունը կրող New-York-ի ծանօթանաժին կողմէ: Մինչեւ 1951 Արշիլ Կորքի կը ծանօթացուի իբր Վրացի «Avant-Garde» գեղանկարիչ մը:

Միայն 1951-ին է որ իր քոյրերը՝ Վարդուշ և Սաքենիկ Ատոեանները. Նիւ Եորքի մէջ. զեկոյցով մը կը հրապարակեն Ոստանիկ Ատոեանի իրական կենսագրութիւնը: Եւ միայն այն ատեն յայտնի կ'ըլլայ. որ Արշիլ Կորքի կոչուող «Վրացի» նկարիչը. իրականութեան մէջ. ոստանիկ Ատոեան անունով հայ մըն է:

Եւ «Արարատ» ֆիլմին մէջ հերոսացուած Arshile Gorky անունով նկարիչը այն անձն է. որ մինչեւ իր կեանքին վերջը իր հայ ըլլալը ծածկած է: Եւ Թիֆլիս ծնած ու Արշիլ Կորքի անունով Վրացի նկարիչ մը իբրեւ ապրած է:

\*\*

Ահա. «Հայութեան ոգի» չունեցող այս երկու անձերը կը փարաբանուին: «Arshile Gorky» և «Արարատ» ֆիլմին մէջ. իսկ Մոնթէ Մելքոնեանը՝ «Արամ» ին մէջ:

Մինչեւ իսկական հերոսները. որոնց կարգին նաեւ Ռուբեն Սեւակ. նման «Վարդանանցեան» հերոսներուն. կ'անտեսուին և մոռացութեան կ'ենթարկուին. անտեսանելի, բայց շատերուն ծանօթ ուժերուն կողմէ. գիտակցաբար գործադրուող և Հայ Ազգը երկու հարիւր տարիներէ ի վեր ամէն օր քիչ մը աւելի տկարացնելու և ի վերջոյ բոլորովին և վերջնականապէս բնաջնջելու ծրագրով մը:

Մենք, այս գրութիւններով, կ'աշխատինք մոռացութեան փոշիներուն մէջ միսրճուած հերոսներէն մէկուն՝ Ռուբեն Սեւակին իսկական կերպարը մէջտեղ հանել: «ՆԱՅԻՐԻ» թիւ 187-11 Փետրուար 2003-ի էջերուն մէջ. հրապարակած էինք Թովհան Վարդապետ Կարապետեանին Զանդըրը-ի աքսորականի կեանքին վերաբերեալ բացառիկ յայտնութիւններուն առաջին մասը: Այստեղ կը հրապարակենք այս զարհութելի յիշատակութիւններուն վերջին մասը՝

**«ԷՇ ՄԸ ԱԶՄՈՐԱԿԱՆԻ ՑԻՇԱՏԱԿՆԵՐԸ - ՍԵՒԱԿԻ ԱՆՄԱՀ ՑԻՇԱՏԱԿԻՆ»**

Գրեց՝ ՑՈՎՀԱՆ Ծ. ԿՐԴ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Նոյն գիշեր, Պ. Տիրան ԶԷԼԷԿԵԱՆ ծալապատիկ նստած էր այն սենեակը. ուր վեց ամիս միասին ապրեցանց սիրալիր մտերմութեամբ: Առջի շաբթուն յաջողեր էի գաղտնաբար լուր դրկել Պոլիս. որ եթէ մինչեւ տասը օր կարելի չըլլար Զանդըրը մնացողներուն կեանքը փրկել. մահը անխուսափելի պիտի ըլլար: Ծերունազարդ հայրիկս՝ խորապէս վրդոված հրաժեշտի այդ նամակէս՝ անշուշտ նորանոր դիմումներ էր կատարած դեսպանատանց մօտ: Ի՞նչ արդիւնք ծեռք բերուած էր արդեօք: Այս էր Շիւթը, որու մասին կը խօսակցէինք:

ԶԷԼԷԿԵԱՆ չէր ծածկեր իր յոռեսեսութիւնը: Դեռ թարմ էր իր մտքին մէջ այն գաղտնի տեսակցութիւնը զոր մէկ քանի օր առաջ ունեցեր էր Գասթեմունիի նահանգին պաշտօնանկ կուսակալ Ռէշիտ փաշայի հետ որ իբր Ազատ Որյանադրական ընկեր անվերապահօրէն յայտներ էր Երիտասարդ Թուրքերու Հայ Ազգի բնաջնջման ծրագրին մանրամասնութիւնները: Պարզ էր այլեւս. թէ իւրաքանչիւր քաղաքէ առաջին անգամ աքսորուած աչքառու դէմքերը. մահուան դատապարտեալ էին մասնա-

տր տոմարով։ Ասոնք պէտք էին բնաջնջուիլ կառավարական խիստ հակակշոյ տակ։ իսկ մնացեալ խումբերը դէպի մահ առաջնորդուելու էին ընդհանուր սարսափներով։ Եթէ մեր խումբէն մէկ քանիներ սկիզբը վերադարձուեր էին Պոլիս՝ այդ շնորհը արդիւնք էր Մայրաքաղաքի օտար շրջանակներէ ի գործ դրուած բացառիկ ճնշումներու և կարգ մը անձնական կապակցութեանց։ Թէ ի՞նչ փրկութիւն կրնար տակաւին յուսացուիլ մեզ համար. Հայաջինջ քաղաքականութեան ա'նքան յառաջացած ու բորբոքեալ այդ վայրկեանին՝ դժուար էր. գուշակել։

Կէս գիշերուան մօտ փողոցի դրան մեղմօրէն բախուիլը լսեցինք։ Տան մուտքը հաստ գերանով մը ամրացուցած էինք իբր կանխազգուշութիւն։ Կը խորհեինք. թէ կոտորածի պարագային երբ յարձակում գործուեր՝ կրնայինք մինչև դրան բռնաբարուիլը մէկ երկու վայրկեան շահիլ ետեւի կողմէն փախչելու համար։ ԱՇայն քայլերով իջանք վար ու հարցուփորձէ ետք ներս ընդունեցինք տեղական Հայերէն պատուական բարեկամ մը։ —«Ողջո՞յն. խե՛ր ըլլայ» բառերով դիմաւորեցի զինք։ — «Աստւած օգնական» պատասխանեց։ — «Աստուած պահապան» յարեցի։ Եկեղեցականի ու աշխարհականի միջև բարեւելու հնադարեան այդ ոճը երբեք այնքան նշանակալից չէր բուած ինձ, որքան արհակրքի այդ երեկոն։ Սովորական ժամանակ կուսակը օն եկեղեցականին ուղղուած «Աստուած օգնական» իմաստը ունի զօրութիւն հայցելու, որպէս զի կարելի ըլլայ ստանձնուած լուծը համբերութեամբ տարուիլ։ Այդ իրիկուան նոյն մաղթանքը կը թուէր մէկ կողմէ կոչը ըլլալ գերբնական միջամտութեան և միւս կողմէ ծաղրը կարծես անել մեր դրութեան։

Բարեկամնիս եկած էր իմացնելու. թէ քաղած ստոյգ տեղեկութեան համաձայն. քաղաքին ոստիկանապեստը ծածկագիր հեռագիր մը ստացեր էր Պոլիսէն՝ աքսորականներուս վերաբերմամբ։ Այդ տեսակ հեռագիրներ շատ էին հասած անցեալին մէջ, կորզելու համար մեր խումբէն ընտրելագոյն տարրեր և առաջնորդելու զանոնք դէպի սպանդանոց։ Ի՞նչ անակնկալ կ'սպասէր մեզ արդեօք առաւօտուն։ ԱՇկարելի էր չի վրդովուիլ։ Անքուն գիշերներու շարջին վրայ հատ մըն ալ կու գար աւելնալ։ Ցուցումը լրութեան կը դատապարտէր զմեզ։ Խոհեմութիւն կը սեպէինք ճրագն ալ մարել։ Մութին մէջ կը նստէինք անշարժ ու տեսակ մը ֆիզիքական անէացումով ազատագոյն թոփք կը պարգետուէր մեր հոգեկան վերացումներուն։ Բոլորովին լրուած չէինք զգար սակայն ինքզինքնիս - մանաւանդ երբ կարեկցութեամբ թրըռուն մէկ քանի աստղեր իրենց շողը կը կաթեցնէին մեր պատուհանէ ներս։

\*\*

Երկուշարքի առաւօտ ոստիկաններ շրջանը կ'ընէին աքսորականներէս բնակւած տուներուն՝ իրաքանչիւրս կառավարչատուն հրակրելու համար։ Պոլսէն յատկապէս դրկուած ճիւաղներ էին ասոնք. Չանկըրը-ի մթնոլորտը թունաւորոդ։ Հայոց դէմ կը հայիոյէին շարունակ որպէս դաւաճաններու և պատճառ կը դառնային անվերջ գրգութեանց։ Այդ օրը սակայն երեսնին ժամանական էր աւելի։ Զրոյց մը կը շրջէր. թէ ազատութիւն պարգետուած էր մեզ աքսորի կաշկանդումէն։ Ոստիկաններու զուարթութիւնը չէր կրնար անշուշտ ատկէ պատճառուած ըլլալ։ Ի՞նչ նոր դաւադրութիւն թաքնուած էր արդեօք իրենց գոհունակութեան ետեւ։ Վերջապէս ուղղուեցանք դէպի կառավարչատուն ուր ոստիկանապեստը Պոլսէն Հեռագրուած անուանցանկ մը կարդալէ ետք հանդիսաւորապէս ծանոյց, թէ բարեխնամ (۱) կառավարութիւնը ներում շնորհած է այդ անձերուն արտօննելով. որ Պոլսէն զատ թուրքիոյ ուզած քաղաքնին երթան ու բնակին։ Աւանդական «Ալլահ էօմիլրէր վերսին» ըստիպուած էինք արտասանել՝ մտովի զայն վերածելով անշուշտ «Ալլահ էօլիմլէր վերսին» ի։

Կարդացուած անուանները՝ հոն գտնուողներուս համեմատ՝ երեսուն և հինգ էին թուով, բայց հինգ անունի սխալով մը կը յիշատակուէին նախապէս Պոլս (→է, 3)

## ԵԹԷ ԶԻՉ ՄԵ «ԱԶԳԱՅԻՆ ՈԳԻ» ՈՒՆԻՉ - ՇԱՏ... (Ժար. Էջ 2-Էն)

Վերադարձուած ընկերներ՝ մինչ մեր մէջէն բացը կը մնային Դանիէլ Վարուժան, Տօքթ. Ռուբէն Չիլինկիրնան, Վահան Զէհեանան, ՕՍՏԻԿ Մաղագանեան և Ցարութիւն անուն հացագործ մը: Խսկոյն խնդրեցինք ոստիկանապետէն, որպէս զի բարեհաճի թիւրիմացութիւնը հարթել, հարկ եղածը Պոլիս տեղեկագրելով: Վատահ էինք, թէ վերոյիշեալ հինգն ալ պիտի կարենային ազատիլ մեզի հետ: Բայց չարասիրտ պաշտօնեան, որ լաւ գիտէր շնորհուած ներումին (\*) խսկական իմաստը, ստիպուած կ'զգար տարբեր ընթացքի հետեւիլ:

Հոս, միջանկեալ ըլլալով պէտք է յիշել, թէ հօրս ոիմումներուն վրայ, դեսպան Մօրկընթաւ փութացեր էր Թալէադի մօտ և պնդելով թէ Չանկըրը անմեղ Հայեր կան գթութեան արժանի՝ պահանջեր էր ազատ արձակել զանոնք: Զարդարար գազանը մերժեր էր Պոլիս վերադարձնել մեր խումբը, բայց խարեպատիր զիջողութիւնն էր ըրեր արտօնելու՝ Թուրքիոյ մէջ մեր բնակավայրը ընտրել այլուր: Առերեւոյթ բարեացակամութիւն ցոլացնող այս թոյլտութիւնը դիւային միջոց մըն էր մեր բնաջընջումը փութացնելու: Հրոսակներ պատրաստ էին ամէն ճամբու վրայ: Ո՞ր Հայը կրնար որևէ միջոց կտրնել այդ օրերուն, առանց դէպի մահ խիզախնելու: Արդ, Չանկըրը-ի ոստիկանապետը ստոյգ կը նկատէր ներման արժանացողներու մահացումը: Կը խորհէր թէ մենք, տեղտյն ճնշիչ մթնոլորտէն զզուած պիտի աճապարէինք հեռանալ դէպի երկաթուղույ գիծը կամ ծովեզերք: Իր արբանեակներէն շատեր կը մօտենային մեզի ու կը թելադրէին որ մեկնինք: Գալով այն հինգին որ ստիպուած կ'ըլլային Չանկըրը մնալ ու այդպէսով թերեւս փրկուիլ, հարկ էր զանոնք ալ տեղափոխնելու ճարը գտնել: Ոստիկանապետը իր դաւը լարեց ու յաջողեցաւ Պոլսէն նոր հրահանգ մը բերել տալ Սեւակի և ընկերներուն իբր բանտարկեալ Այաշ փոխադրումը հրամայող: Նոյն օրը ես ալ խիստ նշանակալից նամակ մը ստացայ հօրմէս, որ ըստ ժամանակի պահանջին թուրքերէն գրուած էր ու հակառակ գրաքննուած ըլլալուն Զինուորական իշխանութեան կողմէ՝ կը պարունակէր հետեւեալ պարբերութիւնը: «Զմիւնիա երթալու մասին ճամբան Ապահովեան էֆենտիի հետ տեսակցիլդ կը յանձնարարեմ. եթէ յիշեալ պարոնը պատշաճ նկատէ կրնաս մեկնիլ»: Այս հաղորդագրութիւնը կը փորձէր վճռապէս հասկցնել կեղծ ներումէն չօգտուելու անհրաժեշտութիւնը: Երեսուն ընկերներ կրնայինք թերեւս հիւանդութիւն պատճառաբանելով ատեն մըն ալ հոն մնալ կամ նոյն իսկ Չանկըրըն բնակավայր ընտրել շնորհուած արտօնութենէն օգտուելով:

Բայց Սեւակի, Վարուժանի և միւս երեքին պարագան հիմա կը տարբերէր: Մեկնումը ստիպողական էր հոչակուած: Դժուարաւ յաջողեցանք մէկ ու կէս օրուան յետաձգում ձեռք բերել: Զաղաքային կառավարիչ Տեղապահը իր զինուորական պատիկն վրայ կ'երդնուր ճամբաներու ապահովութիւնը: Կը պատահէր, որ այս հաւաստումէն միամտաբար քաջալերուէին ուրը ազատ ընկերներ և իրենք ալ վարձէին երկու կառք. ընկերանալու համար մինչև Գաղատիա՝ Սեւակի խումբին: Մեկնումի պատրաստութիւնները մինչ կը տեսնուէին, Սեւակ կու գար խնդրել ինձմէ որ Աստուածաշունչ Մատեան մը հայթայթեմ իրեն համար: Անմահութեան ծարաւի իր հոգին կը փափաքէր աստուածային ճշմարտութեանց լոյսին մէջ թեւածել: Միակ նմոյշը որ քովս ունեի յանձնեցի իրեն: Թայտնեց, թէ ծայրէ ծայր պիտի կարդար զայն:

\*\*

1915. Օգոստոս 13-ը որ Հինգամբթի կը գուգաղիպէր, չարաբաստիկ ու եղեռական շունչով էր տոգորուած: Առջի գիշերը յատկանշուեցաւ ահազդեցիկ երազներով որոնք խռովեցին շատերուս քունը և քանից արթնցուցին զմեզ ընդուտ: Կէս գիշերին՝ մեր տան աքաղաղը երեք անգամ իր ձայնը հնչեցուց չարագուշակ ոգիի դերը կատարելով կարծես: Արշալոյսը կը յամենար խաւարը փարատել: Արդեօք կ'ամչնա՞ր լոյսով ողողել ոճարեմը ուր հանճարներ պիտի խողխողուէին ու նահատակութեան հսկայ կոթող մը պիտի բարձրանայ իբր յափտենական բողոք ընդդեմ թուրք բարբարոսութեան:

Մութնալուսուն արդէն հաւաքուած էինք Զանկըրը-ի կամուրջին գլուխը ողջերթ մաղթելու համար մեր տարաբաղդ ընկերներուն: Կառավարութիւնը երկու կառք պատրաստած էր Սեւակի խումբին համար ու մէկ մէկ ալ պահակ նշանակած: Միւս ութը ընկերները յուսախար եղան իրենց վարձած կառքերէն մէկուն չերեւնալովը ու վերջին պահուն ստիպուեցան ճամբորդութիւննին յետաձգել: Դժուար կ'ըլլար սակայն Այաշ մեկնող հինգ ընկերներէն բաժնուիլ: Ողջագուրուեցանք կրկնակի համբոյրներով: Ոստիկանները վերջապէս հրամայեցին մէկդի քաշուիլ: Կառքերը անցան ճակատագրային կամուրջէն ուղղուելու համար դեպի Թիւնէյ....: Մահուան արշաւանքն էր այս:

\*\*

Օրը տարաժամած էր արդէն ու բուեր կ'սկսէին երդիքներու վրայ թառիլ ու մերթ մթնոլորտը վրդովել մահերգակ շեշտերով երբ երկու ծանօթ կառքեր մուտք կը գործին Զանկըրը-ի շուկան... իրենց առաւօտեան ճամբորդներէն պարպուած: Այաշի երեք օրուան ճամբան ի՞նչպէս եօթը ժամուան էր վերածուած: Ո՞ւր էին Հայ հանճարի, ազգասիրութեան և հաւատքի մարմնացումները որոնց ճակտին մեր դրոշմած համբոյրները դեռ կորուսած ըլլալու չէին իրենց ջերմութիւնը: Սարսուուը որ կ'անցնէր իւրաքանչիւրիս մարմիննեն բաւական էր կաթուածահար ընելու ամէնքս:

Կառապաններէն մէկը կը յանդնէր ահաւոր գաղտնիքը յայտնել Ըկարագրելով. թէ ինչպէս Թիւնէյ հասած էին անվտանգ ու տեղւոյն պահականոցը ճաշելէ ետք. կրկին ճամբայ ելած: Հինգ վայրկեան ետք թէքէ Պուրնույի բարձունքին վրայ դիմատրուած էին դաշոյններով միայն զինուած տասը հոգինոց հրոսակախումբէ: Կառապանները ծիերը մտրակեր ու սպառնացող վտանգէ ազատիլ էին փորձեր յաջողութեան ամէն յոյսով: Տարագրուող մեր ընկերներու սպահովութեան պատասխանատու ոստիկանը բռնութեամբ կեցուցեր էր կառքերուն սլաքը: Երբ միւս պահակը ուզեր էր զէնքի դիմելով կացութիւնը փրկել, առաջին սրիկան արգիլեր էր զայն խստի: Ցետոյ վար էր իջեր կառքէն ու պահանջեր՝ որ դրամնին յանձնեն: Եօթանասուն հնչիւն ուսկի գրպանելէ ետք «Գաբրոնդաս Ֆերման վար» (Զարդուելուդ հրովարտակը ելած է) ըսելով հրամայեր էր դահիններուն որ մօտակայ ձորակը իջեցնեն

հինգ ընկերները ու մահացնեն զանոնք....:

Նոյն գիշերն իսկ՝ այս ամենը պատմող կառապանը սաստկապէս կը ծեծուեր ու սիկաններու կողմէ իր անգաղտնապահութեան համար։ Բայց եղեռնից յանրամասնութիւնները շուտով կը տարածայնուեին։ Մատնելով զմեզ հոգեկան աննկարագրելի կսկիծի։ Թիւնէյի պահականոցը նոյն միջոցին գործող թակոր անուն ծեփարարի մը գաղտնի վկայութեամբ։ ոճիրէն օր մը առաջ կառապան համայիլ թիւնէյ ժամաներ էր Չանկօքրօք ոստիկան-գինուորներու վատահամբաւ հրամանատարին՝ իթիհատի շնական ներկայացուցին և տիրանուցակ ոստիկանապետին կողմէ ու մօտակայ գիւղ մը երթադրվ հաւաքեր էր տասը հրոսակ։ Ասոնց գլխաւորն էր Ակօ անուն ասագակապետը։ Ասոնց նստեր էին մարգագետնին վրայ ու ծրագրեր ամբողջ սպանող։ Ցետոյ գացեր էին ընտրել բուն վայրը ուր ոճիրը պիտի գործադրուեր։

Սպանութեան օրը համայիլ հանդիսատես էր եղեր նախնիրից՝ Սեւակի նախապէս ըրած սպառնալիքը գործադրած ըլլալու գոհունակութեամբ։ Նոյն կէսօրէն ետք ոստիկան-գինուորներու «քէմիք գորան» [ոսկոր կոտրող] մականուանեալ հրամանատարը «ինքան վուառ պուլու մը» [գործադրուեցա՞ւ] հեռաձայներ էր թիւնէյի պահականոցը։ Ասկէ զատ ապացոյցը կար թէ չորս կառքերու թիւնէյէ անցնելեած տեղեկացուած էր հրոսակներուն քանզի առաջին երկութին հաշիւ մաքրելէ ետք սպասեր էին ուրիշ երկու կառքի եւս որոնց նոյն օրը ճամբորդել մտադրող բայց գրեթէ հրաշքով ետ մնացող մեր ուրը ընկերները պիտի բերէին։ Ասոնց չի գալովը հրոսակները սիալմամբ յարձակեր էին նոյն ճամբէն անցնող երկու բոլորովին ուրիշ կառքերու վրայ, ուր վեց Յոյն և երկու Հայ նորագիր գինուորներ կային, և խողիսդեր գանոնք։

\* \*

Սարսափը զոր ապրեցանք՝ չարաչար հիւծեց մեր մարմինը։ Ի՞նչպէս կարելի էր մարսել Վարուժանի և Սեւակի պէս տաղանդներու այնքան անարժան և ստոր թուրքերու կողմէ վատաբար բնացնջուելուն գաղափարը։ Բոլոր նահատակուողները տիպարներ էին Հայ արժանիքի։ Սուգը կ'ընկճէր մեզ ծայր աստիճան և արդար ընդվզգումը վրէ՛ժ կը գոռար մեր ներսիոյից։ Մինչև ե՞րբ քաղաքակիրը (۱) աշխարհը պիտի հանդուրժէր թուրք բարբարոսութեան անզուսպ պոռթկումին։ Գործուած նախնիրները բաւական էին քարերն իսկ ցնցելու։

Ոճիրին գիշերը երկրաշարժի ցնցում մը զգացուեցաւ և յաջորդ օրը զրոյցը լսեցինք, թէ «լոյս էր իջեր» նահատակուողներուն վրայ։ Աստուածային ցասումի և օրհնութեան այս կրկնակ «նշան» ները պահ մը խունապի մատնեցին Չանկըրը-ի մոլեռանդ հսլամները։ Արդիւնքը այն եղաւ, որ խստութիւնները քիչ մը մեղմացուին։ Բայց շատ չանցած՝ Գաղատիոյ Հայակեր կուսակապի փոխանորդ Աթօնքը Գասեւ-

**մունի կը փոխադրուեք պաշտօնի բարձրացումով իբր լիազօր կուսակալ: ԶԵԼԵԿԵԱՆ  
կը քշուեր դէպի Սեբաստիա: Կ'սկսէինք երկու սուրի մէջտեղ տուայտիլ: Շամբոր-  
նելը վտանգաւոր. հոն մնալը՝ աղետալի:**

Վարուժանի և Սեւակի նահատակութենէն երկուը ու կէս ամիս ետք. ստիպուեցայ  
ճամբորդել դէպի Գաղատիա: Անցայ Թիւնէյէն ու Թէքէ Պուրնույէն: Իջայ ծորակը  
որու մէկ կողմը սէզեր կ'աճէին և միւս կողմը փոքրիկ աւազան մըն էր գոյացած:  
Տեսայ քիչ անդին կիսաթաղ ոսկորները մեր հերոսներուն: Գլխաբաց կանգնեցայ  
անոնց առջև և արտասանեցի «Հոգտց» աղօթքը: Յօշոտուած մարմիններ էին  
ատոնք: Կը թուէր. թէ վայրագ գազանները յաջողեր էին մահացնել Սեւակն ու Վա-  
րուժանը: Բայց այսօր անոնց և ընկերները կ'ապրին տակաւին իրենց արտադրու-  
թիւններով ու թողուած անջինց տպաւորութիւններով: Հայու հոգին յաւիտենապէս  
պիտի ներշնչուի իրենց գաղափարականներով ու դիւցազնական օրինակով: Հա-  
յաստանեայց եկեղեցին այս նոր մարտիրոսներու խանդովը հրդեհուած պիտի  
անշուշտ չուշանայ իր վերածնունդը ունենալ:

Ե՞րբ արդեօք կարելի պիտի ըլլայ. այդ նահատակներուն նուիրական նշխարները  
փոխադրել Հայաստան ու անոնց վրայ կանգնել տաճար մը. ուրկէ մշտատեւօրէն  
ճառագայթեն այն լրսաւոր սկզբունքները որոնց համար իրենք զոհուեցան:

ՅՈՎՀԱՆՆ Ծ. ՎՐԴ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

«Հայաստանի Կոչնակ» թիւ 3 - 21 Յունուար 1922 ԱՄՆ

\*\*\*

Այսպէս կ'աւարտի Յովհանն Ծ. Վրդ. Կարապետեանին Չանդըրը-ի աքսորավայ-  
րին մէջ, Ռուբէն Սեւակի հետ ապրած դժոխային օրերուն պատմութիւնը:

Մենք. խոր երախտագիտութեամբ կը խոնարհինք. այս մեծահոգի և հայրենասէր  
հայուն յիշատակին առջև. որ այսքան ճշգրտութեամբ և նոյն ատեն զգայականու-  
թեամբ, պատմութեան էջերուն անցուցած է 24 Ապրիլի 1915-ի եղեռնը:

Հայ ժողովուրդը. Հայաստանի և Սփիւրքի մէջ. ամէն 24 Ապրիլին կը յիշատակէ  
այս զարհուրելի թուականը:

Բայց. Հայ ժողովուրդին մեծամասնութիւնը. ի՞նչ գիտէ 24 Ապրիլ 1915-ի մասին:  
24 Ապրիլ 1915-ը այլեւս աւանդութիւն դարձած սուգի օր մըն է. և՝ ա'յդքան:

Զանի\* հոգի տեղեակ է. 24 Ապրիլ 1915-ի մասին. Միջայէլ Շամտանեանին.  
բժիշկ Վահան Ալբունեանին և մասնաւորապէս Յովհանն Ծ. Վրդ. Կարապետեանին  
պատմածներուն: Գալով. Չանդըրը-է վերապրող վարդապետներէն՝ Գրիգորիս Վրդ.  
Պալաքեանին յուշերուն՝ շատ մը տեղեր անկատար և ինքնագովութեամբ լեցուն  
պատմութիւն մըն է անորը:

Զարմանալի է. որ Հայ ժողովուրդին բաղդատաբար աւելի ծանօթ  
են Պալաքեան վարդապետին աքսորականի յուշերը:

(Ծարք էթ 6)

## TÜRKLERIN (SÖZ DE) BILMEDIKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ FIRSATÇI TÜRKİYE

TÜRKLERİ TANITMAK İÇİN, BİRÇOK SİFATLAR VERILEBİLİR, VAHSİ, BARBAR, ZORBA, HUNHAR. FAKAT, SU GÜNLERDE TÜRKLERE EN YAKISAN SİFAT "FIRSATÇI" DIR.

BUNDAN BİR AY KADAR EVVEL TÜRKLER AMERİKADAN, TÜRKİYEDEN İRAKA HÜCÜM İZNI VERMEK İÇİN 40 MİLYAR DOLAR İSTİYORDU. AMERİKA DA YALNIZ ALTI MİLYAR VERİRİM DIYORDU.

BU ARADA HÜKÜMET DEĞİSTİ. SOFTALAR İKTİDARA GELDİ. PIYASA YÜKSELDİ. PAZARLIK KİZİSTİ.

YENİ BASBAKAN ABDULLAH GÜL "92 MİLYAR DOLAR İSTERİZ, YOKSA SIZE TÜRKİYEDEN İRAKA GECİS İZNI VERMEYİZ" DEMİŞ.

BUSH DA KİZMİS "EN FAZLA 28 MİLYAR VERİRİZ. KABUL ETMEZSENİZ GEMİLERİMİZ KİBRİSTAN DONER, SÜVEYSTEN GEÇEREK BASRA KÖRFEZİNE GIDER. TÜRKİYEDEN KUZEY İRAKA HÜCÜM PLANIMIZI DA IPTAL EDERİZ" DEMİŞ. REST ÇEKMİŞ. FAKAT AMERİKA İÇİN ÇOK ZOR OLUR. YALNIZ GÜNEYDEN İRAKA HÜCÜM EDERSE ÇOK AMERİKALI ÖLEBİLİR.

TÜRKLER DE BUNU ÇOK İYİ BİLİYOR, TAM FIRSATI. DOKSAN İKİ MİLYARDA ISRAR EDİYOR. "ISTERİZ DE İSTERİZ". SONRA "KUZEY İRAKTAKİ KÜRTLƏRİ TEMİZLEME ISINI BİZE BIRAKIN" DIYOR AMERİKALILARA.

AMERİKA ZOR DURUMDA. FAKAT EN SONUNDA TÜRKLERLE PAZARLIKTA ANLASACAK MECBUREN, YASASIN FIRSATÇI TÜRKİYE.

1915-TE BİRİNCİ DÜNYA HARBINDEN İSTİFADE EDEREK TÜRKLER, ERMANİLERİ SOYKIRIMINA UĞRATMİSTİ.

SİMDİ DE AMERİKANIN İRAKA HÜCÜMÜNDEN İSTİFADE EDEREK KUZEY İRAKTAKİ KÜRTLƏRİ TEMİZLİYECEKLƏR.

8. Q.

### ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԹԵՐՈՒՆ [ԻԲԻ ԹԵ] ԶԳԻՏՑԱՌ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԱՏԵՀԱՊԱՋԸ ԹՈՒՐԹԻԱ

Թուրքերուն, զիրենք ծանօթացնելու համար,՝ կարելի է տալ շատ մը աճականեր՝ վայրենի, բարպարու, յափշտակիչ, արիւնարրու:

Բայց, այս օրերուն թուրքերուն ամէնէն շատ վայլող աճականը՝ «պատեհապաշտ» է:

Ասկէ մէկ ամիս առաջ թուրքերը, Ամերիկային՝ թուրքիայէն անցնելով իրաքի վրայ յարձակելու հրաման տալու համար, 40 միլիառ տոլար կը պահանջէին:

Ամերիկան ալ «միայն ճ միլիառ կու տամ» ըսած էր:

Մինչ այդ, թուրքիոյ մէջ կառավարութիւնը փոխուեցաւ: Կրօնական կուսակցութիւնը իշխանութեան եկաւ: Սակերը բարձրացան իսկ սակարկութիւնը իստացաւ:

Նոր վարչապետ Ապտուլլահ կիւլ «92 միլիառ տոլար կ'ուզենք, ապա թէ ոչ ճեզի թուրքիայէն իրաք մտնելու արտօնութիւն չենք տար» ըսեր է:

Պուշն ալ բարկացեր է, և «28 միլիառ տոլարէն աւելի չենք տար. եթէ չընդունիք, մեր նաւերը կիպրոսէն ետ կը դառնան և Սուէզէն անցնելով Պասուրայի ծոցը կ'երթան: Թուրքիայէն՝ իհւսիսային իրաքի վրայ յարձակելու ծրագիրն ալ կը ջնջենք» ըսեր է:

Բայց, Ամերիկայի համար, շատ դժուար կ'ըլլայ այն ատեն: Միայն հարաւի կողմէն իրաքի վրայ յարձակելու պարագային, շատ Ամերիկացի կրնան մահանալ:

Թուրքերն ալ այս վիճակին շատ լաւ տեղեակ են: Ճիշդ ատեն է. ասոր համար 92 միլիառ տոլարի վրայ կը պնդեն, կը կենան: «Կ'ուզենք ու կ'ուզենք»:

Յետոյ՝ «Հիւսիսային իրաքի բիւրտերն ալ մաքրելու հարցը՝ մեզի ճգնեցէ» կ'ըսեն Ամերիկացիներուն:

Ամերիկան դժուար վիճակի մատնուած է: Բայց, ի վերջոյ, թուրքերուն հետ սակարկութեան մէջ համաձայնելու ստիպուած պիտի ըլլայ: Կեցցէ՝ «պատեհապաշտ» թուրքիան:

1915-ին առաջին Աշխարհամարտէն օգտուելով թուրքերը, Հայերը ցեղասպանութեան ենթարկած էին: Հիմա ալ, Ամերիկացիներուն իրաքի վրայ յարձակումէն օգտուելով, իհւսիսային իրաքի բիւրտերը պիտի մաքրագործեն:

8. 2.

## ԵԹԵ ԶԻՉ ՄԸ «ԱԶԳԱՅԻՆ ՈԳԻ» ՈՒՆԻՉ - ՇԱՏ... (Ժար. Էջ 3-Էն)

Ասոր պատճառները հետեւեալ ծեւով կրօնանք բացատրել: Առաջինը՝ Պալազեան վարդապետին յուշերը գիրքի վերածուած են:

Երկրորդը և մեզի համար ամէցէն կարեւոր պատճառը՝ Պալազեան վարդապետին դաշնականացներուն համակիր կրօնական մը ըլլալն է.... Գ. Վրդ. Պալազեանին Չանդըրը-ի յուշերը և անոր մասին մեր խորհրդածութիւնները՝ «Նայիրի»ի յառաջիկայ թիւերուն մէջ տալու պիտի ջանանք:

### ԱԿՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Եթէ Եւրոպացիները քիչ մը խելք ունին՝ իսկական «Եւրոպացիներ» եղող Ռուսերուն կը միանան:

Եւ միայն այն ատեն է, որ իսկական Եւրոպական մեծ միութիւնը կը ծնի:

Եւ այն ատեն, կեղծ ազատութիւններու պետութեան՝ Ամերիկայի մենատիրութեան վերջը կու գայ»:

1 Ցունուար 2003 - «Նայիրի» Բացառիկ 8.Զ.

Մեր համոզումով, վերջին ամիսներուն ամէցէն կարեւոր եղելութիւնը՝ 10 Փետրուար 2003-ին Ռուսիոյ, Գերմանիոյ և Ֆրանսայի կողմէ ստորագրուած միացեալ յայտարարութիւնն է, որուն մէջ POUTINE, SCHROEDER և CHIRAC միաձայնութեամբ կ'ըսեն թէ՝ «Դրենց հակառակ են հրացի դէմ հոչակուելից պատերազմին»:

Այս միացեալ յայտարարութիւնն ոչ միայն վերջին ամիսներու, այլ վերջին տասնամեկներու կարեւորագոյն եղելութիւնն է:

Այս՝ նոր յոյսի ճամբայ մըն է, Ռուսիոյ մասնակցութեամբ դէպի մեծ Եւրոպական Միութեան գոյացման:

Այս՝ դարեր տետողութեամբ Ռուսիոյ դէմ կատարուած պատերազմներուն և թշնամութեան վերջ տալ ուզող տրամաբանութեան ձայնն է:

Եւ ամբողջ սրտով կը մաղթենց, որ այս խաղաղութեան յայտարարութիւնը չխափանուի....

Պերլինէն ետք, նախագահ V. POUTINE, 10 Փետրուար 2003-ին Փարիզ եկաւ, և 11 Փետրուարին Ֆրանսայի ամէցէն ծանօթ հեռատեսիլի կայանին, TF-1-ի մէջ PATRICK POIVRE D'ARVOR-ի հրաւիրեան եղաւ:

Այստեղ պիտի ջանանք տալ, նախագահ V. POUTINE-ին TF-1-ին մէջ կատարած յայտարարութեան, մեզի համար ամէցէն կարեւոր մասերը:

P. P. D'ARVOR-ի հարցումը՝ Ի՞՞նչ կը մտածէք Ռուսիոյ Եւրոպական Միութիւն մտնալու մասին:

V. POUTINE-ի պատասխանը՝ Մենք Ռուսիան կը համարենք՝ իսկական Եւրոպական պետութիւն մը:

Ռուսական քաղաքակրթութիւնը և աւանդութիւնները անցակտելիօրէն կապուած են յունական, հոռմէական և բիւզանդական քաղաքակրթութիւններուն:

P. P. D'ARVOR-ի հարցումը՝ Ի՞՞նչ կը մտածէք Զէչենիոյ մէջ կատարուած ահարեկչութիւններուն և խմբութիւններուն մասին:

V. POUTINE-ի պատասխանը՝ Զէչենիոյ հարցը հասկնալու համար, խնդրին եռթեան մէջ մտնալ պէտք է:

Միջին Արեւելքի կարգ մը իսլամական պետութիւններ՝ դրամով, գէնքերով և վարձկան ահարեկիչներով մեր հողերուն վրայ իրենց «խալիֆայութիւնը» տարածելու ծրագիրը կը գործադրեն:

Մենք, այս վարձկան ահարեկիչներուն դէմ կը պայքարինք: Մենք, մեր հայրենիքը պաշտպանելու համար, մոլեռանդ իսլամականութեան ծրագրին դէմ կը պայքարինք:

Եւ այս մոլեռանդ իսլամական ահարեկչութիւնը՝ աշխարհի համար սարսափելի և շատ մեծ վտանգ մըն է»... Եւ Փարիզի հայտառ օրաթերթը V. POUTINE-ին այս շատ կարեւոր յայտարարութեան մասին (հաւատարիմ՝ իր հակառուսամէտ աւանդութեան) ոչ մէկ բառ հրատարակեց:

Փարիզի այս մեծապատիւ խմբագրապետութիւնները չեն գիտեր, որ իսլամական մոլեռանդութեան վտանգին ենթակայ առաջին պետութիւնը մեր հայրենիքն է, Հայաստանն է:

## ԵԿԵՂԵՑԻՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆՆ Է ԵՐԿԻՆՔԻՆ,...(Ծար. էջ 4-ԷՇ)

— Այս մարդեն քաշելիք ունիս....:

Ծիտակ էր իր խոստովանութիւնը: Արդեն առաջին օրէն գիտակցեր էի, թէ անոր հետ ալ գործս խութերու պիտի հանդիպէր և իր սանձարձակ կարգադրութիւններէն շղայնացած՝ պիտի չկարենայի համբերութիւնս հակակշոել:

Ոստիկանի պէս կը հսկէր վրաս իր ամենօրեայ հանդիպումներով և իր հերոսապատում անցեալին յիսորտանքներով աշխատանքիս ժամերը կը ապառէր:

Նախկին դպրապետումին ճամբած էր և իր հայրենակից կնոջ մը յանձնած էր այդ պաշտօնը, առանց ծխական խորհութին որոշումը առնելու: Եւ ժամանակէ ժամանակ անտեղի յաւելումներ կը կատարէր անոր թոշակին վրայ:

— Պ. Ատենապետ, դարձեալ նոր յաւելում ըրեր ես դպրապետումինին...

Խօսքս ընդհատեց և ընդուստ ոտքի ելաւ, մէկ աչքը գոցելով և միաը լայնաբաց ու սպառնական ինձի յառեց.

— Եթէ դուն, անգամն ալ, այդ կնոջ թոշակին մասին խօսիս... այս եկեղեցին երկու քահանայ և վարդապետ մը ճամբեր եմ, չորրորդը դուն կ'ըլլաս:

Արձան պէտք է ըլլայի կամ այս ճիւաղին առջեւ խոնարհող և պաշտօնէն վախցող քահանայ մը, որ պոռթեկումս սանձէի: Ուրիշ ելք չկար, պարտատր էի սքեմիս սրբութեան վրայ նետուած նախատինքը սրբել շառաչուն պատասխանով մը:

— Եթէ այս ժողովուրդը հանդուրժեր է, որ դուն այս եկեղեցին Աստուծոյ երեք պաշտօնեաները ճամբես և տակակին պիտի հանդուրժէ, որ չորրորդն ալ ճամբես, արժանի է այս ծովսը քեզ նման գազան մը ունենալ իր գլխուն վրայ:

— Գիտե՞ս, որու հետ կը խօսիս...

— Ծատ լաւ գիտեմ, թէ որու հետ կը խօսիմ, միայն կը ցափմ, որ ժողովուրդը չի գիտեր, թէ դուն ով ես:

— Հսկ, ով եմ ես...

— Երեք տարի կ'ըլլայ այս եկեղեցին կը քահանայագործեմ, չտեսայ որ մոմ կը վառես, կամ պնակին մէջ դրամ կը ծգես և տարետուրքը կը վճարես. այսպիսի՝ անհատ մարդ մըն ես դուն:

— Քիչ մըն ալ համբերէ, քու հաշիտ ալ կը մաքրեմ, —ըսաւ ու, առանց ետեւ նայելու, դուրս ելաւ գրասենեակէն:

★ ★ \*

Երրորդ եկեղեցին, ուր պաշտօնի կոչուեցայ, նախորդին՝ քսան տարի ծառայելէ ետք, ասիկա վերջինը պիտի ըլլար հովուական պարտականութիւններու՝ տարիքի բերումով:

Հոս ալ ունեցայ գլխուս վրայ փշեպսակ մը: Այս եկեղեցոյ ատենապետն ալ զերծ չէր քահանային վրայ իր բոնատիրութիւնը պարտադրելու սնափառութենէն: Պաշտօնավարութեանս առաջին օրէն զգացի, թէ ասոր հետ եւս մեր յարաբերութիւնները պիտի բախէին դժուարութիւններու, հակառակ իմ զգոյշ ու յարգալից վարմունքիս: Փորձեցի իր օրինագանց կարգադրութիւնները անտեսել ու մեղմել իր մէջ մոնչող գազանը, բայց ի դերեւ ելան շանքերս: Մնայուն դժգոհութիւն մը կար իր մէջ, որ ալեկոծութեան մէջ կը պահէր հոգին:

Տարեկան անդամական ժողովին, տեղեկագրիս մէջ լիշեր էի, թէ երկու հարիւր ընտանիքներու այցելած եմ և անոնցմէ շուրջ լիսուն հոգիի տրատու անդամակցու-

թիւնը ապահոված:

Այս մարդը յանկարծ՝ առաջին շարքի իր աթոռէն վեր ցատքեց և որոտալի ձայնով պահանջեց, որ անուանացանկը կարդամ այցելութիւններուա:

— Հիմա՛, պէտք է տաս, անունները այցելած տուններուտ:

Անուանացանկը թողեր էի գրասենեակը և չէի կարծեր, որ անվատահութեան խնդիր արծարծէր անդամներէն ունէ մէկը: Անսպասելի էր Ատենապետին խստապահանջութիւնը:

— Հիմա՛, հիմա՛ կ'ուզեմ լսել անունները:

Սրահին երկու հարիւր անդամները սառ կտրած կը սպասէին, թէ իմ և ատենապետին միջեւ պատահած այս միջադէպը ինչպէ՞ս պիտի վերջանար: Անուանացանկը թողեր էի գրասենեակը և չէի խորհեր, որ ատենապետը նման խստապահանջելոյք մը պիտի ունենար ժողովին մէջ:

— Եկուր, որ ցոյց տամ անունները,—ըսի տակաւ ջիղերուս հակակշիուը կորուսած:

Հին սերունդին կը պատկանէր իր աւանդաշատ անցեալով և ալեւորած տարիերով: Գաւազանին յենած, ոչ ու ոչ բերելով յառաջացաւ և կանգ առաւ քանի մը քայլ ինձմէ: Պատրաստ էի շառաչիւն պատասխանով դաս մը տալ իր անվատահութեան:

— Եթէ դուն, այս եկեղեցւոյ քահանային անձին, խօսքին ու ծառայութեան վստահութիւն չունիս, դուրս ելիր սրահին:

Երկար, դղրդագին, միանուագ ծափահարութիւն մը ուումբի ուժգնութեամբ պայթեցաւ սրահին մէջ և ատենապետը նախատուած դուրս շտապեց սրահին: Յաջորդ օրը ստացայ հրաժարականը ատենապետութենէ: և եկեղեցւոյ անդամակցութենէ:

\* \* \*

Հովուական ծառայութեան մէջ քառասունընինգ տարի ընտանիքով նահատակած կեանք մը ունեցայ, ոչ թէ ծովսիս ազնուասիրտ անդամներէն, այլ՝ կարգ մը պատուակալ պաշտօնեաներու վրայ կղերատեաց խռովարարներէ:

Աստուած շնորհեց ինձի մտքով, հոգիով, մարմնով երկար ու առողջ կեանք մը, որ կարենամ անվիատ տուկալ և ալեւորութեան մայրամուտի շողերուն մէջ ապրիլ հանգստաէտ կեանք մը: Չեմ մտածեր մօտալուտ վախճանիս վրայ և ոչ ալ կը սպասեմ, որ երկինքը պիտի ժառանգե՞մ կամ ոչ:

Տիեզերքի ՀՈԳԻԻՆ ՈՒ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ թողած եմ ճակատագրիս տնօրինութիւնը:

**PLEASE, PLEASE, PLEASE !  
FOR HUMANITY'S SAKE, PLEASE ACCEPT  
TURKEY INTO THE EUROPEAN UNION !  
BY ACCEPTING TURKEY, HISTORY WOULD BE  
ROLLED BACK BY 1000 YEARS.**

Many people are against Turkey's joining the European Union. I think, this is wrong.

The European Union (EU) has now 15 members. Another 10 members will join the Union in May 2004.

A commission is working on the Constitution of the future EU. All 25 members have a representative in that commission, including the three aspiring members. Romania. Bulgaria and Turkey. The former French President, Valery Giscard D'Estaing is heading the commission; he said that he is against the joining of Turkey. Turkey has another culture. not an European culture, and if Turkey joins. it will be the end of the EU. This statement was few weeks ago; in the meantime, he has softened his stand.

New members are admitted to the EU on a conditional basis; this means. they do not automatically enjoy the privileges of the old members, particularly the free movement in the EU and the employment in the EU, and they do not benefit right away from the lucrative farm subsidies.

However, the old members of the EU are granted all their privileges in the countries of the new members.

Turkey has already started implementing some criteria necessary for entering the EU: Greece, the historical adversary of Turkey, is supporting the admittance of Turkey into the EU enthusiastically. It is in the self-interest of Greece to have a civilized nation as a neighbor and not a militaristic power threatening the very existence of Greece!

The AK Party of Turkey, whose existence has also been threatened by the Turkish Military and by the Turkish Establishment, have embraced immediately as they came to power. two goals which are a thorn to the eyes of the Military: a) to join the EU; b) to settle the Cyprus problem.

Once Turkey is accepted in the EU. the Military has to be subordinated to the Civilian Authority as it is in all other member countries: the Military's role will only be to defend the homeland, whereas the Military's role today is "to guard the Kemalist reforms". especially the "secularity of Turkey". Therefore. the Military is the biggest enemy of AK Party. whose roots go back to Islamism. The Military has intervened several times when "it felt" that these "Kemalist reforms were threatened".

So, imagine the situation when Turkey is accepted into the EU:

The Military is back in their barracks; they do not have a saying in the political life. The "National Security Council" (Milli Guvenlik Konseyi) headed by the Generals will no longer dictate to the politicians what to do and what to avoid.

The Military who controls so many businesses. has to abandon them by accepting their privatization. The military profession will not be as lucrative as it is right now and will lose its attractiveness.

A new parliamentary constitution will have to be drafted promoting the democratic principles.

Turkey will no longer be a POLICE STATE. Human rights will be observed and torture will be abandoned.

No one will be jailed because of his thoughts or because of his books. speeches or articles.

Freedom of thought, freedom of religion, freedom of travel will be observed.

The citizens of all member countries will have free access to the whole of Turkey: they will be free to travel wherever they want, they will be free to reside wherever they want and for how long they want. They will be free to perform their professions. to seek employment and to express their religious beliefs without any impediment. Most probably. missionary activity will also be permitted.

Greeks and Armenians will not be regarded as minorities. but will be treated like any other Turkish citizen. Greeks and Armenians, will not be held hostage anymore and will not be held responsible for actions happening in Greece or Armenia.

Armenian and Greek churches will be able to be repaired like any other building and new churches would be built if there is a demand for them. Right now, a decree by Mehmet II. the Conqueror, is interpreted in such a way that no church can be repaired and no new →p.12

## ՀՈԳԵԽՈՐԱԿԱՆԸ

### ԵԿԵՂԵՑԻՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆՆ Է ԵՐԿԻՆՔԻՆ, ԵՐԿՐԻ ՎՐԱՅ

Գրեց՝ ՎԱՐԴԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԻՒԼԿԵՐԵԱՆ

Եկեղեցին միակ աստուածակերտ հաստատութիւնն է, որ չի բաղդատովիր ո՞չ արքայական ջահագգետութ պալատներու, ո՞չ նախագահական դահլիճներու շքեղութեան և ոչ ալ պետական հոյակերտ կառոյցներու հետ, որքան ալ անոնք պերճաշութ ու պատկառելի ըլլան:

Այսպիսի սրբազնագոյն հաստատութեան մէջ երկնային պաշտօնի մը կոչուած է հոգետրականը, առաջնորդուած Քրիստոսի Աւտարանին սիրոյ պատգամներով և ուսուցումներով:

Եկեղեցին հանրային հանդիսասրան մը չէ, ուրկէ ներս կրնանք մտնել խօսելով, խնդալով, աղմկելով և աջ ու ձախ աղօթողներու վրայ ուշադիր ակնարկներ ձգելով:

Աստուծոյ սպասաւորը պէտք է գիտակցի, թէ տաճարէն ներս կը մտնէ դէմ յանդիման գալու համար Տիեզերական Հոգիին հետ, որ աներեւութապէս բազմած է Ս. Սեղանին վերեւ:

Քահանան կամ եպիսկոպոսը ծանրակշիռ մեղք կը գործէ, երբ աւագ դուռէն կը յառաջանայ դէպի խորան, առանց խաչակնքելու և երկիրածութեամբ խոնարհելու Ս. Սեղանին առջեւ:

Հոգետրականը իր ամէնօրեայ պաշտօնին պարտականութիւններովը թէեւ մարդկային գործ կը կատարէ, բայց իր նուիրաբերումներուն ներշնչումը կ'առնէ երկինքէն:

Իր աշխարհային ապրումներէն ու ցանկութիւններէն հրաժարելով, անունի ու տարագի փոփոխութեամբ, ա'լ կը դադրի երկրի քաղաքացիութեանէն և իր հովուական պարտականութիւններով կը դառնայ երկնաքաղաքացի:

Այնքան սուրբ ու վսեմ է իր հոգետր պաշտօնը և այնքան ակնածելի իր սեւաթոյր սքեմին հմայքը, որ երկրի վրայ, ո՞չ մէկ պատուաբեր պաշտօն չի համեմատուիր իր քահանայական կամ եպիսկոպոսական տիտղոսին հետ:

Ալ ան աշխարհիկ մահկանացու մարդը չէ իր կիրքերու բռնկումներով, իր թերեւաբարոյ շարժումներով և իր ոխակալ հակառակութիւններով:

Աստուած է իր յափտենական հայրը, Փրկիչն է իր ուսուցչապետը և եկեղեցին է իր հոգետր վերացումներուն տեսլականը:

Ալ՝ տիրացու Պետրոսը չէ, որ Ս. Սեղանին կը սպասաւորէ, ուսուցիչ Տիգրանը չէ, որ կը դասաւանդէ, ոչ ալ ոսկերիչ թակորը, որ ոսկեղեններով կը զբաղի:

Նախկին ընկերները և գործակիցները իր նոր կեանքին մէջ մասնակցութիւն չունին: Դէմքերը և շրջանակները կը փոխուին և իր մնայուն մտերիմները կ'ըլլան մինչեւ իր կեանքին վախճանը ծովսին անդամները: Անոնց հետ պիտի ըլլայ իր համագործակցութիւնը և համակեցութիւնը:

Աշխարհիկ բոլոր մեղքերը կը շնչուին և իր հոգին կը գգենու աստուածային շնորհազարդ գգեստները:

Սքեմը և վեղարը կրակ են ու կը վառեն մեղաւոր եկեղեցականին մարմինը, երբ ան կ'անգոսնէ Աստուծոյ սիրոյ օրէնքը և իր սրբաօծ կերպարին վրայ կը վերակենացնէ աշխարհային ապրումներու արատները:

Հոգետրականը պէտք չէ ըլլայ միայն պատարագող, ծիսակատարող և գրասենեակի մէջ ժամանակի սպառումով յամեցող պաշտօնեայ մը, այլ՝ իր լայնատարր զարգացումով և հոգետր արժանիքներով կատարէ ուսուցողական և առաքելական գործ ժողովրդային խաւերու մէջ:

Իր հոգետը պարտականութիւնները չեն կատարուիր ճշդուած ժամանակի սահմանափակումով։ Գործատը մը չէ ան, որ առաւտու աշխատանքի սկսի և երեկոյեան վերջացնէ ու տուն վերադառնայ։ Եկեղեցականը՝ օրուան ու գիշերուան բոլոր ժամերու պատրաստ պէտք է ըլլայ խնդրանքներու ընդառաջելու, երբ տունէ մը կամ հիւանդանոցէ մը կը կանչուի մահամերձ հիւանդի մը սնարին քով գտնուելու։

Ասոնք՝ անխուսափելի պարտականութիւնները են հոգետը հովիւններու պաշտօնավարութեան ընթացքին, որոնք չեն նկատուիր ու գնահատուիր հասարակաց զգացումն։

Կ'ուզեմ սա հարցուամը ուղղել իմ բարեմիտ ընթերցողներուս, թէ կա՞ն մերօրեայ հոգետրականութեան մէջ քրիստոնէական առաքինութիւններով վսեմացած հոգիններ, որ բարացուցեն վերոգրեալ բարեմասնութիւնները։ Հաւանաբար կան, որ ես չեմ տեսած ու չեմ գիտեր։ Այնքան հազորագիտ են ալետրներու հոյյին մէջ անոնք, որ կը խոսափին մարդկային տեսողութեան։

★ ★ ★

Այս խորհրդածութիւններէն ետք, կ'ուզեմ յիշատակել միջադէպ մը իմ և ծխական ատենապետին միջեւ պատահած։

Ծաբթուան մէջ օր մը, առաւտեան ժամերուն գրասենեակս եկաւ և հրամայական շեշտով ըսաւ։

— Տէր Հայր, կ'ուզեմ որ այսօր չիեռանաք ծեր գրասենեակէն, որովհետեւ գործատը պիտի գայ և խոհանոցին ծորակները նորոգէ։

— Պիտի ուզէի գիտնալ, թէ կէսօրէ առաջ պիտի գայ թէ կէսօրէ վերջ, որ ըստ այնմ դասատրեմ զբաղրումներու յայտագիրը։

— Չեմ գիտեր որ ժամուն պիտի գայ։ Դուք պարտատր էք մինչեւ ժամը հինգ մնալ այս տեղ։

Ալ չէի կրնար լուտ մնալ և հանդուրժել արժանապատութիւնս խոցող իր կարծը արտայալութիւնը։

— Պ. Ատենապետ կը խնդրեմ, որ զիս գործատրի տեղ չդնէք։ Իմ պաշտօնիս ժամերը սահմանափակուած չեն։ Օրուան 24 ժամերը կը զոհաբերեմ ծովսիս պահանջներուն։ Կը խնդրեմ, որ ճիշտ հիմա, հեռածայն ընէք և ճշդէք իր ժամադրութիւնը։

— Դուք, չէք կրնար հրահանգ տալ ինձի։ Ես այս եկեղեցտյ ատենապետն եմ և պարտատր էք իմ յանձնարարութիւններս կատարել։ Հակառակ պարագային մեծ խնդիր կ'ունենաք ինձի հետ։

— Դուք, եթէ ատենապետ էք, ես ալ այս եկեղեցտյ նախագահն եմ։ Պէտք է գիտնաք իրաւասութիւններու տարրերութիւնը։

— Չեմ ուզեր, որ այդ համարձակութեամբ խօսիք ինձի հետ։ Ցառաջիկայ ծխական խորհուրդի նիստին ծեր հաշիւը կը մաքրեմ։

Մեկնեցաւ զայրացած, առանց ետեւ նայելու և հրաժեշտ առնելու։ Իր ատենապետութեան շրջանը աւարտելէ ետք, դադրեցաւ եկեղեցի յաճախելէ և գնաց իր աւերը շարունակելու ուրիշ եկեղեցի մը։

Պաշտօնավարութիւնս այդ ծովսին մէջ տեսեց տասը տարի։ Նախընտրեցի դժգութիւնները չծաղկած խնդրել Առաջնորդէն, որ զիս տեղափոխէ քահանայի պակասէն տառապող ուրիշ եկեղեցի մը։

★ ★ ★

Նոր եկեղեցին, ուր պաշտօնի կոչուեցայ, ծխական խորհուրդի ատենապետը հաստամարմին և հասակատր անձ մըն էր, անախործ կերպարով։

Պաշտօնավարութենէս հազիւ տարի մը անցեր էր, այս մարդուն խիստ ու չոր վարմունքը կը ստուերածէր մեր յարաբերութիւնները։

Օր մը, նախկին հովիւը գրասենեակ եկաւ և իր կրած յուզումներուն ողիսականը պատմելէ ետք, խղճահարուած, ըսաւ ինձի։

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆԻ  
ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ  
ՅԱՑՏՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ՄԸ...  
ՎԱԶԳԻՆ ԹԻՒԹԻՒՆՁԵԱՆ**

«Նայիրի»ի 2003-ի Բացառիկին մէջ, ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՅԱՑՏՆՈՒԹԻՒՆՆԵՐ կատարած է Յովհաննէս Զիլինկիրեան, ուր կ'այպանէ Հօրեղբօրորդիին շահատակութիւնները, որոնք մուր քսած են Զիլինկիրեան ընտանիքին մաքուր վարկին ու



ԹՈՐՈՍ ԱԶԱՏԵԱՆ



ԱՇՈՏ ՔԵԶԵԱՆ

անունին վրայ...:  
Այս չըլլալոց  
պատանին ապա՝  
երիտասարդը,  
ընտանեկան  
սրբութիւնները  
ունակոխ ելէ  
զատ, եղեռնի  
զոհ ու նահա-  
տակ Հօրեղբօր՝  
Ռուբէն Սեւակի  
իրենց տան մէջ  
գտնուող թողո-  
նին մէջէն բա-  
նաստեղծութիւն-  
ներու բնագրերը՝

երկու դպրոցական տետրակները գտնելով դրապանած ու շուկայ տանելով վաճառած է զանոնք...: Եւ որովհետեւ ծնած եակօ մըն է ինք, դիտէ՝ զանձին արժէքը, զանոնք կը տու-  
նի ճիշդ ա՛յն Հասցէին, որ նմանօրինակ սրբութիւններու ՆԿԱՏՄԱՄՐ ԳԵՐ ԶԳԱՑՈՒՆ  
ԵՆ, և զգաստ...: Ու կ'ուղղուի Պոլսահայ ծանօթ բանահաւաք ու հետազոտող Թորոս  
Ազատեանին, ապա՝ «Մարմարա» թերթի Հիմնադիր, տէր և տնօրէն Սուրէն Շամիեանին  
և կը գրապանէ դրամները...: Մեծ Նահատակին ձեռատետրին ճակատագրով ողբացող  
Յովհ. Զիլինկիրեան, բնատուր մեծհոգիութեամբ մը ընդուստ կանգ կ'առնէ ու ասրաւի-  
նելով ժողովրդական ծով միամտութեան կը Հաւատայ իր կարգին, որ ԶԱՐԵՆ՝ ԲԱՐԻՔ  
ԿԸ ՄՆԻ... ու կը յարէ... Արամ եթէ ձեռատետրերը վերցուցած չըլլար, ապահով է, որ  
փոշեծածկ տետ-  
րակները թերեւս  
նետուած պիտի  
ըլլային աղբա-  
նոցին մէջ, ու  
կորսուէին վերջ-  
նականապէս և  
ընդմիշտ...:

Թիէ՝ այս Յու-  
դայական սա-  
կարկութիւնը  
քանի՝ արծաթի  
ապրանք եղած է.  
Ես՝ որպէս ականա-  
տես և վկայ, ուղե-  
ցի յայտնութիւն-



ԵՐՈՒԱՐԴ ՄԻՄՔԵԶԵԱՆ



ՐԱԳԱՐԱՏ ԹԵՒԵԱՆ

ներուն կապել յուշ մը, որ նժարին թեւերը հաւասար գան...: Տարողութիւնները ճղուխն...:

Բանահաւաք Թորոս Ազատեանն ու Սուրէն Նամլեանը ինծի ծանօթ անձնաւորութիւններ եղած են: Ազատունիի Հետ իմ շփումներս քիչ մը աւելի սերտացան չնորհիւ մեր վրայի՝ երրորդ յարկի բնակիչ Երդիծարան Աշոտ Քէչեանի, որուն Հետ մեր բարի դրացնութիւնը զուարճալի դէպքով մը ամրացաւ [տես «Զարթօնք» և «Նայիրի»] և մտերիմ բարեկամութեան վերածուեցաւ...: Ինչպէս ինք, նաեւ այլ մտաւորականներ պարբերաբար մեզի սեղանակից եղան: Անձրեւոտ օր մըն էր: Մեր Համակրելի դրացիին սովորականէն կանուխ գալը ջրամոյն ըլլալուն վերազրեցինք: Մօրս՝ «ըխլամուր մը կ'առնէ՞ք»ին պատասխանեց Սեղանիկին վրայ իրեն սպասող առիւծի կաթին շիշը կըլկըլացնելէ յետոյ – «Մերինները պիտի գան. պատրաստ ըլլամ»ով սրախօսեց ու շարունակեց ճընկելը...: Իրապէս, չուտով ժամանեցին Ազատունին և Բ. Թեւեանը. և քիչ վերջ եղ. Սիմքէշեան, որոնց կ'ընկերանար կոկիկ բայց Հին վերարկու մը Հաղած գեղադէմ երիտասարդ մը, որ ներկայացուցին որպէս Արամ Զիլինկիր...:

Արամ, տակաւին չնստած, ժամացոյցին նայեցաւ, Հասկցնելու Համար, որ ժամանակ չունի... զրաղած է... կարճ կապեցէք... Աշոտ Քէչեան, որպէս Մարդու «սառաֆ», ուսքի ելաւ. եկաւ Հայրաբար գրկեց վտիտ ուսը ու մեղմօրէն յարեց – «Օղլում Արամ, երեք օրերէ ի վեր դոնէ-դուռ պտտեցանք, էվէլ պակաս ըսի ըսաւներ լսեցինք. ամմաքու պահանջած գումարդ՝ յիսուն թղթոսկին ծարը ծարին չկրցինք բերել: Անձախ քառասունութը ոսկի Հաւաքեցինք... չէ՛ մըսեր, ա՛ն փարատ. Էէլալ թող ըլլայ...»: Իսկ Ազատունի գումարը իր առջեւ հրեց...: Արամ ափովը յափշտակեց տրցակը: Մէկ առ մէկ Համրեց, ծալլեց ու կուրծքի գրպանիկը տեղաւորելով ոտքի ելաւ. դէպի դուռ քալեց, բացաւ և թթուած երեսը պատին կողմը՝ «Ըուախինիդ, մէզէնիդ իմ էրկու օսկիիս Հաշիւին թող ըլլայ»– մոլտաց ու կորսուեցաւ...:

Բոլորս Հիասթափուած իրարու նայեցանք... «Թի՛ւ» մը նետեցինք ու տեղերնիս նըստամք...: Քէչեանն էր կրկին որ դրաւ վերջակէտը... «Մեր սուրը նահատակներուն նոյնքան սուրը մասունքները փրկելու Համար, ասանկ վարնոցներուն Հաշւոյն պիտի շարունակենք դգալ մը աւելի թոյն կլլել, որպէսզի քիչ մը աւելի ճակատաբաց ապրինք...»:

...Ու առիւծի կաթով կիսատ մնացած բաժակները դէմ-դիմաց զընգացին...:

Դէյրութ, 6-1-2003

**Յ.Գ. Մեր տան մէջ տեղի ունեցած այս անակնկալ Հանդիպումին մասին յաւելեալ մանրամասնութիւններ խնդրող մեր յարգելի խմբագրին բան մը չէի կրնար տալ, քանի որ բան մը չունէի տալիք...: Սակայն անդրադառնալով, որ անոր մէջ անձնական բաժին մը կար և անհամեստութիւն կրնար նկատուել, զանց ըրած էի յիշելը... Աւելի ուշ՝ անդրադառնալով որ այդ վերյուշին մէջ կար նահատակներուն և, ի Հարկ է, Ռ. Սեւակի Հմայիչ զոհողութիւնը, գրի առի որպէս բարի օրինակ բոլորին...: Աշոտ Քէլեանի և եղրօրս մտերմութիւնը Հասած էր կէտի մը, որ երդիծարանին առիթ տուած էր և Համարձակութիւն որ դառնայ տունի անդամ և իրմէ բացէն խնդրել դրամ, ըսելով. «Վարդգէս, օշլում, քովդ Հինգ օսկի ունե՞ս»: Եւ տեսնելով, որ Հինգին Հետ եկող մնացեալ դրամները կրկին գրպան կը վերադառնան... «Ատոնք ալ տուր տէ Թորոսին Հաւաքածին վրայ դնելով մօտենանք այդ քէռաթայիին պահանջած յիսուն օսկիին»... ու ինչպէս վերը յիշեցինք՝ յանձնուեցաւ դրամը:**

Այդ ութը ոսկիներուն վրայ, պիտի աւելնար եւս ութը ոսկիներ որպէսզի կարենայինք վճարել մէկ «չէքի» ձմեռնային փայտի դրամը... որ պարտքով միայն կրցանք ձեռք բերել...:

ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՈՒԵՆՉ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐՈՒՆ

«ԴԵՐԱՄ, ՈՐՈՒՆ ԼՈՒՌ ՑՈԼՔԻՆ ՄԷՋ Կ'ԱՐԾԱՐԾԻ  
ՃԱԿԱՏԱԳԻՐԸ ՏԱՌԱՊՈՂ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ,  
ԸՍԵ՛, ԶՈՒ ԿԱՄՔԴ ՊԻՏԻ ԻԾԽԵ՞ ՑԱԽԻՏԵԱՆ.  
«ԴՐԱՄԻՆ ԱՇՈԹԵԸ», 1907 ՈՂԻՐԵՆ ՍԵՒԱԿ

ԱՐԵՒՄՏԵԱՆ [ԻԲՐ ԹԷ] ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐ  
ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՄԷՋ Ո՞Վ Է ԻԾԽԱՆԱԻՈՐԸ...:  
ԺՈՂՈՎՈՒՐԴՅԸ ԵՒ ԱՆՈՐ [ԻԲՐ ԹԷ]  
ԸՆՏՐԱԾ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻ՞ՒՆՆ Է,  
ԹԷ՞ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԸ  
ԴԵԿԱՎԱՐՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

«ԻԾԽԱՆԱԻՈՐԸ՝ ՈՍԿԻՆ ԶԵՐԵԸ  
ՈՒՆԵՑՈՂՆ Է.  
ՈՍԿԻՆ ԻՍՐԱՅԵԼԻ ԶԵՐԵԸՆ Է.  
ԵՒ ՈՍԿԻՈՎ ԶԵՐԵԸ ԱՆՑՈՒԵՑԱՀ ՄԱՄՈՒԼԸ  
ԵՒ «ԿԱՐԾԻՔՆԵՐԸ»...  
ՈՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ՄԷՋ ԿԸ  
ԴԵԿԱՎԱՐԵՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ»:

“PROTOCOL DES SAGES DE SION”

ՅՈՎԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԵԺ ՈՂԻՐԵՆԵԱՆ]

Այս օրերուն, ամերիկեան ուժերը, իրաքի դեմ պատերազմի կը պատրաստուի՛:

**Ի՞նչ է պատճառը:**

Իբր թէ, Սատտամ Հիւսէյնի իրաքը՝ Ամերիկային վտանգ կը սպառնայ:

Գրեթէ 13 տարիներէ ի վեր, ամերիկեան շրջապատումէ տառապող և ասոր պատճառած թշուառութեան հետեւանքով հարիւր հազարներով անմեղ զոհեր տուած իրաքի մէջ, Ամերիկայի համար վտանգաւոր գէնքեր շինուած և մթերուած ըլլալու ամրատանութիւնը՝ աշխարհի ամենամեծ «ՊՈՂԱ-ԻՈՐ ՍՈՒԻՏ» է:

Բայց Սիոնիստներուն ձեռքը գտնուող լրատուութեան ցանցը՝ աշխարհի մեծամասնութեան կը կլեցնէ, թէ Սատտամ Հիւսէյն վտանգաւոր թշնամի մըն է խաղաղութեան համար:

Միջին Արեւելի Խոլամ Երկիրներուն մէջ իրաքը, Սուրիոյ Եման, ամէնէն «Լայիք» Երկիրներէն մէկն է:

Եւ այս Երկիրները ոչ թէ կործանել, այլ պաշտպանել պէտք է, որ չիյնան ծայրայեղ Խոլամ մոլեռանդներուն ձեռքը:

Աշխարհի խաղաղութեան սպառնացող Երկիրները՝ ծայրայեղ Խոլամներուն ձեռքը եղող Փաքիստանն է, Ինտոնէզիան է, Սաուտի Արապիան է:

Այս Երկիրներուն մէջ ծայրայեղ Խոլամական վարչակարգերը ստեղծողը՝ Շոյցինցը՝ ամերիկեան «Ս.Ի.Ա.» կազմակերպութիւնն էր, որ անոնք պայքարին Սովետական Միութեան և մանաւանդ՝ Համայնավարութեան դէմ:

Եթէ Պէն Լատէնին 11 Սեպտեմբեր 2001-ի Նիւ Եորքի ողբերգութիւնը չըլլար՝ Ամերիկան շատ գոհ էր ծայրայեղ Խոլամական շարժումներէն, որոնք Ռուսիան և Եւրոպան կը քանդէին:

Պոստիոյ, Թոսովոյի պատերազմները, այս ծայրայեղ Խոլամական դաւադրութիւններուն պատճառաւ էին:

Չէչենիոյ մէջ, տարիներէ ի վեր կատարուող ցաւալի խժդութիւններուն պատախանատունները, «Ս.Ի.Ա.»ի «աշակերտները» եղող ծայրայեղ Խոլամական կազմակերպութիւնները են:

Եւ այսօր Ամերիկան, աշխարհի խաղաղութեան մեծագոյն վտանգը եղող ծայրայեղ Խոլամական պետութիւններուն դէմ պայքարելու փոխան, պատերազմ պիտի հոչակէ Սատտամ Հիւսէյնի իրաքին դէմ, որ ծայրայեղ Խոլամներուն թշնամին է:

Բնական է, որ Ամերիկեան այս սուսերուն, դաւադրութիւններուն, պատերազմներուն բուն նպատակը՝ աշխարհի վրայ իր տիրապետութիւնը տեսականացնել է:

Ամերիկան, իրաքը ձեռք անցընելով, Միջին Արեւելի թէթրոլի հարստութիւնները բոլորովին իր հակակշռին տակ պիտի առնե, և Միջին Արեւելի քարտէսը պիտի վերագծէ՝ ստեղծելով բոլորովին ամերիկային ենթակայ խամաճիկ պետութիւններ:

Ըստ շատ դրաբութեասք հասկսալի է, որ այս Ասերիկան ուզմավարական խաղերուն ետեւ գտնուողները Սինհիստներն են:

Սինհիստներն են, որ իրենց հարիւրաւոր տարիներու վրայ երկարող ծրագիրներուն մերօրեայ գործադրութեան պաշտօնը տուած են ամերիկացիներուն, հաւատացնելով (մասնաւորապես դրամի ուժով պարտադրելով անոնց), որ այս ծրագիրները ի շահ ամերիկացիներուն են:

Թէև անհաւատալի, բայց անհերքելի իրականութիւն է որ այսօր, Ամերիկայի մէջ տիրող ուժը "WASP" կոչուած ծայրայեղ Աւետարանականներու կազմակերպութիւնն է, որ կը գործակցի ցեղասպան Արիէլ Շարօնին հետ և "WASP"-ն է, որ Պուշչին կը պարտադրէ իր քաղաքականութիւնը:

19-րդ դարուն հրեաները իրենց ծրագիրները գործադրելու պաշտօնը տուած են նախ՝ Ֆրանսացիներուն, յետոյ՝ Անգլիացիներուն:

20-րդ դարուն սկիզբները, Սինհիստները այս պաշտօնը տուին Գերմանացիներուն և Թուրքերուն:

1945-էն սկսեալ ալ, Սինհիստական ծրագիրներուն գործակատարները Ամերիկացիները եղան:

Բայց այս՝ Ամերիկայի ծայրայեղ Աւետարանական "WASP"-ները թող չմոռնան, որ ապագային կարգը իրենց ալ պիտի գայ, տասնեակ միլիոններու հասնող ամերիկեան սեւամորթ իսլամներու ճամբով:

\* \*

Բնական է, որ Սինհիստները, այս ծրագիրները կը յաջողին գործադրել իրենց ձեռքը գտնուող «Դրամ»ին ուժովը:

ԵՒ ՄԻՆՉԵՒ ԱՅՆ ՕՐԸ, ՈՐ ԱԶԱՏ ԾՈՒԿԱՑԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԵՐՈՒ ՃԱՄԲՈՎ «ԴՐԱՄ»Ը ՄԻՆՉԵՒ ԱՅՆ ՎՐԱ ՃԱՄԲՈՎ ՀԱՄԱՐԵԼԻ ՎՐԱ ՈՇԱ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ, ՈՇԱ ԱԼ ԽԱՂԱՐԻՒԹԻՒՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ:

Ռուբեն Սեւակ դեռ 1907-ին, երբ 22 տարեկան էր, Զուիցերիոյ Լոզան քաղաքին մէջ ուսանողութեան տարիներուն շատ լաւ հասկցած էր դրամին աղետալի դերը՝ յարդկութեան վրայ:

Անոր 1907-ին գրած «ԴՐԱՄԻՆ ԱՂՕԹՁԸ» բանաստեղծութիւնը ասոր ապացոյցն է: ... «ԴՐԱՄ, ՈՐՈՒՆ ԼՈՒՐ ԾՈՒՅԻՆ ՄԷԶ Կ'ԱՐԾԱՐԾԻ

ԾԱԿԱՏԱԳԻՐԸ ՏԱՌԱՊՈՂ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ,

ԸՍԸ, ԶՈՒ ԿԱՄՑԵԴ ՊԻՏԻ ԻԾԽԵ՞ ՅԱՀԻՏԵԱՆ»:

Ուրեմն մենք ալ, Ռուբեն Սեւակի հետեւողութեամբ հարցնենք.

«Սինհիստներ, «ԶԵՐ ԴՐԱՄԻՆ» կատարած չարիքը մինչեւ ԵՌ պիտի տեւէ»:

Ռուբեն Սեւակի բանաստեղծութիւններուն մէջ, մեզի համար բացառիկ կարեւորութիւն ունեցող ուրիշ մաս մըն ալ կայ, որ երեք չի յիշատակուիր և այս մասը ընդհանրապես զանց կ'առնուի. այն ալ Ռ. Սեւակին 1910-ին հրատարակուած «Կարմիր Գիրք»ին «ԶԱՐԴԻՆ ԽԵՆԹԸ» մենախոսութիւնն է, որուն մէջ ան, հայկական ջարդերուն իբր պատասխանատու կ'ամբաստանէ՝ ԵՒՐՈՊԱՏԻՆԵՐԸ:

«ԶԵԶԻ, ՈՐ ԶԵՐԾՈՒԱԾ ՄԵՐ ՄՈՐԹԵՐԸ ԶԻ՞Գ

ՀԱՐՍՆԻՉԻ, ՄԵՂՅԻ ՎՐԱՆՆԵՐ ԿԱՌՈՒԹԻՅ...

ՈՒ ԶԵԶ ԵՒՐՈՊԵԱՆ ԴԻՔ ՈՐ ԾՆԱԳԻՆ

ՍԱԿԱՐԿԵԹԻՅ ՄԵՐ ԱՐԵԱՆ ԼՈՌԻԹԵԱՆ ԳԻՆ...»:

ԽԵՂԾ Ռուբեն Սեւակ. դուն, բանաստեղծութիւններովդ, գրութիւններովդ և «Իմացեալ նահատակութիւն»ովդ ապացուցանեցիր, թէ Վարդանանցի հերոսներուն շառակիղն ես:

Բայց Սինհիստներուն ծառաները եղող հայ կուսակցութեան ղեկավարները քեզ մոռացութեան մէջ պահեցին:

Որովհետեւ 1915-ին, Պոլսոյ Ոստիկանապետ Պետրի պէյին ըսածին պէս, Սին-

Եիստներուն հայ ծառաներն  
ալ գիտէին թէ՝ «Դուն. քու  
մադուն, ավել. քու գաղափարներով»  
ժողովուրդը կրնայիր ոտքի հանել»:

«ՆԱՅԻՐԻ»ի 2003-ի առաջին թիւերեց սկսեալ տալու ջանացինք 1915. Զանդըրը-ի դժոխքէն վերապրածներէն՝ մասնաւո-րապէս՝ Միջայէլ Շամտանեանին. բժիշկ Վահան Ալթունեանին և Յովհան Ծ. Վարդա-պետ Կարապետեանին ականատեսի վկա-յութիւնները. որոնք մանրամասնութիւններով կը պատմէին Ռուբէն Սեւակի Զանդըրը-ի հերոսական կեանքը:

Հիմա ալ տալու պիտի ջանանք. Զանդըրը-ի  
վերապրող աքսորեալներէց՝ Գրիգորիս Ծ.  
Վարդապետ Պալաքեանի ականատեսի վկա-  
յութիւնները:

Պալածեան վարդապետ լյետոյ Եպիսկոպոս Դաշնակցականներուն համակիր կրօնական մը եղած է: Եւ շատ զարմանալի է. որ Պալածեան. իր յուշագրութեան մէջ. բնաւ չ'անդրադառնար Ծամտանեանին. բժիշկ Ալթունեանին և Ցովհան Վրդ. Կարապետեանին Ռուբեն Սեւակին Զանդըրը-ի մէջ ցուցաբերած հերոսական կեցուածքին մասին:

Ահա. Գրիգոր Վրդ. Պալաթեանին «Հայ Գող-գոթան» գիրքին մէջ. Ռուբեն Սեւակի մասին վկայութիւնը. «...Հակառակ անոր՝ որ մեր կամքին ձգուած էր Զանուըը մնալու կամ՝ Պոլսէն զատ մեր յարմար դատած գաւառական քաղաք մը երթալու պարագան. սակայն յուզումով կը տեսնէինք. որ մեզ Պոլսէն ընկերացող Սեւանիկցի ոստիկանապետն ու ոստի-

կանոներ, կը ստիպէին մեզ որ մենք, ամենցս ալ պատրաստուինք անպատճառ. 2 օրուան մէջ, մեկնելու Չանկըրը-ԵՇ:

Միւս կողմէց մեզ խուճապի մատնող մէկ պարագան ալ սա էր. որ մեր ընկերութերէց 5 հոգի, և անոնց մէջ ըլլալով ողբացեալ Դանիէլ Վարուժան և Տօքը. ՉիլիՇկիրեան (Սեւակ) կառավարական հրամանով քննադատուած էին անմիջապէս մեկնելու ԵԱԿիւրիի ճամբով՝ Այաշ: Այս դժբախտ հանգամանքն ալ մեզ կը տագնապեցնէր. որովհետեւ ալ հասկցած էինք. թէ Այաշ դրկել ինչ ըսել էր....:

Ո՞հ, յաւետ անմոռանայի 1915 Օգոստոս 12-ի Հինգշաբթի. ան սեւ օրուան լուսնշաղին էր. որ Զանդըրիի մնացորդ աքսորական 18 ընկերներ կը հաւաքուէինք գետափի սրճարանի կամուրջին մօտ սպասող երկու կառքերուն առցեւ: Այս այն կամուրջն էր, ուրկէ Զանկըրի-էն Էնկիւրի մեկնողներն անպատճառ պէտք է անցնէին. զի ճամբան ասկէ կ'երկարէր. Փայլացրի Վրայով դեպի Էնկիւրի:

Զափազանց յուզուած էինք ամենքս ալ. արիւց կը վազէր մեր սրտերէց. և հակառակ մեր ջանքերուց, անկարող էինք զսպելու մեր արցուցքներց:

Մահուան սարսուռ մը կը պարուրէր մեզ. կը տանջէր մեր միտքն. կը լլկէր՝ մեր

արդէն տառապահիւծ հոգիները. քանի կը տեսնեինք ողբն ու կոծն մեր յաւետ ողբացեալ ընկերներուն՝ Վարուժանի. Սեւակի. Օննիկ Մաղազանեանի և 2 ընկերներուն:

Ոչ մէկ ատեն հանդիպած էի այսքան կենդանի բնազդի... կ'ըսէին մեզի՝ «Մօքաք բարով... մենք մեռնելու կ'երթանք. հայրսուլրբներ. աղօթեցէք մեզի համար...» եւ երբ, տարաբախտ Վարուժան և Սեւակ դառնալով կ'ըսէին մեզի թէ՝ «ՄԵՐ ՈՐԲԵՐՈՒՆ ՏԷՐ ԵՂԵԶ Ա...» և երբ. Վարուժան ի մասնաւրի կ'ըսէր. թէ «Նոր զաւակ մը ունեցած եմ. թող անունը Վարուժան դնեն...» ա'լ մեր ամէնցին յուզումը չափ ու սահման չունէր և մեր միտքերը չէին գործեր. որ միսիթարութեան երկու խօսք ըսէինք եղկելիներուն....:

Անգամ մըն ալ կ'ողջագուրուէինք մեր ողբացեալ հինգ ընկերներուն հետ. ու երկու կառքերը ընդ հսկողութեամբ սելանիկցի մէկ ոստիկանի և մէկ ոստիկան զինուորի՝ հուսկ ուրեմն կը հեռանային մեր տեսողութենէն: Լուսնշաղին դեռ փարատել չկրցած մթութեան մէջէն՝ մինչ մեր ակնարկները դեռ չէին բաժնուեր իրարմէ. զի մեր ամէնցին. հոգիներն կը վկայէին. թէ վերջին անգամ էր որ կը խաչածեւէին մեր ակնարկներն....:

Ցաջորդ օրը՝ 1915 Օգոստոս 13-ի օրին այցելութեան կուգային ինձ. վերապրող Յովհան վարդապետ և ողբացեալ Տիրան թէլէկեան և մահճիս հանդիպակաց բազմոցի վրայ նստելով ոչինչ կ'ուզէին խօսիլ: Սակայն իրենց տժգոյն և թախծոտ կերպարանցն արդէն կը մատնէր իրենց ներքին մահաբոյր փոթորիկը. և վերջապէս անհամբեր շարժառիթը ժամ առաջ իմանալու բնական հետաքրքրութեամբ. հազիւ լուութիւնը խզած և հարց ուղղած՝ ահա. ոռումքի մը նման կը պայթէր իրենց բերնեն ակամայ թռած սա բառերը. «Աստուած Զեզի օրեր տայ...»:

Ո՞հ, մեր սուզը անբաւ էր և անբացատրելի. չէինք գիտեր ո՞ր մէկ սուզին վրայ ողբանը՝ նահատակներուն. որ արդէն մահուան տուին իրենց անխուսափելի բաժինը. թէ՝ մեր վրայ ողբանը. որ մահուան կարգին կը սպասէինք. առանց գտնելու փրկութեան ճամբայ մը:

Ահա մանրամասնութիւնները ահաւոր այս եղեռնին:

Չանկըր՝ իթթիհատի թիկայի անդամներն ալ վաղուց կ'ուզէին մասնակից ըլլալ Ճիհատին և արժանանալ իսլամաց մարգարէին վարձատրութեան:

Ուստի, օգտուելով Տօքթ. Չիլինկիրեանի և Վարուժանի ու երեք ընկերներուն ենկիւրի փոխադրուելէն. կանխաւ վեց ժամ հեռու թիւնա կոչուած տեղը. Հայո անունով ցիւրտ ոճրագործ մը մէկ քանի ընկերներով կը դրկեն որ սպասեն մեր ողբացեալ ընկերներուն անցքին:

Հինգշաբթի. Օգոստոս 12. երբ Չանկըրիէն կը մեկնէին մեր ընկերները. տեղույն իթթիհատի քոմիտէի պատասխանատու քարտուղար Եօնուս կը հեռածայնէ մեր ընկերներուն մեկնումը Չանկըրի-Գալայնը ճամբուն վրայ գտնուող ոստիկանական պահականոցները: Դարձեալ յաջորդ օրը՝ Ուրբաթ կը հեռածայնէ թիւնայի ոստիկանական պահականոցը հարցնելով. թէ «արդէն եկողները սպաննուած են...»: Բայց Ուրբաթ ըլլալուն. ոստիկան զինուորները պահականոցէն թիւնայի հեռու ծառի մը ներքեւ կերուխումի մէջ կ'ըլլան և պահականոցը կը գտնուի հայ բանուոր մը. որ պահականոցի պատերը կրածեփելով զբաղած է եղեր նոյն պահուն. և հեռածայնին հաղորդած այս ոճրապարտ բառերը կ'իմանայ...:

Երբ մեր 5 ընկերներն երկու կառքով կը հասնին թիւնայի զառիվերը. ուր կը սկսի Գալայնը սարաւանդը. դեռ չբարձրացած զառիվերը. դարան սպասող 4 ցիւրտերը կու գան դիմաւորել մեր 5 ընկերները:

Չորս ցիւրտերը երբ յառաջանալով կու գան կեցնել առաջին կառքին ծիերը. ոստիկան զինուորը կը հրամայէ որ ոճրագործները ազատ ձգեն ծիերը՝ սպաննալով կրակել: Սակայն կառքերուն ընկերացող սելանիկցի երիտասարդ ոստիկանը կը հրամայէ ոստիկան զինուորին որ ընդդիմութիւն չընէ....:

Զի կանխաւ որչափ որ առ այս գաղտնօրէն հրահանգուած էր ոստիկանն. սակայն ոստիկան զինուորին չէին ուզած գործուելիք ոճրիին իրազեկ ընել. վախնալով որ անգիտակից անգաղտնապահութեամբ մը. կրնայ տգետ ոստիկան զինուորը, →է, 31

## «ԻՇԽԱՆԱԽՈՐԾ՝ ՈՍԿԻՆ ԶԵՌԵԸ ՈՒՆԵԹՈՂՆ Է....(Ժար. Էջ 2-ԷԱ)

Վիժեցնել արեան աս խրախճանքը....:

Ոստիկանին և ոստիկան զինուորին կրատրական համակերպութեանը վրայ, քիւրտ Հալօ կը հրամայէ երկու կառքերուն մէջ գտնուողներուն որ անձնատուր ըլլալով կառքէն վար իշնան:

Հազիւ կառքերէն վար իջած. Տօքթ. Չիլինկիրեան կը խնդրէ թախանձագին այս 4 քիւրտերէն, որ խնայեն իրենց կեանքին, և ինք կը խոստանայ իր ընկերներուն հետ տալ իրենց ամրող հարստութիւնը և գոյքերը:

Բայց ոճրագործներն իբր պատասխան մեր 5 ողբացեալ ընկերները, հակառակ ասոնց աղիողորմ պաղատանքներուն, կ'իջեցնեն մերծակայ ծորը՝ առուակի եզեր-քին, և զոհերուն զգեստները անվնաս պահելու համար նախ կը մերկացնեն: Ապա դաշոյնները քաշած կը յարծակին իրենց անզէն և անպաշտպան զոհերուն վրայ, և անխնայ կը սկսին ծակծկել և բգկտել դաշոյններով տարաբախտ մեր ընկերներուն մարմինները, և դանակով անդամահատել ասոնց ոտքերն ու բազուկները և այլ զգայարանքները....: Ասոնցմէ միայն Վարուժան անձնապաշտպանութեան կը դիմէ, և իբր պատիժ ոճրագործներն դանակով դուրս թափելէ վերջ փորոտիչը. կը փորեն նաեւ հայրենասէր բանաստեղծին աչքերը....

Ապա գողօնը բաժնելով իրենց մէջ և Տօքթ. Չիլինկիրեանի ու ՕՇՇիկ Մաղագանի զգեստներուն երիզներուն մէջ կարուած աւելի քան 450 Օսմանեան հնչուն ոսկին եւս առնելէ վերջ. բաժին կը հանեն նաեւ ոստիկանին և ոստիկան զինուորին: Կառքերու մէջ գտնուած բեռները եւս իրենց մէջ բաժնելէ վերջ. երկու թուրք կառապաններուն կը հրամայեն, որ առանց ճամբանին շարունակելու անմիջապէս դառնան Չանկըրի:

Թուրք կառապանները կը դառնան գլխիկոր Չանկըրի. և մէկը որ հազիւ քսանամեայ. թուրք երիտասարդ մըն էր և բաղնեպանի մը զաւակ, պատմեց ինձի այս բոլորը մանրամասնութեամբ ու արցունքով, աւելացնելով. «Ասանկ արհեստը գետնին տակն անցնի. ինձի պէտք չէ ասանկ շահը... և կառքս և ծիերս այսօր վաղը պիտի ծախեմ ու հեռանամ այս քաղաքէն....»:

Այս թուրք կառապան երիտասարդին վրայ չափազանց խոր ազդած էին ոճրին գործուած միջոցին տեղի ունեցած անլուր չարչարալից անգթութիւնները... պատմած ատենը ան կուլար: Միանգամայն պնդելով որ եթէ սելանիկցի ոստիկանը զինուորին արգելք եղած չըլլար, կարելի էր դիւրաւ դիմադրել և առջեւը առնել անգութ ոճրին մը, և փրկել թշուառ 5 զոհերը....

Ուրբաթ կէս օրին հազիւ երկու կառքերը պարապ վերադաշ՝ ոճրին տարածայնութիւնը արդէն սարսափեցուցած էր մնացորդ աքսորականներուս հետ. նաեւ Չանկըրիի յիսուն տուն հայութիւնը:

\* \* \* \* \*

Մեր ողբացեալ հինգ ընկերները ողջամբ էնկիւրի հասցենու համար իր զաւակ-Երուս վրայ երդում ընող փոխ կառավարիչ և Գասթեմունիի կուսակալութեան ոս-տիկան զինուորներու հրամանատարը, ծի նստելով կ'աճապարէր թիւնա՝ մէկ քանի հարցաքնիչ դատաւորներով և ոստիկաններով ոճրին վայրը:

Հոն կը գտնեա հինգ թշուառ զոհերը անճանաչելի վիճակի մէջ՝ ծորի մէջ նետ-ւած...: Ասոնց մարմինները թաղել տալէ և ոճրագործները ծեռք անցընելէ վերջ, ոս-տիկանին ու ոստիկան զինուորին հետ ենկիւրի բանտը կը նետուէին պատերազմա-կան ատեանի առջեւ դատուելու համար:

Դատարանին մէջ 4 քիւրտերը բացայայտ կերպով յայտարարեցին, թէ իրենք գործած են Զանկըրիի իթթիհատի քոմիտէի հրամանով և յանձնարարութեամբ... հետեւապէս իրենց հետ անոնք ալ հարկ էր դատարան քաշել....:

Այս ոճրագործներուն պետը քիւրտ Հալօ, որուն հիւանդ աղջիկը ստոյգ մահուանէ փրկած էր Տօքը. Չիլինկիրեան, այս դէպքէն ամիս մը առաջ, օր մը կ'ըսէ ողբացեալ Սեւակին. «Ես քեզ կը մեղքնամ, ծեր գլխուն փորձանք պիտի գայ. և ոչ ոք ծեզմէ չպիտի կրնայ ազատիլ. եկուր հսլամ եղիր, աղջիկս ալ քեզ տամ և երիտասարդ կեանքդ փրկէ...: Ապա թէ ոչ՝ եթէ այս առաջարկս մերժես. արդէն քեզ մեղքնել կ'ուզեն, այն ատեն ես անձամբ պիտի կտոր-կտոր ընեմ քեզ...»:

Ահա, բացայայտ ապացոյց մը եւս, ոճիրին կանխաւ պատրաստուած ըլլալուն:

Տարարախստ Սեւակ պատմած էր իր կենդանութեան խոստովանաբար մէկ քանի մտերիմ անձերու, և առ ի զգուշութիւն այգին եւս քաղաք փոխադրած էր իր բնա-կութիւնը այս սպանալիքն վերջ:

Այսպէս անճիտուող ազգը՝ կը կորսնցնէր ասա՞ղ, տաղանդաւոր երկու գրագէտ-ներ ու բանաստեղծներ, և վաղուան հայ վերածնունդին կարող երկու առաջեալներ. ինչպէս և անչափահաս զաւակներու տէր հինգ որդեսէր հայրեր....:

Բայց դժբախտաբար, ժամանակ չունեինք երկար սգալու... զի օր նոր, նախճիր նոր, օր նոր, արեան հեղեղներ նոր....: Մինչ մահուան ուրուականը տակաւ կը մօտե-

նար մեզի. և արդէն Հայաստանի և Փոքր Ասիոյ բոլոր քաղաքները ու գիւղերը շրջե-լէ վերջ. հուսկ ուրեմն հասած էր և մեզի կը սպասէր վեց ժամ հեռուն թիւնայի առջեւ....:

«ՀԱՅ ԳՈՂԳՈԹԱՆ»

1922 Մանչեստր

ԳՐԻԳՈՐԻ Ծ. ՎԱՐԴ. ՊԱԼԱԶՅԱՆ

\*\*\*

Այստեղ կ'աւարտի Գրիգորիս Ծ. Վարդ. Պալազեանին. «Հայ Գողգոթան» գիրքին մէջ, Ռուբէն Սեւակի նահատակման մասին վկայութիւնները:

Ինչպէս որ դուք ալ նկատած էք՝ Գրիգորիս Ծ. Վարդ. Պալազեան այս յիշատակութիւններուն մէջ Միջայէլ Շամտանեանին. բժիշկ Վահան Ալթունեանին և մա-նաւանդ Ցովհան Վարդ. Կարապետեանին Ռուբէն Սեւակին Զանդըրը-ի հերոսական կեանքին մասին անոնց պատմածներուն շուրջ ոչ մէկ ակնարկութիւն կայ:

Ցաւելուած՝ թուրք կառապանին վկայութիւնը նշելով. Գրիգորիս Ծ. Վարդ. Պա-լազեան կ'ըսէ. թէ նահատակման պահուն միայն Դանիէլ Վարուժանը ընդդիմացած է»:

«ՆԱՅԻՐԻ»ի յառաջիկայ թիւին մէջ տալու պիտի շանանք՝ նոյն կառապանին վկայութեան մասին բժիշկ Ս. Զարեւանդին գրածները. ուր կ'ըսուի թէ՝ «բոնի մեր-կացնելու փորձի մը դէմ Սեւակ կ'ըմբռուստանայ. իսկ Վարուժան ստոյիկեան իմաս-տունի մը պէս. համակերպ ոգիով մը կը հնազանդի...»:

TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ  
 NORTHERN IRAQ, FOR KURDS BIG MENACE IS AN INCURSION BY TURKS  
 (KÜRTLƏR İÇİN EN BÜYÜK TEHLIKE, TÜRKLERİN KUZEY İRAKİ ISGALİDİR)

7 MART 2003 TARİHLİ NEW YORK TIMES GAZETESİNE YAYINLANAN YAZIDA, ERBİLLİ KÜRT NASREEN SIDEEK, "KÜRTLƏR İÇİN EN BÜYÜK TEHLIKE, TÜRKLERİN KUZEY İRAKİ ISGALİDİR" DEMİŞ.

NASREEN SIDEEK, ENDİSELERİNDE ÇOK HAKLIDIR.

O ÇOK İYİ BİLİR Kİ TÜRKLER, KUZEY İRAKİ ISGAL ETTİKLERİ GÜN BÜTÜN KÜRTLƏRİ ÖLDÜRÜRLER.

KUZEY İRAKTAKI BÜTÜN KÜRTLƏR BİLİR, TÜRKLERİN DOĞU ANATOLYA KÖYLERİNDEKİ KÜRTLƏRİ ALEV MAKİNELERİ İLE NASIL YAKTIKLARINI.

BİZ, ERMEŃİ OLARAK VE İNSAN OLARAK, TÜRKLERİN, KÜRTLƏRİ SOYKIRIMINA UGRATMALARINA ÇOK ÜZÜLÜYORUZ.

FAKAT, KÜRTLƏRE, BАЗI TARIHI HAKİKATLERİ SÖYLEMEYİ DE VAZİFE ADDEDİYORUZ.

1995-SENELERİNDE P.K.K. LİDERİ ABDULLAH ÖCALAN VERDİĞI BEYANATLarda, TARIHI HAKİKATLERİ İNKAR EDEREK, DOĞU ANATOLYADAKI BATI ERMEŃİSTAN ŞEHİRLERİ OLAN VAN, MUS, KARS, ERZİNGA GİBİ ŞEHİRLERİN KÜRDİSTANA AİT OLDUGUNU İDDİA EDİYORDU.

KÜRTLƏR, YAYINLADIKLARI HARİTALarda, BATI ERMEŃİSTANI, KÜRDİSTAN OLARAK GÖSTERMEKȚEN BASKA, KÜRDİSTANIN HUDUTLARINI, BUGÜNKU ERMEŃİSTANIN MERKEZİ YEREVANIN YAKINLARINA KADAR İLERLETİYORLARDI. KÜRTLƏRİN SU TARIHI HAKİKATLERİ BİLMELERİNİ İSTERİZ.

1890-SENELERİNE KADAR DOĞU ANATOLYANIN BATI ERMEŃİSTAN DENİLEN ERMEŃİ VİLAYETLERİNDE HİC KÜRT YOKTU.

O SENELERDE, KIZIL SULTAN ABDÜLHAMİD ÖLZÜR OLMAK İÇİN İSYAN EDEN SÄSUN VİLAYETİNDEKİ ERMEŃİLERİ SİNDİRİŞİNLER DİYE, KUZEY İRAKA YASIYAN KÜRTLƏRDEN "HAMİDİYE ALAYLARI" KURDU. VE BU KÜRTLƏR SASUNDAKI VE ONUN ETRAFLINDAKI VİLAYETLERDEKİ ERMEŃİLERİ, ÇOLUK ÇOCUK BAKMADAN HEPSİNİ KESTİLER.

ONDAN SONRA BOSALAN ERMEŃİ TOPRAKLARINA, KUZEY İRAKTAN GELEN. KÜRTLƏR YERLESMEYE BASLADI...

...1915-TE TÜRKLER BİRİNCİ DÜNYA HARİNDEN İSTİFADE EDEREK ERMEŃİ MILLETİNİ SOYKIRIMINA UGRATMIYA BASLADILAR VE KATLİAMLARDA KÜRTLƏRİ CELLAT OLARAK KULLANDILAR.

VE 1915-TE, TARİHİN HİC BİR DEVRİNDE GÖRÜLMEMİS BİR VAHSETLE, TÜRKLER KÜRTLƏLE BİRLESEREK, ANATOLYADAKI BÜTÜN ERMEŃİLERİ ÖLDÜRDÜLER...

EY KÜRTLƏR, 1915-TE HİC DÜŞÜNMEDİNİZ MI, ORTA ASYADAN GELME TÜRK DENİLEN BU HUNHARLARIN, 4000 SENEDEN BERİ BU TOPRAKLarda YASIYAN ERMEŃİLERİ SOYKIRIMINA UGRATTIKTAN SONRA, SİRANIN SIZE, KÜRTLƏRE GELEGİNİ?

VE TÜRKLERİN, İLK FIRSATTA SİZİ DE SOYKIRIMINA UGRATACAKLARINI?

EGER 1915-TE AKLİNİZİ KULLANARAK, ERMEŃİLERİ KEŞMESEYDİNİZ, BU TOPRAKLARIN HAKİKI SAHİBİ OLAN SİZLER, YANI ERMEŃİLER VE KÜRTLƏR BİRLESEREK BU ISGALCI YABANCI TÜRKLERİ, GELDIKLERİ ORTA ASYA STEPİLERİNE SÜREBİLIRDİNİZ.

ÇOK YAZIK. O ZAMAN BU FIRSATI KAÇİRDİNİZ. ERMEŃİLERİ KESTİNİZ. VE SIMDI KESİLME SİRASI SIZE GELDİ. ZAVALLI KÜRTLƏR.

B. Q.

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԹԵՐՈՒՆ [ԻԲԲ ԹԵ] ՀԳԻՏՑԱՌ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
NORTHERN IRAQ, FOR KURDS BIG MENACE  
IS AN INCURSION BY TURKS

[ՔԻՒՐՏԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԵՆ ՄԵՇ ՎՏԱՆԳԸ՝ ԹՈՒՐԹԵՐՈՒՆ  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՔ ԱՐՃԱՒԵԼՆ Է]

7 Մարտ 2003 թուակիր NEW'YORK TIMES թերթին թղթակիցին, հիւսիսային Իրաքի էրպիլ քաղաքն ըսկող քիւրտ NASREEN SIDEEK սա յայտարարութիւնը կատարած է. «Քիւրտերուն համար ամենամեծ վտանգը՝ թուրքերուն հիւսիսային Իրաք արշաւելն է:»

NASREEN SIDEEK՝ մտահոգուելու շատ իրաւունք ունի:

Ան շատ լաւ գիտէ, որ թուրքերուն հիւսիսային Իրաքը գրաւած օրը՝ բոլոր քիւրտերը կ'սպանուին:

Հիւսիսային Իրաքի բոլոր քիւրտերը գիտեն, որ թուրքերը՝ Արեւելեան Անաթոլիոյ քրտական գիւրտերուն մէջ ըսկող քիւրտերը, ինչպէ՞ս բոցարձակ մեքենաներով այրած են:

Մենք, հայ և մարդ ըլլալով շատ կը ցաւինք՝ քիւրտերուն, թուրքերուն կողմէ ցեղասպանութեան ենթարկուելուն:

Բայց, կարգ մը պատմական իրականութիւններն քիւրտերուն տեղեկացնելը՝ պարտականութիւն կը նկատենք:

1995-Ներուն P.K.K.-ի ղեկավարը՝ Ապտուլլահ Էօժալան, իր տուած յայտարարութիւններուն մէջ, պատմական իրականութիւնները ոտնակոխ ընթառվ, Արեւելեան Հայաստանի քաղաքներէն Վանը, Մուշը, Կարսը, Երզնկան Եւայլն, Քիւրտիստանի մաս կազմելը կը պնդէր:

Քիւրտերը, իրենց իրատարակած քարտէսներուն մէջ, Արեւելեան Հայաստանի հողերը՝ Քիւրտիստան ըլլալով ցուցնելէ զատ, այսօրուան Հայաստանին մինչև Երեւան Երկարող հողերն ալ իրենց սահմաններուն մէջ կը ներմուծէին: ...Քիւրտերուն, հետեւեալ իրականութիւնները գիտնալին կ'ուզենք.— Մինչև 1890-Ները, Արեւելեան Անաթոլիոյ Արեւելեան Հայաստան կոչուող հայկական նահանգներուն մէջ, քնաւ քիւրտ չկար:

Այն տարիներուն, կարմիր Սուլթան Ապտիլ Համիտ, ազատութեան համար ապստամբող Սասունի Նահանգի հայերը ծզմելու նպատակով, հիւսիսային Իրաքի մէջ ապրող քիւրտերէն՝ «Համիտիյէյի գունդեր» կազմել կու տայ:

Եւ այս Համիտիյէյի գունդերը՝ Սասուն Նահանգի և շրջակայքի հայերը, մեծ ու պատիկ՝ բոլորն ալ կը ջարդեն:

Անկէ յետոյ է, որ այս հայերէն պարպուած հողերուն վրայ, հիւսիսային Իրաքէն եկող քիւրտեր կը հաստատուէին:

1915-ին թուրքերը, Առաջին համաշխարհային պատերազմէն օգտուելով, Հայ Ազգը ցեղասպանութեան ենթարկել սկսան:

Եւ այս ցեղասպանութեան ընթացքին անոնք քիւրտերը իրր ղահիծ գործածեցին:

Եւ 1915-ին, պատմութեան ոչ վէկ շրջանին չտեսնուած վայրագութեամբ թուրքերը քիւրտերուն հետ գործակցարար, Անաթոլիոյ մէջ գտնուող բոլոր հայերը ջարդեցին:

Ո՛վ քիւրտեր, 1915-ին դուք քնաւ չմտածեցիք, որ այս՝ Միջին Ասիայէն Եկած թուրք կոչուող վայրենինը՝ 4000 տարիներէ ի վեր այս հողերուն վրայ քսակող հայերը ցեղասպանութեան ենթարկելէ յետոյ, քնաջնջուելու կարգը ծեզի՝ քիւրտերուն պիտի գար:

Եւ չմտածեցիք որ թուրքերը, առաջին առիթով, ծեզ ալ ցեղասպանութեան պիտի ենթարկեին:

Եթէ 1915-ին դուք, քիչ մը շրջահայեաց ըլլայիք և հայերը չջարդէիք, և այս հողերուն իսկական տէրերը եղող հայերը և քիւրտերը միանային, այն ատեն այս եկուոր բռնակալ թուրքերը, իրենց Եկած տեղերնին՝ Միջին Ասիայ տափաստանները կրնայիր քշել:

Շա՛տ մեղք: Այն ատեն, այս առիթը փախցուցիք: Եւ հայերը ջարդեցիք: Հիմա ալ ջարդուելու կարգը ծեզի Եկաւ: Խե՛ղը քիւրտեր....

## ՄՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

### ՊԵՊՈ ՍԻՄՈՆԵԱՆ


Ո՞չ հայ մամուլը կարելի է պատկերացնել առանց մտաւորականութեան, ոչ ալ մտաւորականութիւնը՝ առանց մամուլի: Իրարմով պայմանաւորուած գործօններ են, որոնք հանրային դպրոցի դերը կը գործադրեն իրենց բազմիմասու առումներով:

Լրատուութեան, հաղորդակցութեան միջոցներու արհեստագիտական գարգացումները, պատկերասփիւոի, ճայնատիիւոի և համացնցի արագ ու անմիջական հաղորդումները, հակառակ որ, մամուլին նախկին ազդեցութիւնը կը տկարացնեն և կը վտանգեն անոր ապագաթ սակայն տպագիր մամուլը տակաւին կը պահէ իր ռուժը և իր մշակութային արժեքը: Հակառակ անոր, որ ա'յլ արդիական գործօններու ծաւալումն ո՛ւ ընդհանրացումը ակներեւ են, բայց տպագիր մամուլը իր ընթերցման մշակոյթի հանգամանքով կը շարունակէ ուղեգիծի դեր կատարել, մասնակցութիւն բերել հանրային գարգացման բերած ու բերելիք նպաստով: Կը մնայ, որ ընթերցողին գարգացման առաջարտութեամբ ոչ միայն Ծիւթերու և յօդուածներու այլազանութեամբ, պատմական, բայսական, տնտեսագիտական, ընկերային, բարոյագիտական և մշակութային, հարստացնող բովանդակութիւն ու նենայ մամուլը, այեւ՝ այդ Ծիւթերու առնչութեամբ վերլուծական մեկնարանական տեսութիւններ պարզո՞ղ, առաջնորդող գրութիւններ ընդգրկէ իր էշերուն: Փնտուի այդ սինակներուն համար, ինչպէս տեղական մամուլի կարգ մը օրկանաեր և միջազգային մամուլի լայն տարածք և սպառում ապահոված բերքեր: Մամուլը, որ յանախ զգայացունց լուրերու, ոճիր, արկած, ահարեկշական գործողութիւններ, բաղաբան-պետական յեղաշրջումներ, հանդիսավայրն է, չգոհանայ ընթերցողներուն մակերեսային հետարքրութիւնները գոհացնող և հակումները շոյող սահմանափակութեամբ, այլ՝ խորացնող ինքնազարգացման առաջնորդէ...: Մամուլը չիշնէ ընթերցողներու մակերեսայնութեան աստիճանին, այլ՝ զանոնէ, մակարդակի տեսակէտով, բարձրացնելու ձգտի՝ հանրութեան լուսաւորման առավելութեամբ: Մամուլին կարծիք ձեւառողջութելու և առաջնորդելու առաջնահերթ պարտականութիւնը բոյլ պիտի չտայ, որ ան զիշի իր մտաւորական կեցուածքն, մտածելու ազատութենէն և անկախութենէն, նշմարտութիւններ յայտնելու և բացայայտելու յանդգնութենէն: Հանոյակատարութեան տուրք չտայ անհարկի խնկարկումով անհատներու կամ խմբակցութիւններու...: Անմահանուն գրագէտ և երգիծարան նրուանդ Օտեանի նշանարանը այս օրերու լրագրութեան և հրապարակագրութեան համար եւս իր ցնցիչ այժմէականութեամբ կը յատկանշուի. «Դժրախտարար հրապարակագրական կեանքիս մէջ երրեք հանելի ըլլալու (Ծարք էջ 3)

ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԷ ԶՈՒԵՆՁ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ · ՆՈՒԻՐԵԱԼ

ԱՅՍ ԻՆՉ ԴԱՐԵՐՈՒ ՀԱՍԵՐ ԵՆՔ, ԱՍՏՈՒԱՇ,  
ՓԾՐԵՑԻՆ ԻՆՉ ՈՐ ԿԱՐ ՎՍԵ՛Մ ԿԵՐՏՈՒԱԾ,  
ԹԷ ՋԵՌ ՍԻՐԸ ՈՒԽԻՁ ԹԱՂԵԼՈՒ ՏԱՐԵԶ,  
ՈՍԿԻՒՆ ՆԵՆԳ ԶԱՅՆ Է ԱՄԷՆՈՒՐԵԶ:

«ԹՐՈՒՊԱՏՈՒՐՆԵՐԸ» 1910 ՈՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ  
[ՈՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ - ԵՐԿԵՐ ԽԱՆԹԻԼԻԱՍ] - ԷԶ 229]



ԱԾԽԱՀԻ ՄԵԾԱԳՈՅՆ Յ «ՏԵՌՈՐԴԱՏՆԵՐԸ»  
ՃՈՐՃ ՊՈՒԾ, ՏՈՆԱԼՏ ՌԱՄՍՖԵԼՏ,  
ՔՈԼԻՆ ՓԱՌԻԷԼ-ԻԲՐ ԹԷ Կ'ԱՐՕԹԵՆ  
ԻՐԵՆԸ «ԴՐԱՄ-ԱՍՏՈՒԾՈՅՆ» ՀԱՄԱՐ  
ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԷԺ ՈՈՒԲԷՆԵԱՆ]

21 Մարտ 2003, Ուրբաթ  
գիշեր, ժամը 19-ին, ահոելի  
ողբերգութիւն մը՝ մեր աչքերովը հետե-  
ւելու դժբախտութիւնը ունեցանք:

Այդ գիշեր, հեռատեսիլէն, ցաւով դի-  
տեցինք Պաղտատը, որ [Մինչ այդ ելեկտրա-  
կան լոյսերու մէջ կը շողար], ակնթարթի  
մը մէջ, հարիւրաւոր ռումբերու պայթու-  
մով դժոխքի վերածուեցաւ:

Ահոելի, քառսային տեսարան մըն էր, որ  
դիտեցինք: Նախ չուզեցինք հաւատալ մեր  
«աչքերով» տեսածին: Եւ կարծեցինք, թէ  
մղձաւանջ մըն է... բայց ոչ՝ իրականութիւն էր:

Ամբողջ Պաղտատը, անվերջանալի հրաբխային  
ժայթքումներու ենթարկուած էր:

Այս վայրկեանիս, չենք գիշեր, ողբերգութեան տա-  
րողութիւնը, թէ որքա՞ն անմեղներ մահացած են: Բայց,  
ահոելի իրականութիւնը այն է, որ Պաղտատ՝ աւերակ-  
ներու քաղաքի մը վերածուեցաւ:

Բայց ի՞նչ է այս կատարուած ողբերգութիւններուն  
բուն պատճառը:

Իբր թէ իրաքը զանգուածային բնաջնջման գէնքեր ունի:  
Երեկ գիշերուան Պաղտատի վրայ կատարուած  
ամերիկեան սադայելական և զարհուրելի ոմբակո-  
ծումներն ալ կ'ապացուցանեն, որ իրաք ոչ մէկ զանգը-  
ւածային բնաջնջման գէնք ունի:

Եւ ամերիկացիներուն բոլոր ըսածները սուտ են,  
պատրուակ են: Եւ այս ամերիկեան կանկստերներուն  
բուն նպատակն է՝ 1.- Իրաքի քարինդին հարուստ  
հանգերը ձեռք անցընել: 2.- «Մեծն Խորայէլ»ը ստեղ-  
ծելու հրեական ծրագիրը իրականագործել: Այս իրա-  
կանութիւնները, այլեւս, բոլորին ծանօթ են:

Եւ աշխարհի բոլոր կողմերը կատարուած ու շարու-  
նակուող հակաամերիկեան, հակա պատերազմական և  
խաղաղութեան ի նպաստ ժողովրդային ցոյցերն ալ  
կ'ապացուցանեն, որ Ամերիկեան պոչաւոր մեծ սուտե-  
րը այլեւս չկընող հասարակութիւն մը մէջտեղ եկած է:

Բայց, Սիննական լրատութեան կեդրոնները կը  
շարունակեն իրենց սուտ ջարողչութիւնը:

Իբր թէ, ամերիկեան ուժերը, իրաքի ժողովուրդին  
խաղաղութիւն և ազատութիւն պիտի բերեն:

Այո, ամերիկացիներուն կողմէ իրաքի ժողովուրդին  
սպանութենէն յետոյ, գերեզմանային խաղաղութիւն  
պիտի տիրէ իրաքի մէջ:

\*\*\*

Բայց ինչո՞ւ այսօր, Ամերիկայի դէմ ցոյցեր կատարող  
հասարակութիւնը, նոյն ամերիկացիներուն 1990-ներէն  
սկսեալ եռկոսլահան խորտակելու համար կատարած սադրանքները չհասկցաւ:

Այն տարիներուն ալ Սիննիստները, նոյն սուտերը կը տարածէին, և նոյն ամբաս-  
տանութիւնները կը կատարէին Սերպ ղեկավարներուն, մանաւանդ՝ եռկոսլահոյ  
հախագահ Միլոսեվիչին դէմ: Ինչ որ կ'ընեն այսօր, իրաքի և հախագահ Սատուամ  
Հիւէյնի դէմ:

Այդ տարիներուն ամերիկացիները, Եւրոպական պետութիւններու մեջսակցութեամբ, մանաւանդ վրէժինդիր Գերմանիոյ և անոր Վարչապետ Հելմութ Զոհիլի առաջնորդութեամբ, Եուկոսլավիոյ դէմ պատերազմ յայտարարեցին, այս երկիրը կտոր-կտոր ըրին և Եւրոպային կեղրոնք ստեղծեցին երկու ծայրայեղ իսլամական պետութիւններ՝ Պոսնիա և Չոսովյա անուններով:

Երբ, Եւրոպական պետութիւնները իրենց դարաւոր թշնամութիւնները մոռնալով կը միանային, ինչպէ՞ս աչք գոցեցին Եուկոսլավիոյ խորտակման և փոքր պետութիւններու վերածուելուն վրայ:

Եւրոպական պետութիւնները այս աստիճան անգիտակից էի՞ն, որ չհասկցան ամերիկեան ռազմավարութիւնը: Ամերիկացիներուն Եուկոսլավիան խորտակելու և հոն իրենց խամաճիկ իսլամ պետութիւններ ստեղծելուն բուն պատճառը, այս պետութիւններու ճամբով Եւրոպական միութիւնը և Ռուսիան իրենց հակառակուն տակ առնել էր:

\*\*\*

Այսօր Միլոսեվիչը և շատ մը Սերպ եեկավարներ, Հոլլանտայի մէջ բանտարկըւած են, [իբր թէ] ցեղասպանութեան յանցանքով: Եւ Սատտամ Հիւսէյնի և իր գործակիցներուն ճակատագիրը աւելի վատ պիտի ըլլայ:

Սիոնիստներուն բոլոր այս սուտերուն և սադրանքներուն մէջ, դուք նմանութիւն մը չէ՞՞ տեսներ՝ 1915-ին թուրքերուն կատարած հայկական ցեղասպանութեան հետ:

1915-ին, պատերազմի տարիներուն [իբր թէ] «Հայերը՝ Ռուսերուն հետ պիտի գործակցին» ըսելով, տեղահանուեցան. «յետոյ սպաննուելու համար»:

Եւ 24 Ապրիլ 1915-ին, Սիոնիստ Իթթիհատական թուրքերը՝ նախ հայ մտաւորական առաջնորդները ծերակալեցին, և յետոյ՝ զանոնք մէկ-մէկ սպաննեցին, որ հայ ազգը առանց «գլուխի» մնայ:

Այս ձեւով, թուրքերուն համար շատ աւելի դիւրին եղաւ, հայ ժողովուրդը ցեղասպանութեան ենթարկելը:

Մենք, մասնաւորապէս թունուար 2003-էն սկսեալ, «ՆԱՅԻՐԻ» ի մէջ կը ջանանք, 24 Ապրիլ 1915-ի հայ մտաւորականներուն նահատակութեան վերաբերեալ մանրամասնութիւնները տալ, Զանդըրը-ի դժոխքէն վերապրած աքսորեալներուն վկայութիւնները նշելով:

Բայց, հայ ազգին ճակատագրական մեծագոյն թուականը եղող 24 Ապրիլ 1915-ի մտաւորականներուն նահատակութեան պատմութեան մէջ, իրար հակասող վկայութիւններ կան:

11 Մարտ 2003- թիւ 189 «ՆԱՅԻՐԻ» ի մէջ հրատարակեցինք Գրիգորիս Ծ. Վարդ. Պալաքեանի գրութիւնը, որուն մէջ ան կը նշեր թուրք կառապանին վկայութիւնը, թէ՝ սպանութեան պահուն, միայն Դանիէլ Վարուժանն էր ընդդիմացողը:

Այստեղ պիտի հրապարակենք թիշտ Ս. Զարեւանդին գրածները, ուր կը նշուի նոյն թուրք կառապանին վկայութիւնը. թէ միայն Ռուսէն Սեւակը ընդդիմացած է սպանութեան պահուն:

Ահա, թիշտ Ս. Զարեւանդին, 1924-ին Նիւ Եորքի մէջ հրատարակուած «Անցորդի տպաւորութիւններ-Դանիէլ Վարուժանի և Տոքր. Ռ. Զիլինկիրեանի [Սեւակ] գե-

## ԱՆՑՈՐԴԻ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Եւ իրենց այս պատճառաբանութեան սուտ և անարդար ըլլալուն ամէնէն համոզիչ ապացոյցը այն է որ, 24 Ապրիլ 1915-էն մինչեւ պատերազմին վերջը. Օսմանեան կայսրութեան մէջ հայերը գրեթէ ոչ մէկ ապատամբութիւն և նոյնիսկ ընդդիմութիւն կատարեցին:

Աւելի ցաւալի է ըսելը թէ՝ ոչխարներու պէս. գրեթէ բոլորն ալ. Վայրագ թուրքերուն գոհը եղան:

\*\*

«ՆԱՅԻՐԻ»ի 1-1-2003 «Բացառիկ» թիւն սկսեալ. կը ջանանց տալ հայկական ցեղասպանութեան խորհրդանիշը եղող՝ հայ մտաւրականներուն 24 Ապրիլ 1915-ին նահատակութեան պատմութիւնը: Եւ մասնաւրապէս՝ Ռուբէն Սեւակի և ընկերներուն նահատակութեան ողբերգութիւնը:

Ռուբերը տեղահանուած հայ աքսորեաններուն համար, սուտ պատճառաբանութիւն մը առաջ քշելով կ'ըսեն. թէ հայերը, աքսորի ճամբուն վրայ, հիւանդութենէ մահացած են:

Նոյն սուտերը կը տեսնենց Ռուբէն Սեւակի և ընկերներուն նահատակութեան եղելութեան մէջ:

Ռուբէն Սեւակին կինը գերմանուհի ըլլալուն. իր մօր և հօրը հետ շատ մը դիմումներ կատարծ են Պոլսոյ Գերմանական դեսպանատան մօտ իրենց փեսան՝ Ռուբէն Սեւակը աքսորէն ազատելու համար:

Այս պատճառաւ Պոլսոյ Գերմանական դեսպանատունը իր հերթին. շատ մը միջամտութիւններ կատարած է թքական կառավարութեան մօտ նախ՝ լիբր թէլ աքսորէն ետ բերելու համար Ռուբէն Սեւակը. իսկ անոր նահատակութենէն յետոյ ալ՝ մահուան պարագաները ստուգելու համար:

«Ռուբէն Սեւակի անուան Ցիշատակի Տուն»ին մէջ, նահատակին արխիվին մաս կազմեն 1915-ին, Պոլսոյ Գերմանական դեսպանատան կողմէ. Լոզան՝ Ռուբէն Սեւակի աներոջ և Ռ. Սեւակին կնոջ ուղարկուած երկու ծանուցագիր նամակներ:

Այս նամակներուն գերմաներէն բնագիրը և հայերէն թարգմանութիւնը կը հրապարակենք իբր պատմական փաստաթուղթ. առաջին անգամ ըլլալով. «ՆԱՅԻՐԻ»ի մէջ:

Պոլսոյ Գերմանական դեսպանատան կողմէ Բերա-էն 15 Սեպտեմբեր 1915-ին Լոզան՝ Ռուբէն Սեւակին աներոջ՝ FRANZ APPELL-ին ուղարկուած գերմաներէն նամակին մէջի. և Ռուբէն Սեւակի վերաբերեալ մասին թարգմանութիւնը՝

Գերման Կայսերական Դեսպանատուն  
Բերա. 15 Սեպտեմբեր 1915.

Յարգարժան Պարոն Ֆրանց Արէլ.

... Ինչ կը վերաբերի ձեր բժիշկ Զիլինկիրեան կոչուող փեսին հարցին. անպայման Տիկին Արէլի ճամբով տեղեակ եղած էք, թէ վերը անունը Եշուող անձը. Օգոստոսի վերջաւորութեան. Չանդրը-էն Անկորա գացող ճամբուն վրայ. ոճրագործներու ձեռքով սպաննուած է:

Գերման Կայսերական դեսպանատունը այս հարցին այս տեսակ տիխուր վերջաւորութիւն մը ունեցած ըլլալուն համար. իր վշտակցութիւնը կը յայտնէ և Կայսերական հիւպատոսարանին հետ գործակցարար. Տիկին Արէլին. իր աղջկան և իր. թոռնիկներուն հետ անվտանգ Գերմանիա վերադարձնին ապահոված է:

Կ'ուզեմ նաեւ աւելցնել. թէ բարձրագոյն դռնէն ստացուած տեղեկութեան համեմատ. ոճրագործներուն չորսը. որոնց գոհը եղած էր ձեր փեսան. ձերբակալուած են և միւսներուն հետապնդումը կը շարունակուի:

Դեսպանատան Պատասխանատու՝ [ստորագ.]

8-12-1915 Ռուբէն

Ռուբէն Սեւակին կնոջ ուղղուած գերմաներէն նամակը:

«Գերման Կայսերական Դեսպանատուն Թիւ 10860 Բերա. 8 Դեկտեմբեր 1915 Տիկ. Հելէն (Ժաննի) Զիլինկիրեան, Լոզան



ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿՅ ԶՈՆԵՆՔ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԽՐԵԱԼՆԵՐՈՒՆ

ՍԻՈՆԱԿԱՆ ԹՈՒՐքԵՐՈՒՆ ԳՈՐԾԱԾ  
24 ԱՊՐԻԼ 1915-Ի ՀԱՅԿԱԿԱՆ  
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆ Է՝  
ՍԻՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐՈՒՆ ԱՅՍ  
ՕՐԵՐՈՒՆ ՍԱՐՋԱԾ  
ԻՐԱԶԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ  
ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(ԿՐԵԺ ՈՂԻՔԵՆԵԱՆ)

ՈՒ Կ'ԻՑՆԱՅ ԱՅՆ, ՈՐ ԿՅ ԾՆԿԵ ՎԱԽՈՎ  
ԶԻ ԹՈՒՐՆ ԱԻԵԼԻ ԱՐԴԱՐ Է ԽԱԶԵՆ  
ԶԻ ԿԵԱՆՁՆ ԱՆՈՆՑ Է ՄԻԱՅՆ ՈՐ ԶԱՇ ԵՆ,  
ԱՆՈՆՑ ՈՐ ԿԱՊՐԻՆ ՈՒՐԻՇԻՆ ՄԱՀՈՎ...:  
«Զանգակներ, Զանգակներ» 1909 Ռուբէն Սեւակ  
(Ռուբէն Սեւակ - Երկեր - Անթիլիաս - Էջ 171)

24 Ապրիլ 1915-ի ցեղասպանութենքն հրաշքով վերապրող հայերը սրտանց կը հաւատային, թէ՝ «Այս հրեշտական ցեղասպանութիւնը կատարող բուրքերը անպայման պիտի պատժուեին և Մեծն Աստուած՝ անոնց պատիժը պիտի տար»:

Եւ այսօր 1915-ի ցեղասպանութենքն 88 տարիներ յետոյ, բուրքերը ո՞չ թէ պատժուած, այլ՝ ընդհակառակը, յունական և հայկական հայրենի հողերուն վրայ 70 միլիոնոց թուրքիա մը մէջտեղ բերած են: Եւ «Թաղաքակիրք» կոչուող արեւմըտեան պետրութիւններուն զինակիցն են, և մինչեւ այսօր կը շարունակեն նորանոր ողբերգութիւններ գործել:

Խեղճ հայերը չեին գիտեր, թէ Ռուբէն Սեւակին ըսածին պէս՝ «ԹՌԻՒՆ ԱԽԵԼԻ ԱՐԴԱՐ Է ԽԱԶԵՆ»

Եւ իրաւունքը միայն՝ զօրաւորինն է:

Եւ «Արդարութիւն», «Մարդկութիւն», «Խիղճ» ըսուած բառերը, իրականութեան հետ կապ չունեցող երազային խօսքեր են:

\*\*\*

Այս օրերուն, հրեաներուն կողմէ նահատակուած Յիսուսին խաչելութեան պատմութիւնը պիտի յիշատակուի քրիստոնէական բոլոր եկեղեցիններուն մէջ:

Եւ այս տարի, բացառաբար, Յիսուսի նահատակութիւնը և 24 Ապրիլ 1915-ի Հայ Ազգին նահատակութիւնը նոյն օրերուն պիտի ոգեկոչուին:

Ծատ անգամ ըսած ենք՝ «Եթէ երէկուան, այսօրուան և վաղուան աշխարհի պատմութիւնը լաւ հասկնալ կ'ուզէք, կարդացէք և ուսումնասիրեցէք Յինուսին խաչելութեան պատմութիւնը»:

Խնդիրը՝ «Հաւատացեալ ըլլալու կամ չըլլալու հարցը» չէ:

Այլ՝ կրօնական եղելութիւն մը մեկնաբանելու հարցն է:

Եւ մենք, Ռուբէն Սեւակի իր «Յիսուսի Կեանքը» ուսումնասիրութեան մէջ ըսածին պէս՝ «Դուն մարդ էիր. Ձեզի Աստուած ըրին» գաղափարին հետեւելով կը հաւատանք, թէ Յիսուս, հրեաներուն քով քիչ գտնուող առաջինութիւններով բարի և արդար «Մարդ» մըն էր պարզապէս:

Եւ հրեաները, Յիսուսին գաղափարները վնասակար նկատեցին իրենց կրօնին, իրենց «դրամին» և իրենց ապագայի ծրագիրներուն համար: Եւ ամէն տեսակ սուտեր յօրինեցին, տեսակ տեսակ սադրանքներ կատարեցին և անհաւատալի ամբաստանութիւններ վերագրեցին Յիսուսին: Եւ այս սուտ ամբաստանութիւններով զինք դատարան յանձնեցին որ պատժեն:

Դատաւոր Պիղատոսը «յանցանք» մը չգտաւ Յիսուսին քով:

Բայց հրեաները, հակառակ Պիղատոսին «Յիսուսը անմեղ է» որոշումին, ամբոխավարութեամբ և վայրագութեամբ ստիպեցին, որ Հրեայ կրօնապետները՝ իրենք դատաստան սարքեն որ մահուան դատապարտուի Յիսուս:

Եւ հրեաները խաչեցին Յիսուսը զինք ամենածանր անարգանքներու և չարչարանքներու ենթարկելով:

Կարդացէք Աւետարանի մէջ Յիսուսին դատավարութեան և խաչելութեան մանրամասնութիւնները:

Եւ հոն պիտի տեսնեք Իրաքի ողբերգութեան սկիզբի օրեն մինչեւ այսօրուան գրեթէ նոյն սադրանքները, նոյն սուսերը և նոյն սուս ամբաստանութիւնները:

Ի՞նչ էր Ամերիկային ամբաստանութիւնները Իրաքի դեմ: Իբր թէ Իրաքը, «Վտանգաւոր Ջէնքեր» ուներ:

Մասնագետները ամիսներով փնտռեցին և բան մը չգտան:

Եւ Միացեալ Ազգերու Ապահովութեան Խորհուրդը [Պիղատոսի Շման] Իրաքը յանցաւոր չգտաւ և ամերիկացիներուն պահանջած Իրաքի դեմ պատերազմի որոշումը չտուաւ: Բայց նաեւ չարգիլեց [կամ չկրցաւ] նախայարձակումը:

Իսկ ամերիկացիները, Ցիսուսը խաչելու որոշում տուող Հրեայ ուաբրունապետներուն նման, Իրաքի դեմ պատերազմի որոշում տուին:

Եւ ամերիկացիները իրենց դժոխային և արդիական գէնքերով քանդեցին Իրաքը:

Ի՞նչ մեծ յաջողութիւն: 12 տարիներէ ի վեր շրջափակման մէջ եղող հիւանդ և տկար Իրաքը՝ աշխարհի ամենամեծ զինուորական ուժը ունեցող ամերիկացիները, իրենց շատ հեռուներէ արձակած դժոխային ոռւմբերով քանդիչ գործը կատարելէ յետոյ, հրասայերով խուժեցին ներս և գրաւեցին աւերակ դարձած իրաքեան քաղաքները:

Բայց ո՞ւր էին Իրաքին ունեցած «Վտանգաւոր Ջէնքերը», որոնց գոյութիւնը Ամերիկան պատրուակ դարձուցած էր Իրաքի վրայ յարձակելու համար:

Ամերիկացիները խոստովանեցան որ, «մինչեւ հիմա, բան մը չեն գտած, բայց պիտի գտնեն եղեր»:

Այո, ամերիկացիները Ամերիկայէն պիտի բերեն այդ գէնքերը Իրաք, և "EVREKA" -գտանք պիտի ըստն:

Ասիկա շատ փո՞ք սադրանք մըն է՝ Ամերիկեան հետախուզական դաւադիր կազմակերպութեան՝ Սի. Այ. Էյ.ի համար:

\*\*\*

Ամերիկացիներուն Իրաքի դեմ մղած ցեղասպանութեան համազօր այս պատերազմին դեմ, աշխարհի ամեն կողմը իի բացառեալ Խորայէլի ցոյցեր կը կատարուին:

Եւ այս ցոյցերուն մէջ, ցուցանակներու վրայի գրութիւններով, շատ ծանր ամբաստանութիւններ կը կատարուին Ամերիկային և մանաւանդ Պուշ-ին դեմ:

Բայց, մեզի համար, ամենէն զգայացունց ցոյցերը կատարուեցան երկու օր առաջ, Պոլսոյ մէջ [Աճհաւատալի՝ բայց իրականութիւն է]:

13 Ապրիլ 2003-ին, Պոլսոյ, Ամերիկեան հիւպատոսարանին առցեւ, լաշակաւոր հարիւրաւոր թուրք կիներ, Ամերիկեան «բարբարոսութեան» դեմ ցոյց կատարեցին:

Եւ ամեն մէկ լաշակաւոր կինկայ ձեռքը նոյն արձանագրութիւնը կրող ցուցանակներ կային՝ "AMERIKANIZME HAYIR" [Ամերիկանիզմին՝ ոչ]:

Թրքերէն չգիտցող մէկու մը համար, այս՝ հակա-Ամերիկեան պարզ լոգունգ մըն էր: Սակայն, լաշակաւոր թուրք ցուցարար կիները «բարախաղ» մը ըրած էին: "AMERIKANIZME HAYIR" բարին մէջտեղը գտնուող երեք տառերը՝ KAN-ը շատ մեծ տառերով գրուած էին: Որովհետեւ, թրքերէն KAN-ը արիւն ըստն է:



Եւ ցուցանակներուն վրայ, KAN բառէն հոսող արիւնի նշաններ գծագրուած էին:

Պոլսոյ մէջ. Ամերիկեան հիւպատոսարանին առջեւ ցոյց շնող այս լազակաւոր կիները.

տարիներէ ի վեր թուրքիոյ մէջ. շատ տխուր հոչակ մը ունին:

Այս կիները մայրերն են Ամերիկացիներուն հրամանով, նախագահ Էվրենի և անկէ ետք եկած թուրք բռնապետներու կողմէ չարչարանքներով սպանուած հազարաւոր թուրք, քիւրտ ու նաեւ հայ ձախակողմեան ուսանողներուն:

Այս սգակիր մայրերը, տարիներէ ի վեր. ցոյցեր կը կատարեն Պոլսոյ կեդրոնական հրապարակներուն վրայ և իրենց սպաննը- ւած զաւակներուն համար արդարութիւն կը պահանջեն:

Եւ հիմա ալ այս վշտակիր մայրերը. թուն յանցաւորներուն՝ ոճրագործ Ամերիկացիներուն դէմ. այս շատ խորհրդաւոր ու իմաստալից պատառներով իրենց ցաւը և ոխը յայտնեցին:

\*\*

24 Ապրիլ 1915-ի հայկական ցեղասպանութիւնը. խորքին մէջ. ի՞նչ տարբերութիւն ունի Յիսուսի խաչելութեան ոճրագործութեսէս և նաեւ վերջնագոյնին՝ իրաքեան պատերազմի ողբերգութենէն:

Իրականութեան մէջ՝ երեք եղելութիւններուն մէջ ալ կը տեսնենք գրեթէ նոյն սուսերը, նոյն սադրանքները:

Վերադառնանք հայկական ցեղասպանութեան ողբերգութեան: Ի՞նչ էր պատըրւակը 24 Ապրիլ 1915-ով, Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ սկսած հայերուն տեղահանութեան:

Թուրքերուն տուած անհեթեթ պատճառաբանութիւնը հետեւեալն է՝ «ՀԱՅԵՐԸ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՐՋԱՆԻՆ, ՌՈՒՍԵՐՈՒՆ ՊԻՏԻ ՕԳՆԵՒՆ ԵՂԵՐ»:

Ենթադրենք, որ Ռուսիոյ սահմանամերծ քաղաքները՝ էրզրումի և Աման վայրերու մէջ հայերը կրնային օգնել Ռուսերուն յառաջացումին: Բայց, անկէ դուրս՝ Անաթոլիոյ մէջ բնակող և մինչեւ Թրակիոյ արեւմտեան ծայրը գտնուող էտիրնեի հայերը ինչպէս կրնային օգնել Ռուսերուն:

Եւ թուրքերը, Վանէն մինչեւ էտիրնե՝ բոլոր հայերը տեղահանութեան և աքսորի ենթակեցին. իրենց միակ և անժխտելի նպատակով՝ ցեղասպանութեան ենթակելու համար հայ ազգը:

Եւ իրենց այս պատճառաբանութեան սուս և անարդար ըլլալուն ամէնէն համոզիչ ապացոյցը այն է որ, 24 Ապրիլ 1915-էն մինչեւ պատերազմին վերջը. Օսմանեան կայսրութեան մէջ հայերը գրեթէ ոչ մէկ ապստամբութիւն և նոյնիսկ ընդդիմութիւն կատարեցին:

Աւելի ցաւայի է ըսելը թէ՝ ոչխարներու պէս. գրեթէ բոլորն ալ. Վայրագ թուրքերուն զոհը եղան:

\*\*

«ՆԱՅԻՐԻ»ի 1-1-2003 «Բացառիկ» թիւն սկսեալ. կը ջանանց տալ հայկական ցեղասպանութեան խորհրդանիշը եղող՝ հայ մտաւրականներուն 24 Ապրիլ 1915-ին նահատակութեան պատմութիւնը: Եւ մասնաւրապէս՝ Ռուբէն Սեւակի և ընկերներուն նահատակութեան ողբերգութիւնը:

Ռուբերը տեղահանուած հայ աքսորեալներուն համար. սուտ պատճառաբանութիւն մը առաջ քշելով կ'ըսէն. թէ հայերը. աքսորի ճամբուն վրայ. հիւանդութեան մահացած են:

Նոյն սուտերը կը տեսնենց Ռուբէն Սեւակի և ընկերներուն նահատակութեան եղելութեան մէջ:

Ռուբէն Սեւակին կինը գերմանուհի ըլլալուն. իր մօր և հօրը հետ շատ մը դիմումներ կատարծ են Պոլսոյ Գերմանական դեսպանատան մօտ իրենց փեսան՝ Ռուբէն Սեւակը աքսորէն ազատելու համար:

Այս պատճառաւ Պոլսոյ Գերմանական դեսպանատունը իր հերթին. շատ մը միջամտութիւններ կատարած է թրջական կառավարութեան մօտ նաև՝ լիբր թէլ աքսորէն ետ բերելու համար Ռուբէն Սեւակը. իսկ անոր նահատակութենեն յետոյ ալ մահուան պարագաները ստուգելու համար:

«Ռուբէն Սեւակի անուան Ցիշատակի Տուն»ին մէջ. նահատակին արխիւսին յաս կը կազմէն 1915-ին. Պոլսոյ Գերմանական դեսպանատան կողմէ. Լոզան՝ Ռուբէն Սեւակի աներոջ և Ռ. Սեւակին կնոջ ուղարկուած երկու ծանուցագիր նամակներ:

Այս նամակներուն գերմաներէն բնագիրը և հայերէն թարգմանութիւնը կը հրապարակենք իբր պատմական փաստաթուղթ. առաջին անգամ ըլլալով. «ՆԱՅԻՐԻ»ի մէջ:

Պոլսոյ Գերմանական դեսպանատան կողմէ Բերա-էն 15 Սեպտեմբեր 1915-ին Լոզան՝ Ռուբէն Սեւակին աներոջ՝ FRANZ APPELL-ին ուղարկուած գերմաներէն նամակին մէջի. և Ռուբէն Սեւակի վերաբերեալ մասին թարգմանութիւնը՝

Գերման Կայսերական Դեսպանատուն  
Բերա. 15 Սեպտեմբեր 1915.

Յարգարժան Պարոն Ֆրանց Արէլ.

... Ինչ կը վերաբերի ձեր թժիշկ Զիլինկիրեան կոչուող փեսին հարցին. անպայման Տիկին Արէլի ճամբով տեղեակ եղած էք. թէ վերը անունը նշուող անձը. Օգոստոսի վերջաւորութեան. Չանցը-րը-էն Անկորա գացող ճամբուն վրայ. ոճրագործներու ձեռքով սպաննուած է:

Գերման Կայսերական դեսպանատունը այս հարցին այս տեսակ տխուր վերջաւորութիւն մը ունեցած ըլլալուն համար. իր վշտակցութիւնը կը յայտնէ և Կայսերական հիւատոսարանին հետ գործակցարար. Տիկին Արէլին. իր աղջկան և իր թոռնիկներուն հետ անվտանգ Գերմանիա վերադարձնին ապահոված է:


Կ'ուզեմ նաև աւելցնել. թէ բարձրագոյն դոնէն ստացուած տեղեկութեան համեմատ. ոճրագործներուն չորսը. որոնց զոհը եղած էր ձեր փեսան. ձերբակալուած են և միւսներուն հետապնդումը կը շարունակուի:

Դեսպանատան Պատասխանատու՝ [ստորագ.]

8-12-1915 Ռուակիր՝

Ռուբէն Սեւակին կնոջ ուղարկուած գերմաներէն նամակը:

«Գերման Կայսերական Դեսպանատուն Թիւ 10860 Բերա. 8 Նեկտեմբեր 1915 Տիկ.  
Հելէն [Ժաննի] Զիլինկիրեան, Լոզան

Kaiserlich & Königliche Postamt B.Kr. 7105.	 1915 X.Y.
P. a. r. s., den 15. September 1915.	
Seine Durchlaucht der Fürst zu Hohenlohe Langenburg beauftragt sich Ihnen für die mit Ihren Schreiben von 26.v.M. überendete Aufnahme des alten Gesangbuches aus der Kirche von Wandereleben seinen verbindlichsten Dank auszusprechen.	
Was die Angelegenheit Ihres Schwiegersohnes, dass Dr.med. Tschillinghans anbetrifft, so dürfte Ihnen wohl schon durch Frau Apell bekannt geworden sein, dass dessenster Ende August auf dem Wege von Kianghri nach Angora von Mörderhand gefallen ist. Die Kaiserlichen Bot- schaft bedauert lebhaft diesen traurigen Ausgang und hat in Verbindung mit dem Kaiserlichen Generalkonsulat Vorsorge getroffen, damit Frau Apell mit ihrer Tochter und ihren Enkelkindern ungefährdet nach Deutschland zurückkehren können. Ich möchte noch hinzufügen, dass nach Auskunft der hohen Pforte vier von den Mörfern, deren Opfer Ihr Schwiegersohn geworden ist, festgenom- men sind und die Verfolgung der übrigen fortgesetzt wird Seiner Hochwohlgeborenen	
zu Franz A p e l l - D o : Ernt d.L.e.D.	
 General 1915	

ՍԻՈՆԱԿԱՆ ԹՈՒՐՔԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԾ 24 ԱՊՐԻԼ 1915-Ի... (Ծար. էջ 2-ԷՇ)

[Թրքական] Եերքին նախարարութեան տուած տեղեկութեան համաձայն, ձեր հանգուցեալ ամուսինին գողցուած իրեղէններէն մէկ մասը վերագտնուած է և դատական իշխանութեան լանձնուած:

Այս իրեղէններուն մէջ կը գտնուին  
երկու մատահիններ և կոճակ մը:

Այս իրեղէնցերը հոս՝ Պոլիս քնակող  
և ծեր փոխանորդագիրը ունեցող անձ-  
նաւորութեան մը միջոցաւ, ծեզի պիտի  
լանձնուին:

Այս փոխանորդագիրը դուք կրնաք հայթայթել ձեր բնակած տեղույն հիւպատոսարանէն, վաւերացնելով նաև, նոյն հիւպատոսարանէն, որ հանգուցեալին ժառանգորդները դուք և ձեր երկու զաւակներն են:

Այս պատեհութեամբ [թրքական] Եերջից Գ. Զախարարութիւնը կը տեղեկացնէ, թէ ձեր ամուսինին և իր ճամրութեարքերներուց վրայ յարձակումը կատարուած է 15 [28] Օգոստոս 1915 թուականից:

Եւ ծեր ամուսինից մահը՝ փամփուշտի վերքի հետեւանքով լառաջ եկած է:

1.- Ռուբեն Սեւակին աներոջ ուղղուած նամակին մէջ կ'ըսուի, թէ՝ Ռուբեն Սեւակ, ոճագործներու կողմէ սպանուած է. որոնցմէ չորսը ձերբակալուած և միւսներուն հետապնդումը կը շարունակուի:


2.- Ռուբեն Սեւակին կնոջ ուղղուած նամակը մեզի համար շատ կարեւոր հանգամանք մ'ունի:

Այս նամակին մէջ կ'ըստի,թէ Ռուբեն Սեւակին մահը հրացանի մը պատճառած վերըի հետեւանք է:

Ինչպէս որ դուք ալ Եկատած եք, թէ՝ բոլոր հայկական վկայութիւններուն մէջ, Ռուբեն Սեւակին դաշոյններով սպաննուած ըլլալուն յիշատակութեան մասին ոչ մէկ ակնարկութիւն կայ:

Այստեղ, առաջին անգամ ըլլալով կը հրապարակենք նաեւ, 24 Ապրիլ 1915-ի տարեդարձին տխուր առթիւ. Ռուբէն Սեւակին Չանդըրը-ի աքսորավայրէն Պոլիս՝ իր կնոջը ուղարկած բացիկ-նամակները:

## ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ [ստորագ.]



Կնիք  
Գրաքննուած է  
Զանգըրը

Սիրելիս.

Այս երեքշարթի օրը KENGURU [Չամպըր] հասայ, վեց օր ճամբորդութիւն ընելէ յետոյ: Հանգիստ եմ: Տօքթ. Տիսանեանին հետ նոյն շէնքին մէջ կը գտնուիմ: Տունին առջեւը պարտէզ և անտառ կայ: Ինձի համար մի մտահոգուիք:

Ցուսամ որ, քիչ ժամանակ յետոյ, արդարութիւնը մէջտեղ կելլէ, և իրար կը միանամք: Միշտ նամակ գրեցէք:


Հասցէս՝ KENGURU-ի մէջ՝ Տօքթ. Զիլինկիրեան:


Զեր նամակները ֆրանսերէն կրնաք գրել: Միայն Հասցէն թրքերէն պէտք է գրուի: Ինձի բժշկութեան գիրք մը ուղարկեցէք:

Տղոցը աչքերէն կը համրուրեմ:

30-6-1915

Ա. Ամուսինդ՝ ROUPEN





جعیلی لنهن / رحیم  
و ولیم  
لزوند رحائیه ای ایندی ترمه بی مکتبی  
روند آدم . فقط دارند و دستند یکتازه  
والهای ایجادی . حامی قاش همچنانه ایشان  
که و سیما نیز تقدیر اینکه دلارنامه اویکن  
لها فارسی لسترسه اولیانی حسن ذرجهون جسته  
تسترا کلام و دادمه مندی خبار و محمد زنگی  
که در آن پاچیه دشیده مانع در حق اینکه  
بد کارهای پر لذت برآورده کام خواهد آمدند شرطی  
اینکه اینکه تو والد کله ایشان را کلیمی  
ایمیلی میزند و مرضی منتهی ایام . دشمن ایشان  
که علیه درین موضعی ایشان ایشان را معملاً میزند  
Rasq

Կնիք  
Դրաբննուած է  
Զանդըրը

Միքայել

Ուղարկած ապահովագրուած նամակդ երէկ ստացայ, ըայց դրամները և [Հասանին] նամակը դեռ չառի:

Հիմնի փաշային ամենախոր յարգանքներս փոխանցեցէք: Ինձի Հանդէպ ցուցաբերած բարեկամական կեցուածքին՝ Համար շատ երախտապարտ և շնորհակալ եմ:

DER SAADET [Պոյսոյ] երեսվածիան SALAH CIMCOZ BEY-ը տես: Ամենամօտ բարեկամն է:

Սիրտա, Հոգիս և գաղափարներս շատ լաւ կը ճանչնան:

Իրեն մասնաւոր լարգանքներ կը լայտնեմ:

Մայրիկիդ Պոլիս եկած ըլլալուն լուրջ առնելով շատ գոհ մնացի: Այս լուրէն յետոյ մտա-Հոգութիւններուս մեծ մասը անհետացաւ:

Հանգստութեանդ և առողջութեանդ Համար կ'աղօթեմ և տղոց երկու աչքերէն կը համրութեմ:

KENGURU, ԵՐԵՔՉԱՐՅԻ  
13-7-1915

13-7-1915



ՀԱՅՈՒԹՅՈՒՆ



①

Կնիք  
Գրաբնեուած է  
Զանդըը

Պոլիս. Բանկալրի. «Նալպանտ» փողոց  
թակող թմիշկ Զիլինկիրեանի կնոջ.  
յրկողը՝ թմիշկ Զիլինկիրեան -

Սիրելիս Զանկըը 28-7-1915

Երեկ ապահովագրուած նամակնիտ  
առի: Այսօր ալ թէմի միջոցաւ 24 Յուլի-  
սին, ձեր զրկած երեք ուկին ալ առի: [...]

Կալաբայի վարժարանէն [Կեդրոնա-  
կան] ամառուան արձակուրդի երկու ամ-  
սուան ամսաթոշակս եղող ինը ուկին  
գանձելով ինձի զրկեցէք: [...] Այստեղ  
ոդերը շատ տաք են: Առուոււնէ մինչև  
զիշեր Հիւանդներուն ետեւէն կը վազեմ:  
Առողջութեանն մասին բնաւ մի մտահոգ-  
ւիք. Հանդիսաւ եմ: Զեղի ամէն շարաթ 3  
քարտ կը գրեմ: Դուք ալ գոնէ շարաթը  
երկու նամակ զրկեցէք:

Վարուժանը ընտանիքէն նամակ  
չստանար եղեք. ինձի տեղեկացուցէք:  
Ամուսինդ Ռուրէն

(→էջ 4)

← Հասցէմ՝ DER SAADET [Պոլսոյ մէջ] PANGALTI քաղամասը NALBANT փողոց:  
Տօք. Զիլինկիրեան ընտանիքին.

Կնիք  
Գրաբնեուած է  
Զանդըը

Սիրելիս

7-7-1915  
KENGURU

Մէկ շարաթէ ի վեր Զանդըը կը գտնուիմ:

Հանդիսաւ եմ: Առողջութիւնս լաւ է:

Զեղի, մինչև Հիմա, Հեռազիր մը և բացիկ մը ուղարկեցի: Դուք ալ շարաթը երկու  
անգամ նամակ գրեցէք: Եթէ թրքերէն չէք կրնար զրել՝ ֆրանսերէն զրեցէք:

Սիլիվրի-ի մէջ, անցեալ տարի, ամառուան Հագուստ մը կարել տուած էի: Անիկա  
րազու - թօւ-ով ուղարկեցէք: LEOFED-ը գործողութիւն եղաւ:

Մայրդ Պոլիս եկա՞ւ: Քու առողջութիւնդ լա՞ւ է: Ասոնք անմիջապէս տեղեկացուր:  
Քու և տղոցը աչքերէն կը համրուրեմ:

ROUPEN

Հասցէս՝ KENGURU-ի մէջ Տօք. Զիլինկիրեան



أو أقصى يتصدى لهم فقط بـ ٣٠  
أو كل الأقسام بأكملها وارجواه أنهم يجدون  
ذلك في قدرتهم على إثبات ذلك كلاماً  
أو ملائكة أو غيرها أو غير ذلك  
وسر ديننا إله يحيي الموتى  
ويحيي الموتى أو يحيي الموتى  
والله رب العالمين أو يحيي الموتى  
أو يحيي الموتى

Pocher

ԿԵՐՊ  
Գրաքննուած է  
Զանցը

Հասցեն՝ DER SAADET [Պոլսոյ մէջ] PANGALTI Սուրբ Յակոբ  
քաղամարդ /  
Տօֆք. Զիլինկիրեան ընտանիքին

3-8-1915

Սիրելին

Զեր ուղարկած հեռագիրը ստացայ: Բայց, մինչև այս օրը, Յ ուկին չեմ ստացած: Դրամ ունիմ, շատ հանգիստ եմ:

Ինձի Համար բացարձակ մի մտահոգւթյօք: Զանդըրը-էն Պէջողլու վերադարձող Տօքթ. Տինանեանին հետ ուղարկած նույնք ..... Եւ նաև, իրեն հետ, այժի մորթ մը ուղարկեցի:


**LEOFED BEY-ին գործողութիւնը ինչպէ՞ս անցաւ։ մարդիկիս ձեռքբերէն կը համբուրեմ։**

Առաջ է գոյացել առաջնահարկ պատճեն՝ մասնաւության վեհականության մասին առաջարկը:

Տղոզը աչքերէն կը համբռւըեմ:

Մասնաւոր պարեւնեռու կը լաւագնեմ.

ROUPEN



15



Կնիք  
Գրաքննուած է  
Զանդըրը

Սիրելի կինս.

Յիսուն օր եղաւ քեզմէ բաժնուելս:

6-8-1915

Քեզի շատ կարօտցայ. մայրիկիդ բարեւներս յայտնէ. ձեռքերէն կը համբուրեմ: Կը հաւատամ, թէ իմ գործիս Համար ամէն տեսակ ձեռնարկները կատարած և բոլոր միջոցներուն դիմած է:

Քեզի շարաթը անպայման 3 անգամ նամակ գրելովս հանդերձ, քեզմէ շարաթը անգամ մը նոյնիսկ նամակ ստացած չըլլալս, ինծի ցաւ կը պատճառէ: Արդեօք պատճառը ի՞նչ է:

Արդեօք տղոցը հետ շատ զբաղած ես: Եւ կամ անհանգի՞ստ ես: Անգամ մը Տօքթ. Թորգոմեանին քննուելու գնայ և առողջութեանդ ուշադրութիւն ըրէ:

Աւղարկած POST-ի PAQUET-ը այսօր ստացայ և գոհ մնացի:

Այստեղ ցուրտերը սկսան: Հոն ինչպէ՞ս են օղերը: Յուսամ, որ Աստուծոյ օգնութեամբ, ձմեռ չեկած, կը տեսնուինք:

ROUPEN



7



Կնիք  
Գրաքննուած է  
Զանդըրը

Հասցէ՛ ԴԵՐ ՍԱՋԵԴ /Պոլսոյ մէջ/ PANGALTI. Տօքթ. Զիլինկիրեան  
ընտանիքին. պարզ ապահովագրուած:

[15-8-1915]

Սիրելի կինս.

Ձեր գտնուած յարկարածինէն մի ելլէք: Որովհետեւ ես, սպայ ըլլալուս, տանտէրը ձեզի չի կրնար տունին հանել:

Տունին վարձքն ալ մի աւելցնէք, և աւելի մի վճարէք:

Իմ..... ձեր և տղոց առողջութեան և կեցութեան համար պէտք եղած...

...իմ վերադարձ ապահովելու համար դիմեցէք: Անոնք իմ բարեկամը՝ Նէհմուզ պէյլ շատ մօտին կը ճանչնան. եւ իմ վերադարձիս համար երաշխաւոր կ'ըլլաց..... եւ ինծի Պոլիս առնել տայ:

Մասնաւորապէս քու առողջութեանդ համար շատ մտահոգ եմ:

Արդէն իմ առողջութիւնս ալ խանգարուեցաւ: Գրեթէ հրւանդ վիճակի մէջ եմ:

Այլեւս բարին ըլլայ:

ROUPEN

Ինչպէս որ կը տեսնէք՝ բացիկները արարատառ թրթերէն լեզուով գրուած են՝ գրաքննութեան պատճառաւ:

Այս արարատառ թրթերէնով գրուած բացիկները վերծանեց՝ թիշկ Ծապորի Կետիկը, որուն շնորհակարութիւն յայտնելը հոգեկան պարտը կը նկատենք:



← 1.- Սիլիվրի-ի մէջ՝ տունը ուր ծնած է Ռ. Սեւակ, որուն առջեւ կ'երեփի Ռուբէն Սեւակի տղան՝ Լեւոն Զիլինկիրեանը, որուն 1959 թ.ին տարած էին հօրենական գիւղը և իր հօր ծնած տան առջև նկարած:

2.- Ռուբէն Սեւակի Պոլսոյ մէջ, Յունիս 1914-էն մինչեւ Յունիս 1915 թնակած՝ Բանկայթը. «Նալպանդ» փողոց. Մավրորուլոսի շենքին նկարը՝ այսօրուան վիճակով (կարելի է զանազանել Բ.յարկը՝ “SARNY” - որ Ռ. Սեւակի յարկաբաժիցն էր): →

Եւ Ռուբէն Սեւակ այս տունեն էր, որ 22 Յունիս 1915-ին, թուրք ոստիկաններուն կողմէ ձերբակալուով Զանդըրը աքսորւած էր:



**ԿԵԱՆՔԻՆ ԱՂԲԻՒՐԾ  
ՑԻՍՈՒՄԻ ՑԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՄԱԿԱՆ  
ԱՆՀԵՐՁԵԼԻ ԻՐՈՂՈՒԹԻՒՆ Է  
Գրեց՝ ՎԱՐԴԱՆ Ա. ՔՃՆՅ. ՏԻՒԼԿԵՐԵԱՆ**

**ՔՐԻՍՈՍ ՑԱՐԵԱՆ...**

Այս երկու թիսուարոյք և աղամանդակոտ բառերը, որ կ'արտասանովին տարուան որոշ բուակամի մը և օրուան մը ըմբացքին ու խպառ կը մոռցովին, պարզ ու անցողական մաղթամքի մը բռոյքը պէտք չէ ունենայ:

ԱՅ իրավէս, պատգամ մըմ է յաերժութեան խորքով ու իմաստով, որ պէտք է ժամանակի հոլովիլիքին հետ հնչէ մեր ականջներում և շահատրէ անձնիր հաւատացեալի հոգին, մինչեւ իր յարութեան օրը, որպէս աղբիւրը Առաջին Յարուցեալի Կեանքին, որ Աստուածորդին, Քրիստոս է:

Ո՞րքան խրախուսական է Փրկչին հետագայ խօսքը ուղղուած, առանձնապէս ամէն հաւատացեալի... Մի՛ վախնար, ես եմ առաջին ու նախամեծար Յարուցեալը և մշտըն-ցնական կեանքի աղբիւրը, մահացայ ու հիմա կենդամի եմ, յափնեան յափնենից:

Քրիստոնէութեան համար գոյութիւն չունի ԱՆԿԱՐԵԼԻ բառը: Նոր Կրօնքին Հիմ-մատիրը, սիրոյ որէնքին հակասող այդ բառը՝ դուս համեց բառարանէն և յայսարարեց, թէ Աստուծոյ գերբնական գօրութեան առջե՛ ամյադրելի խոչընդուտներ չկան:

Թաճախ մարդիկ իրենց կարողութեանէն վեր ոստումներ կը կատարեն, ամնուանենի նպատակներ իրագործելու: Կը յաջողի՞ն...: Թերեւս այդ կամ ոչ: Ծատ անգամ կը պատահի հակառակը: Հազին նպատակի մը ճամրուն վրայ նախաքազ մը յառաջացած, փորձութիւնը կը միշամտէ ու կը շլատէ իր ուժերը, բանալով հոգին դարպասները, որ հիասքափութիւնը ներս մտնէ և հաստատէ իր գահը:

Այսպիսի լուսանատ նախանց մը՝ չի պատահի հաւատքով հարուատ հաւատացեալին: ԱՅ գիտակից է իր ներքին ուժերու տարողութեան և յամաորէն կը շարունակէ մաքառիլ Աստուծոյ Ամենակարողութեան յենած, մինչեւ որ նպատակը յաջութեամբ պատկուի ու կանգ առնէ ճանագայքող հանգրուանի մը վրայ:

Ծխմարիտ քրիստոնեան պայքարած է իր ամբողջ կեանքի ըմբացքին, որ անկեղծ ու պարկեցած կեանք մը ապրի, միշակութիւններէ և բարոյական տկարութիւններէ վեր:

ԱՅ նախաքազ մը չառած՝ իր իշտայի ճամապարհին վրայ, կը ծոփի ու կը խուզարկէ իր ներաշխարհը և ի՞նչ հակասութիւններ չի տեսներ իր էութեան մթին ծալերուն մէշ, որոնք կը կարօտին հիմնական մաքրագործումի, նախ քան իր շամքերուն յումպէտս սպառումը: Կը տեսնէ շատ յատակ, իր հոգին յատակը հնկայ վիմաքար մը, որ կը բարացուցէ եսականութիւնը՝ մենատիրական անպարագրելի տարածքի մը վրայ:

Անքանայի քարենդէ վիթխարի զանգուած մը, որ կը փակէ առաքինութեան մուտքին առջեւ բոլոր դարպասները ու միաժամանակ կը բաղէ սէրը, կ'անդամալուծէ հա-ատքը և կը փորձէ զրկել բարեպաշտ մարդը Աստուծոյ գեղանանանչ լոյսէն:

Այս ժայռանիստ վկը՝ մարդուն մէշ որջացած սնապարծութեան գազանն է, որում պատճառած աւերները չկրցան դպչիլ Փրկչին աստուածութեան, բայց մահկանացու մարդը կը մնայ շղթայուած անոր կապարէ թեւերուն մէշ:

\* \* \*

Յիսուսի Յարութեան հրաշը հիմնովին սարսեց Հոռվմէական Կայսրութիւնը: Ցնցեց քահանայապետներու և դպիրներու կապարացած հեղինակութիւնը: Ալ՝ ոչ Յուդան կըր-նայ մատնել, ոչ Պիհատոսը կրնայ դատել, ոչ ալ հրեայ խուժանը հեգնել ու նախատել:

ԱՅ փառաց Թագաւորն է հոգիներու աշխարհին: Իր պսակն է եկեղեցին, իր մարմ-նոյն անդամներն են Քրիստոնեալ Աշխարհը իր բիւրատը հետեւրդներով:

Մարի՛ երեւք Քրիստոսի համար վախճան մը չեղաւ: Ալ՝ մահուան մէշ անգամ շա-րումակութեալ իր կեանքը: Առաքեալները խաչին վրայ՝ թեւենեալ վարդապետին ափ-տսայի պարտութիւնը տեսնելով, պահ մը յուսալցութեան: Բայց յարութեանէն յետոյ հա-ատքով դիւցազնացած, չվախցան խաչեալ ու բաղեալ Փրկչը քարոզելէ:

Քրիստոս՝ իր յարուցած միրոյ յեղափոխութեամբ յադրական է, ոչ թէ այս վաղան-ցուկ կեանքի պատմութեան մէշ հերոսացած մահկանացուներու դասակարգէն, այլ յադրական է իր աստուածային փառքով յափտեաններուն մէշ:

Ներկայ աշխարհի քառային բոնուրինին մէշ, ամբարիշտներու յարուցած խժալուր ժխորը, աւելի կը բիւրեղացմէ քրիստոնեայ մարդոց հաւատքը և առաւել՝ թերկրալից կը դարձնէ Յարութեան Մեծ Աւետիսը: Հոգիներու ամզուգական Առաջնորդը՝ թափուր գերեզման մը թողելով իր ետեւ, մեր ամէնօրեայ կեանքը վերածեց հոգեգրաւ տօմի մը և տուաւ տօմերու գեղանանամշ շարք մը, որ իր սիրոյ պատգամներով շնորհազարդ կեանք ապրիմը: Եւ մեր հողաբոյը կեանքին յաերժութեան շղթարձակում տալով, բարձրացուց մեզ երկրաքաղաքացիութենէ երկնաքաղաքացիութիւն:

Ի՞նչ թիւ կը մերկայացմէին Յիսուսի աշակերտները, որ կրցան հին աշխարհը բա-րեշրջել և թեկանել բռնապետութեան ստրկային շղթաները: Երկուտասան ձկնորսներ էին, անուս, անզօր ու անզէն պայքարողները: Բայց կրցան ներնց Վարդապետին աստ-ածային ուժին յենած սարսել մեղապարտ աշխարհը իր ընդերքներէն և վերածնունդ տալ ամենահաման լուծերու տակ հիւծած ժողովուրդներու:

Տիեզերքի պատմութեան մէշ առաջին ու մեծագոյն յեղափոխութիւնն (Ժար. էջ 11)

**ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՐ ԱՅՍ ՆՈ՛Ր ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ,  
ՈՐԵՒԵ ԱՃԽԱՐՀԱԿԱՐԳ ԻՐԱՒՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՎԱՐԱԳՈՒՐԵԼՈՒ  
ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԴԱՏԻՆ  
ԳԵՂՐԳ ՏԱՐՈՆԻ**

Աշուն էր, 1965 թուին, քնութեան կարմիր-դեղին երանգանորումով՝ Ասկի Աշուն, քաղաքամայր երեւանի մէջ, երբ լուսարոր առաւօտ մը, հայաստանի մշակոյթի նախարար՝ Պրն. Անդրանիկ Շահինեանի հետ, արժանացանք վաստակաշատ գեղանկարիչ՝ Պրն. Մարտիրոս Սարեանի մտերիմ ունկնդրութեան:

Առաջին հանդիպումս էր հայկական գեղանկարչութեան տիտանին հետ:

Թոյլ տուաւ, աւելի ծիշ պիտի ըլլար ըսել՝ ի՞նք առաջարկեց ու պնդեց որ խօսիմ, արտայայտուիմ մեր Արեւմտահայերէն լեզուով: «Պատմեմ, տեղեկութիւններ տամ Սփիւրի հայութեան մասին, անոր իրավիճակին, գործող հայկական միաւորներուն, հայապահպանումի նուիրակա՛ն գոյամարտին մասին: Սփիւրահայութեան առաջադրութիւններուն մասին:»

Իր ընակարանին մէջ; ուրախ կ'զգայի ինքզինքս, անոր համար, որ պաշտօնականութիւն չկար երեք զրուցակիցներուս միջև: Առաջին պահէն իսկ, յստակ էր արդէն, թէ մեզ իրարմէ բաժնող հեռաւորութիւններ չկային: Երբ կը խօսի մեր եղեննեան սերունդներուն մասին ու երբ՝ վստահեցուցի թէ մե՛նք, հայութեան նո՞ր սերնականներս, մեր հայկականութիւնն ու մեր հայորդի կազմաւորումը կը պարտինք մեզ ծնած ա'յդ սերունդներուն; հո՞ս է որ ընդմիջեց Պրն. Մարտիրոս Սարեան ու հարց տուաւ ինձի ներքին մղումին շեշտաւորումով... Տարօնի՛, ի՞նչ գիտես Տարօն-Նուրուբերան հայաշխարի մասին:»

Այստեղ, հիանալի օգնութեան հասաւ Պրն. Անդրանիկ Շահինեան ու ի՞նք պատասխանեց.

— Վարպետ ջա՛ն, ի՞նչ կրնայ գիտնալ, երբ ինք ծնունդն ու զաւակն է հա՛յ Սփիւրին: Գիտէ այս-քան, որքան ես, երբեմնի որբս, գիտեմ իմ ծննդավայրին՝ Վանի մասին: Գիտենք ինչ որ իմացեր ենք, կարողացեր ենք, Վանի մասին, Տարօնի և Արեւմտա-Հայաստանի մասին: Ու իր պարագային, ինք «Տարօնի» գրական անունը ընդունած է իր նախահայրերուն հայրենիքին յիշատակութեան համար:»

Հայութեան պատմութեամբ, մեր ժողովուրդին անցեալով, Ներկայով ու ապագայով տագնապող հա՛յ արուեստագէտն էր Պրն. Անդրանիկ Շահինեանի ամրողական յարգանքն ու ակնածանքը վայելող Պրն. Մարտիրոս Սարեան:

Ա՛յս եղաւ իրմէ, առաջին տպաւորութիւնս, երբ՝ երկարօրէն զիս լսելէ ու ինձի ուղղած իր հարցադրութիւնների սեք, ի՞նք սկսաւ խօսիլ ու մեզի ներկայացնել ոչ միայն իր ինքնակնսագրութիւնը, այլ, հաղորդակից դարձուց նաև մեզ իր հոգեկան ապրումներուն և իր տեղեծագրոճական նախրանքներուն:

Պատմեց հանդարտութեամբ, տեղ-տեղ, իր դէմքը խոռվող զգայնութեամբ, առանց սակայն կորսնցը նելու իր ինքնավստահութիւնը.

— Բանի այդպէս է, ես ըսեմ թէ ի՞նչ գիտեմ Արեւմտա-Հայաստանի մասին:

... Համաշխարհային երկրորդ Պատերազմի այէնէն դժուար օրենքն էին: Տակատագրական ու բախտորշ օրենք: Բոլոր ծակատներու վրայ, կատաղի կոհիւներ կը մղուէին: Նախայարծակ զօրքերը հովանաւորող տէրութիւնները կը փորձէին հոգերանականօրէն ընկմել ն. Սփիւթեան ժողովուրդիները: Արտաքին աշխարհի լրատուութեան այդ օրերու ցանցառ ցանցերը կը հրապարակէին անհիմ տարածայնութիւններ թէ ինկած են խորհրդային կարգ մը քաղաքներ ու շուտով հերթը կու զայ ուրիշներու:

Մենք հայերս, որ բոլոր ծակատներու ընդհարումներուն մասնակցող զաւակներ ունեինք, մտահոգուած էինք մեր հայկական Խորհրդային Հանրապետուութեան գոյավիճակով, մի՛շտ նկատի ունենալով մեր սահմանները...: Մեզի, Հայաստանի մտաւորականութեան ու մշակոյթի գործիչներուն, պարտականութիւն կ'իյնար քարօրացնելու կորովն ու տրամադրութիւնը մեր հայրենարնակ ժողովուրդին: Հա՛ր էր լաւտեսութիւն և մանաւա՛նդ ինքնավստահութիւն ներշնչել անոնց:

Իւրաքանչյուր առաւօտ կը յառաջանայի դէպի երեւանի կերպունամասը ու կը շրջէի հրապարակին վրայ: Հեռուէն-հեռու կը դիտէի մե՛ր Արարատ սարը և ծա՛նը խորհրդածութիւններ կ'զրադենէին միտքս:

Առաւտեան այս շրջագայութիւններուն ընթացքին կը հանդիպէի վշտահար հայրերու ու մայրերու սրտի ծանրակշիռ ծմլումով, անոնք ինձի կը պատմէին ծակատներէն իրենց ստացած մահազոյժ տեղեկութիւններուն մասին: Ամրօ՛ղջ ուժովս կը շանայի միհիթարել ու խրախուսել զիրենք:

Կը սիրէի, մասնաւորապէս, իրենց ուշադրութիւնը հրաւիրել այն ազգապա՛նծ պարտականութեան վրայ, թէ Մա՛յր հողի ու սեփական հայրենիքի պաշտպանութեան առաջնահերթ պարտաւորութիւնը հերոսական մարտնչում կը պահանջէ մեզմէ, բոլորէս:

Նմանօրինակ կացութեան մէջ զաղափարը ունեցայ իրագործելու իւղաներկ կտաւ մը, զոր կարենայի ծծնել ծակատներու վրայ քաջարար կոռուող մեր զաւակներուն: Գեղանկարչական աշխատանքի եռոտանիս տարի ու զետեղնեցի երեւանի հրապարակին վրայ: Հո՞ս է որ վերստին ծեռք առի վրձինս: Եէի սիրեր որ այս տեղեծագրոճութիւնս ողբերգութեան լաց ու կոճին, ծիչին ու ցանցմին մէջ խեղդուի:

... Ա՛յս իմաստով ու ա՛յս հասկացողութեամբ, թէ մենք չենք մոլոսար, չենք կրնար մոլոսալ հայրենիքի պաշտպանութեան համար մաքառող, իրենց գերազոյնը տուող մեր զաւակները:

Մտեղագործութեան կամքս կը գորացնէր ո՛ղջ էութիւնս:

Ցարարերարար կարծ ժամանակամիջոցի մը ընթացքին, յարդկային պարտականութիւն մը կատարած ըլլալու հոգեկան ներքին գոհունակութիւնը ունեցայ, նո՞յն այդ գոհունակութեան զգացումներով պարեցայ:

... Հայաստանի բազմատեսակ ծաղիկները, իրենց գեղատեսիլ երանգներով, մեր Օարագ. Էջ 111:

→ TÜRKLERIN (SÖZ DE) BILMEDIKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ

**"TÜRKLER ERMENİLERLE YUZYILLARCA BERABER YASAMISLAR, BUNDAN SONRA DA TEKRAR BARIS İÇİNDE DOSTÇA YASASINLAR"**

“SENİNLE GÜLER YÜREGİM” BASLIKLI ÇOK KİYMETLİ KİTABIŃ YAZARI KEMAL YALCIN, YUKARDA BELİRTTİĞİMİZ SOZLERLE İÇİN GELEN TEMENNILERDE BULUNUYOR.

KEMAL YALCIN'IN SAMİMİYETİNDEN SÜPHE ETMİYE HAKKIMIZ YOK.

FAKAT ONUN BU BARIS ARZUSUNA, SU ERMENİ ATASÖZÜ İLE CEVAP VERMEK İSTİYORUZ.

“GIT ÖL, GEL SEVEYİM”. BU ERMENİ ATASÖZÜNÜN İFADE ETTİĞİ FIKİR SU.

“BEN ÖLDÜKTEN SONRA, BENİ SEVICEKMISSİN. NEYE YARAR?».

GEÇEN YAZIMIZDA DA BELİRTMİSTİK. TÜRKLERİN SOVEN VE FASİST LİDERLERİ BIR KAÇ SENE ZARFINDA ERMENİLERİN 3000 SENELİK YURDU OLAN DOĞU ANATOLYADA VE OSMANLI IMPERATORLUĞU HUDUDLARI İCİNDE YASIYAN BUTUN ERMENİLERİ SOYKIRIMINA UGRATTILAR.

“TEKRAR BARIS ISİNDE DOSTÇA YASİYALIM” DUYORSUNUZ. TESEKKÜR EDERİZ.

FAKAT BUGÜN KAÇTANE ERMENİ KALDI. Kİ TÜRKLERLE BERABER YASASINLAR? YÜZYILLARCA BERABER YASADIK” DIYORSUNUZ.

YÜZYILLARCA DEĞİL. YALNIZ BİR KAÇ YÜZYİL. ERMENİLER ANATOLYANIN BINLERCE SENEDEN BERİ YERLİSİ.

TÜRKLER SONRADAN GELME. SALDIRGAN VE VAHSİ VE GÖÇEBE BİR ASİRET OLARAK ISGAL ETMİYE BASLAŞTIAR ANATOLYA TOPRAKLARINI.

11 YUZYILIN SONUNDA MANAZGERTTE BİZANS'LILARI YENEREK ANATOLYA TOPRAKLARINA GİRDİLER.

TÜRKLERİN MILLİ SAİRLERİ NAMIK KEMALIN DEDİCİNE KULAK VERİNİZ.

“CIHAN GIRANE BİR DEVLET ÇIKARDIK, BİR ASİRETTEN”.

BİR ASİRETTİNİZ. BİR KAÇ YÜZYİL SONRA “IMPARATORLUK” OLDUNUZ.

NASIL MI? ASARAK, KESİREK, SOYARAK. YERLİ AHALİYİ RUMU, ERMENİYİ KILIÇ ZORUyla MÜSLUMAN YAPARAK.

BUGÜNKÜ TÜRKLER ESKI OSMANLILARDAN FARKLI MI?

HAYIR DAHA KÖTÜ.

VARLIK VERGİSİ 6-7 EYLÜL 1955 HADİSELERİNİ, 1974 KİBRİS FACİASINI YAPAN BU KIRAVATLI TÜRKLER. BU BARBAR ZİHNİYETİN KURBANLARINDAN BİRİ DE SİZ DEGİLMİSİNİZ? SAYIN KEMAL YANÇIN BEY.

BİR MÜDDET EVEL “SENİNLE GÜLER YÜREGİM” KİTABIMIZIN BINLERCESİNİ İSTANBULDA YUKARDAN GELEN EMİRLE PARÇA PARÇA ETTİREN BU SOVEN VE FASİST ZİHNİYET DEĞİL MIDİR.

TÜRKLER, ERMENİLERE KARŞI İSLİDEKİLERİ SOYKIRIMI SUÇUNDAN DOLAYI CEZA LANDIRILMADIKLARI MÜDDETÇE, TÜRKİYE DENİLEN DEVLETİN FASİST ZİHNİYETİ HİC BİR ZAMAN DEĞİŞİMİYECEKTİR. **B. Q.**

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԹԵՐՈՒՆ [ԻԲԲ ԹԵ] 2ԳԻՏՅԱՍ. ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ԹՈՒՐԹԵՐԸ ՀԱՅԵՐՈՒՆ ՀԵՏ ԴԱՐԵՐՈՎ ՄԻԱՍԻՆ ԱՊՐԵՐ ԵՆ, ԱՍԿԵ  
ԵՏԸ ԱԼ ՆՈՐԵՆ ԽԱԴԱՀՈՒԹԵԱՆ ՄԷԶ, ԹՈՂ ԲԱՐԵԿԱՄՄԱԲԱՐ ԱՊՐԻՆ»  
«Հոգիս քեզմով կը խայտայ» վերնագրով շատ արժէքաւոր գիրքին հեղինակը՝ թեմալ եաւչըն՝ վերը  
նշուած խօսքերով. շատ սրտագին մաղթանքներ կը կատարէ:

Թեմալ եալ չընդունեան անկեղծութեան կասկածներ իրաւունք չ'ունինք:

Բայց իր այս խաղաղութեան փափաքին՝ հայկական հետեւեան ասացուածքով պատասխան տալ կ'ու-  
զնեք. — «Գն մենիր, եկուր սիրեմ»: Այս հայկական ասոյթին մատնանշած գաղափարը հետեւեան  
է. — «Իմ մահանակն յետոյ, զիս պիտի սիրես եղբ: Ինչի՞ կը ճառայէ»: Մեր նախկին գրութեան մէջ  
ալ մատնանշած էինք»

Թուրքերուն շօվէն և ֆաշիստ դեկավարները, մէկ քանի տարուան ընթացքին, հայերուն 3000 տար-  
ւան հայրենիքը եղող Արեւելան Անաթոլիոյ և ամրող Ասմանեան կայսրութեան տարածքին ապրող  
հայերը՝ ցեղասպանութեան ենթարկեցին:

Կրկին «խաղաղութեան մէջ քարեկամարար ապրելու մաղթանքներ» կ'ըսէ: Բայց այսօր քանի՞ հայ  
մասց, որ թուրքերուն հետ միասին պիտի ապրին:

«Դարերով միասին ապրեցանք» կ'ըսէք: Դարերով՝ ոչ: Բանի մը հարիւր տարի միայն:  
Հայերը՝ հազարաւոր տարիներէ ի վեր, Անաթոլիայի բնիկներն են:

Մինչդեռ թուրքերը «եկուուրներ» են: Վայրենի, թափառական և բռնագրաւող ցեղախումբ ըլլարով  
խումբ սկսաց Անաթոլիոյ հողերը:

11-րդ դարուն վերցերը, Անանակերտի մէջ, բիւզանդացիներուն յաղթելով մտաք Անաթոլիա:  
Թուրքերուն Ազգային բանաստեղծ եղած Namik Kemal-ին ըսածներուն ուշադրութիւն ըրէք:

«Աշխարհակալ պետութիւն մը մէշտեղ բերինք ցեղախումբ մը»: Ցեղախումբ մըն էիք միայն: Եւ  
բանի մը դարեր յետոյ, «Կայսրութեան» վերածուցաք:

Ինչպէս կայսրութիւն եղաք, գիտէ՞ք: Սպաննելով, ջարդելով, կողոպտելով:

Բնիկ ժողովուրդները՝ յոյները և հայերը քոնի ուժով իսլամացնելով:

Այսօրուան թուրքերը, իին Ասմանցիներէն տարբե՞ր են: Ոչ, ընդհակառակը, աւելի վատ են:

Անսերութեան տուրքը, 6-7 Անտամբեր 1955-ի դէպքերը, 1974-ի Կիպրոսի գրաւման ողբերգու-  
թիւնը կատարողները՝ այս «բրավուոս թուրքերն» են:

Այս բարրարոսական մտայնութեան զոհերէն մէկն ալ դուք չէ՞՞, Ցարգելի Պրև. Թեմալ եաւչըն:

Միշոց մը առաջ, ծեր «Հոգիս քեզմով կը խայտայ» գիրքին հազարները. Պոլսոյ մէջ.

Վերէն եկած հրամանով, կտոր-կտոր ընլ տուողը այս շովէն. և ֆաշիստ մտայնութիւնը չէ՞՞:

Մինչեւ այս ատենը, որ թուրքերը, հայերուն դէմ իրենց կատարած ցեղասպանութեան յանցանքով  
զպատճուին՝ այսօրուան թուրքիա կոչուած պետութեան ֆաշիստական մտայնութիւնը երբեք պիտի  
չփոխուի:

**B. 2.**

## ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱԳՈՅՆ «ԱՄԱԽՈՒ»Ը GEORGE W. BUSH

«ԻՐԱՔԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ  
 ՄԱՍԸ ՎԵՐՋԱՑԱԻ:  
 ՏԱՊԱԼԵՑԻՆ ՏԵՌՈՐԻՍ ՍԱՏՏԱՄ ՀԻՒՄԵՑԻ  
 ՎԱՐՉԱԿԱՐԳԸ, ՈՐ ԿԸ ԳՈՐԾԱԿՑԵՐ «ԱԼ ՔԱՅԻՏԱ»Ի ՀԵՏ»  
 1- ՄԱՅԻՍ 2003-ԶԱԼԻՖՈՐՆԻԱ ՃՈՐԾ Կ. ՊՈՒԾ

ՍՈՒՏ ԿԸ ԽՈՍՀՔ ՊՐՆ. ՊՈՒԾ:  
 ԱՄԷՆ ՄԱՐԴ ԳԻՏԸ, ՈՐ ՍԱՏՏԱՄ «ԼԱՅԻՔ»  
 ՄԸՆ ԷՐ, ՈՐ ԿԸ ՊԱՅՔԱՐԵՐ ՄՈԼԵՇԴԱՆԴ  
 ԻՍԼԱՄՆԵՐՈՒՆ ԴԵՄ:

ՊԱՐՈՆ ՊՈՒԾ, ԴՈՒՔ ՀԻՄԱ, ԱՅՍ ՍՈՒՏԵՐԸ  
 ԶԳԵՑԵՔ ԵՒ ԸՍԵՔ՝ Ո՞ԻՐ ԵՆ ՍԱՏՏԱՄԻՆ  
 ԶԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ԲՆԱՋՆՋՄԱՆ ԶԵՆքԵՐԸ, ՈՐՈՆՑ  
 ՊԱՏԺԱՌԱԻ ՊԱՏԵՐԱԶՄ ՀՈԶԱԿԵՑԻՔ ԻՐԱՔԻ  
 ԴԵՄ: ՎԵՐՁԵՐՄ ԽՈՍՏՈՎԱՆԵՑԱՔ, ԹԷ ՄԻՆՉԵՒ  
 ՀԻՄԱ ԶԵՔ ԿՐՑԱԾ ԳՏՆԵԼ... ՈՐՈՎՀԵՏԵՒ ԻՐԱՔ  
 ԱՅՍ ՏԵՍԱԿ ԶԵՆքԵՐ ԶՈՒՆԵՐ:  
 ԱՍՈՆՔ, ԶԵՐ ՍՈՒՏ ՊԱՏՐՈՒԱԿՆԵՐՆ ԷՒՆ,  
 ԻՐԱՔԸ ԳՐԱԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ՝  
 ԱՆՈՐ «ՓԵԹՐՈԼ»ԻՆ ՊԱՏԺԱՌԱԻ ԵՒ  
 Ի ԾԱՀ ԻՄՐԱՅԵԼԻ:

ՅՈՎԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
 ԻՎՐԵՅ ՈՂԻԲԵՆԵԱՆ

Ծորճ Պուշ կրտսեր, 1 Մայիս 2003-ին,  
Զայխորնիոյ ծովափին 100 քլմ. բացերը  
գտնուող «Արրահամ Լինցոլն» օդանաւա-  
կիրին վրայ, բոլոր ամերիկացիներուն ուղղը-  
ւած ելոյթ մը կ'ունենայ:

Եւ մինչեւ հիմա իր ըսած պոչաւոր սու-  
տերուն վրայ հետեւեալ ձարռոտուքները  
կ'աւելցնէ.

«Տապալեցինք տեռորիստ Սատտամ-ի  
վարչակարգը, որ կը գործակցէր «Ալ Զա-  
յիտա»ի հետ: Պատերազմին ամենակա-  
րեւոր մասը վերջացաւ: Բայց Իրաքի մէջ  
տեռորիզմին դէմ պատերազմը պիտի շարունակ-  
վի»:

Այս խելագար Պուշին մէկը պիտի չհարցնէ»,  
թէ «Ինչպէ՞ս այս տեսակ բացայայտ սուտեր  
կրնաք խօսիլ»: Ամէն մարդ գիտէ, թէ Սատտամ  
«լայիք» մըն էր, և ոչ մէկ կապ ունէր «Ալ-Զայի-  
տա»ի մոլեռանդ իսլամներուն հետ: Ընդհակա-  
ռակը՝ այս աղանդաւորներուն համար Սատտամը՝  
իրենց մեծագոյն թշնամիներէն մէկն էր:

Բայց երբ Ամերիկայի մէջ, և նոյնպէս աշ-  
խարհի գրեթէ մեծ մասին վրայ, լրատութեան  
ցանցերը Սիոնիստներուն ծեռքն են, անոնք բոլոր  
իրականութիւնները, իրենց ուզածին պէս, կը  
ծեւափոխեն և ճերմակը սեւի կը վերածեն:

Կը կարծենք, թէ անպայման դուք ալ նկատած  
էք, TV-ի վրայ ներկայացուած յայտագիրներուն  
անհմատ, ունայնամիտ և մանաւանդ՝ միայն  
SEX-ի, ոճրագործութեան և դժոխային պատե-  
րազմներու վրայ հիմնուած նիւթերը:

Այս բոլոր յայտագիրներուն բուն նպատակն է՝  
մարդոց մտային կառոյցը խաթարել և մտածելու,  
տրամաբանելու կարողութիւնը տկարացնել, որ  
մարդիկ, TV-էն և լրատութեան ցանցերէն  
տրուած բոլոր լուրերուն աչքերնին գոց հաւատան:

\* \*

Ամերիկացիները տարիներով, Սատտամը որպէս հրէշ-բռնակալ ներկայացու-  
ցին: Մինչդեռ Սատտամ, շատ մը բռնակալներուն նման, դեկավար մըն էր որ,  
ամերիկացիներուն սադրանքներով, 1979-ին իշխանութեան եկաւ, համայնավարնե-  
րը մաքրագործելու նպատակաւ: Եւ Սատտամ, տարիներով, ամերիկացիներուն  
ծրագիրները գործադրեց: Բայց երբ 1990-ին, Սովետ Սիութիւնը կործանեցաւ, Սատ-  
տամին դերը և կարեւորութիւնը վերջ գտած էր ամերիկացիներուն համար: Եւ 1990-  
ին Սատտամ, կրկին ամերիկացիներուն սադրանքներով թուեյթի ծուղակը ինկաւ:  
Այս պատրուակով ճորճ Պուշ հօր Իրաքի դէմ սկսած պատերազմը և յետոյ՝ տարի-  
ներ տեւող շրջափակումը՝ Իրաքի ժողովուրդին շատ ցաւ պատճառեցին:

Բայց, քարիւղի եկամուտին շնորհիւ իհակառակ շրջափակումին, Սատտամ  
կրցաւ Իրաքը, որոշ չափով, բարօր մակարդակի վրայ պահել: Որովհետեւ Զարիւղը  
պետականացուած էր: Եւ օտար ընկերութիւններ գոյութիւն չունեին, որ Իրաքի  
հարստութիւնը կողոպտէին:

Իրականութիւն է, որ Սատուամի շրջանին, որոշ ազատութիւններէ զուրկ էր Իրաքի ժողովուրդը: Համայնավար Կուսակցութիւնը և ընդհանրապէս կուսակցական գործունեութիւնը արգիլուած էր:

Բայց Շոյնպէս՝ արգիլուած էին մոլեռանդ իսլամական շարժումները և նաև՝ Ծիի-ական ծայրայեղ գործունեութիւնը:

Եւ ժողովուրդը «Լայիջ» վարչաճեփի մը իշխանութեան ներքեւ, գրեթէ խաղաղ կեանք մը կ'ապրէր:

Բայց մանաւանդ քրիստոնեանները, շատ գոհ էին Մատուամէն: Որովհետեւ անոր վարչաճեփին կարգապահութեան շնորհիւ, քրիստոնեանները՝ պաշտպանուած էին իսլամական մոլեռանդութեան դէմ: Եւ եկեղեցիններուն մէջ իրենց կրօնական արարողութիւնները ազատօրէն կիրարկելու կարելիութիւնը ունեին:

Մեծամասնութեամբ Խալամ երկրի մը մէջ բացառիկ երեւոյթ էր տեսնել, որ Թարիք Ազիզ անունով քրիստոնեայ մը փոխ վարչապետի պաշտօն ունի:

\*\*\*

Ամերիկացինները այնպէս կը կարծէին, որ իրենց կատարած սուտ քարոզչութեան ազդեցութեամբ, Իրաքի ժողովուրդը [զինք իբր թէ Սատուամի լուծեն ազատելու եկած] ամերիկեան զինուորները ծաղկեցին պիտի ոյմատրէ: Բայց, հակառակը եղաւ: Ամերիկացինները, գրեթէ ամէն տեղ, Իրաքի ժողովուրդին կողմէ հակառամերիկեան ցոյցերով դիմաւորուեցան:

Որովհետեւ իրաքցինները շատ լաւ հասկցած էին, թէ ամերիկեան սուտ լրզունգ-ներուն ետեւը թաքնուած էր՝ ամերիկացիններուն Իրաքի քարիւղին տիրանալու նպատակը:

Եւ այս ցոյցերուն չհանդուրժող ամերիկացինները կրակեցին անգէն ժողովուրդին վրայ: Եւ անխղճօրէն սպաննեցին և վիրատրեցին մեծ թիով քաղաքացիններ՝ ծերեր, երիտասարդներ և Շոյնիսկ՝ պատահններ:

Ֆրանսական հեռատեսիլի կայանէն այսօր ցուցադրեցին այս պատահններուն դիակները: Սարսափելի էր երեւոյթը:

Եւ այս սպաննուող պատահններէն մէկուն հայրը հետեւեալ խօսքերով յայտնեց իր ցաւը: Ամերիկացիններ, իբր թէ եկած էիք մեզ ազատելու համար: Ահա, իմ խեղճ զաւկիս դիակը:

Ա՛յս է, ձեր ազատութիւն ըսածը»:

\*\*\*

Եւ Իրաքի ժողովուրդին հակա ամերիկեան ցոյցերուն ցաւալի հետեւանքներուն տեղեակ եղող Ճորճ Պուշ կրտսեր, իր 1 Մայիսին «Արրահամ Լինքոլն» օդանաւակիր-զրահանակին վրայ կատարած ելոյթին մէջ, այս ողբերգութիւնները, իրաքցիններուն «տեռորիզմ»ին վերագրեց: Եւ «Իրաքի մէջ «տեռորիզմ»ի դէմ պատերազմը պիտի շարունակուի» ըսաւ: Ի՞նչ «Ապուշեան» ախտաճանաչում:

Կը սխալի՞ց, Պրն. Պուշ: Այս հակաամերիկեան ցոյցերը «տեռորիզմ» չեն: Չեր կատարած անհրաւ պատերազմին դէմ ժողովրդային պոռքկումներ են: Եւ ասիկա Իրաքեան «Ինքիֆատա»յին սկզբնաւորութիւնն է. պիտի շարունակուի մինչեւ ձեր վերջնական մեկնումը Իրաքէն:

Պաղեստինի մէջ ալ, երկար տարիներու հրեական խարէութիւններուն, սուտերուն և խարդախութիւններուն դէմ Պաղեստինի ժողովուրդին պոռքկումն է «Ինքիֆատա»ն: Որուն Հրեաները «տեռորիզմ» կ'անուանեն:

40 տարիներ շարունակ հրեաները, ամերիկացիններուն հաւանութեամբ և դաւադրութեամբ, օրօրեցին պաղեստինցիններու դեկավար Արաֆաթը, Պաղեստինեան պետութիւն մը ստեղծելու խոստումներով:

Արաֆաթ հրեաներուն բոլոր առաջարկները ընդունեց և ճանչցաւ Խարայէլի պետութիւնը:

Ստորագրուեցան համաձայնութիւններ Ուաշինգտոնի և Օսլոյի մէջ ու այլուր: Նոյնիսկ, «իրարու հետ հաշտութիւն կնքեցին» ըսելով՝ Նոպելեան Խաղաղութեան Մրցանակներ տրուեցան երկու կողմին ալ:

Թայց, մինչ այդ, Հրեաները մեծ թիտվ գաղթավայրեր (Colos) տեղաւորեցին պաղեստինեան հողամասերուն վրայ, որ անկարելի ըլլայ իսկական պաղեստինեան միակտուր և ազատ պետութեան մը ստեղծումը: Այս անյօյս վիճակին դէմ, պաղեստինեան ժողովուրդին ընդվզումն է «Ինքիֆատա»ն:

Պաղեստինցիները քարերով և անձնասպանական յարձակումներով կը պայքարին հրեաներուն դէմ, պաշտպանելու համար իրենց հայրենիքը:

Եւ հրեաները, այս ընդվզումին դէմ, իսկական յեղասպանութիւն կը գործադրեն:

Եւ ամերիկացիները փոխանակ արգելք ըլլալու հրեաներուն կատարած ցեղասպանութեան, Արաֆաթը պատասխանատու կը նկատեն այս կացութեան և կը պարտադրեն պաղեստինցիներուն, որ մեկուսացնեն Արաֆաթը և նոր Պաղեստինեան իշխանութիւն մը մէջտեղ բերեն: Որ այս նոր իշխանութիւնը բանակցութիւններու սկսի հրեաներուն հետ՝ հաշտութեան համար:

Ամերիկացիներ, ո՞ր բանակցութեան և ո՞ր հաշտութեան մասին կը խօսիք որուք:

Արաֆաթին հետ, 40 տարիներէ ի վեր բանակցութիւններ կը կատարուեին և «հաշտութիւն»-ներ ստորագրուած էին:

Ո՞ւր են ասոնք և ինչի՞ կը ծառայեն այսօր:

Ծառ բացայայտ է հրեաներուն և ամերիկացիներուն նպատակը՝ նոր Պաղեստինեան իշխանութեան հետ ալ, 40 տարիներ տեսողութեամբ բանակցութիւններ կատարել և հաշտութիւններ ստորագրել, որ Արաֆաթին ըրածնուն նման՝ տարիներ ու տարիներ օրօրեն Պաղեստինցիները:

\* \*

Ամերիկացիները, բաւական ատենէ ի վեր, մանաւանդ ամերիկացիներուն գործակատար Լետոն Տէր Պետրոսեաննէն սկսեալ կը պարտադրեն հայերուն. որ բանակցին թուրքերուն հետ և հաշտուին:

Չենք գիտեր, թէ ի՞նչ կայ բանակցելիք թուրքերուն հետ:

Այսօր, 1915-ի Եղեռնէն 88 տարի յետու, մտածենք և ջանանք հասկնալ իրականութիւնները:

Թուրքերը, պետութիւն ըլլալով. ամէն տարի քիչ մ'աւելի կը զօրացնեն 1915-ի Եղեռնին դէմ իրենց ուրացումի կեցուածքը:

Հրեայ վարձկան պատմագէտ-գործակալներու և նաեւ դրուժան հայերու հետ գործակցարար. հրատարակութիւններով և ամէն տեսակ ծանուցումներով թուրքերը կ'աշխատին «փաստել». որ 1915-ին կատարուած ցեղասպանութիւն չէր. այլ՝ պատերազմի ընթացքին կատարուած շատ բնական. պետական «ինքնապաշտպանական» կարգադրութիւններ. «ապահովական միջոցառում»:

## 2.- ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի մէջ, 50 տարիներ տետղութեամբ «մոռացուած» 1915-ի Եղեռնը. 1965-թէն ի վեր յիշատակուիլ սկսաւ: Բայց մենք կը հաւատանք. որ Հայաստանի ժողովուրդին այսքան տարիներու «մոռացում» էն յետոյ Եղեռնը վերյիշելը. հոգեկան խորք չունեցող, ծեւական պարտականութիւն է միայն:

1915-ի Եղեռնի բուն զոհերը եղած Սփիտքի Հայ ժողովուրդին շառաւիղները. այսօր չորրորդ սերունդը կը կազմեն և որոնց մեծ մասամբ, հայերէն չեն գիտեր և շատերն ալ օտարներու հետ ամուսնացած են:

Եւ Սփիտքի հայութեան Եղեռնի հանդէպ կեցուածքը, որոշ տարիներէ ասդին. «Վարդանանց»ի նման կրօնա-պատմական յիշատակի օրուան մը վերածուած է:

Մեր այս վարկածը հաստատելու համար, այստեղ պիտի նշենք այս տարուան 24 Ապրիլին. Փարիզի մէջ կատարուած հանդիսութենէն կարգ մը դրուագներ. որոնց մասին մեր գաղափարները պիտի շանանք տալ:

Փարիզի մէջ, Կոմիտասի արձանին բացման հանդիսութիւնը կատարուեցաւ. 24 Ապրիլ 1915-ի Եղեռնի թիշտակման նոյն օրը:

Ծամիրամ Սեւակ ուզեց ներկայ գտնուիլ Կոմիտասի արձանին բացման հանդիսութեան նկատելով, որ Կոմիտասը իր հօր բարեկամը եղած էր:

Եւ նաեւ 19-6-1915-ին, Պոլսոյ մէջ, Կոմիտասը ներկայ եղած էր Ծամիրամ Սեւակին մկրտութեան արարողութեան:

Եւ 24 Ապրիլ 2003-ի հինգշաբթի օրը. ժամը 11:00-ին, Ծամիրամ Սեւակ կը գտնուէր արդէն, ճերմակ շղարշով մը ծածկուած Կոմիտասին արձանին առջև:

Եւ բարերախտարար, Ծամիրամը ճանչցող և գնահատող Ալեն Շեպապճեանի և Ալեքսիս Կէօվճեանին շնորհիւ, ան կ'առաջնորդուի Պատուոյ ամպիոն:

Հոն ներկայ են, ծանօթ հայ և օտար անձնաւորութիւններ:

Եւ Ծամիրամը կը նստեցնեն նկարիչ ժանսէմ-ին քովը:

Զիշ ետք կը ժամանէ ֆրանսահայ մեծահամբաւ երգիչը որ, պատուոյ հիւրերուն առջեւէն անցած միջոցին, կը բարեւէ ժանսէմին և կը ծեռնուի իր հետ: Եւ, առ ի քաղաքավարութիւն, անուանի նկարիչին քով նստած տիկնոց՝ Ծամիրամին ալ կը բարեւէ և անոր ծեռքը կը սեղմէ:

Ծամիրամ կը ժանօթացնէ ինքզինքը... «Ես, Ծամիրամ Սեւակ՝ Ռուբէն Սեւակին աղջիկը» կ'ըսէ. Հայ երգիչը կը պատասխանէ՝ “Je ne connais pas” [չեմ ճանչնար]: Ծամիրամ կ'ուզէ զիշ մը բացատրութիւն տալ՝ «Ռուբէն Սեւակը, 24 Ապրիլ 1915-ի նահատակներէն, բժիշկ-բանաստեղծ Ռուբէն Սեւակը»: Անուանի արուեստագէտը կրկին, նոյն ծեռով կը պատասխանէ՝ “Je ne connais pas” [չեմ ճանչնար]: Այս մեծահամբաւ հայուն, որ գալ տարի իր 80 տարիքը պիտի թեւակոխէ՝ հայրը և մայրը զարգացած հայեր էին: Երբ այսօր 80 տարեկան հայ անձնաւորութիւն մը չի՝ ճանչնար 24 Ապրիլի նահատակներէն նշանաւոր Ռուբէն Սեւակը, ինչպէ՞ս դեռ կրնանք յոյսեր դնել այսօրուան [Եղեռնէն ետք եկող] նոր սերունդին և մանաւանդ ապագայ սերունդներուն վրայ, որ անոնք հայ պիտի կրնան մնալ և պիտի գիտնան 24 Ապրիլ 1915-ի Եղեռնին. պատմութիւնը ու 24 Ապրիլ 1915-ին Հայ ազգին ճակատագրին վրայ ունեցած մահացու դերը:

Սփիտքի հայութեան վրայ յոյս դնող անձնաւորութիւնները՝ անիրատես. անհեռատես, երազանես մտային կառոյց ունեցողներ են, որոնք յարդի բոցերը. հեռուներէն դիտելով. արեւի շողեր կը կարծեն:

Սփիտքի հայութիւնը՝ օտարասիրութեան հիւանդութեամբ վարակուած,

(→էր 3)

## ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾԱԳՈՑՆ «ՍՏԱԽՕՍ» Ը ... (Ժար. էջ 2-էն)

հոգեվարող հիւանդ մըն է, որ իր հիւանդութեամբ կը վարակէ Հայաստանի հայութիւնը:

ՄԻԱՅՆ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂՆ Է՝ ՀԱՅԿԱԿԱՆԸ ԵՒ «ՅԱԻԵՐԺԱԿԱՆԸ»:

\* \* \*

## **ՄԵՐ ՅԱՊԱՂԱԾ ԾՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՊԱՐՏՁԸ**

«Նայիրի» առաջին թիւերէն սկսեալ, մեր գաղափարներուն Համակարծիք եղող Հայրենակիցներէ քաջազերական գրութիւններ ստացանք՝ Սկիւռքի զանազան վայրերէն:

Այստեղ կ'ուզենք մեր խորին չնորհակալութիւնները յայտնել իրենց, մանաւանդ՝ Պրագիէն՝ Ալպէո Քէօսէեանին, Պէյրութէն՝ Մէյրիին, Փարիզէն՝ Գէորգ Պագործեանին, Երեւանէն՝ Վլատիմիր Պետրոսեանին և Ռոմէն Կոզմոյեանին, Պէյրութէն՝ Արտաշէկ Գույումնեանին, Ապու. Տապիէն՝ Անդրանիկ Տաղլեանին, Պէյրութէն՝ Հայկ Փելտիմալճեանին, Պէյրութէն՝ Յովհաննէս Հելվաճեանին, Պէյրութէն՝ Վազգէն Թիւթիւննեանին, Պէյրութէն՝ Մկրտիչ Արալանեանին և Յակոր Գույումնեանին:

Հայրենասիրութեան գաղափարները՝ թուարանութեան օրէնքներուն նման, ամէն կողմ նոյնն են, բնաւ չեն փոխուիր:

Եւ մեզ իրարու կապող՝ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ նոյն գաղափարներն են:

Ծնորհակալութեամբ և լաւագոյն մայժմանքներով՝ Յովհաննէս Զիլինկիրեան

\* \* \*

## **ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ**

### **ԼԻԲԱՆԱՆԻ ՃԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐՔԸ**

**ԻՆՔՋԻՆՔԸ «ԿԱԹՈՂԻԿՈՍ» ՀՌՉԱԿԵՐ է:**

...Եւ մեր կարգ մը քծախնդիր, բառերու վիայ կեցող հայերը, ընդվզեր են Հայ Կարողիկէ Պատրիարքին այս «սխալ» դէմ: Այս մասին, համացանցին մէջ, տեղ գտած են Քննադատական շատ գրութիւններ, որոնց հեղինակներուն կ'ըսենք.

Մեծապատիւ «Քծախնդիր» Պարոններ.

Ո՞ւր էր ձեր «խելքը» մինչև հիմա՝ երր Հռոմի հակակոմունիստ և ամերիկայի վարիչ-ներուն գործընկեր բոլոնացի Պապին հնազանդ եղող հայ կարողիկէ կրօնական և աշխարհական անձեր, Հայաստանի [իրը թէ] անկախացումէն յետոյ տկար, սնանկացած և հոգեվարող Հայաստանը կը փուրային և հոն, իրենց միջոցներուն ուժով դպրոցներ, աղօթատուններ, ակումբներ և նամբարներ կը բանային:

Ո՞ւր էր ձեր զգօնութիւնը, մինչև հիմա՝ երր Վենետիկի Միխիարեան մեծաւորներէն՝ Ներսէս Արքապս. Ներսէսեան, Հայաստանի մէջ «վատիկանեան» կեղրոն մը կը ստեղծէր՝ Հայաստանի ժողովուրդը «Եշմարիտ» քրիստոնէութեան բերելու համար:

Եւ ո՞ւր էր ձեր զգաստութիւնը մինչև հիմա, մեծապատիւ «քծախնդիր» պարոններ՝ երր 1991-ի Ս. Հայաստանը կործանող, հրեայ-սիոնիստ կնոշ ամուսին, հակահամայնավարուն «քուրքի բարեկամ», կարողիկէներուն բարեհան լեւոն Տէր Պետրոսեանը; իր «աջ բազուկը» եղող Աշոտ Բլէեանը Հայաստանի Կրութեան նախարար կը նշանակէր որ ան, հայ աշակերտներուն հոգիներուն մէջ հայկականութեան ոգին մեռցնէ, հայերէն դասագիրքներուն մէջէն վերցնելով հայրենասիրութեան և եղեռնի մասին գրութիւնները:

Եւ վերջապէս՝ ո՞ւր էր ձեր ողջ ութիւնը պարոններ, երր այս նոյն տիրահանչակ Աշոտ Բլէեանը, շատ հաւանաբար Սփիւրքի կարողիկէներու տրամադրած միջոցներով. Երեւանի մէջ «Միխիար Սերաստացի»ի ալ անունի շահագործումով, Հայաստանի տարածքին վրայ պյաղաւանութիւն տարածելու համար հազարաւոր աշակերտ ընդգրկող դպրոց կը բանար:

Յովհաննէս Զիլինկիրեան [Վրէժ Ռուբենսան]

## ԱՐԱՄ Ա.՝ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ԶԱՅՆԸ ՊԻՏԻ ԱՂԱՂԱԿԵ ՄԻՆՉԵՒ ՄԵՐ ԲՌՆԱԲԱՐՈՒԱԾ ԻՐԱԿՈՒՔՆԵՐՈՒ ԶԵՌՔԲԵՐՈՒՄԸ

«ԱՆԹԻԼԻԱՍ»- Հիմգշաբի, 24 Ապրիլի առաւօտուն, Անդիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Յանձնարկմ մէջ մասուցուած Ս. Պատարագով, ոգեկոչուեցաւ յիշատակը առաւել համ մեր մէկուկէս միլիոն նահատակմերուն: Ն.Ս.Օ.Յ.Յ. Արամ Ա. Կարողիկոսի Հայրապետական հանդիսապետութեամբ Մայրավանքի Ապրիլեան նահատակաց Մասուրան առջեւ տեղի ունեցաւ Հոգեհամզատեան արարողութիւն, ի հանգիստ բիւրաւոր անմեղ նահատակացն ազգիս հայոց: Ս. Պատարագը մասուցեց և առոք պատշաճի հարողեց Գերշ. Յ. Տիրապ Եպս. Փանոսեան: Այնուհետեւ Վեհափառ Հայրապետին գլխաւորած հոգեւորականներու և Դպրեկանքի սամերու բափորը ուղղուեցաւ դէպի Նահատակաց Մատուռ:

Արամ Ա. Կարողիկոս իր Հայրապետական պատգամը ուղղեց Անդրկայ ուխտաւոր ժողովուրդին, որոնք իրենց Անդրկայութեամբ ու Ս. Պատարագին մասնակցութեամբ, յարգանք ընծայեցին Նահատակներու անմեռ յիշատակին, անգամ մը եւս ուխտելով անոնց տակարին անբաղ մնացած անհւններուն դիմաց՝ Անդիլիասի սրբացեալ հողին վրայ, հաւատարիմ մնալ անոնց տուրք կտակին: Վեհափառ Հայրապետը իր պատգամին մէջ յատկապէս ըստ. «Յարգանքի այս արտայայտութիւնը հանդէպ մեր Նահատակմերուն՝ իրաւութիւնը ու պահանջատիրութեամ բարձրագոչ ճայն իրրեւ պիտի աղաղակէ մինչեւ մեր արդար դատին լուծումը, մինչեւ մեր բռնաբարուած իրաւութեամ ճեռքբերումը: Արդարութեամ ճայնը չի՛ տկարանար ու չի՛ ծուաղիր, այլ իր ամբողջ գօրութեամբ կը հմէ բոլոր ժամանակմերուն, մինչեւ հասնի իր նպատակին՝ խաղաղութեամ ու երջանկութեամ»:

Հոգեհամզատեան պաշտօնէն ետք, Լիրանանահայ Կազմակերպութիւններու և Միութիւններու անդամներ և Լիրանանի մօտ Հայաստանի դեսպանութիւնը ծաղկեպսակմեր զետեղցին մատրան դիմաց: Սպատօն ըլլալէ դադրած Ապրիլ 24-ը, ուխտի վերանորոգութեան օր դարձած է համայն հայութեան համար: Անդիլիասի Մայրավանքին մէջ, Վեհափառ Հայրապետի պատգամին արձագանգելով, Անդրկաներ վերանորոգեցին իրենց ուխտը ու աննահանջ պայքարի ոգիով լեցուած վերադարձան իրենց տունները, մինչեւ վերջնական յաղբանակ՝ մինչեւ մեր ժողովուրդի արդար իրաւութեամ վերատիրացում:

## ԳԵՐՄԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՆԱՄԱԿԸ ՈՒՂՂՈՒԱԾ ՏԻԿ. ԺԱՆՆԻ ՍԵՒԱԿԻ

«Նայիրի»ի 15 Ապրիլ 2003 համարին մէջ [թիւ 192], Պոլտոյ մօտ Գերմանիոյ դեսպանատութէն նահատակ հերոս Ռուբէն Սեւակի կնոջ՝ Տիկ. Ժաննի [Հելեն] դրկուած գումկան նամակին գերմաներէն բնագրին պատճենը, տպագրական վրէափ հետեւանով, անընթեռնելի էր: Ուստի, կը վերահրատարակենք զայն:

Նշենք, որ այս նամակը շատ կարեւոր մասնայատկութիւն մը ունի: Անոր մէջ կ'ըստի, թէ հերոս Ռ. Սեւակ հրազէնով մահացած է: իսկ հայկ. վկայութիւններուն մէջ ակնարկութիւն չկայ անոր դաշոյնի հարուածներով սպաննուած ըլլալուն:

**8-12-1915 Թուակիր՝**

Ռուբէն Սեւակին կնոջ ուղղեած գերմաներէն նամակը:

«Գերման Կայսերական Դեսպանատուն, Թիւ 10860 Բերա, 8 Դեկտեմբեր 1915. Տիկ. Հելեն [Ժաննի] Չիլինկիրեան. Լոգան...»

[Թրքական] Եերքին նախարարութեան տուած տեղեկութեան համաձայն, ծեր հանգուցեալ պմուսինին գողցուած իրեղէններէն մէկ մասը վերագուցեած է և դատական իշխանութեան յանձնուած:

Այս իրեղէններուն մէջ կը գտնուին երկու մատանիներ և կոճակ մը:

Այս իրեղէնները հոս՝ Պոլիս բնակող և ծեր փոխանորդագիրը ունեցող անձնաւորութեան մը միջոցաւ, ձեզի պիտի յանձնուին:

Այս փոխանորդագիրը դուք կրնաք հայթայթել ծեր բնակած տեղույն հիւպատոսարանէն. Վաւերացնելով նաեւ, նոյն հիւպատոսարանէն, որ հանգուցեալին ժառանգորդները դուք և ծեր երկու գաւակներն են:

Այս պատեհութեամբ [թրքական] Եերքին Գ. նախարարութիւնը կը տեղեկացնէ. թէ ծեր ամուսինին և իր ճամբունկերներուն վրայ յարձակումը կատարուած է 15 [28] Օգոստոս 1915 թուականին:

Եւ ծեր ամուսինին մահը՝ փամփուշտի վերքի հետեւանքով յառաջ եկած է:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԴԵՍՊԱՆ ԽՍԴՐՈՒՅԱ

Հայտակ  
Շահնշահան

B. R. 10860. Para, den 8. Dezember 1915.

Nach Angabe des Ministeriums des Innern ist ein Teil der Sachen, die Ihrem verstorbenen Ehemanne beraubt worden waren, aufgefunden und bei der Gerichtsbehörde hinterlegt worden. Beim Wiederaufzähling dieser Gegenstände, unter denen sich auch zwei Ringe und ein Knopf befinden, wird Ihnen anheimgestellt eine hier ansässige Persönlichkeit mit Vollmacht zu ihrer Entgegennahme zu versetzen, diese Vollmacht auf den zuständigen türkischen Konsulat beglaubigen und dazu durch dasselbe Konsulat bescheinigen zu lassen, dass Sie bzw. Ihre beiden unmündigen Kinder sich als einzige rechtmäßige Erben hinter dem Verstorbenen ausgewiesen haben.

Wie das genannte Ministerium bei dieser Gelegenheit mitteilte, hat der Überfall auf Ihren Mann und seine Reisegefährten am 15/28. August stattgefunden und ist der Tod Ihres Mannes durch eine Schusswunde herbeigeführt worden.

Der Kaiserliche Botschafter.

Frau Helene Tschillinguirian Apoll

I. V.

L a u s o n n e .

ԻՄ ԱՆԿԻՒՆԵՄ՝

## Շ Ե Ր Ա Ն Ա Լ ...

ԺԻՐԱՅՐ ԱՐԱՄ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

[Դերասանը]

Երիտասարդ էր. կը մազլցէր անզուսպ, բլուր ու կատարներ,

Հրակէղ կամքով, անխոնջ, սէզ, ու չճանչցաւ դադար:

Ունէր յոյսեր, երազ ու սէր մեղրածոր և տենչալի:

Երփներանգ հորիզոնին դէմ կանգնած հրարորրոք արիւնով,

Կը տեսնէր ակնաղրիւրը կեանքի գեղեցկութեան հոգեթով,

Ու կ'ըղձար յանձնուիլ գերերշանիկ կեանքի մը թեւերուն մեղմօրօր.

Արժանանալ Ս. Պատին, ունենալ զաւակներ ու թոռներ,

Պայքարելով հասնիլ յաջողութեան երջանկարեր:

Եւ այսպէս՝ տարիները շղթայ կազմած սլացան ջինջ ասուպի պէս:

Հայելիին մէջ նայելով կը տեսնէր դէմքն իր փոխուող,

Գանգուր վարսերուն նուազումը անոնց մրայ սպիտակ իջած.

Խորշոմները դէմքին տարիներու թանձրացող հոգերով հիւծած,

Մանրացող դանդաղութիւնը ցրտարեր, հոգիին վրայ խոնջած..

Հեզիկ, հեզիկ կը ճնշէր մարմինը ծանրաբար և ուժգին,

Եւ ծերունիին երբեմնի պսպղուն աչերուն մէջ օրէ-օր.

Կը նուաղէր պարմանի անրիծ լոյսը վառ ու բոսոր:

Կը հակէր արքենի հասակն իր վեհ ու վսեմ հոգին..

Փորձառութեան պսակը ճակտին շքեղապանծ ու մեծարգոյ...:

Եղուկ, քալելու անզօրութիւնը և յիշողութիւնը աղօտող,

Կը մշտէ զինք խաւարին խորը անծայր ու ողբագին,

Ինք մենաւոր ու դալկահար, հոգեվարողի մը պէս անհոգի,

Կքած կեանքին բեռին տակ. թախծոտ ու անզօր,

Հեռու առօրեայի թոհ ու բոհէն, լուռ, հեզիկ ու աննշմար,

Երազելով անվերադարձ մեկնած իր հարազատները սիրելի.

Դիտելով իրենց գեղածիծաղ օրերու ժպտուն նկարները վաղեմի,

Արդ կ'արտասուէ ալեւորը դառնօրէն, յուզումնախոռվ հեծութեամբ լի.

Ճուանքով մը անյոյս և ուժասպառ կը կքի.

Եւ կը «ԽՈՐԱՆԱՑ ԱԼԵՒՈՐՈՒԹԵԱՆ ՇԵՄԻՆ», որ «ՎԵՐՋԱԿԱԿԱՑԱՆ Է ԻԵԱՆՔԻՆ»: Աւրանդ 2003



**TÜRKLERİN (SÖZ DE) BİLMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ  
“SENİNLE GÜLER YÜREGİM” BASLIKLI KITABIN YAZARI  
SAYIN KEMAL YALCINA AÇIK MEKTUB.  
“SUÇ VE CEZA”**

SAYIN KEMAL YALCIN, BU YAZIMIZDA GAYEMIZ, SİZE DOSTOEVSKİNİN “SUÇ VE GEZA” ROMANINDAN BAHSETMEK DEGİLDİR.

BÜTÜN MEDENİ DEVLETLERDE, KANUNLARDA BELİRTİLEN SUÇLARI İSLİYENLER CEZALANDIRILIR.

BİR MEMLEKETTE EGER SUÇLULAR CEZASIZ KALIRSA, O DEVLET, ESKIYA DEVLETİDİR.

İSTE 1915 SOYKIRIMINDAN KURTULAN ERMEÑİLERIN DERDİ, BURDAN BASLIYOR.

1915-TE ERMEÑİLERI KESEN TÜRKLER VE ERMEÑİ MILLETINI SOYKIRIMINA UGRATAN TÜRK DEVLETİ BÜĞÜNE KADAR CEZALANDIRILMADILAR.

SAYIN KEMAL YALCIN, SIZ, İNSANLIK VE KARDESLİK FIKIRLERİNİZDEN DOLAYI NE KADAR TEBRIK ETSEK AZDIR. FAKAT ATASÖZÜNÜ BİLİRSİNİZ HERHALDE. “BİR ÇİÇEKLE YAZ GELMEZ”.

SIZİN GİBİ TEMİZ YUREKLI BİR INSAN, TÜRKLER ARASINDA BINDE BİR DEGİL, BELKI ONBINDE BİR BİLE ÇIKMAZ. VE SIZİN İÇİN, EN İÇTEN TEMENNİMİZ, INSALLAH, ALMANYADAKİ BOZKURTALAR SIZE BİR KÖTÜLÜK YAPMAZLAR.

Evet SAYIN KEMAL YALCIN, SIZ TÜRKLER ARASINDA ONBINDE BİR BULUNAN TEMİZ İNSANLARDAN BİRİSİNİZ. FAKAT SIZ, GERİYE KALAN 9999 KÖTÜ YUREKLI TÜRKLERİ HİÇ DÜŞÜNDÜNMÜ?

İSTE BUNLAR, TÜRKİYE DENILEN ESKIYA DEVLETİNDE, ANATOLYAYA GIRDİKLERİ TARİHTEN BERİ, YERLİ ERMEÑİLERI KESEN VE CEZASIZ KALAN TÜRKLERİN AHFADIDIR.

Evet SAYIN KEMAL YALCIN TÜRKİYE DENILEN FASİST DEVLETİNDE YASIYAN HALKIN YÜZDE DOKSAN-DOKUZ VIRGÜL DOKUZU CEZASIZ KALAN KATİLLERİN AHFADIDIR.

VE ONLARIN EVLATLARI DA, DEDELERİ, BABALARI CEZALANDIRILMADIKLARINDAN DOLAYI FIRSAT BULURLARSA AYNI SUÇLARI YINE ISLEYEBİRLER.

İSTE BUNDAN DOLAYI, ESKIYA VE FASİST VE KATİLLER DEVLETİ TÜRKİYENİN, SOYKIRIMI SUÇU İLE CEZALANDIRILMASI, BİR İNSANLIK VAZİFESİDIR.

8. Q.

ԿԵ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԵՐՈՒՆ [ԻԲՐ ԹԷ] ՀԳԻՏՑԱՌ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
«ՀՈԳԻՍ ԲԵԶՄՈՎ ԿԸ ԽԱՅՏԱՅ» ՎԵՐՆԱԳՐՈՎ ԳԻՐՔԻՆ  
ՃԵՂԻՆԱԿԸ ՑԱՐԳԵԼԻ ԲԵՄԱԼ ԵԱԼՉԵՆԻՆ ՈՒՂՂՈՒԱՌ ԲԱՑ ՆԱՄԱԿ  
«ՈՃԻՐ ԵՒ ՊԱՏԻԺ»

Յարգելի թեմալ եալչըն, յեր այս գրութեան նպատակը՝ ծեղի Տոստոյեվսքի-ին «Ոճիր և Պատիժ» վէպին մասին խօսիլ չէ:

Բոլոր բաղաքակիրթ պետութիւններուն օրէնքներուն մէջ մատնանշուած ոժիրներ գործողները կը պատճուին: Եթէ պետութեան մը մէջ, ոժրագործները անպատիժ կը մնան, այդ պետութիւնը աւազակ-ներու պետութիւն մըն է: Ահա, 1915-ի եղեռնէն փրկուած հայերուն ցաւը, այստեղէն կը սկսի:

1915-ին հայերը ջարդող թուրքերը և նայ Ազգը ցեցասպանութեան ենթարկող թուրք պետութիւնը. մինչև այսօր չեն պատճուած:

Յարգելի թեմալ եալչըն, յեր մարդասիրական և եղրայրութեան գաղափարներուն համար ծեղի որբան ալ շնորհաւորենք, նորէն քիչ է:

Բայց անպայման սա մէկ ասացուածքը գիտէք... Մէկ ճաղիկով Ամառ չի գար»:

Ձեզ նման բարեսիրտ անծ մը, թուրքերուն մէջէն ոչ թէ հազարէն մէկ, այլ տասը հազարէն մէկ անգամ չ'լլար: Եւ ծեղի համար յեր ամէնէն սրտանց մաղթանքը՝ աղօթենք, որ Գերմանիոյ «Գորշ Գայլերը» ծեղի գէշութիւն մը չընեն:

Այո, յարգելի թեմալ եալչըն, դուք, թուրքերուն մէջ, տասը հազարէն մէկ գտնուող բարի անձնաւորութիւններէն մէկն էք: Բայց դուք մտածեցի՞՞ երքեր, մնացած 9999 հատ չարասիրտ թուրքերուն մասին:

Ահաւասիկ ասոնք, թուրքիա ըսուած աւազակներու պետութեան մէջ, Անաթոլիա մտած թուական-ներէն իվեր տեղացի հայերը ջարդող և անպատիժ մնացած թուրքերուն շառաւիղներն են:

Այո, յարգելի թեմալ եալչըն, թուրքիա ըսուած ֆաշիստ պետութեան մէջ ապրող ժողովուրդին հարիւրին իննուուն ստորակէտ ինը, այս անպատիժ մնացած ոժրագործներուն շառաւիղներն են:

Եւ ասոնք ալ, իրենց մեծ հայերը և հայերը պատճուած ըըլլալուն, եթէ առիթը գտնեն, նոյն ոժիրները կրկին կը գործեն:

Ահա, այս պատճառաւ աւազակ, ֆաշիստ և ոժրագործներու պետութիւնը, թուրքիան՝ ցեղասպա-նութեան յանցանքով պատճելը՝ մարդկութեան պարտականութիւնն է:

8. 2.

ԱԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՈՒԵՆՔ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒՐԵԱԼՆԵՐՈՒՆ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ՝  
ՈՈՒՐԵՆ ՍԵՒԱԿԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**

«ՆԱՅԻՐԻ»Ի  
ՅՈՒՆՈՒԱՐ 2003-Ի  
«ԲԱՅԱՌԻԿ»ԵՆ ՍԿՍԵԱԼ,  
ՄԻՆՉԵ 15 ԱՊՐԻԼ 2003-Ի  
«ՆԱՅԻՐԻ»Ի ԷԶԵՐՈՒՆ ՄԵԶ,  
ՏԱԼՈՒ ԶԱՆԱՅԻՆ ՈՈՒՐԵՆ  
ՍԵՒԱԿԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ  
ՄԱՍԻՆ ԶԱՆԱԶԱՆ  
ԱԿԱՆԱՏԵԽՆԵՐՈՒ  
ՎԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

«ՆԱՅԻՐԻ»Ի ԱՅՍ  
ԹԻՒԵՆ ՍԿՍԵԱԼ ԱԼ.  
ՏԱԼՈՒ ՊԻՏԻ ԶԱՆԱՅԻ  
ՈՈՒՐԵՆ ՍԵՒԱԿԻ  
ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԵՒ.  
ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ՝ ՈՈՒՐԵՆ  
ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ ՄԵՐ  
ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ:

ՈՈՒՐԵՆ ՍԵՒԱԿ ԻՆՉՈ՞Ւ ՄՈՌԱՑՈՒԹԵԱՆ  
ԵՆԹԱՐԿՈՒԵՑԱԻ:

ՈՐՈՎՃԵՏԵՐ, ՈՈՒՐԵՆ ՍԵՒԱԿ,  
ԴԱԾՆԱԿՅԱԿԱՆ ԶԵՐ:

ՅՈՎԿԱՍՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ՎՐԵԺ ՈՈՒՐԵՆԵԱՆ]

Ոուբէն Սեւակի դաշ-  
նակցական չըլլալը ապա-  
ցուցանող երկու փաստաթուղթեր կը  
հրատարակենք՝

1.- ԱՐՍԵՆ ԿԻՑՈՒՐԻ 1962-ԻՆ  
ՊԵՅՐՈՒԹ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ «ՊԱՏ-  
ՄՈՒԹԻՒՆ Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿ-  
ՑՈՒԹԵԱՆ» գիրքին առաջին էջը և 452 և  
453 էջերէն մասեր, որոնց մէջ կ'ըսուի,  
թէ՝ Սիհամանքօ, Դանիէլ Վարուժան  
Դաշնակցական են: Իսկ Ոուբէն Սեւակ՝  
ո՛չ կուսակցական:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍ. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԿԵՂԻ. ԶԱՅՆԱՌՈՒՄՐԴ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ



1887-1962

Ա. ՀԱՏՈՒ

ՅՈՒՆԱԿ ԾՐԱԿ

ՊԵՅՐՈՒԹ  
1962

## ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒԹԵԱՌԵՋԱԼՄԸ

Զերբակալուածներու մէջ էին Հնչակեաններէն՝ Մուրատ, Տոքթ. Դրիգսր Հելայ, Հաճի Յակոր Արծրունի, Ստեփան Դանիէլկան, Յակոր Թէրզհուն, Ամառէլ Թումանեան, Յովհաննէս Գլըճեան, Յարութիւն Ճանկիւլեան, Երաւանդ Չառուշեան, Ամբուա Բիւրատ, Գետրոս Գալֆայեան, Կաթմաս, Մելքոն Կիւրճեան, Արոնը խմբուած էին ընկեր Սաքոյի Հուրջը.

Անոնց կողքին էին Դաշնակցականներէն՝ Ակնունի, Խաժակ, Սիաման թօ, Շահրիկեան, Ա. Ջարդարեան, Մարդպետ, Շաւորչ Թրիսեան, Բարսեղ Շահպակ, Արմենակ Շարսեղեան, Դանիէլ Վարուժան, Սարգիս Սրենց, Տոքթ. Էմիրզէ Քէթէնէկեան, Միհրշատ Հայկազն, և այլն:

Ոչ-կառակցութաններէն՝ Կոմիատու, Տոքթ. Տաղաւորեան, Ժազ Սայապալեան, Միքայէլ Շամատաննեան, Ռուրէն Մեսակ, Արւոնդ Քէչեան, Տոքթ. Յակոբէն, և այլն:

2.- Գրիգորիս Օ. Վրդ. Պալաքեանի «Հայ Գողգոթան» գիրքին առաջին էջը և 123 ու 140 էջերը, որոնց մէջ արձանագրուած է, թէ՝

Սիամանթօ Դաշնակցական էր:

Դանիէլ Վարուժան՝ Դաշնակցական էր:

Խակ Ռուրէն Սեւակ՝ ոչ կուսակցական:

9. Առում Եարճանեան (Սիամանթօ) ըանաստեղծ, դաշնակցական, Ազգ. Երեսփոխան, Նահատակուած Հնկիւրի:

7. Տոքթ. Ռուրէն Զիլինկիրեան (Սեւակ)՝ զրագէտ և հանրային գործիչ, նահատկ. Զանկրրիի և Գայլալնրքի նամքուն վրայ:

8. Դանիէլ Վարուժան՝ ըանաստեղծ և դաշնակց. գործիչ. Նհակ. Սեւակի նետ նոյն նամքուն վրայ ի թիւնա:

ՀՐԱՅՈՐԸ Ժ. ԿԱՐ. ՊԱԼԱԽԱՆ

# ՀԱՅ ԳԱԼՎԱՐՅԱՆ

ԴՐՈՒՅԹՆԵՐ

ՀԱՅ ՄԱՐՏԻՐՈՍԱԳՐՈՒԹԵՆՔՆ

ԳՅՈՒՄՈՒՆ ԴՃԳԻ ԶՕՐ

1914—1920

Ա. ՀԱՅՈՐ

Բ. ՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԴՐՈՒՅԹ

1977

\* \* \*

Գրիգորիս Շ. Վարդյ. Պալաքեան ինչո՞ւ Ռուբէն Սեւակի հանդէպ շատ անարդար գտնուեցաւ «Հայ Գողգոթան» գիրքին Զանդըրը-է յիշատակութիւններուն մէջ: Որովհետեւ, Գրիգորիս Շայրդ. Վարդ. Պալաքեան՝ դաշնակցականներուն շատ համակիր կրօնական մըն էր:

1.— «ՆԱՅԻՐԻ»ի 11 Մարտ 2003 թիւ 189-ին մէջ, նշած էինք Գրիգորիս Շ. Վրդ. Պալաքեանին թուրք կառապանին վկայութեան վրայ յենելով 1922-ին գրածները թէ՝ «Միայն Դանիէլ Վարուժանը ինքնապաշտպանութեան դիմած է»:

2.— «ՆԱՅԻՐԻ»ի 25 Մարտ 2003 թիւ 190-ին մէջ ալ նշած էինք թիշէկ Ս. Զարեւանդին 1924-ին, նոյն թուրք կառապանին վկայութեան վրայ յենելով գրածները թէ՝ «Միայն Ռուբէն Սեւակ

ինքնապաշտպանութեան դիմած է»:

3.— Նոյնպէս՝ «ՆԱՅԻՐԻ»ի 8 Ապրիլ 2003-թիւ 191-ին մէջ նշեցինք՝ 1919-ին Պոլսոյ «Նոր Կեանք» թերթին իբր «Վերջին ժամ»ուան հաղորդումը, որուն մէջ նոյն թուրք կառապանը կը վկայէր, թէ՝ «Խեղճ զոհերը չեն կրնար իրենք զիրենք պաշտպանել, ձեռքերնին կապուած էր»:

4.— «ՆԱՅԻՐԻ»ի 15 Ապրիլ 2003-թիւ 192-ին մէջ ալ, առաջին անգամ ըլլալով, հրապարակեցինք Պոլսոյ Գերմանական դեսպանատան 8-12-1915 թուակիր գերմաններէն նամակը, Լոզան, Ռուբէն Սեւակի կնոջ ուղղուած, որուն մէջ կ'ըսւէր, թէ՝ Ռուբէն Սեւակին մահը՝ հրացանի մը պատճառած վէրքի հետեւանք է:

Այս գերմանական վկայութիւնը, ուր կ'ըսուի, թէ Ռուբէն Սեւակը գէնքով սպաննուած է՝ բոլորովին տարբեր բացատրութիւն մըն է, հայկական յիշատա-

կութիւններէն, որոնց բոլորին մէջ ալ, Ռուբէն Սեւակին և իր ընկերներուն նահատակութիւնը դաշունահարումով կատարուած ըլլալը կը պատմուի:

\*  
ԶՈՐՍ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ.  
ՈՐՈՆՉ [ԶՈՐՍՆ ԱԼ] ԻՐԱՐ  
ԿԸ ՀԱԿԱՍԵՆ

Բայց այստեղ, ձեր ուշադրութիւնը կը հրահրենք հետեւեալ իրականութեան վրայ:

Այս չորս վկայութիւններուն չորսին աղբիւրներն ալ թրքական են: [Այս սարսափելի սպանութեն ոչ մէկ հայ ազատած է, որ կարենայ վկայութիւն կատարել]:

Առաջին երեք վկայութիւնները՝ նոյն թուրք կառապանին վկայութիւններն են որոնք, հայերու կողմէ, տարբեր ձեւերով ներկայացուած են:

Չորրորդը, կրկին, թրքական է: Գերմանական դեսպանատան կողմէ Ռ. Սեւակին կնոջ դրկուած նամակին մէջ ըսուածները, բոլորն ալ, թրքական կառավարութեան կողմէ գերմանացիներուն տրուած շինծու տեղեկութիւններն են:

Բնական է, որ թուրք կառավարութիւնը, գերմանական դեսպանատան չէր կրնար ըսել, որ Ռուբէն Սեւակ դաշունահարուելով և բարբարոսաբար սպաննուած է:

Դակ գալով «Պալաքեանին նշած վկայութիւններուն» անոնց մասին հետեւեալը ըսել կ'ուզենք՝ «Պալաքեան կ'ըսէ. թէ «Միայն Դանիէլ Վարուժանը ինքնապաշտպանութեան դիմած է»»:

Այստեղ, սա հարցը կը ծնի մեր մէջ- Այս թուրք կառապանը ի՞նչ գիտէր. թէ հինգ հայերուն մէջէն ո՞րը Ռուբէն Սեւակն էր, և ո՞րը՝ Դանիէլ Վարուժանը: Ո՞րկէ կը ճանչնար զանոնք, որ հեռուէն պիտի կրնար զանազանել ամէն մէկը:

Արդէն, 17 Յուլիս 1919-ին, Պոլսոյ «Նոր Կեանք» թերթին մէջ հրատարակուած նոյն թուրք կառապանին բուն վկայութեան մէջ, ան սպաննուած հինգ հայերուն մասին ընդհանուր առմամբ կը խօսի: Եւ ոչ մէկուն համար առանձին տեղեկութիւն կու տայ՝

«ԷՖԷՆՏԻՆԵՐՈՒՆ ԶԵՌԵԵՐԸ ԿԱՊԵՏԻՆ». «ԷՖԷՆՏԻՆԵՐԸ ԶԱՐՋԱՐԱՆՑՆԵՐՈՎ ՍՊԱՆՆԵՑԻՆ» կ'ըսէ:

Պալաքեանին կատարած այս շինծու վկայութիւնը՝ Դաշնակցական Դանիէլ Վարուժանը հերոսացնելու և բուն հերոսը՝ Ռուբէն Սեւակը նսեմացնելու համար հնարուած ցաւալի սուտ մըն է, դժբախտաբար:

Պալաքեանին Ռուբէն Սեւակը նսեմացնելու համար կատարած սաղրանքնե-

ըս, այսքանով չեն աւարտած:

Պալաքեան [իբր թէ] թուրք կառապանին հետեւեալ վկայութիւնը կը նշէ. «Ապա գողօնը բաժնելով իրենց մէջ և Տօքը. Զիլինկիրեանի ու Օսմիկ Մաղացանեանի զգեստներուն երիզներուն մէջ կարուած աւելի քան 450 Օսմանեան հնչուն ոսկին եւս առնելէ վերջ...»:

Այս ի՞նչ գարշելի վիրաւորանք է, Ռուբէն Սեւակին Սուրբ Յիշատակին հասցըւած:

Պալաքեանին վկայութենէն այնպէս կը կարծուի, թէ Ռուբէն Սեւակ իր վրայ հարիւրաւոր ոսկի ունէր:

Այն Ռուբէն Սեւակը որ, Զանդըրը-էն իր կնոջ գրած նամակին մէջ կ'ըսէր թէ՝ [Պոլսոյ Կեղրոնական վարժարանի ուսուցիչ ըլլալու հանգամանքով] «Ասսուրա սսսաթուսակս Եղոյ Իւս ոսկին ԳԱՆՉԵԼՈՎ ԻՆԾԻ ՂՐԿԵՑԵԶ»:

Եւ նաեւ, իր կնոջ գրած մէկ ուրիշ նամակին մէջ կ'ըսէր [Պոլսոյ իրենց բնակարանին վարձքը աւելցնել ուզող տանտէրին համար] թէ՝ «Վարձքը մ'աւելցնէք: Ես, սպայ ըլլալուս, ծեզի տունէն չեն կրնար հանել»:

Նիւթական դժուարութեան մէջ եղող Ռուբէն Սեւակին համար Պալաքեանին «Ո. ՍԵՒԱԿԻՆ ՎՐԱՅԵՆ ՀԱՐԻՒՐԱԽՈՐ ՈՍԿԻ ԵԼԱԻ» ըսելը, ոչ թէ կրօնականի. այլ նախանձայոյզ և անարդար խառնուածք ունեցող. եսակեղրոնի մը վայել կեցւածք է միայն:

\* \*

Բայց, Պալաքեանին Ռուբէն Սեւակին դէմ՝ կատարած անարդարութիւնները. այսքանով ալ չեն աւարտիր:

«ՆԱՅԻՐԻ»ի Յունուար 2003-ի թիւրէն սկսեալ մինչեւ վերջիններուն մէջ նշեցինք, Զանդըրը-ի Ռուբէն Սեւակի աքսորեալ, բայց վերապրող ընկերներուն իր՝ Սեւակի հերոսական կեանքին վերջին օրերուն մասին ըրած վկայութիւնները: Մանաւանդ՝ Միջայէլ Շամտանեանին, բժիշկ՝ Վահան Ալյունեանին և Յովհան Վարդապետ Կարապետեանին ականատեսի վկայութիւնները՝ որոնց մէջ կը պատմէին թուրք «Երեւելի»ին [իր աղջիկը մահուընէ ազատած] Ռուբէն Սեւակին կատարած առաջարկը: Թուրք երեւելին, Ռուբէն Սեւակին կ'առաջարկէր՝ «ԶԻՆՔԸ ՍՏՈՅԳ ՄԱՀԷ ԱԶԱՏԵԼ՝ ՊԱՅՄԱՆԱԻ, ՈՐ ՈՈՒԲԷՆ ԻՍԼԱՄԱՆԱՅ ԵՒ ԱՂՋԿԱՆ ՀԵՏ ԱՄՈՒՍՆԱՆԱՅ»:

Հակառակ, որ բոլոր ընկերները Ռուբէն Սեւակին կը յանձնարարէին. որ ընդունի իսլամանալու առաջարկը և կեանքը փրկէ», Ռուբէն Սեւակ կը մերժէ իսլամանալը: Եւ՝ «ԹՐԹԱՆԱԼԸ՝ ՆՈՒԱՍՏԱՆԱԼ Է» կ'ըսէ:

Պալաքեանն ալ, իր յուշերուն մէջ կը նշէ, «Թուրքին, Ռուբէն Սեւակը մահէն ազատելու առաջարկը՝ պայմանաւ, որ իսլամանայ և իր աղջկան հետ ամուսնանայ»... բայց, այսքան՝ միայն: Պալաքեան իր գիրքին մէջ՝ չէ գրած կարեւորագոյնը, թէ ինչո՞ւ «ՈՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ՄԵՐԺԱԾ Է ԻՍԼԱՄԱՆԱԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԸ ԹՈՒՐԳԵՒՆ: ՈՒՆԱԽԵՍՏՐԱԾ Է ՄԵՌՈՆԻԼ, ԶԱՅ ԹԵ ԹՐԹԱՆԱԼ»:

Պալաքեան իր «Հայ Գողգոթան» գիրքին մէջ չէ նշած նաեւ Զանդըրը-ի հայ աքսորեալներուն կեանքին մէջ պատահած, հայութեան համար շատ կարեւոր հետեւեալ եղելութիւնը...

Աղուէս թուրքերը Զանդըրը-ի մտաւորական աքսորեալներուն հետեւեալ ծուղակ-առաջարկը կ'ընեն: «Ա'յն աքսորեալ հայը, որ իսլամութիւնը կ'ընդունի՝ պիտի պատի մահէն»:

Հայ մտաւորական աքսորեալներուն մէջէն, կարգ մը տկար հոգիով անձեր, ենթարկուելով թուրքին նենգամիտ առաջարկին, կը պատրաստուին իսլամանալու, որ կարենան մահէն ազատիլ:

## ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԻ ԻՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԽԱԹԵՄԻԻ ՀԵՏ

«ԱՆԹԻԼԻԱՍ»- Երեցաբարի 13 Մայիս 2003-ի առաւօտեան ժամը 8.30-ին, Պէյրուրի «Ֆինիսիա» պանդոկին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաբողիկոս հանդիպում մը ունեցաւ Իրանի նախագահան Հանրապետութեան նախագահ Մոհամետ Խաբամիի հետ: Ի նշակած ծանօթ է, Իրանի նախագահը երկօրեայ պաշտօնական այցելութեամբ կը գտնուէր Լիրանան: Սոյն հանդիպումը տեղի ունեցաւ հրաւերովը նախագահ Խաբեմիի: Վեհափառ Հայրապետին կողքին ներկայ էր նաև Լիրանանի Հայոց Առաջնորդ Գերշ. Յ. Գեղամ Ս. Նազ. Խաչերեան, իսկ նախագահին կողքին ներկայ էին Իրանի փոխ նախագահ Ապտահի, Արտաքին գործոց նախարար Խարազի և Լիրանանի մօտ Իրանի դեսպան Մեսուտ Խորիսի:

Վեհափառ Հայրապետը հետեւեալ երեք հարցերուն շուրջ խօսեցաւ նախագահին հետ: Ա.՝ Իրանի հայութիւնը

Վեհափառ Հայրապետը խօսելով Իրանի հայութեան մասին ըստ, թէ Իրանի նախագահին ներկայութեան ինք կարիքը չզգար անդրադարձալու համայնքի մասին: «Պատմութեան մէջ իր արմատները ունեցող, Իրանի մէջ մշակոյք կերտած, հոգեւոր կեանք կազմակերպած և Իրանի վերելիքին իր գործոն մասնակցութիւնը բերած ու բերող համայնք մըն է Իրանի հայ համայնքը» ըստ Վեհափառը: Այս շրջագծին մէջ, Վեհափառը իր գնահատանքով յայտնեց հայութեան նկատմամբ Իրանի պետութեան ցուցաբերած սիրոյն և շարունակուող բարեացակամութեան նկատմամբ, յատկապէս հայ համայնքին կապուած կարգ մը հարցերուն ու ծրագիրներուն գծով: Նախագահ Խաբեմի իր կարգին բարձր գնահատանքով անդրադարձաւ Իրանի հայութեան ըսելով. «Անոնք մեր պարկեշու և յանձնառու բաղաբացիներն են: Մենք ոչ մէկ խորութիւն կը դնենք հայերու և Իրանցիներու միջև: Հայերը գործով ցոյց տուած են իրենց ամուր կապուածութիւնը Իրանի նկատմամբ և մենք պատրաստ ենք նոյն ոգիով ու մօլեցումով օգտակար հանդիսանալու մեր հայ հայրենակիցներուն»:

Բ.՝ Մշակոյքներու երկխօսութիւն

Վեհափառ Հայրապետը ողջունեց նախագահ Խաբեմիի ցուցաբերած յառուկ կարեւորութիւնը մշակոյքներու ու բաղաբակրութիւններու երկխօսութեան: Ան ըստ, թէ նաև պէտք է այս ծիրէն ներս աւելցնել կրօններու երկխօսութիւնը, որովհետեւ մշակոյքի ու բաղաբակրութեան հիմքը կրօնն է: «Արեւմուտքը կրօն, մշակոյք ու բաղաբակրութիւն իրարմէ կը բաժնէ, սակայն արեւելիք մէջ միասուածութեան երեք կրօններու պարագային կրօն, մշակոյք ու բաղաբակրութիւն սերտօրէն առնչուած են» ըստ Վեհափառ Հայրապետը և առաջարկեց, որ նախագահ Խաբեմի այս թեմայի շուրջ միջազգային համագումար մը կազմակերպէ Թեհրանի մէջ: Իր կարգին նախագահը ուրախութեամբ հղունեց Վեհափառ Հայրապետին հետաքրքրութիւնը երկխօսութեան նկատմամբ, բաժնեց Վեհափառին մօտե-

ցումը կրօն ու մշակոյք միասնաբար տեսնելու իմաստով, անդրադարձաւ այս ուղղութեան անցեալին կատարած իր աշխատանքներուն և ընդունեց Վեհափառ Հայրապետին առաջարկը՝ միշազգային համագումար մը կազմակերպելու Թեհրանի մէջ, ու Վեհափառը հրավիրեց իր գործօն մասնակցութիւնը բերելու այս ուղղութեամբ:

#### Գ. Լիրանան-Իրան զօրակցութիւն

Վեհափառ Հայրապետը կարեւորութեամբ ընդգծեց Լիրանանի և Իրանի իսլամական հանրապետութեան միջեւ գոյութիւն ունեցող զօրակցութիւնը աւելի ամրապնդելու անհըրաժեշտութիւնը: «Այս զօրակցութիւնը -ըսաւ ան-սոսկ քաղաքական նեղ առումով պէտք չէ ըմբռնել, ան կանգնած է հասարակաց պատմութեան, մշակոյքի ու արժէ քններու վրայ: Երկրորդ, շրջանէն ներս ստեղծուած ներկայ իրավիճակը կը պարտադրէ, որ այս զօրակցութիւնը աւելի ամրապնդուի ու զարգանայ, միասնաբար դիմագրաւելու համար հասարակաց մտահոգութիւններն ու մարտահրաւերները»: Նախագահ Խարեմի իր կարգին ընդգծեց, թէ Լիրանանի ու Իրանի յարաբերութիւնները իւրայատուկ բնոյր ունին: Այս յարաբերութիւնները անհրաժեշտ է որ հանգրուանային կերպով զարգանան ու վերածուին մնայուն գործակցութեան, ի շահ ամրող շրջանին և ի խնդիր արդարութեան ու խաղաղութեան:

Սիրալիր ու բարեկամական մբնոլորտին մէջ տեղի ունեցող հանդիպման աւարտին, Վեհափառ Հայրապետը նախագահ Խարեմին յանձնեց Անրիլիասի մէջ տպուած Նոր Զուղայի ձեռագիրներու հատորը, ըսելով. «Ահաւասիկ կենդանի վկայութիւն մը հայ ժողովուրդի ստեղծագործ գոյութեան ու դարաւոր ներկայութեան Իրանի մէջ»: Նախագահ Խարեմի հանդիպման աւարտին Վեհափառին իրաւիրեց դարձեալ այցելելու Իրան:

Ցայտնենք, որ այս մէկը Արամ Ա. Վեհափառի երկրորդ տեսակցութիւնն էր նախագահին հետ: Վեհափառը, երկու տարիներ առաջ, հանդիպում մը ունեցած էր Նորին Վսեմութեան հետ, Թեհրանի մէջ:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ՝ ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ... (Ժար. Էջ 2-ԷՇ)

Երբ Ռուբէն Սեւակ ասոր տեղեակ կ'ըլլայ՝ հայութեան համար այս նուաստացուցիչ կացութեան, խնդրոյ առարկայ տկարացած հոգիներուն քով կ'երթայ և օրերով կ'աշխատի համոզել զիրենք, որ չիսլամանան:

Եւ անոնց կ'ըսէ, թէ՝ «ՄԱՀԸ ԱԽԵԼԻ ԼԱՒ Է ԻՍԼԱՄԱՆԱԼԵ»:

Եւ, «զատ-զատ երդում ընել կու տայ ամէ՛ն անոնց, որոնց հոգիի ուժին վրայ կասկած ունէր, թէ՝ հաւատարիմ պիտի մնան իրենց լոյս հաւատքին»:

\*\*

1.- Իբր կրօնական՝ Պալաքեանին համար աններելի է Զանդըրը-ի մէջ, թուրքերուն ըրած ծուղակ առաջարկին և կարգ մը աքսորեալներուն իսլամանալու ճամբով ազատիլ ուզելնուն մասին իր գիրքին մէջ գրած չըլլալ:

2.- Իբր կրօնական, Պալաքեանին ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻՆ ԻՍԼԱՄԱՆԱԼՈՎ ԿԵԱՆՔԸ ԱԶԱՏԵԼՈՒ ՏԵՂ, ՍԵՌՈՒՌԸ ՆԱԽԸՆՏՐԵԼՈՒՆ ՍԱՍԻՆ ԻՐ ԳԻՐՁԻՆ ՍԷԶ ԳՐԱԾ ԶԸԼԱԱԾ, ՆՈՅՆՊԵ՞Ս, ԱՍՆԵՐԵԼԻ Է:

Պալաքեան չի կրնար տեղեակ եղած չըլլալ, վերը նշուած և շատ խորիմաստ եղելութիւններուն:

Իր պաշտօնակիցը՝ Ցովհան Վարդ. Կարապետեան տեղեակ էր....:

Եւ Զանդըրը գտնուող գրեթէ բոլոր աքսորեալները տեղեակ էին այս եղելութիւններուն:

Պալաքեանին այս մասին արտայայտուած չըլլալ՝ դաշնակցականամիտ ըլլալով, այս կուսակցութեան ուղեգիծին ոտք յարմարցնել ուզելուն պատճառաւ է:

Ապացուցանելու համար մեր այն վարկածը, թէ Զանդըրը-ի գրեթէ բոլոր աքսորեալ հայերը տեղեակ էին Ռուբէն Սեւակի Զանդըրը-ի հերոսական կեանքին պատմութեան, «ՆԱՅԻՐԻ»ի յառաջիկայ թիւին մէջ պիտի հրատարակենք Զանդըրը աքսորուած բայց վերապրած Պոլսեցի սեղանաւոր Ցովհաննէս Թէրլէմէզեանի վկայութիւնները:



## ՀԱՅԱԿՈՐԾԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԸ ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է... (Չար. էջ 1-ԷՇ)

Բամակերպությունը օտարութեան գորշութեանն ու սիրոյ մաշող դառնութիւններին... իսկ ինչո՞ւ է գնում հայը... գնում է հայ մտաւորականը՝ դրսում դրամ վաստակելու, որունելու «սեւ» աշխատանք...

Երբեմնի արժանապատի հայ տղամարդը՝ յոգնելով աղբարկդները փորփորելուց, ինչ-որ բան գտնելու յոյսով, գնում է ընտանիքը պահելու միջոց հոգալու... Հայ կին ամուսնու հետ հաւասարապէս կրում է հոգսաշատ կեանքի դժուարութիւնները, իսկ յանախ էլ ինքն է մեկնում օտարութիւն՝ աշխատանք որոնելու, ընտանիքի հոգաը հոգալու: Պարկեշտ, առաքինի հայութինները, որ «Թուրքի ձեռքով չըոնաբարուելու համար Եփրատն են նետուել», այսօր նրանցից ոմանք իրենց մարմինն են վաճառում թուրքին, բայց աւա՞ն, նաև նոգին... Հայ երիտասարդը, լքելով իր պապենական նողն ու տունը, բողնելով իր մանկական անուշ յուշերն ու պատանեկան քաղցր երազները, փախչում է բանակից՝ անորոշութեանը յանձնելով իր ճակատագիրը... Բայց մի՞րէ ելքը դա է. չէ՞ որ, «օտարութեան մէջ ազատ ապրելն էլ, ա՛լ գերութիւն է»...

Հայաստանցի... սա ի՞նչ պիտակ է, այսինքն՝ հայի ո՞ր տեսակն է, Մայր Հայաստանից եկած հայրենաբոյը չէ՞... այն հայը, որ իր ընտանիքի կարիքների համար հարկադրաբար պանդխտացել ու դարձել է աշխարհի տարբեր ծայրերը նետուած մի փշրուած բեկոր, որն արժանի է առաւել հոգատարութեան և կարեկցանքի, ոչ թէ անհարկի պիտակաւորման... Եւ վերջապէս, չէ՞ որ բոլոր հայերն էլ ազգային մի՛ պատկանելիութիւն ունեն, հաւաքական մի կերպար, որ պէտք է գիտակցի իր ազգային ընդհանուր պարտականութիւնները:

Այսուամենայնիւ, զարմանալի ու տարօրինակ են հայերի այս հոգեբանութիւնը, այս շերտաւորումները: Ուստի, պէտք է մեր հաւաքականութեամբ մի բոռնցը դառնանք և պայքարենք հայապահպանութեան մեր սուրբ նպատակի համար: Կարծում ենք, որ ընթերցողի հոգին վրդովեց մեր հայրենիքի ներկայ պատկերը: մուրացկանութեամբ զբաղուող մանուկներ, ամուսիններին դէպի անորոշութիւն հանապարհող դեռատի կանայք և մենակ ու լքուած մահացող, օրերով անթաղ մնացող ծերեր... իսկ երկում մնացողները նրանք են, ովքեր այլեւս ոչինչ չունեն վաճառելու, որպէսզի շուտափոյք փախչեն երկրից, հետեւաբար, անհծելով երբեմնի հարազատ երկիրը՝ հաշտում-համակերպում են իրենց խեղնուկ վիճակին:

Իսկ որ մեր երիտասարդներն աւելի շուտ են ընտելանում արեւմուտքի բարքերին ու սովորութիւններին՝ դա մեծ ցաւ է, այսինքն՝ տարիների համրանքի հետ օտարութեան մէջ ձուլում-կորչում է մեր սերունդը, ուրեմն՝ «առյաւշտ կորցնում ենք մեր Արարատը...»:

«Թուրքի երազն է, որ կատարում է՝ պարպատմ է Հայաստանը՝ հայերից»:

— Այո՛, արտագաղթն այսօր, համազգային ողբերգութիւն է դարձել...

ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՈՆԵՆՔ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՒԽԻՐԵԱԼՆԵՐՈՒՆ

**ՊԱԼԱՔԵԱՆԻՆ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՀԱՆԴԵՊ  
ԿԱՏԱՐԱԾ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ  
ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ -**

**ԴԻՊՈՒԱԾ ԹԷ՞ «ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆ ՊԱՏԻԺ»**

**ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԲԱԽՏԱԿԻՑ,  
ԶԱՆԴՐԸ ԱՔՍՈՐՈՒԱԾ ԲԱՅՑ ՎԵՐԱՊՐԱԾ  
ՊՈԼՏԵՑԻ ՍԵՂԱՆԱԻՈՐ  
ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԵՐԼԵՄՀՁԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ**

**1952-ԻՆ ՓԱՐԻԶ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ  
«1915- ԱՐԵՏ ԵՒ ՎԵՐԱԾՈՒԻՆԴ» ԳԻՐՔԵՆ ՀԱՏՈՒԱԾ -  
ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԶԵՐԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՔՍՈՐԸ**

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԵԺ ՌՈՒԲԷՆԵԱՆ]**

## ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹԷՐԼԷՄԵԶԵԱՆ

«1915 Ապրիլ 10-23-ի երեկոյեան,  
Պոլիս, խանութիս մէջ զբաղած էի, երբ  
ոստիկան մը գալով զիս պահականց  
առաջնորդեց, առանց թոյլ տալու մէկ  
վայրկեան, որ գոյքերս հաւաքեմ:

Պահականոցին մէջ երկար սպասեցի: Հետզհետէ ուրիշ ձերբակալուածներ  
ալ եկան, և առանց հարցաքննութեան  
դրկուեցանք կեղրոնական մեծ բանտը:



Այդ գիշեր և յաջորդ առտու, ձերբակալուեցան հայ կարեւոր դէմքեր՝ մտաւորական, յեղափոխական գործիչ, բժիշկ և լին, մօտաւորապէս 200 անձ:

Յաջորդ գիշեր, Ապրիլ 11-24-ին, բանտէն քամիոններով փոխադրուեցանք Սարայ-Պուտնու, ուր արդէն յատուկ շոգենաւ մը կը սպասէր:

Ծատեր վախցան թէ՝ ծով թափելու համար շոգենաւ կը դրուէին: Բայց, Հայտար-Փաշա տարուեցանք և, մասնաւոր գնացքով, մեզ ճամբայ հանեցին դէպի էնկիրիւ: Գնացքին մէջ ԱԿՆՈՒՆԻՆ ԵՒ ԸՆԿԵՐՆԵՐԸ ԿՇՍԵԻՆ ԹԷ՝ «ՈՉԻՆՉ, ՍԽԱԼՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԱՅ: ՎԱՂԸ ՎԱՐԴ-ԳԵՍԸ, ԹԱԼԱԹԻՆ ԴԻՄԵԼՈՎ, ՎԵՐԱԴԱՐՁՈՒԵԼՈՒ ՀՐԱՄԱՆ Կ'ԱՌՆԵ ՄԵԶԻ ՀԱՄԱՐ»:

Էնկիրի հասնելէ առաջ, Այաշի կայարանին մէջ զատեցին աչքի ինկող յեղափոխականները և դրկեցին Այաշի բանտը:

Անոնցմէ քիչեր միայն ազատեցան, իսկ մնացեալները, ի վերջոյ, չարաչար խողխողուած էին (ԱԿՆՈՒՆԻ, ԽԱԺԱԿ, ՏՕԶԹ. ՏԱՂԱՒԱՐԵԱՆ, Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ, ՀՐԱՆԴ ԿԻՒՐՃԵԱՆ, ՀՐԱԶ ԹԻՐԵԱԶԵԱՆ և այլն):

Այաշի կայարանէն էնկիրիւ տարուեցանք, ուր արտօնեցին, որ Պոլիս՝ մեր

մեջ համբայ հանեցին դեմքի էնկիւրիս: Գնոցքին մէջ Ակնունքն իւ ընկերնեց կ'ըսէին թէ. և լշինչ. սխալ լութիւն մը կայ: Վազը վարդգէսը թուլութիւն դիմելով վերտղարժուելու հրաման կ'առնէ մեզի հոմարք:

ԱԿՆՈՒՆԻ [Հ. 8.Դ.]:— ՈԶԻՆՉ. ՍԽԱԼՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԱՅ: ՎԱՂԸ ՎԱՐԴԳԵՍԸ ԹԱԼԱԹԻՆ ԴԻՄԵԼՈՎ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԵԼՈՒ ՀՐԱՄԱՆ Կ'ԱՌՆԵ ՄԵԶԻ ՀԱՄԱՐ»:

ընտանիքներուն հեռագրենք:

Վերջէն տեղեկացանք, թէ հեռագիրները չեին դրկուած:

ԷԱԿԻՒՐԻԷՆ, բեռան կառքերով, մեզ դրկեցին Զանդըրը: Երկրորդ իրիկունը Զանդըրը հասանք և մեզ բանտարկեցին քաղաքէն քիչ հեռու, հին զօրանոցի մը մէջ:

Յաջորդ օրը, բոլոր բանտարկեալներս հաւաքուեցանք և հսկում կատարեցինք:

Երեք վարդապետ— Կոմիտաս, Պալաքեան և Յովհան Կարապետեան— «Տէր Ողորմեա» երգեցին: Ամէնքս ծունկի եկած էինք:

Կոմիտաս Վրդ. շատ յուգուած էր և կ'արտասուէր: Այդ «Տէր Ողորմեա»ն անմոռանալի եղաւ բոլորին համար:

8-10 օր ետք, արտօնուեցանք քաղաքին մէջ բնակելու, պայմանաւ, որ ամէն օր ներկայանանք ոստիկանատուն:

Կոմիտաս և Յովհան Վարդապետները, Տիրան Զէլէկեան, Յակոբ Զարեան և ես, Զէրգէզեան անուն հայու մը տունը վարձեցինք: Միւսներն ալ՝ ուրիշ տուններ:

Յաջորդ Կիրակի, Կոմիտաս Վրդ. պատարագեց: Անոնք, որ ներկայ եղած են իր պատարագին գիտեն, թէ ինչ հոգեզմայլ հանդէսի մը ներկայ կը գտնուէին: Բայց այդ օրը, Կոմիտաս գերազանցեց ինքզինքը:

Երբ յուգուած և սքանչացած կ'աղօթէինք, Կոմիտասի արձակման հեռագիրը հասաւ:

Առաջին աքսորեալն էր, որ պիտի վերադառնար Պոլիս:

Իր ազատ արձակման հրամանը կը վերագրուի Ամերիկեան դեսպանին և կամ գահաժառանգ Մէճիտ էֆենտիի միջնորդութեան, որովհետեւ երկուքն ալ սիրահար էին գեղարուեստին:

Կոմիտասէն ետք, քանիներ եւս յաջողեցան հետզհետէ ազատիլ և վերադառնար Պոլիս, իսկ մնացեալները՝ դէպի անապատ ճամբայ հանեցին և ամէնքն ալ անխնայ սպաննեցին:

Զանդըրը-ի Իթիհատականներուն պետին աղջիկը կը հիւանդանայ այդ օրերը և աքսորեալներէն Տօքք. Տինանեանը կը կանչուի զինքը դարմաննելու: Այդ միջոցին կը հասնի Տօքք. Տինանեանի ազատ արձակման հրամանն ալ, որով Տօքք. Սեւակը կը յաջորդէ Տօքք. Տինանեանին, յիշեալ աղջիկը դարմաննելու համար:

Աղջիկը կը սիրահարի Տօքք. Սեւակին:

— Դուք, ամէնքդ ալ, դատապարտուած էք մահուան, կ'ըսէ աղջկան հայրը Տօքք. Սեւակին:— Կ'ուզեմ քեզ ազատել, պայմանաւ, որ իսլամանաս և ամուսնաս աղջկան հետ:

Տօքքը մէր տունը եկաւ խորհուրդ հարցնելու:

Յովհան Վարդապետ, Զէլէկեան և ամէնքս խորհուրդ տուինք իրեն՝ իսլամութիւնը ընդունիլ և ամուսնանալ:

Ապագային, երբ պարագաները փոխուին, ըստ այնմ վարուիլ:

Ըսինք . թէ իր մահը ոչ մէկ օգուտ կը բերէ. ո՛չ ազգին.

ոչ իր ընտանիքին:

— ԶԵՄ ԿՐՆԱՐ ՀԱՄՈՉՈՒԻԼ ԱՅՆ ԳԱՂԱՓԱՐԻՆ ՀԵՏ, — ԸՍԱԻ ՏՕԶԹ. ՍԵՒԱԿ, — ՈՐ ՄԱԼՀՆ ՎԱԽՆԱԼՈՎ ՈՒՐԱՆԱՄ ԱԶԳ ԵՒ ԸՆՏԱՆԻՑ»: ԵՒ ՆԱԽՆԾՏՐԵՑ ՄԵՌՆԻԼ....»

**Պոլսեցի Սեղանաւոր Յովհաննէս Թէրլէմէզեան**

\* \*

Պոլսեցի սեղանաւոր Յովհաննէս Թէրլէմէզեան, իր այս գրութեան մէջ, շատ պարզ, բայց իրապաշտ լեզուով տուած է՝ զարհութելի պատմութիւնը 24 Ապրիլ 1915-ին դէպի Այաշ և Չանդըրը աքսորւած հայ երեւելի անձնաւորութիւններուն:

Եւ մանաւանդ՝ Յովհաննէս Թէրլէմէզեան այս յուշերուն մէջ. քանի մը տողերով բայց շատ խորիմաստ կրցած է տալ Չանդըրը-ի մէջ, Ռուբէն Սեւակի հերոսական կեանքին պատմութիւններուն... 800 էջնոց «Հայ Գողգոթան» գիրքին մէջ... կարելի չէ գտնել:

Դժբախտաբար, հայ ժողովուրդը, 24 Ապրիլ 1915-ի մտաւորական նահատակներուն մասին, միայն Պալաքեանին «Հայ Գողգոթան» գիրքը ունի իբր պատմութեան գիրք, իբր տեղեկութեան աղբիւր:

Բայց Պալաքեանին «Հայ Գողգոթան» գիրքը՝ սխալ վկայութիւններով. և. մանաւանդ, ինքնագովութիւններով լեցուն յուշագրութիւն մըն է. որ վերջերս ֆրանսերէնի ալ թարգմանուեցաւ:

Եւ շատ մը գրողներ, առանց գիտնալու, կ'արտատպեն «Հայ Գողգոթան» գիրքին մէջ գրուած սխալ տեղեկութիւնները:

Այս սխալներուն «զոհը» եղաւ նաեւ 1982-ին. Մեծ Վարպետ՝ Անդրանիկ Ծառուկեանը:

Տէր և Տիկին Անդրանիկ Ծառուկեանները, 1981-ի ամրան, նիսի մէջ. Ռուբէն Սեւակի (ապագայ) Ֆիշատակի Տունը այցելեցին:

Եւ այդ օր մենք, Անդրանիկ Ծառուկեանին տուինք, Ռուբէն Սեւակի վերաբերեալ կարգ մը պատճեններ:

Եւ ուրախութեամբ ստացանք «Նայիրի»ի 15 Փետրուար 1982 թիւը որ. գրեթէ ամբողջութեամբ, Ռուբէն Սեւակի մասին գրութիւններու յատկացուած էր:

Բայց, նոյն թիւին 3-րդ էջին մէջ, արտատպուած էր նաեւ Պալաքեանին «Հայ Գողգոթան» գիրքէն հատուած մը. ուր կը նշուէր թուրք կառապանին Ռուբէն Սեւակի նահատակութեան նկարագրութեան Պալաքեանի կողմէ խեղաթիւրւած, սխալ մեկնաբանութիւնը, հետեւեալ տողերով՝

«...Հազիւ կառքերէն վար իջած. Տօքթ. Չիլինկիրեան կը խնդրէ թախանձա-

գին այս 4 ըիւրտերեն, որ խնայեն իրենց կեանքին. և ինը կը խոստանայ իր ընկերներուն հետ տալ իրենց ամբողջ հարստութիւնը և գոյքերը»:

«Ասոնցմէ միայն Դանիէլ Վարուժան ինքնապաշտպանութեան կը դիմէ...»  
«...Ապա գողօնը բաժնելով իրենց մէջ և Տօքը. Զիլինկիրեանի ու Օննիկ Մաղացանեանի զգեստներուն երիզներուն մէջ կարուած աւելի քան 450 օսմ. հնչուն ուսկին եւս առնելէ վերջ...»

**Հայզիւ կառերէն վայր կը ամած . Տօքը . Զիլինկիրեան կը խնդրէ յառաջանձագին այս և միւրտերէն, որ խնայեն իրենց կեանքին, և ինք կը խոստանայ իր բնկերներուն եւս տայ իրենց ամբուղք հայտաւալիւնը եւ գոյքերը:**

Իսայց ոնրասպակծներն իրրեւ պաստախուն, մեր ո սպասցեալ բնեխքներիք, Խուկատակ առանց աղիոգորմ պատրատամիններուն, կիցեցնեն մերաւակոյ մարզ՝ առաւտիի նզերէին. եւ զաներուն զգեստները անվաս պահելու համար նախ կը մերկացնեն: Ապա դաշոյնները բաշած կը յարձակին իրենց անգէն եւ ամպաշտպան զաներուն մըաց, եւ տմիխնաց կը սկսին ծակծէի եւ բզկտել դաշոյններով տարաքախտ մին ըմկերներաւն մարմինները, եւ դամակով ամդամահատել տառեց ուսերն ու բազուկներն եւ այլ զգայարանները... Առաջում միայն Վարաւժան ամսնասպաշտպանուր եան կը դիմէ, եւ իրը պատիժ ոճրագործներն դանակուք դուրս քափելէ վերջ փորասիէր, կը փօրեն նաև հայրենաւէր բանաստեղծին այժմը...

Ապա զազոնը բաժնելով իրենց մէջ եւ Տօքը: Զիլինկիրեանի ու Օննիկ Մաղացանեանի զգեստներուն երիզներուն մէջ կարօւած տւելի ժամ 450 օսմ. հենչուն ուսկին եւս սունելէ վերջ, բաժին կը հանեն նույն աստիկանին ու ստուկան զինուարին: Կառերու մէջ զտնուած

«Հայ Գողգոթան» – Գրիգորիս Ծ. Վրդ. Պալաքեան»

«Նայիրի» Պէյրութ 15 Փետրուար 1982

\*\*\*

**ՈՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ «ՀՈԳԻՆ» ՊԱՏՃԵՑ՝  
ԻՐԵՆ ԴԵՄ ԱՆԻՐԱԿԻ ԵՒ ԱՆԱՐԴԱՐ ԳՏՆՈՒԱԾ  
ՊԱԼԱՋԵԱՆԸ ՄԱՐՍԻԼԻՈՅ ՄԷՋ**

Դուք, նախախնամութեան կամ ճակատագրին կը հաւատա՞ք:

Մենք ալ, բնաւ չենք հաւատար:

Բայց հիմա պիտի ջանանք պատմել եղելութիւն մը, որուն եզրակացութիւն – որոշումը դուք տուեք: Ըսէ՞ք՝ թէ այս եղելութիւնը, դիպուածի արդիւնք է. կամ ճակատագրի՞ն գիծն է, և կամ թէ՝ «Աստուածային» պատիճ մը:

Պալաքեան, իր յուշերը գրած է, «Հայ Գողգոթան» վերնագրով գիրքին մէջ. որ հրատարակուած է երկու հատորներով:

Պալաքեան այս գիրքին մէջ կու տայ 24 Ապրիլ 1915-ին սկսած և առաջին հանգրուան կազմող Զանդըրը-ի իր աքսորականի կեանքին պատմութիւնը. և կը շարունակէ՝ Զանդըրը-էն յետոյ դէպի Տէր-Զօր գացող իր շատ տառապալից և մահացու երթին նկարագրութիւնը:

(→էջ 3)

## ՊԱԼԱԶԵԱՍԻՆ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ՀԱՆԴԻՊ ԿԱՏԱՐԱԾ... (Ծար. էջ 2-ԷՇ)

Տարիներ տեսող և եղեռնի արիւնու ճամբաներէն անցնող այս աքսորականի ողիսականէն հրաշքով ողջ կը մնայ Պալազեան: Եւ, ի վերջոյ, 1918-ին կը յաջողի, Կիլիկիայէն իբր գերմանացի զինուոր, ծափուած, գնացքով վերադառնալ Պոլիս: Եւ, միջոց մը յետոյ՝ զինադադարը կը հասնի: Պալազեան փրկուած է:

Եւ 4 Յունուար 1919-ին, անգլիական մարտանաւով մը, կը հեռանայ Պոլիսէն: Սախ՝ դէպի Մայթա կղզի, և յետոյ՝ Եւրոպա:

1922-ին, Մանչեստրի մէջ կը գրէ, իր «Հայ Գողգոթան» գիրքը, երկու հատորէ բաղկացած, որուն մէջ իր աքսորականի յուշերը կը պատմէ: Գրեթէ 800 էջնոց այս գիրքին կէսէն աւելին, իր անձնական՝ աքսորականի կեանքին մանրամասնութիւններն են:

Գիրքին առանցքը իր անձին շուրջ կը դառնայ: Միշտ ինք իրաւունք ունի: Միշտ իր մտածումները ճիշտ են:

Իր գրութիւններուն մէջ յստակօրէն կ'երեւայ [շատ մը կրօնականներու յատուկ] պարտադրող ու ճնշող դեկավար-առաջնորդի նկարագիրը:

Բայց, մեզի համար, ամէնէն կարեւոր՝ 20 օգոստոս 1922-ին աւարտած իր «Հայ Գողգոթան» գիրքին մէջ, մէկ բառ, մէկ ակնարկութիւն մ'անգամ չկայ 1920-էն ասդին, գրեթէ երկու տարիներէ ի վեր գոյութիւն ունեցող Սովետական Հայաստանի մասին: Ոչ մէկ խօսք: Որովհետեւ, այս Հայաստանը, իր ուզած Հայաստանը չէ:

Եւ այս հոգեվիճակի տէր բոլոր Դաշնակցականամիտներուն և անիրատես մտային կառոյց ունեցողներուն նման, «Հայ Գողգոթան»ի յառաջաբանին վերցաւորութեան, մեծ-մեծ տառերով իր «Թորդոր»ը կ'ուտայ՝

«Եւ մի կասկածիր որ քսանեւինգ տարի վերջ, փոքր Ասիոյ և Կովկասի միջեւ, կենունակ նոր Պովկարիա մը պիտի ըլլաս Ազատ ու Անկախ, վերքերդ սպիացած, յարգուած դրացիներէդ և մեծ ու փոքր բոլոր պետութիւններէն»:

Եւ այս Դաշնակցականամիտ, անիրատես և անհեռատես կրօնականը 1923-ին, Մարսէլի գաղութին վրայ Կաթողիկոսական պատուիրակ կը նշանակուի:

Պալազեան, հակառակ իր երազատես գաղափարներուն, շինարար եկեղեցական մըն էր նոյն ատեն:

1900-թ. Եւրուն Գերմանիա՝ ուսանողական տարիներուն, աւարտած է համալսարանի Աստուածաբանական և նոյն ատեն Ճարտարագիտութեան ճիւղերը:

Եւ Մարսիլիոյ մէջ Պալազեան, մեծ աշխատանք կը տանի եկեղեցաշինութեան մարզին մէջ: Եւ կը յաջողի 9 եկեղեցիներ կառուցանել, մասնաւրապէս՝ Մարսիլիոյ Մայր Տաճարը և մինչեւ Նիսի եկեղեցին և ուրիշներ:

Բայց, Պալազեանի շինարարի կարողութիւններու կողքին՝ համայնքային կեանքի մէջ իր ունեցած կեցուածքն ալ կարեւոր է:

Դժբախտաբար, հայ ժողովուրդը, ամէն տեղ եղածին նման, բաժանուած էր երկութիւ: Նոյնն է պարագան Մարսիլիոյ մէջ՝ Դաշնակցական և Հակադաշնակցական, Սովետական Հայաստանի համակիրներ, և Սովետական Հայաստանի դէմ եղողներ:

Եւ դժբախտաբար [կամ բարեբախտաբար] Մարսիլիոյ մէջ դիպուածը, կամ ճակատագիրը և կամ նախախնամութիւնը Պալազեանին դէմ կը հանէ՝ Մարսիլիոյ Թաղական Խորհուրդի ատենապետը եղող բունդ հայրենասէր, Սովետական Հայաստանի համակիր, Պոլսեցի մտաւրական ենովք Արմէնը:

Եւ ո՞վ է ենովք Արմէն: Ռուբէն Սեւակի շատ մօտ ընկերներէն մէկը, որ իբր Պոլսոյ «Մասիս» թերթի խմբագիր, 1907-էն սկսեալ, Ռուբէն Սեւակին առաջին բանաստեղծութիւնները հրատարակող և գինը քաջալերող մտաւրականը եղած է:

Ենովք Արմէն և Պալազեան՝ երկու անձնատրութիւններ էին նկարագրի հասարակաց գիծեր ունեցող-պարտադրող և ճնշող: Բայց, իրարու հակադրուած՝ իրենց գաղափարներով:

Եւ շատ մը համայնքներուն մէջ եղածին նման՝ Թաղական Խորհուրդներ և եկեղեցական շրջանակէն Եւրս, հակամարտութիւնը կ'սկսի: Եւ խնդիրը կը մեծնայ ու կը մեծնայ:

Եւ, ի վերջոյ, Ենովք Արմէն կը յաջողի. իր Թաղական Խորհուրդին և իր համակիրներուն թիկունցով. Պալարեանը մեկուսացնել և հեռացնել եկեղեցին:

Եւ Պալարեան 1926-ին. ստիպուած կ'ըլլայ Մարսիլիոյ շուրջ գտնուող ամայի և հեռաւոր ազարակի նման վայրի մը մէջ. միայնակ և տիսուր կեանց մը ապրիլ:

Եւ 1934-ին. Մարսիլիոյ մէջ. ղըժբախտաբար կանխահասօրէն՝ 55 տարեկանին կը մահանայ Գրիգորիս Եպիսկոպոս:



## MINNESOTADA MUSEVI PROFESÖRLERİN YÖNETİMİNDE TÜRK-ERMENİ ÇIFTE - TELLİSİ MUSEVİLER ÇOKMU SEVER ERMENİLERİ ? Kİ TÜRKLERLE ERMENİLERİN BARİSMASINI İSTİYORLAR.

YOKSA 24 NİSAN 1915 ERMENİ SOYKIRİMINDA, SELANIKLİ YAHUDİLERİN OYNADIKLARI ROL  
ORTAYA ÇIKAR DIYEMİ KORKUYORLAR ?

**TÜRKLERİN (SÖZ DE) BİLMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ  
MINNESOTA'DAKI TÜRK-ERMENİ ÇIFTE-TELLİSİ  
SENELERDEN BERİ, BASTA AMERİKLİLER OLMAK ÜZERE, BATILILAR, ERMENİLERİ TÜRKLERLE GARİSMAYA ZORLARLAR.**

NIÇİN ACABA? BATILILAR COŞ MU SEVERLER ERMENİLERİ?, YOKSA ERMENİ SOYKIRİMİNİN HAKKI SEBEBININ VE HAKKİ SUÇLULARININ ORTAYA ÇIKMASINDAN KORKAN GİZLİ KUVVETLER MI VAR? HERHALDE BU İSİN ALTINDA BİR BIT YENİĞİ VAR Kİ AMERİKLİLER, ERMENİLERİ BU KADAR SIKISTIRIYOR, BARISSINLAR DIYE TÜRKLERLE.

SON ZAMANLarda TÜRKLERLE ERMENİLER, MUSEVI PROFESÖRLERİN YÖNETİMİNDE AMERİKANIN MINNESOTA SEHRİNDE BULUSTULAR.

FAKAT BULUSANLAR TÜRK VE ERMENİ DEVLETLERİNİN RESMI DIPLOMATLARI DEĞİL.  
ÇOGU TARİH PROFÖSERİ. NIÇİN? ÇUNKU BU TARİHÇİLER ARALARINDA KONUSUCAKLARMIS. 1915-TE, TÜRKLERİN ERMENİLERE TATBİK ETTİKLERİ KATLIAN SOYKIRİMİNİ? SOYKIRİMİ DEĞİL MI?

YAZIK, ÇOK YAZIK. BU PROFÖSOR DENİLENLER HAKKİ PROFÖSORMÜ? EGER HAKKİ PROFÖSOR İSELER, 1915-DE İSTANBULDA ELÇİLERİ BULUNAN BÜTÜN DEVLETLERİN ARSİVLERİNDE 1915-TE TÜRKLERİN ERMENİ MILLETİNE YAPTIKLARININ, TARİHİN HİC BİR DEVRİNDE BENZERİ OLMIYAN KORKUNÇ BİR SOYKIRIMI OLDUGUNU ISBAT EDEN BINLERCE RAPOR BULUNDUGUNU BILIRLER.

VE BU HAKİKATLERİ TÜRKLER DE ÇOK İYİ BILİR. HEM DE YALNIZ PROFÖSÖRLER DEĞİL.  
BÜTÜN TÜRK JANDARMALARI, BÜTÜN TÜRK DEVLET MEMURLARI BILİR. VE BİLHAŞA TÜRK AHALİSİ, ERMENİ GÂVURLARINI NASIL KESTİKLERNİ, KENDİ ARALARINDA KONUSURKEN BİRBİRİLERİNE İFTİHARLA ANLATıRLAR.

EFENDİLER, NIYE PROFÖSÖRLERLE ZAMAN KAYBEDİYOR SUNUZ.  
GİDİN TÜRK AHALİSİNE SORUN. ONLAR ÇOK İYİ BILİR, KENDİ YAPTIKLARI SOYKIRİMİNİ.  
TÜRK PROFÖSÖRLERİNİN, ERMENİ PROFÖSÖRLERİ İLE KONUSMALARINA GELİNCE BU KONUSMALARIN BELLİ BASLI FAYDALARINI SIRALAMAYA ÇALISALIM.

- 1.- BU KONUSMALAR, HAVANDA ÇOK İYİ SU DÖVMIYE YARAR.
- 2.- BU KONUSMALAR TÜRKLERE, ÇOK İYİ ZAMAN KAZANDIRMAYA YARAR.
- 3.- BU KONUSMALAR ERMENİLERİ ÇOK İYİ UYUTMAYA YARAR.

θ. Q.

**“MINNESOTA” Ի ՄԵԶ ՀՐԵԱՅ ՓՐՈՖԵՍՈՐՆԵՐՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ  
ԹՈՒՐԲ - ՀԱՅԿԱԿԱՆ “ՉԻՖՏԵ-TELLI”**

Հրեաները շա՞տ կը սիրեն հայերը, որ թուրքերուն և հայերուն հաշտուելուն համար կ'աշխատին:  
Թէ ոչ, 24 Ապրիլ 1915-ի հայկական ցեղասպանութեան մէջ Սելանիկի հրեաներուն խաղացած  
դերին մէջտեղ ելլալէ՞ն կը վախնան:

Կը հրապարակենք թուրքերուն [ԻԲԲ թէ] 24ԻՏՑԱՌ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՄԻ ՆՆԵՍՈԹԱՅԻ ԹՈՒՐԲ - ՀԱՅԿԱԿԱՆ «ՉԻՖԹԵ-ԹԵԼԼԻ» Ն  
Տարիներէ ի վեր, ամերիկացիներու առաջնորդութեամբ, արեւմտեան պետութիւնները հայերը  
թուրքերուն հետ հաշտուելու ստիպողութեան կ'ենթարկեն:

Ինչո՞ւ արդեօք: Որովհետեւ Արեւմտեան պետութիւնները շա՞տ կը սիրեն հայերը: Թէ ոչ, հայ-  
կական ցեղասպանութեան խսկական պատճառին և խսկական պատասխանատուններուն մէջտեղ ել-  
լալէն վախցող մութ ուժե՞ր կան:

Անպայման, այս գործին մէջ, առեղծուած մը կայ, որ ամերիկացիները այսքան կը ծնշեն հայե-  
րուն, որ համաձայնին թուրքերուն հետ:

Վերջին ամիսներուն, թուրքերը և հայերը, Ամերիկայի Մինսնսօթա քաղաքին մէջ տեսակցեցան:  
Բայց տեսակցողները՝ թուրք և հայ պետութեանց դիւանագէտները չեն:

Շատերը, Պատմութեան փրօֆէսօրներ են: Ինչո՞ւ: Որովհետեւ, այս պատմագէտները, իրենց  
միջեւ պիտի բանակցին եղեր ծշելու համար, թէ 1915-ին թուրքերուն հայերուն դէմ կատարած  
սպանութ ցեղասպանութի՞ւն է, թէ՞ ցեղասպանութիւն չէ:

Մե՛ղք, շատ մեղք: Այս փրօֆէսօր ըսուածները եթէ խսկական պատմագէտներ են, շատ լաւ գի-  
տեն ուրեմն, որ 1915-ին Պոլսոյ մէջ, դեսպանատուն ունեցող բոլոր պետութիւններուն արխիւններուն  
մէջ, հազարներով տեղեկագիրներ կան, որոնք կը փաստեն, թէ 1915-ին կատարուածը, Պատմու-  
թեան որեւէ շրջանին մէջ իր նմանը չունեցող զարհուրելի Ցեղասպանութիւն մըն է:

Եւ այս իրականութիւնները թուրքերն ալ շատ լաւ գիտեն: Եւ ոչ միայն փրօֆէսօր թուրքերը: Բո-  
լոր թուրք ժանտարմաները, բոլոր թուրք պետական պաշտօնէութիւնը գիտեն: Եւ մանաւանդ՝ թուրք  
ժողովուրդը գիտէ: Անոնք, իրարու հետ խօսած ատեն, հպարտութեամբ կը պատմեն, թէ ինչպէս  
ջարդած են հայ Gavur-ները:

Էֆենտիններ, ինչո՞ւ պատմագէտներով ատեն կը կորսնցնէք: Գացէք թուրք ժողովուրդին հարցու-  
ցէք: Անոնք շատ լաւ գիտեն իրենց կատարած ցեղասպանութիւնը:

Գալով թուրք պատմագէտներուն հայ պատմագէտներուն հետ կատարած բանակցութիւններուն՝  
ասոնց առաջնակարգ օգուտները ծշելու ջանանք՝

1.— Այս բանակցութիւնները շատ օգտակար են՝ «հաւան»ի մէջ [սանդ] ջուր ծեծելու համար:

2.— Այս բանակցութիւնները շատ օգտակար են՝ թուրքերուն ժամանակ շահեցնելու համար:

3.— Այս բանակցութիւնները շատ օգտակար են՝ հայերը քնացնելու համար:

8. 2.

## ԾԱՅՐԱԳՈՅՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆ ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ԶԻՖԹՃԵԱՆԻՆ

Կիրակի, 18 Մայիս 2003-ին, Անդրիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կարողիկոսի, Ծայրագոյն Վարդապետութեան աստիճան ստացաւ Կարողիկոսարանի Տեղեկատուական ու Յարաբերութեանց Բաժանմունքի վարիչ՝ Գրիգոր Վրդ. Զիֆթճեան:

Մայր Տաճարի մէջ կատարուող արարողութեան ընթացքին, ձեռամբ Կարողիկոսի Վեհափառ Հայրապետը հարցադրեց ընծայեալը հաւատքի խոստովանութեան և Ուղափառ վարդապետութեան կանոնական հարցերով և հրաւիրեց զինք

հետեւիլ մեր տուրք հայրապետներու Ուղափառ դաւանութեան: Ապա ընծայեալ Հայր Սուրբ Կարդաց Հաւատոյ հանգանակը, ի վկայութիւն իր անխախտ հաւատքին ու Առանձական Մայրենի եկեղեցւոյ դաւանանքին:

Մեր եկեղեցւոյ կեանքը վերանորոգելու հրամայական անհրաժեշտութեան անդրադառնպով, Նորին Սրբութիւնը առաջնահերք նկատեց հայ հոգեւորականին հոգեմտաւոր վերանորոգումը ու բարեկարգումը, որպէսզի կարելի դառնայ հայ եկեղեցւոյ վերանորոգումը: Վեհափառ Հայրապետը հիմնական ցորս կէտերով ներկայացուց հայ հոգեւորականին դերը ու անոր գոյութեան իմաստը դիտեց հայ եկեղեցւոյ առաքելութեան նամրուն մէջ: Ա.՝ Հաւատք, Բ.՝ Հաւատարմութիւն, Գ.՝ Ուտում և Դ.՝ Ծառայութիւն:

Հայ հոգեւորականութեան կեանքին մէջ ուժացող այս երեւոյքները մատնանշելով, Վեհափառ Հայրապետը շեշտեց անոնց կենսական կարեւորութիւնը, ի խնդիր եկեղեցւոյ պայծառութեան ու յառաջիմութեան: «Ներկայ աշխարհի նոր պայմաններուն դիմաց հաւատքի բուլացումը ներելի չէ հոգեւորականին համար, իսկ հաւատարմութիւնը անհրաժեշտութիւն է հանդէպ իր եկեղեցւոյ դարաւոր աւանդութիւններուն ու դաւանանքին: Ուտումը, կրութիւնը միայն համալսարանական աստիճաններով չ'իմացուիր, այլ հոգեմտաւոր կազմաւորումով ու պատրաստութեամբ: Ի վերջոյ, այս բոլորը կ'իմաստաւորուին ծառայութեամբ: Մեծի Տաճան Կիլիկիոյ Կարողիկոսութիւնը իր միարանութեամբ, Դպրեվանենով ու բոլոր կառոյցներով կոչուած է ծառայելու Քրիստոսի, մեր եկեղեցւոյ ու ժողովուրդին» ըստ Վեհափառ Հայրապետը:

Հայրապետական պատգամի վերջին բաժնով, Վեհափառ Հայրապետը կոչ ուղղեց բոլոր հոգեւորականներուն, յանձնառութեամբ ու պատրաստականութեան ոգիով ծառայել ի պայծառութիւն մայրենի մեր տուրք եկեղեցին ու մեր ժողովուրդին:

«ՆԱՅԻՐԻ» կը չնորհաւորէ Մեծի Տաճան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միարանութեան երիտասարդ ու խոստմալից անդամներէն, գիրքերու Հեղինակ Հայր Գրիգոր Վրդ. Զիֆթճեանը, Մայրագոյն Վարդապետութեան աստիճան ստանալուն առթիւ:



ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՈՒԵՆՔ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐՈՒՆ

## ԿԵՂԾ ՀԵՐՈՍՆԵՐ ԵՒ ԻՍԿԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ

Ո՞ՎՔԵՐ ԷԻՆ ԶԱՆԴԾՐԸ-Ի  
ԱՔՍՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՄԷԶ,  
ՄԱԼՄԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ՓՐԿՈՒԻԼ  
ՈՒԶՈՂ «ՀԱՄԲԱՒԱԽՈՐ ՄԵԾԵՐԸ»

...ԱՅՆ ՏԵՍԱԿ ԽՈՎ ՄԸ ՏԱՐԱԾՈՒԱԾ ԷՐ  
ԱՔՍՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՄԷԶ, ԹԷ ՄԱԼՄԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ  
ԸՆԴՈՒՆՈՂԸ ԱԶԱՏ ՊԻՏԻ ԱՐՁԱԿՈՒԷՐ:  
...ԽԵՂԾ ՍԵՒԱԿ, ԱՄԲՈՂՋ ԵՐԿՈՒ ՕՐ ԱԾԽԱՏԵՅԱԻ, ՀԱՄՈՁԵԼՈՒ  
ՀԱՄԱՐ ՏԿԱՐ ՀՈԳԻՆԵՐԸ, ՈՐ ՄԱՀԸ ՄԱԼՄԵՏԱԿԱՆԱՅՈՒՄԸՆ  
ԱԻԵԼԻ ԱՐԵԿ Է, ԵՒ ԶԱՏ-ԶԱՏ ԵՐԴՈՒՄ ԸՆԵԼ ՏՈՒԻՆ ԱՄԷՆ ԱՆՈՆՅ.  
ՈՐՈՆՅ ՀՈԳԻՆ ՈՒԺԻՆ ՎՐԱՅ ԿԱՍԿԱԾ ՈՒՆԷՐ, ԹԷ՝ ՀԱԽԱՏԱՐԻՄ  
ՊԻՏԻ ՄՆԱՆ ԻՐԵՆՅ ԼՈՅՍ-ՀԱԽԱՏԵՐԻՆ:

ՄԻԹԱՅԵԼ ԾԱՄԱՆՃԵԱՆ

«ՅՈՒԾԱՐՉԱՆ ԱՊՐԻԼ 24-Ի» - Կ. ՊՈԼԻՄ 1919

ԱՔՍՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՓՈՐՁԱՔԱՐ ՄԸՆ ԷՐ ԱՐԺԱՆԻՔՆԵՐՈՒԻ:  
ԱՄԷՆ ԱՆԶ Ի ՑԱՅՏ ԿՈՒ ԳԱՐ ԻՍԿԱԿԱՆ ԻՐ ԳՈՅՆՈՎ: ՈՄԱՆՅ ·  
ՀԱՄԲԱՒԱՆ ՊԱՏՈՒԱՆԴԱՆԸ ԿԸ ԳԱՅԹԵՐ ԱՆԲԱՐԶ. ՄԻՆՅ  
ՈՒՐԻԾՆԵՐ ՆՈՐ ԿԸ ԿԵՐՏԵՒԻՆ ԿՈԹՈՂՆԵՐԸ ԱՌԻՆՔՆՈՒ ՀԻԱՅՄԱՆ:  
ՅՈՎՀԱՆ Շ. ՎՐԴ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

«ԷԶ ՄԸ ԱՔՍՈՐԱԿԱՆ ՅԻԾԱՏԱԿԱՆԵՐԵՍ»  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈԶՆԱԿ» - 7 ՅՈՒՆՈՒԱՐ 1922 - Ա.Մ.Ն.

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
ԿՐԵԺ ՈՒՒՔՆԵԱՆ

Ո՞վքեր էին 1919-ին, Մի-  
քայել Շամտանճեանին մատ-  
նանշած Զանդըրը-ի այն աքսորեալ մտա-  
տրականները, որոնց մահմետականանա-  
լով կեանքերնին ազատել ուզած էին:

Ո՞վքեր էին 1922-ին, Յովհան Վրդ. Կա-  
րապետեանին յիշատակած այն համբաւա-  
տրները՝ «Որոնց համբաւին պատուան-  
դանը կը գայթէր անդարձ»:

Միքայել Շամտանճեան խնայած էր  
այս տկարացած հոգիները՝ պատմութեան  
դատաստանին առջեւ, և չէր տուած  
անոնց անունները:

Յովհան Վրդ. Կարապետեանն ալ չէ  
տուած, այս տկարացած հոգիներուն  
անունները:

Բայց ան, իբր աւանդապահ հայ կրօ-  
նական՝ իր ընդվզումը յայտնած է այս  
տկարացած հոգիներուն հանդէպ, որոնք  
համբաւատրներ էին և սակայն, աքսորա-  
կանի փորձաքարին առջեւ, իրենց իսկա-  
կան գոյնը մէջտեղ ելած էր, և համբաւի  
պատուանդանը «կը գայթէր անդարձ»:

Մենք այստեղ պիտի չուզէինք այս մա-  
սին արտայայտուիլ. թէ՝ արդեօք ո՞վքեր  
կրնային ըլլալ Զանդըրը-ի աքսորեալնե-  
րուն մէջէն այդ համբաւատրները, որոնց  
համբաւը կը «գայթէր անդարձ»:

Բայց երբ տեսանք. թէ իսկական «հե-  
րոս և տաղանդ» Ռուբէն Սեւակը Սփիլուքի  
մէջ դաշնակցականներուն կողմէ ան-  
տեսուած և մոռացութեան ենթարկուած էր.  
և նաեւ Հայաստանի մէջ ալ, նոյն կուսակ-  
ցութեան ազդեցութեամբ, իր արժէքը նոյն-  
պէս չէր գնահատուած, և տակաւին ուրիշ  
Սեւակ մը մէջտեղ բերուած էր, բոլորովին  
շուրջի մէջ ծգելով իսկական Սեւակը՝ այն  
օրէն ի վեր որոշեցինք պաշտպանել Ռուբէն Սեւակին սուրբ յիշատակը և ջանացինք  
իրականութիւնները մէջտեղ հանել:

«ՆԱՅԻՐԻ»ի անցեալ թիւերուն մէջ, Ռ. սեւակի հանդէպ շատ անիրաւ գտնուած  
Պալաքեանին մասին արտայայտուած էինք:

Այստեղ պիտի շարունակենք, կրկին Ռուբէն Սեւակի հանդէպ անիրաւ քննադա-  
տութիւններ կատարող ուրիշ դաշնակցականամիտ աղանդատրի մը՝ Յակոբ Օշա-  
կանի մասին խօսիլ:

Յակոբ Օշական, ինքնահաւանութեան գագաթնակէտին հասած, բայց իսկապէ՞ս  
վերլուծելու հմտութեան տէր քննադատ մըն էր:

Յակոբ Օշականի քննադատութիւնները՝ հայ գրողներու հանդէպ այնքան խիստ  
եղած են, որ անոր «մահացու հարուածներէն» հազիւ քանի մը հոգի փրկուած են:

Բնական է, բոլորեն «մեծ»ը ինքն է անկասկած, և թերեւս ալ, մեծերէն յէկը՝ Դանիէլ Կարուժանը:

Այս մեծամիտ քննադատոր, Շայեցէք, թէ ինչ կ'ըսէ Ռուբեն Սեւակի մասին:

«Այս աշխատանքները առաջ, Սեւակի գործին [թերթողական] եօթը ութերորդը ես կը Շետեմ այն արդար փոսը մոռացութեան, ուր իշած են այնքան ուրիշ շքեղ անուն-Շերով պաշտպանուած կորանքներ...»:

Եւ կը շարունակէ... «Ի՞ր ժամանակին, ասոր ունայնամտութեան, դժբախտութեան կը քեզը-նեմ Սիւակի գործին ճախողանքր...»:

Յետոյ. Կ'ընէ քանի մը գնահատական խօսքեր Ռ. Սեւակի մասին: Բայց մէկը սպաննելու լետոյ, չէ՞ կրնար զինք կեանքի բերել վերստին:

Յետ մահու, Յակոբ Օշականին «Արեւմտահայ Գրականութեան Համապատկեր» անունով ուսումնասիրութիւնը հրատարակուած է տասը հատորներով։

Վերջինը՝ տասներորդ և մեծածաւալ 850 էջնց հատորը, յատկացուած է միայն «Մեծատաղանդ գրագէտ Յակոբ Օշականին»:

Իր մեծամոլութեան չափանիշը աւելի լաւ բացատրելու համար, պիտի նշենք հետեւեալ եղելութիւնը:

«Օշական կտակ ըրած է. որ բաղուի Օշականի յԵջ. Մեսրոպ Մաշտոցի քով»:

Բայց, մեզի համար, ի՞նչ է ամենէց կարեւորը։ Այս մեծապատիւ մեծամոլը իր տասը հատորնոց հայ գրականութեան պատմութեան գործին մէջ, հայ ազգին ամենէց ճակատագրական ողբերգութեան՝ 24 Ապրիլ 1915-ի Եղեռնին. քանի մը հայացիկ տողերով կ'անդրադառնայ միայն։ Բայց, Ռ. Սեւակի Զանդըրը-ի հերոսական կեանցին մասին. ոչ իսկ տող մը գրած է։

ԲՅԱԿԱՆ Է՝ այս «Արուեստը Արուեստից համար» տխմար գաղափարականից հաւատացողը, այս տեսակի «հասարակ» Ծիփերով չէր կրնար զբաղիլ:

Ծառ յատկանշական է Օաեւ, դաշնակցական Մինաս Թէօլէօլեանին «Դար Մը Գործանութիւն» գիրքը:

Երկրորդ Աշխարհամարտեն յետոյ, Պոլիսէն հեռացող և Ամերիկայի մէջ երկար տարիներ իր կուսակցութեան պաշտօնաթերթից «Հայրենիք»ի խմբագրութիւնը վարած Մինաս Թէօլէօլեան, իր գիրքին մէջ 1920-ին, Ռուբէն Տէր Մինասեանի հետ Արեւմտեան Հայաստանին կորուստին գլխաւոր պատասխանատուներէն՝ դաշնակցական ղեկավար Լեւոն Շանթին 25 էջ յատկացուցած է, իսկ Ռուբէն Սեւակին՝ միայն 5 էջ:

Եւ ամէցէց հետաքրքրակացը՝  
աւելի շատ իր բանաստեղծութիւններով ծանօթ Ռուբեց Սեւակէց,  
իբր Շմոյշ իր գիրքին մէջ ոչ մէկ բանաստեղծութիւն մէջբերած է. այլ Միայն «Բժիշկի Գիրքէց Փրցուած Եցեր»-ու շարքէց «Կռունկը»:



Այստեղ կը հրատարակենք. Եոյն ծանօթ կուսակցութեան մէկ ուրիշ պաշտօնաթերթէն՝ «Ազդակ»ի

1908-ին. Պոլիս հրատարակած առաջին թիվին նկարը:

Եւ «Ազդակ»ի մէջ, թերթին գրեթէ առաջին թիւերէն՝ Մարտ 1909-էն սկսեալ. հրատարակուած են Ռուբէն Սեւակին բանաստեղծութիւնները.՝ «Հայրը», «Վերջին Արքան», «Պիտի մեռնի», «Իժը», «Կարմիր Դրօշակը», «Ով իմ Հայրենիք», «Ինչպէս երբեմն», «Զանգակներ Զանգակներ», «Աղջիկը», «Եհովային Արցունքը» և «Պոլսոյ Որովայնին մէջ»:

Ռուբէն Սեւակի ամէցէն ծանօթ այս տասնըմէկ բանաստեղծութիւններն հրատարակուած են «Ազդակ»ին մէջ. բոլորն ալ 1909 տարուան ընթացքին:

Եւ լա՛ւ ուշադրութիւն ըրէք. «Ազդակ»ի խմբագիրներուն անուններուն: Սէկուն անունն է՝ Ծաւարշ Միսաքեանին հետ. թերթ ալ հրատարակած էին:

Նոյնիսկ Ռուբէն Սեւակ. նոյն տարիներուն. Պոլսոյ մէջ կարճ միջոց մը. Ծաւարշ Միսաքեանին հետ. թերթ ալ հրատարակած էին:

1915-ի Եղեռնէն փրկուող լինչպէ՞ս... չենք գիտեր! Ծաւարշ Միսաքեանը. 1925-էն սկսեալ. Փարիզի մէջ. «Յառաջ» օրաթերը հրատարակած է:

Այստեղ հարց կու տանք.՝ Ռուբէն Սեւակին գրիչի ընկերը եղած Ծաւարշ Միսաքեանը արդեօք. իր «Յառաջ» թերթին մէջ. ո՞ր աստիճան նահատակ-բանաստեղծ Ռուբէն Սեւակին մասին արտայայտըւած է:

Մենք տեղեակ չենք:

\*\*

1989-ին. Մոսկուայի մէջ անյայտացած [մէծ հաւանականութեամբ Ազերիներու կողմէ նահատակուած] ֆրանսահայ բանաստեղծ և արուեստաբան Կարիկ Պասմանեան. Ապրիլ 1976-ին. Փարիզի մէջ. շատ հետաքրքրական բանախօսութիւն մը կը կատարէ. «Նահատակ բանաստեղծներ՝ Սիամանթօ. Վարուժան. Ռուբէն Սեւակ» ընդհ. խորագրով:

Եւ Կարիկ Պասմանեան. Ռուբէն Սեւակի մասին բաւական ծանօթութիւններ տալէ և անոր մասին շատ բարձր գնահատանքով արտայայտուելէ յետոյ. սա շատ իրատես գաղափարը կը յայտնէ'.

«ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿ ՄԵԿՈՒՍԱԾԱԾ ԱՆՈՒՆ Է ԾԱՐԺՈՒՄԻ ՄԵԾԵՐՈՒՆ ԶՈՎ։ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՆՈՒԱԶ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՏՈՒԱԾ Է ԱՆՈՐ. ԵՒ ԼՈՒԹԵԱՆ ՊԱՏ ՄԸ ԿԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՇՈՒՐՉ»։

Կարիկ Պասմանեան, շատ բացառիկ. խոր աթափան և ախտաճանաչում մը կատարած է. Ռուբեն Սեւակի մոռացութեան ենթարկուելուն մասին։

Այո. լուրեան

պատ մը կայ. Ռուբեն Սեւակին շուրջ։

Այս պատը. մեծ հայրենասէր Ռուբեն Սեւակին դէմ՝ բոլոր իրաւ հայրենասէրներուն թշնամի դաշնակցական աղանդաւորներուն հիւսած լուրեան պատն է։

\*\*\*

1985-ին էր. որ առաջին անգամ տեսանք. հայրենի գեղանկարիչ՝ Գրիգոր Խանճեանի մեծածաւալ «Վարդանանց» անունը կրող իդաներկ պաստառը։ Խսկապէս՝ շատ տպաւորիչ էր պաստառին երեւյթը։



Վարդանանցի պատերազմը Շերկայացնող այս պաստառին վրայ կը տեսնուեր Աւարայրի պատերազմին հերոսներուն տիպարները և նաեւ՝ 1915-ի Եղենի նահատակներէն ոմանց նկարները. ինչպէս՝ Սիամանթօ և Դանիէլ Վարուժան։

Պաստառին վրայ կար նաեւ՝ Եղիշէ Զարենցի նկարը։

Զհասկցանք. թէ Եղիշէ Զարենց կամ միւսները ի՞նչ տեսակ հերոսութիւն կատարած էին, որ արժանացած էին Վարդանանցի հերոսներուն շարքին դասուելու։

Մենք շատ փնտռեցինք նաեւ. նահատակ Ռուբեն Սեւակին նկարը այս (→է.թ 3)

## ԿԵՂԾ ՀԵՐՈՍՆԵՐ ԵՒ ԻՍԿԱԿԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ ... (Ժար. Էջ 2-ԷՇ)

պատառին վրայ. բայց՝ զգտանք:

Եւ այս անտեսումն շատ զգացուած, երեւան՝ Գրիգոր Խանճեանին նամակ մը գրեցինք: Եւ այս նամակին հետ իրեն ուղարկեցինք նաև, «Ռուբէն Սեւակ և Փրցուելիք Ռուբէներ» գիրքը, որ մեծ գեղանկարիչը ճանչնայ, թէ ո՞վ է Ռուբէն Սեւակ:

Նամակին մէջ, հետեւեալ տողերը գրեցինք.

«Զեր Վարդանանց անունը կրող պատառին մէջ, չտեսանք 1915-ի նահատակ հերոսներէն՝ Ռուբէն Սեւակին տիպարը:

Կը կարծենք, որ այս պակասը, պատառին վաւերականութենէն շատ բան կորսընցել պիտի տայ»:

Բնական է՝ ոչ մէկ պատասխան ստացանք, Գրիգոր Խանճեանէն:

Տարիներ անցան... Եւ 1990-թ. ներուն, լաւ հասկցանք Գրիգոր Խանճեանին ով ըլլալը:

Անկախաբար իր գեղանկարիչի տաղանդէն՝ ան իսկական պատեհապաշտ մըն էր թէ՝ արուեստի մարզին մէջ և թէ՝ իր քաղաքական կեանցին:

Եւ յիշենք որ 1988-ին, Սովետական Հայաստանը փլցելու համար, Սիլվա Կապուտիկեանի հետ ձեռք-ձեռքի տուած, հեռատեսիլէն, պատեհապաշտ ելոյթներ կ'ունենային, մոռնալով որ, մինչ այդ, սրտանց և խանդավառութեամբ կը փառաբացէին Սովետական վարչաձեւը:

Բայց ասոնք, ցաւայի է հաստատելը, որ հայոց առաջին և վերջին պատեհապաշտները չեին:

Եւ Սովետական Հայաստանը ուրացող Գրիգոր Խանճեանի պէս պատեհապաշտ մը, բնական է, որ կարողութիւնը պիտի չունենար ճանչնալու, Վարդանանցի հերոսներուն շառաւիդ Ռուբէն Սեւակը:

\* \*

Մենք, Ռուբէն Սեւակի Սուրբ Յիշատակին դէմ կատարուած անարդարութիւններէն ընդվզելով, կրկին պիտի վերադառնանք Զանդըրը-ի վերապրող աքսորեալներուն վկայութիւններուն՝

Յիշայէլ Շամտանճեան կը վկայէր աքսորեալ մտաւրականներու մասին որոնք. մահմետականութիւն ընդունելով, կեանքերնին ազատել ուզած էին:

Յովհան Վրդ. Կարապետեան. աւելի յստակացուցած է իր վկայութիւնը ըսելով՝ «Աքսորական կեանքը փորձաքար մըն էր արժանիքներու: Ամէն անձ ի յայտ կու գար իսկական իր գոյնով:

Ոմանց համբաւին պատուանդանը, կը գայթէր անդարձ. Մինչ ուրիշներ նոր կը կերտէին կոթողները առինքնող հիացման»:

Ռուբէն Սեւակի հանդէպ կատարուած անարդարութեան դէմ բողոքելով. կը հարցնենք՝

Ո՞վքեր էին Զանդըրը-ի այն համբաւաւրները, որոնց համբաւին պատուանդանը կը գայթէր անդարձ:

Մենք այստեղ. միայն և միայն, Ռուբէն Սեւակի Սուրբ Յիշատակը կը պաշտպանենք և արդարութիւն կ'ուզենք Ռուբէն Սեւակին համար:

Եւ կը փնտռենք իրականութիւնը որ թերեւս, ժամանակի ընթացքին, Զանդըրըի մէջ, հոգիները տկարանալով մահմետականութիւնը ընդունելու պատրաստուած համբաւաւորներու մասին, մինչեւ հիմա անյատ և գաղտնի մնացած վկայութիւնները լոյս աշխարհ կ'ելլեն:

Այս Միջեւ հիմա, գաղտնի և անյայտ մնացած  
վկայութիւններուն և փաստերուն յայտնուիլը կամ  
հաճուիլը քաջալերելու համար, պիտի օշենք կարգ մը  
գրութիւններ և վկայութիւններ՝ առանց մեկնաբանու-  
թեան:

Թերեւս, այս տուեալները. շաղկապը կ'ըլլան, նոր իրականութիւններու մէջտեղ ելլելուն:

\* \* \*

«ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ  
-ՆԱՍԱԿԱՆԻ»

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ «ՀԱՅԱՍՏԱՆ»  
ԵՐԵՒԱՆ 1965

«ՖՐԱՆՍԵՐԵԿԱ թարգմանութիւն»

146. Բիեր Մաազ-ին  
1912 Յունիս 17, Թոքատ

ԴԱՐԻԺԱՆ

ՀԱՅ-ՏՀ ԼՐԱՐԵՎԲԱՆ  
ԵՂՋ 1965

«Տրիբոլի-ի պատերազմն ինձ չի հետաքրքրում, պայմանով. որ դա չի վերջանայ Թուրքիայի մասնատումով. որովհետեւ մենք հիմա, համերաշխ ենք ապրում մահմետականների հետ. իսկ Թուրքիայի մասնատումը աղետաւոր կը լինի Հայաստանի ապագայի համար: Մենք համոզուած ենք դրան: ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Իմ ամբողջ ուզածն այդ էր: Տրիպոլիի պատերազմն ինձ շի հիանքը բռնում, ողայմանով, որ դա չլիրջանա Թուրքիայի մասնաւումով, որովհետև մինչ հիմա համերաշխ ենք ապրում մահմեդականների հետ, իսկ Թուրքիայի մասնաւումը աղետավոր կլինի Հայաստանի ապագայի համար. մենք համոզված ենք դրան:

ՑԻՇԱՏԱԿՆԵՐ ՈՈՒՔԵՆ **ՍԵՒԱԿԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԵՆ**

Զանուրը աջսորուած և վերապրող բժիշկ Վահան Ալթունեանի վկայութիւնը...

«Φουραյի օր մըն էր: Ըստ սովորութեան՝ գետեզրը հաւաքուած էինք: Ոմանք. թերը կը կարդային. ուրիշներ նարտով զբաղած էին. իսկ մենք. Վարուժանին շուրջը հաւաքուած. Թուրք բանաստեղծութեան մասին իր քննադատութիւններուն կ'ուն-կրնդրէինք»:

Բժիշկ՝ Վահան Ալբուղեան  
«Հայ Բուժակ» Կ. Պոլիս, Մարտ 1920

Հետեւեալ գրութիւնը Չանդըրը-ի աքսորեալներունը չէ. այլ՝ Այաշ աքսորուած Ատոմ Եարճանեանի (Սիամանթօ-ի) Այաշէն իր մօրը գրած թրքերէն բացիկին հա-  
ւերէն բառամանութիւնը:

Առ ի տեղեկութիւն կը հրատարակենք այս նամակը, որ թուրքերուն լուծին տակ «չարչարուող» հայ առաջնակարգ բանաստեղծներէն՝ Սիամանթօ-ին հոգեվիճակը կը մարմնացնէ և կը մատնէ:

## ԱՐԵՒՄԱՆՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ

### **ՆԱԽԿԱՆԻ -**

ԵՐԵՒԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

-ԵՐԵՒԱՆ 1972

## ՆԱԶԵՆԻ ԵԱՐԾԱՆԵԱՆԻՆ

«Սիրելի մայրիկս.

Այս օրուան թղթատարով մի դիմում ուղարկեցի Պոլսոյ պատգամաւոր Պետրոս Էֆենտի Հալաճեանին:

Անմիջապէս տես եղբայրս և ուղարկիր այդ յարգելի անձնաւորութեան մօտ. թող կատարի հարկ եղած դիմումը և ինձ այստեղից ազատելու միջոցը գտնի. ՈՐՈՎՃԵՏԵՒ ԱԾԽԱՐՀ ԳԻՏԻ. ՈՐ ԵՍ ՈՉ ՄԻ ԱՌՆՉՈՒԹԻՒՆ ԶԵՄ ՈՒՆԵՑԵԼ ԶԱՂԱՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԵՒ Ուրիշ ոչ մի յանցանց առաջացնող արարքից էլ բացարձակապէս տեղեկութիւն չունեմ: Մի քիչ անհանգստացայ. շփոթութեան մի մատնուիր. միայն գնացէք Հալաճեան Էֆենտի-ի մօտ, թող հետապնդի իմ դիմումը:

Շենագեան քեռուս  
բարեւներ:

## ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՆԱՄԱԿԱՆԻ

Դրական ժառանգություն

ԴԻՐՔ. VI

Բարեւներս ձեզ բոլորիդ:  
ԱՏՈՄ ԵԱՐԾԱՆԵԱՆ»

## Սիրելի մայրիկս

Այս օրվաւ թղթատարով մի դիմում ուղարկեցի Պոլսի պատգամաւոր Պետրոս Էֆենտի Հալաճեանին! Անմիջապէս տես եղբայրս և ուղարկիր այդ հարգելի անձնավորության մոտ, թող կատարի հարկ եղած դիմումը և ինձ ժամ առաջ այստեղից ազատելու միջոցը գտնի, որովհետեւ աշխարհը զիտի, որ Ես ոչ մի առնչություն չեմ ունեցել քաղաքականության հետ և ուրիշ մի հանցանք առաջացնող արարքից էլ բացարձակապէս տհղեկություն չունեմ, Մի քիչ անհանգստացա, շփոթության մի մատնվիր. միայն գնացեք Հալաճեան Էֆենտի-դիլի մոտ, թող հետապնդի իմ դիմումը:

Բարեներս ձեզ բոլորիդ:

Առողջ Ֆարենինան

Պիտի ուզեկինք ճիշտ հասկցուիլ: Հայ բոլոր նահատակ մտաւորականները. թրքական բարբարոսութեան զոհ եղած. յարգելի են ու խնկելի մեզի համար:

Եւ սակայն, յանուն ճշմարտութեան. պատմական եղելութիւններու անաշառ ներկայացումին ու նաև իւրաքանչիւր նահատակ իրեն յատուկ հոգեմտաւոր ծիրքերով արժեւորած ըլլալու համար. հարկ է որ անոնց եաթաղանի տակ ցուցաբերած վարքը. ամենայն հարազատութեամբ արծանագրուի պատմութեան կողմէ: (Ծարք էջ 4)

**TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ  
IGDIRİN GEDIKLİ KÖYÜNDE ERMENİLER TARAFINDAN  
ÖLDÜRÜLEN TÜRKLERE AIT TOPLU MEZAR BULUNMUS  
SIZE BİR SEY SOYLIYELİM MI ?**

BU TOPLU MEZAR HİKAYESİ MODASI GEÇMIS BIR PROPAGANDA OYNU.

BUNA ARTIK HERKES ALISTI. ADETA KANIKSADI BU PALAVRALARA.

TOPLU MEZARLAR YARATMA ISLERİ. GÖRÜNMEZ DUNYA PARA IMPARATORLUĞUNA BAĞLI. YANLIS HABERLER YAYMA TESKİLATININ MARIFETLERİNDENDİR.

ONLAR AYNI NUMARALARI YUGOSLAV BİRLİĞİNİ YİKMAK İÇİN UYGULADILAR.

YOK MILOSEVIĆ BOSNİAKLARI ÖLDURTMIŞ VE TOPLU MEZARLARA GÖMDURMIŞ.

YOK MILOSEVIĆ YUZBIN KOSOVOLU ARNAVUTU ÖLDÜRTEREK TOPLU MEZARLARA GÖMDURMIŞ. AMERİKALILAR YUGOSLAVYAYI YİKTİKTAN SONRA NE BOSNIADA NE DE KOSOVODA TOPLU MEZAR BULUNMADI.

FAKAT ONLAR, PALAVRALARI ORTAYA ÇIKMASIN DIYE. YÜZLERCE SENELİK MEZARLARDAN KEMİKLER ÇIKARARAK HOLIVUTA YARASIR BIR SENARYO UYGULADILAR.

AMERİKALILAR. SIMDI AYNI SENARYOYU IRAKTA OYNUYORLAR.

SÖZ DE. SADDAMIN ÖLDÜRTÜĞÜ INSANLARIN TOPLU MEZARLARINI BULMUSLAR.

FAKAT HABER ERTESİ GÜN BALON GİBİ SÖNDÜ. ÇUNKU NE TOPLU MEZAR BULUNDU. NE DE ÖLÜ.

FAKAT YALAN HABER. NE DE OLSA ZAVALLI VE AHMAK BEYİNLERDE BIR İZ BIRAKIR.

MALUM YA MESHUR SÖZDÜR.

“IFTIRA ET IFTIRA ET.

YALANIN ÇOGU GITSE BILE. AZI KALIR”

SIMDI SIZ DE IGDIRDA. MODASI GEÇMIS BU SENARYOYU OYNUYORSUNUZ.

KAZIN BAKALIM KAZIN. MUHAKKAK BIR SEY BULURSUNUZ.

ÖLÜ DEGİL AMA. ERMENİLERİN BESBIN SENELİK VATANI OLAN VE TÜRKLERİN 1915-TE ERMENİLERİ SOYKIRIMINA UGRATARAK CALDIGI BU TOPRAKLarda ERMENİLERDEN KALMA MEDENİYETİN KALINTILARINI BULURSUNUZ MUHAKKAK.

8. Q.

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԹԵՐՈՒՆ [ԻԲԻ ԹԵ] ՀԳԻՏՑԱՇ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
IGDIR-ի և GEDIKLI ԳԻՒՂԻՆ ՄԷԶ, ՀԱՅԵՐՈՒՆ ՄԵՌՑՈՒՑԱՇ  
ԹՈՒՐԹԵՐՈՒՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԱԻԱԲԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆ ԳՏՆՈՒԵՐ Է  
Ձեզի բան մը ըստ՝

Այս հաւաքական գերեզմանի պատմութիւնը, նորոյթը անցած քարոզչութեան խաղ մըն է:

Այս խաղնուն այլեւս ամէն մարդ վարժուեցաւ: Այս ծարոտուքները այլեւս ազդեցութիւն չեն գործեր:

Հաւաքական գերեզմաններու պատմութիւնը ստեղծելու գործերը՝ անտեսանելի, դրամի կայսրութեան կապուած և սուտ լուրեր տարածող կազմակերպութեան պարտականութիւններէն են:

Այս սուտեր տարածելու կազմակերպութիւնը նոյն դաւադրութիւնները՝ եռկոսլաւիոյ միութիւնը կործանելու համար կիրարկեցին:

Իր թէ Սիլոսեւիչը Պոսնիաքները սպաննել տուեր և հաւաքական գերեզմաններու մէջ թաղել տուեր է:

Իր թէ Սիլոսեւիչը Բոսովո-ի ալպանացիները սպաննել տուեր և հաւաքական գերեզմաններու մէջ թաղել տուեր է:

Ամերիկացիները, եռկոսլաւիան կործանելէ յետոյ՝ ոչ Պոսնիոյ և ոչ ալ Բոսովո-ի մէջ հաւաքական գերեզման գտնուեցաւ:

Բայց անոնք, իրենց սուտերը որպէսզի մէջտեղ չելլեն, հարիւրաւոր տարուան գերեզմաններէն ոսկորներ հանելով՝ հոլիվուտի վայել սենարիօ մը կիրարկեցին:

Ամերիկացիները հիմա, նոյն սենարիօ-ն իրաքի մէջ կը գործադրեն:

Իր թէ, Սատտամին սպաննել տուած մարդկանց հաւաքական գերեզմանները գտեր են:

Բայց այս լուրերուն, հետեւեալ օրը, սուտ ըլլալը մէջտեղ ելաւ:

Որովհետեւ, ո՞չ հաւաքական գերեզման գտնուեցաւ, ո՞չ ալ մեռել:

Բայց սուտ լուրը, որչափ ալ ըլլայ, խեղճ և տխմար ուղեղներուն վրայ հետք մը կը ծգէ:

Գիտէ՞ք այս ծանօթ ասացուածքը՝ «Զրպարտէ ու կրկին զրպարտէ: Սուտին նոյնիսկ շատը երթայ՝ բիշը կը մնայ»:

Հիմա, դուք ալ, նոյն նորոյթ ըլլալէ դադրած սենարիօ-ն, հԳԹԻՐ-ի մէջ կը խաղաք:

Փորեցէք նայինք, փորեցէք: Անպայման բան մը կը գտնէք:

Մեռել չէ, բայց հայերուն հինգ հազար տարուան հայրենիքը եղած և 1915-ին թուրքերուն, հայերը ցեղասպանութեան ենթարկելէ յետոյ գողցած այս հողերուն վրայ, հայերուն քաղաքակրթութեան բեկորները կը գտնէք անպայման:

ԳՆԱՀԱՏԱՆՔ՝ ՈՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ  
ԽՆԿԵԼԻ ՑԻԾԱՏԱԿԻՆ

ՈՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ -

ՄԷԿԸ ԱՅՆ ԱՆՈՒՆՆԵՐԷՆ, ՈՐՈՒՅ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ԿԵԱՆՔԸ ԿԱՄ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ  
ԿԸ ԿԱԽԱՐԴԵՆ ԶԻՒ:

ԻՐ ԵՂԵՐԱԿԱՆ ՄԱՀԵՆ ԵՏՔ, ԳԵՂԵՅԿԱՅԻ ԳՐԱԿԱՆ  
ԻՐ ՀՈՅԱԿԸ, ԴԱՐՁԱԻ ԻՐ ԴԵՄՔԸ ՀԵԶԻԱԹԱՅԻՆ ՈՒ  
ՀԵՐՈՍԱԿԱՆ ՆՈՅՆԻՍԿ.....

ԳԱՀԻՐԵ - 1946

ԳՈՒՐԳԵՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ  
«ՔԱՌՈՐԴ ԴԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ»

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(ԿՐԵԺ ՈՈՒԲԷՆԵԱՆ)



ՊԱՏԿԵՐԱՋԱՐԴ ՇԱԲԱՐԱԲԵՐԸ

Ա Զ Դ Ա Ց Ա Ն

ԳՐԱԿԱՆ-ԴԵՂԱՐՈՒԹՈՒՄԱԿԱՆ

ԴԻՏԱԿԱՆ


~~~~~

ՀԱՐՄԱ-ՏԱՐԱՆ

ԽՐԱԿՐԻԵԱԾ

ՀԱՅ. ՖԱԼԻՔԱՆԵԱՆ

ԱՅ. ԹԱՐԱՎԵՍԵԱՆ



Դ. ՏԱՐԻ, ՆՈՐ ՃՐԴԱՆ, ԹԻՒ 2

ՀԱՐԱԲ, 23 ՆՈՅԵՄԲԵՐ 1918

ՀԱՅ ՔԱՆԹԵՔՆԵՑ  
ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐՁԻՆ ՄԵԾ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐԸ

\*\*

3 Յունիս 2003 թուակիր  
«ՆԱՅԻՐԻ»ին մէջ նշած  
էինք, թէ Գրիգորիս Վրդ. Պալաքեան, իր  
800 էջնոց Զանդըրը-էն դէպի Տէր Զօր՝  
աքսորականի յուշերը ամփոփող «Հայ  
Գողգոթան» գիրքին մէջ, չէր զիշանած  
մէկ տող մ'անգամ գրել Ռուբէն Սեւակի  
Զանդըրը-ի հերոսական կեցուածքի  
մասին:

Եւ բանաստեղծ Կարիկ Պասմաճեա-  
սին ըսածին պէս՝ «Լռութեան պատ մը  
հիւսած էին Դաշնակցական որոշ աղան-  
դաւորներ, Ռուբէն Սեւակի շուրջ»:

Բայց գտնուեցան նոյն հատուածէն -  
գուցէ բացառիկ- «Արդարներ» ալ, որոնց  
ճեղքեցին այս լռութեան պատը և գրեցին  
«Ռուբէն Սեւակի պատմութիւնը» և հիա-  
ցումով արտայայտուեցան անոր «հերո-  
սական դէմքին» մասին:

Այս «Արդար»ներէն մէկն էր՝ գրակա-  
նագէտ Գուրգէն Մխիթարեանը:

ԱՅ, 1946-ին, Գահիրէ հրատարակուած  
«Զառորդ Դար Գրականութիւն» հատորին մէջ  
[մեզի համար անմոռանալի], սա տողերը գրած  
էր Ռուբէն Սեւակի մասին՝

«ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ...

Մէկը այն անուններէն, որոնց գրականութիւնը,  
կեանքը կամ ճակատագիրը կը կախարդեն զիս:

Իր եղերական մահէն ետք, գեղեցիացաւ գրական իր  
հոչակը, գարնաւ իր դէմքը հէֆիարային ու հերոսական  
նոյնիսկ, երբ պատմուեցաւ, թէ երիտասարդ հիւսնդ  
քրքուեիի մը սնարին վերեւ, կրցած էր պահել ան իր  
հաւասարակշռութիւնը, իր ազգային, ընտանեկան ու  
հոգեկան հաւատարմութիւնը, մերժելով խաջութեամբ  
կախարդական իրաւէրը՝ ուրանալու ինքինքը, ի գին իր  
կեանքին ու իր ձեռնով իսկ բժշկուած գեղուիիին...

Սրտառուչ, խորունկ վէպ մը կրնար դառնալ իր պա-  
րագան, եթէ մէկը սիրտ ունենար արիւնի մէջ խեղդը-  
ւած բանաստեղծին կեանքը գրական օգտագործումի մը առարկայ դարձնել:

Արդար այս խղճահարութիւնը, որ հեռու կը պահէ մեր գրողները այդ օգտագործումէն, ինչ  
որ սրբազնութեան հաւասար բան մը պիտի ըլլար:

Ժամանակը, թերեւս, տայ իր քոյլատուութիւնը օր մը, ոչ թէ արուեստի գործ մը հանելու  
համար անպատճառ եղերերգութենէն, այլ պանծացնելու համար երիտասարդ բանաստեղծին  
վեհ և հզօր կեցուածքը:

Գահիրէ - 1946- ԳՈՒՐԳԵՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ  
[Զառորդ Դար Գրականութիւն] էջ 263

ԳՈՒՐԳԵՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ

ՔՍ.ՌՈՐԴ ԴԱՐ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Եղանգ. ՀԱՅԱՍՏԱՆ,  
Երևան  
1946

# Ռ. ՍԵՒԱԿ

Մէկը այս անուններէն, որոնց գրականութիւնը, կեանքը կամ ճակասագիրը կը կախարդէն զիս իր եղերական մտհէն ետք, գեղեցկացաւ գրուկան իր հոչակը, դարձաւ իր դէմքը հէքիաթային ու հերոսական նոյնիսկ, երբ պատմուեցաւ թէ երիտաստրդ հիւանդ թրքուհիի մը սնարին վերեւ, կը ըստ էր պահել ան իր հաւասարուկշռութիւնը, իր աղգային, ընտանեկան ու հոգեկան հաւատարմութիւնը, մերժելով քաջութեամբ կախարդական հրաւերը՝ ուրոնայու ինքզինքը. ի զին իր կեանքին ու իր ձեռքով իսկ բժշկուած կեղուհին...

Սրտառուչ, խորունկ վէպ մը կրնար դառնալ իր պարագան, եթէ մէկը սիրո ունենար արիւնի մէջ իսեղզուած բանաստեղծին կեանքը զրական օգտագործումի մը առարկայ դարձնել. Արշար՝ այս խղճանարութիւնը, որ հեռաւ կը պահէ մեր գրողները այդ օդուագործումէն, ինչ որ սրբապղծութեան հաւատար բան մը պիտի ըլլար. Ժամանակը. թերեւս, տայ իր թոյյտառութիւնը օր մը. ոչ թէ արուեստի դործ մը հանելու համար անպատճառ եղերերդութենէն, այլ պանծացնելու համար երիտաստրդ լանաստեղծին վեհ ու հզօր կեցուածքը.

Գալիրէ:

1946

ԳՈՒՐԳԻՆ ՄԻՒԹԱՐԵԱՆ

Մերուժան Պարսամեան 23 Նոյեմբեր 1918-ին, Պոլսոյ «Շանթ» թերթին մէջ, «ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐՁԻՆ ՄԵԾ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐԸ» վերտառութեամբ և Ռուբէն Սեւակին յիշատակը պանծացնող աշխատասիրութիւն մը հրատարակած էր:

Իր այս գրութեան մէջ, Եղենի ոգեկոչումներուն պատճառած ցաւին մասին ան սապէս կ'արտայայտուի՝

«ՄԵՐ ԲԱՆԹԷՌՈՆԸ...»

Վերնագիրը իմս չէ. Հայ Բանթէռնը կազմողներէն մէկը՝ ԱԿՆՈՒՆԻ գործածեց զայն առաջին անգամ, ԶՐԻՍԱՓՈՐ ՄԻՋԱՑԷԼԵԱՆԻ առիթով:

Մեր Բանթէռնը մարմարէ սիւներու վրայ կառուցուած չէ, հողի, ժայռի և քարի անհուն կոյտ մըն է:

Մեր Բանթէռնը սահման չունի, ան իր մահաջուք ստուերը կը տարածէ Կարիցէն՝ Խարբերդ, Տիարպէքիրէն՝ Ենկիւրի, Գոնեայէն՝ Տէր Զօր:

\*\*\*  
Գուրգէն Միսի-  
թարեան, Վերի  
գրութեան մէջ,  
շատ իրաւամբ  
կ'ըսէր՝

«Սրտառուչ,  
խորունկ վէպ մը  
կրնար դառնալ  
իր պարագան,  
եթէ մէկը սիրո  
ունենար և գրի  
առնէր արիւնի  
մէջ խեղդուած  
բանաստեղ ծին  
կեանքը»:

Ծատ ճիշդ է:  
Եղեննէն հրաշ-  
քով վերապրած  
հայերը, չէին  
ուզեր վերյիշել  
այդ դժոխային  
օրերը և չէին  
ուզեր արտայայ-  
տովիլ այդ ահա-  
տը ողբերգու-  
թեան մասին:

Եւ կը ջանային  
բոլորովին մոռ-  
նալ ամէն բան՝  
իրենց հոգինե-  
րուն խաղաղու-  
թեան համար:

\*\*\*

Մեր Բանթէոնը ընդարձակ  
է աշխարհի մը չափ. իր սիւ-  
ները մեր հառաջանքներէն կազմուած  
են, և իր վրայ իբրեւ գմբէթ կը կրէ մեր  
անպարփակ տառապանքը:

Օրերէ ի վեր միտքս կը պրկուի. այս  
էջին վրայ խորհելով:

Արցունքով և վիշտիս վրձինով պիտի  
յաջողիմ ուրուագծել դէմքերը այն մեծ  
մարտիրոսներուն, որոնք այլեւս Յիշա-  
տակին սեփականութիւնն են:

Ընդարմացած, գլխուն զարնուած վիճակ  
մը ունի միտքս: Սպաննութեան և խոշ-  
տանգումներու ահաւոր հէքիաթները...  
այո՛, հէքիաթներ. Կարմիր հէքիաթներ...  
որոնցմով օրաթերթերը շառագնած են  
վերջին օրերս. ու բոլոր այն անհնարին  
ու դժնիակ մանրամասնութիւնները.  
զորս մեզի կը ներկայացնեն ականա-  
տեսներ. սկսած են տեսակ մը անորա-  
կելի ազդեցութիւն գործել վրաս. որովհե-

տեւ հիւանդագին անգիտակցութեան մը մէջէն կարծես կը քալէ մտածումս:

Ալ բաւական է... ծգենք սա մանրամասնութիւնները. արդէն մեր կատաղի  
ատելութիւնը, վրէժը, արհամարհանքը բաւականէն աւելի կը յորդին. իրենց հո-  
սանքին տակ ճգմելու, խեղդելու համար եղենի իշխանները և ոճիրի բարապան-  
ները:

Մեոցուցին հայերը, մեոցուցին մեր լաւագոյն մտաւորականները. ասիկա կը  
բաւէ. զիս այնքան չի շահագրգուեր թէ ինչպէ՞ս. ո՞ր օր. ի՞նչ ծեւով. որո՞ւ ծեռ-  
քով: Մեոցուցին, կը բաւէ այս չափը:

Ամբողջ փոքր Ասիան ընդարձակ գերեզմանատունի մը վերածուած է. հայ գե-  
րեզմանատունի մը. պէտք չկայ այլեւս երթալու և մէկիկ մէկիկ մեր անհատական  
մասնաւոր փոսերը փնտռելու:

Ուխտի ճամբորդը ի զուր հետքեր պիտի փնտռէ հոն:

Հայ անհիւններ ամէն տեղ, ամէն ապրող հայու հոգիին մէջ:

«Ծանթ»-Կ. Պոլիս - 1918 ՄԵՐՈՒԻԺԱՆ ՊԱՐՍԱՍԵԱՆ

\*\*

Այդ տարիներուն, խեղճ հայերը կը հաւատային և կը յուսային, որ քրիստոնէ-ական խղճմտանք մը կայ, մարդկային արդարութեան դատաստան մը կայ. այս աշխարհի վրայ:

Եւ միամիտ հայերը այս յոյսով սպասեցին՝ տարիներ ու տարիներ, որ արդարութիւնը պիտի գար անպայման:

Եւ սպասեցին առանց տրտունջի և մանաւանդ առանց ընդվզումի:

Որովհետեւ, իրենց ցաւը այնքան մեծ էր և կատարուած ցեղասպանութիւնը այնքան զարհուրելի:

Եւ կարծեցին, թէ քրիստոնէայ աշխարհը՝ իր Արդարութիւն բռունցքը պիտի իշեցնէր բարբարոս Թուրքին գլխուն... Բայց, բայց... երազ էր այս:

\*\*

1946-ին Գուրգէն Մխիթարեանին նախատեսած այն «միտքը» թէ՝ «ՍՐՏԱ-ՌՈՒԶ, ԽՈՐՈԽՆԿ ՎԵՊ ՄԸ ԿՐՆԱՐ ԴԱՌՆԱԼ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻՆ ՊԱՐԱԳԱՆ. ԵԹԷ ՄԷԿԸ ՍԻՐՏ ՈՒՆԵՆԱՐ ԱՐԴԻՒՆԻ ՄԷԶ ԽԵՂԴՈՒԱԾ ԱՆՈՐ ԿԵԱՆՔԸ ԳՐԻ ԱՌՆԵԼ՝ ՊԱՆԾԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ՎԵԼ ԵՒ ՀԶՕՐ ԿԵՑՈՒԱԾՔԸ» – այս նախատեսութիւնը, առաջին անգամ ըլլալով, իրականացաւ 20 տարիներ յետոյ՝ 1967-ին Երեւանի մէջ, հայրենի գրող Գեղամ Սեւանի կողմէ:

«Հայաստան» հրատարակչութեան կողմէ 1967-ին, Երեւանի մէջ հրատարակուած Գեղամ Սեւանի «ՀԱՅՈՅ ԹԱՂԸ» վերտառութեամբ պատմուածքներու գիրքին «Բանաստեղծի Գողգոթան» բաժնին մէջ, տրուած էր Ռուբէն Սեւակի կեանքի «Արիւնով խեղդուած» հերոսական պատմութիւնը:

Ո՞վ էր Գեղամ Սեւան:

1926-ին, Պոլիս' ծնած էր ան, և 1945-էն սկսեալ, Պոլսոյ մէջ, մեր գաղափարի ընկերը եղած էր: Եւ խոր պաշտամունք ուներ Ռուբէն Սեւակի հանդէպ:

Միասին աշխատած էինք, Պոլիս' հայ վաճառականի մը քովը. իբր «Գրասենեակի ծառայող» - (Garçon Du Bureau):



(→էջ 3)

## ԳՆԱՀԱՏԱՆՔ՝ ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ԽՆԿԵԼԻ... (Ծար. էջ 2-էն)


Միասին արձանագրուեցանք 1946-ին, Պոլսոյ Սովետական հիւպատոսարանը, Հայաստան Շերգադիթելու համար:

Սենք չյաջողեցանք, կամքէ անկախ, հայրենադարձուիլ Հայաստան: Բայց, Գեղամը յաջողեցաւ: Եւ ան, Հայաստանի մէջ, իր գրչին տաղանդովը, Հայաստանի շատ ծանօթ գրողներէն մէկը եղաւ:

1978-ին, մեր Հայաստան այցելած օրերուն, կրկին տեսնելու հաճոյքը ունեցանք՝ գրագէտ Գեղամ Սեւանը:

Եւ ան մեզի նույիրեց իր գիրքը՝ որուն մէջ, «Բանաստեղծին Գողգոթան» պատմութիւնով, տուած էր Ռուբէն Սեւակի ողբերգական կեանքը:

Այստեղ կ'ուզենք նշել իր գիրքին մէջի մակագրութիւնը, որ մեզի շատ տպաւորած և յուզած է՝



«ՍԻՐԵԼԻ ՕՆՆԻԿԻՆ /Փաղաքշական մակղիր՝ Գ. Սեւանի կողմէ իր մտերիմին՝ Յ.Չ.ի տրուած -Ն.Ծ.՝

ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ԽՈՐ ՊԱՇՏԱՄՈՒՆՉՈՎ ԵՒ ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՉՈՎ ԱՅԴ ՊԱՇՏԱՄՈՒՆՉՈՎ «ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ԳՈՂԳՈԹԱՆ»Ի ՄԵԶ ԱՂԱԿԱԿԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

16 Սեպտեմբեր 1978

ԳԵՂԱՄ ՍԵՒԱՆ»

Մենք ալ, խոր համոզումով, պատասխանենք, մեր այժմ արդէն հանգուցեալ բարեկամին.

Սիրելի Գեղամ:

«Բանաստեղծին Գողգոթան» պատմութեղի մէջ, դուն Ռուբէն Սեւակի քու պաշտամունքը չաղաւաղեցիր:

Այլ՝ ընդհակառակը՝ դուն պանծացուցիր Ռուբէն Սեւակի Սուրբ Յիշատակը:

Բայց, Ռուբէն Սեւակին Սուրբ Յիշատակը աղաւաղուեցաւ և նոյնիսկ սրբազնութեցաւ Հայաստանի մէջ 1985-ին, ուրիշ հայ գրողի մը կողմէ:

Հայաստանի շատ ծանօթ գրողներէն Պերճ Ջեյթունցեանի կողմէ:

Անոր 1985-ին հրատարակուած «Մեծ Լոռութիւն» անունով թատրերգութեան մէջ, իբր թէ տուած է Ռուբէն Սեւակի Զանդուրե-ի մէջ ապրած ողբերգութեան եղերական պատմութիւնը:

Այս թատրերգութեան մէջ ներկայացուած Ռուբէն Սեւակի կերպարը՝ ոչ մէկ կապ ունի հարազատ Ռուբէն Սեւակին իրապէս հերոսական կեցուածքին հետ:

Այնունա, Ռուբէն Սեւակ ներկայացուած է իսկական հոտպիտի մը կերպարով:

Թատրերգութեան մէջի դէպքերը, իբր թէ Ռուբէն Սեւակին վերագրուած գաղափարներն և խօսքերը, ոչ մէկ կապ - առնչութիւն ունի իրականութեան հետ:

Եւ Պերճ Ջեյթունցեանին ծարոտութերուն մէջ, շատ յայտնի է թակոր Օշականի մեծամիտ վերագրումներուն ազդեցութիւնը:

Պերճ Ջեյթունցեան 1989-ին, Երեւանի մէջ «Վերջին Արեւագալը» վերտառութեամբ, պատմագրական վէպ մը հրատարակեց:

Այս գիրքը, մասնաւորապէս Գոհառ

Պերճ Ջեյթունցեան

ՄԵԾ  
ԼՈՌՈՒՆՑՈՒՅ



Այս ԿՐՈՆԱ, ՍԱՍԱՎԱԼԻՐԱՎԱԿԱ ԴՐԱԿՈՒՄ Լ  
Զօհրապի կեանքին և գաղափարներուն պատմութիւնն է, և նաև՝ 1915-ի ողբեր-  
գութեան պատմութիւնը:

Գրիգոր Զօհրապէն զատ, հոն նշուած են  
այդ շրջանին ծանօթ անձնաւորութիւնները,  
ինչպէս՝ Կոմիտաս, Դանիէլ Վարուժան,  
Սիամանթօ, Ռուբէն Սեւակ և ուրիշներ:

Բաղդատարար «Մեծ Լռութեան» հետ՝  
Պերճ Զէյթունցեան, իր «Վերջին Արեւա-  
գալը»ին մէջ, աւելի հաւատարիմ եղած է  
իրականութիւններուն:

Իր Ռուբէն Սեւակի յատկացուցած բաժնին  
մէջ ալ, շատ մը մէջբերումներ ըրած է՝ մեր  
ծանօթ «ՈՌԻՔԵՆ ՍԵՒԱԿ ԵՒ ՓՐԾՈՒԵԼԻՉ  
ՈՒՂԵՂՆԵՐ» գիրքն:

Զանի մը տարի առաջ էր: Տեղեակ եղանք,  
որ Պերճ Զէյթունցեանը, այցելութեան եկած  
էր Ֆրանսայի հարաւը բնակող իր բարե-  
կամնե-  
րուն,  
որոնց  
1960 -  
թ. Շերուն,  
Հայաս-

տանէն արտագաղթածներ էին:

Այս առիթէն օգտուելով, հեռաձայնեցինք  
իրեն և հարցուցինք՝ «Պարոն Զէյթունցեան, եթէ  
դուք, այսօր, կրկին գրելու ըլլայիք ձեր «Մեծ  
Լռութիւն» թատրերգութիւնը, անոր մէջ ի՞նչ  
փոփոխութիւններ կը կատարէիք»:

Զէյթունցեանը, առանց մտածելու, պատաս-  
խանեց.

«ՈՉ ՄԷԿ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ» ըսաւ:

...Յայտնի էր, որ Զէյթունցեանի մտայնու-  
թեան մէջ, ոչ մէկ փոփոխութիւն կատարուած էր  
այդ օրէն ասդին: Զէյթունցեանը «ինչ որ էր»  
մօտիկ անցեալին, մնացած էր նոյնը:



Համիլտոն  
Արշակունյաց

Գրքահանք

1988

**TÜRKLERİN (SÖZ DE) BİLMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ  
TOPLU MEZARLAR SENARYOSUNUN PATENTİ TÜRKLERE  
AITTIR - NIÇİN MI?**

ÇÜNKÜ 1976-DA TÜRKLER İLK DEFA OLARAK BU TOPLU MEZARLAR PALAVRALARINI KİBRISTA YUNANLILARA KARŞI KULLANDILAR.

1974-DE AMERIKAN DIS ISLERİ BAKANI HENRI KISSINGER İDİ.

VE TÜRKİYE BASBAKANI DA, AMERİKADA ÜNİVERSİTEDE KISSINGERİN ÖĞRENCİSİ OLAN BÜLENT EÇEVİT İDİ.

VE KISSINGER 1974-DE ÖĞRENCİSİ EÇEVİTE KİBRİSİ İSGAL EMRİNİ VERDİ.

VE TEMMUZ 1974-DE TÜRK ORDUSU BĀRIS HAREKATI PLANINI TATBIK EDEREK KİBRİSİN YARISINA YAKIN KİSMINI İSGAL ETTİ.

VE TÜRK BĀRIS HAREKATI SAYESİNDE BINLERCE KİBRİSLİ YUNANLI OLDU VEYA KAYBOLDU.

BU ARADA TÜRKLERİN AKILBABALARI KİBRİSİN YARISINI YUTTUKLARINDAN DOLAYI TÜRKLER HAZIMSIZLIGA UGRAMASINLAR DIYE TOPLU MEZARLAR SENARYOSUNU ORTAYA ATTILAR.

NASIL MI? ANLATMAYA ÇALISALIM.

TÜRKLERİN BASMÜTTEFIGİ DÜNYA PARA BABALARI ORGANİZASYONU, İSVİÇRE TELEVİZYONUNDAN BİR KAÇ KİSYİ SATIN ALDI VE İÇLERİNDE KADIN DA BULUNAN İSVİÇRE TELEVİZYON GURUBU TÜRKLERİN İSGAL ETTİĞİ KİBRİSİN TÜRK KİSMINA GİTTİ.

VE ORDA, EVVELDEN HAZIRLANAN SENARYOYA GÖRE, İSVİÇRELİ SATILMIŞ TELEVİZYONLULAR, SÖZ DE YUNANLILARIN ÖLDÜRDÜĞÜ TÜRKLERİN CESETLERİ İLE DOLU TOPLU MEZARLAR BULDULAR VE FILMINI ÇEKTİLER.

VE BU TELEVİZYONLULAR İSVİÇREYE DÖNDÜKTEN SONRA, KİBRİSTA FILME ALDIKLARI, YUNAN VAHSETİNİN ESERİ OLAN TÜRK CESETLERİ İLE DOLU TOPLU MEZARLARI, TELEVİZYONDAN GÖSTERİMİYE BASLADILAR.

BİZ DE 1976-DA, TESİDÜFEN İSVİÇREDE İDİK. VE TELEVİZYONDAN TÜRK CESETLERİ İLE DOLU TOPLU MEZARLARI GÖRDÜK VE ÇOK ÜZÜLDÜK.

YUNAN RESMI MAKamları BU TOPLU MEZARLAR OLAYLARI İLE ÇOK ZOR DURUMA DÜSTÜLER. VE BUNUN ÜZERİNE YUNANLILAR BİRLESMİS MILLETLERE MURACAAT EDEREK, BU TOPLU MEZARLAR OLAYLARININ DOGRULUGUNU TESBIT ETMEK İÇİN ULUSLAR ARASI BIR TAHKİK KOMİSYONUNUN KİBRİSİN TÜRK KESİMINE GITMESİNİ SAGLADILAR.

VE SIMDI İSİN SONUNU İYİ DINLEYİN.

ULUSLAR ARASI TAHKİK KOMİSYONU MEZARLARDAKİ CESETLERİ KONTROL, İTHİ, VE ERKEK CESETLERİNİN SÜNNETSİZ OLDUGUNU VE ÇOGUNUN GOGÜSLERİNDE HAC BULUNDUGUNU TESBIT EDEREK RAPORUNU VERDİ.

“BU CESETLER TÜRK DEGİLDİR. YUNANLI HRİSTİYAN ÖLÜLERİDİR”

SIMDI ANLADINIZMI TOPLU MEZARLAR SENARYOSUNUN PATENTİNİN NICİN TÜRKLERE AİT OLDUGUNU.

3. 9.

**ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԹԵՐՈՒՆ [ԻԲԻ ԹԵ] ՀԳԻՏՑԱՌ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
«ՀԱԻԱԲԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ» ԿՈՉՈՒԱԾ ԹԱՏՐՈՆԻ ԲԵՄԱԴՐՈՒԹԵԱՆ  
ՄԵՆԱՋՆՈՐԴԸ ԹՈՒՐԹԵՐՈՒՆ ԿԸ ՊԱՏԿԱՆԻ**

Ինչու. գիտէ՞ք: Որովհետեւ 1976-ին թուրքերը, առաջին անգամ ըլլալով, այս հաւաքական զերեզ-մանսերու ծարոտութեները, կիպրոսի մէջ, Ցոյներուն դէմ գործածեցին:

1974-ին, Ա. Նահանջներու Արտաքին գործերու նախարար՝ Henri Kissinger-ն էր: Եւ Թուրքիոյ վարչապետն ալ, Ամերիկան համալսարանին մէջ, Քիսինժերին աշակերտը եղած Büleend Ecevît-ն էր:

Եւ Kissinger-ը 1974-ին, իր աշակերտը եղած Büleend Ecevît-ին կիպրոսը գրաւելու հրամանը արձակեց:

Եւ Ցուվս 1974-ին, թրբական գինուորական ուժերը, «Խաղաղութեան գործողութիւն» ըսուած ծրագիրը գործադրեցին և կիպրոսին մօտաւորապէս կէսը գրաւեցին:

Եւ թրբական «Խաղաղութեան գործողութեան» շնորհի՝ կիպրոսի մէջ հազարներով յոյն մեռան և կամ կորսութեցան:

Եւ այդ շրջանին, թուրքերուն առաջնակարգ խորհրդատուները, կիպրոսի կէսը կլինուն պատճառով, թուրքերը անմարսողութեան խնդիր չունենան ըսելով՝ հաւաքական զերեզմաններու բեմադրութիւնը մէջտեղ նետեցին:

Ինչպէս. գիտէ՞ք: Բացատրելու ջանանք:

Թուրքերուն առաջնակարգ դաշնակիցը եղող Աշխարհի մեծ Դրամատէրերու կազմակերպութեան գործակալները Զուիցերիոյ մէջ, քանի մը հեռատեսիլի պաշտօնեայ կաշառեցին, և մէջերնին կին ալ գտնուող գուիցերիական հեռատեսիլէն խումբ մը պաշտօնեաներ՝ կիպրոսի թուրքերու կողմէ գրաւուած մասը գացին:

Եւ ինս, առաջունէ պատրաստուած բեմադրութեամբ մը, Զուիցերիացի ծախուած հեռատեսիլի պաշտօնեաները, իբր թէ յոյներուն մեոցուցած դիակներով լեցուն հաւաքական զերեզմաններուն ֆիլմերը հեռատեսիլէն ցուցադրել սկսան:

1976-ին մենք ալ, դիպուածով Զուիցերիա կը գտնուէինք, և հեռատեսիլէն դիտեցինք թրբական դիակներով լեցուն հաւաքական զերեզմանները և շատ ցաւ զգացինք:

Ցունական պաշտօնական իշխանութիւնները, այս հաւաքական զերեզմաններուն պատճառաւ, շատ նեղ դրութեան մատութեցան:

Եւ յունական պետական իշխանութիւնները, Միացեալ Ազգերու կազմակերպութեան դիմեցին և միջազգային Յանձնաժողովի մը՝ այս հաւաքական զերեզմաններու հարցը ընսելու համար կիպրոսի թրբական կողմը երթալու որոշումը առնել յաջողեցան:

Եւ հիմա, այս թատրոնին ինչպէ՞ս վերջացած ըլլալը՝ լաւ մտիկ ըրէք:

Միջազգային քննիչ յանձնաժողովը՝ կիպրոսի թրբական մասը գտնուող այդ հաւաքական զերեզմաններուն մէջի դիակները զննեցին և նկատեցին, թէ այր մարդոց դիակները չեին թլփատուած: Եւ շատերուն կուրծքին վրայ խաչեր կային:

Եւ միջազգային քննիչ յանձնաժողովը, իր տեղեկագիրը յանձնեց Միացեալ Ազգերու կեղրոնին:

«Այս դիակները թուրքերուն պատկանող դիակներ չեն: Այլ՝ քրիստոնեայ յոյներու մեռելներ են»:

Հիմա հասկցա՞ք, թէ ինչո՞ւ հաւաքական զերեզմաններու թատրոնի բեմադրութեան մենաշնորհը, թուրքերուն կը պատկանի ըսինք:

3. 2.

Բայց մենք ցաւ զգացինք, որ Հայաստանի ամէնէն ծանօթ գրողներէն մէկը. այս աստիճան օտար կամ անծանօթ կը մնար իրականութիւններուն:

\* \*

1988-ին, Հայաստանի մէջ, Համլէթ Մովսիսեանի կողմէ հրատարակուեցաւ՝ «ՓՈՐՁԱՔԱՐ» անունով վէպ մը, որ կրկին Ռուբէն Սեւակի կեանքի ողբերգութեան պատմութիւնը կը ներկայացնէր: Եւ Համլէթ Մովսիսեանի վէպին մէջի Ռուբէն Սեւակին պատմութիւնը և կերպարը շատ աւելի հարազատ էին անոր հերոսական տիպարին, քան Պերճ Զէյթունցեանի «Մեծ Լոռութիւն» անունով խեղկատակ զաւեշտին մէջ:

\* \*

(Ծարդ էջ 4)

## ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ ՄԸ ԴԺՈՒԱՐ

### ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ՊԵՊՈ ՍԻՄՈՆԵԱՆ

9.

Մեր դարը ծանուցումներու ծայրայեղ բափի հասած արշաւով կը յատկանշուի: Հաղորդակցութեան և տեղեկատուութեան միջոցները,-մամուլ, պատկերապիտո, համացանց,-կը գտնուին անոնց ննշիչ և կլանիչ ազդեցութեան տակ: Գէշն ու անորակն անգամ գրաւիչ եղանակներով վաճառքի հող ու գետին կը շահին: Ամէն ո՛վ դժգոհ է ի գործ դրուած վաճառաշահութեան այս եղանակներէն. բայց այս է դարուն պահանջմքը: Ո՛չ միայն սոսկական մարդիկ, այլև՝ քրիստոնէական սկզբունքներն անգամ այդ պահանջմքներուն կ'ենթարկուին, կամայ թէ ակամայ...: Կարելի չէ, որ քրիստոնէութիւնը մարդ ապրի և անոր վեհապաց սկզբունքները գործադրէ նիշդ այնպէս ինչպէս Քրիստոսի ժամանակ էր: Որքա՞ն բան փոխուած է ու կը փոխուի ժամանակի հոլովոյքին հետ, որ սկզբունքներուն տառացիութիւնը կորսնցնելով իր իմաստը կը պարտադրուի օրուան պայմաններուն իր տուրքը տալու....: Չենք ըստ, որ քրիստոնէութեան էութիւնը կը փոխուի, սակայն, կը համակերպի կացութեան և կը պատշաճի ժամանակի հրամայականներէն թելադրուող կենցաղակերպի...: Այլապէս, ժամանակէն դուրս մնացող յղացք կ'ընդունի և կը դառնայ....:

Քրիստոնէութեան արմատական թեւերն անգամ եթէ ոչ տեղի կու տան, այլ՝ տառին կառչած չեն մնար....:

Անկասկած, որ քրիստոնէութիւնը իր մարդասիրական գիծերով բարեսիրութեան և բարեգործութեան ներշնչարանը եղած է: Այդ ներշնչումով և գրասրտութեան նպատակներով ինչպիսի՝ իմմնարկներ ծառայած են ու կը ծառայեն մարդկութեան նիւթական թէ բարոյական մարզերէն ներս: Հո՞ն, ուր այդ ծառայութիւնները բարոզցութեան նպատակներու համար ի սպաս կը դրուին, քրիստոնէութեան ոգիէն զիշում կ'արձանագրուի....: Քրիստոնէութիւնը կը հաւատայ ծառայութիւնը առանց ակնկալութեան սկզբունքին....: Իսկ այսօրուան չափանիշներով չկա՞յ ծառայութիւն առանց ակնկալութեան....: Սառայութեան դաշտերը կ'ամայանան, եթէ ակնկալութիւններուն գոհացում չտրուի....: Մարդկային տկարութիւն է ակնկալութիւնը,...երեւալու, փառաւորուելու, -քրիստոնէութիւնը իր իմմնադրին պատուէրով կը թելադրէ. «Ուշադիր եղէք և ձեր ողորմութիւնը մարդոց առջև մի ընէք անոնց ցուցադրելու միտենվ. գուցէ վարձէ լընդունիք ձեր հօրմէն, որ երկինքն է: Այլ երբ ողորմութիւն կու տաս, փող մի հնչեցներ եռ առջել, ինչպէս կեղծաւորները կ'ընեն ժողովարաններուն մէջ և հրապարակներու վրայ, որպէսզի փառաւորւին մարդոցմէ: Սակայն դուն երբ ողորմութիւն կու տաս «ԶԱԽԴ ԶԳԻՏՆԱՅ ԹԷ ԻՆՉ Կ'ԸՆԷ ԱԶԴԻ»:

Առանց փողի և բմբուկի ոչինչ կը կատարուի այսօր: Առա՞նց գովեստի և ինքնացուցադրման չեն մնար որեւէ մարզի աշխատանք, նուիրում ու ծառայութիւն....: Ծանուցումի և փառաւորման հեղեղներով ողորդուած են քրիստոնէական շրջանակներն անգամ: Կարելի՞ է խօսի ընել «Զախդ չգիտնայ, թէ ի՞նչ կ'ընէ աշդ» երբ նուիրատութիւններն ու բարերարութիւնները, ողորմութիւններն ու օգնութիւնները,...ամէնէն փոքրէն ամէնէն մեծը,-կը շեփորահարուին....: Կարելի՞ է այս օրերուն քրիստոնէական այս սկզբունքին հաւատարիմ մնալ....: Բայց չենք կասկածիր, որ իրապէս աշխարիի տարրեր անկիւններուն մէջ վաւերական քրիստոնեաներ կ'ապրին ու կը գործեն այս սկզբունքներով... յաղթահարելով եսական և ցուցադրական [ցուցամոլակա՞ն] տեսչանքները....:

Կը բուի, թէ քրիստոնէական սկզբունքներէ ներշնչուած է բանաստեղծը, գիրի վերածելով իր հետեւեալ խոհը.

Իսկ ի՞՞օչ են մտածում իմ մտերիմ մարդիկ,

Որոնք ապրում են Սուրբ գիրքի հերոսների նման,

Բարեհնշյան կեանքով.

Որոնք իրենց բարի գործերի մասին

Ոչ մէկին չեն ատում,

Եւ չեն էլ մտածում, որ բարուրիւն են անում ուրիշներին:

### ԱՐԵՒՇԱՏ ԱԻԱԳԵԱՆ

Հակառակ անոր, որ ուժի տիրապետութիւնը և ուժով տիրապետելու ձգումները, - անհատական թէ հաւաքական գետիններու վրայ, - իին ժամանակներէն մինչև ներկայ օրերը, «ակնդ ական, ատամնդ ատամ» ռազմաշունչ փիլիսոփայութեան տրամարանութեամբ գործած են ու կը գործեն, Քրիստոս նոր սկզբունքով մը յեղաշրջեց կամ ամբողջացուց իինը. «Մի կարծէք թէ եկած եմ Օրէնքը կամ Մարգարէները շնչելու, այլ՝ լրացնելու»: Ըստ Խորքի և ըստ Զեւի անհաշտ եզրեր կը բուին: Հինը կ'ըսէ. «Աչքի տեղ աչք, ակոայի տեղ ակոայ»: Նոր կտակարանին մէջ Քրիստոս դժուարին ձգուղ խաղաղասիրութեամբ և համակերպութեամբ կը պատուիրէ. «Զարին հակառակ չկենալ. այլ՝ մէկը աշ ծնօտիդ ապտակ մը զարնէ, դարձուր անոր միւսն ալ: Ով, որ ուզէ դատ բանալ և շապիկդ առնել, բանկոնդ ալ անոր ճգէ»:

Ո՛վ այսօր այս սկզբունքով կը յարաքերի: Անհատներէն սկսելով մինչև հաւաքականութիւնները, պետութիւններէն մինչև հոգեւոր կառույցները կ'առաջնորդուին ուժի և ազդեցութեան գոտիները ընդլայնելու տրամարանութեամբ:

Դիտենք մեր շուրջը: Միջազգային բաղաքանութեան բաղաքական մշակոյրն ու փիլիսոփայութիւնը հարուածային անխնայ ուժի վրայ իիմնուած են: Տկարն ու անհրատուածը չէզոքանապու են: Ո՛չ մէկ զիջողութիւն ուժի դիրքերէ, ուժի գործածութենէ, որ մարդկայնական սկզբունքէ չի մեկնիր, այլ՝ տիրելու, իրաւունքներ խլելու և կամքը պարտադրելու ամբարտաւանութեամբ: Այն բոլոր պատերազմները, որոնք տեղի ունեցած են և տեղի կ'ունենան, ո՛չ մէկ կերպով հաշտ եզրեր ունին քրիստոնէական հեզահամրոյր և բաղցրաբարոյ աշխարհահայեացքին հետ, նոյնիսկ երէ քրիստոնեայ պետութեան մը արտաքին դիմակը կայ իրեւ երեւոյր: Այսօրուան աշխարհին մէջ, - իրեւ հոգերանութիւն և գործելածեւ, - ակնդ ական, ատամընդ ատամն է տիրողը, որ սիոնիզմի իիմնական վարդապետութիւնն է իր իիմնադիրներուն գծած ուղիով...: Անոնցմէ ներշնչուած գաղափարներով կ'առաջնորդուին քրիստոնեայ առաջնորդներ, բաղաքական և պետական դէմքեր...: Ահա թէ ինչո՞ւ աշխարհին դիմագիծը բիրտ ու վայրագ կերպարանք առած է, շատ հեռու Քրիստոսին բարտգած սկզբունքն: Բրտութիւնն ու վայրագութիւնը, որ հակաքրիստոնէական է, անդրադարձած է մարդկային փոխ-յարաքերութիւններու վրայ: Ոչ ոչ այսօր քրիստոնեայ աշխարհին մէջ իր ծնօտին ստացած ապտակին, միւս երեսն ալ կը մատուցէ... կամ շապիկը առնողին բանկոնն ալ կը նուիրէ: Ընդհակառակն, այսօր ոչ միայն իրենց իրաւունքը պաշտպանելու համար մարդիկ բիրտ ուժին կը դիմեն, այլև ուրիշին իրաւունքը խլելու համար միջոցներու մէջ խտրութիւն չեն դներ...: Կը բռնանան: Կը խեղճացնեն: Կը ճնշեն: Կը շահագործեն: Իրենց եար, սեփականը և շահը գերադաս կը համարեն ամէն սկզբունքն...: Եկեղեցին ինք, որ Քրիստոսը մարմնացնող կառոյցն է, ուժի կարծը դիրքերէ կը վերաբերի իրեն... կամ ուրիշներուն վերաբերող հարցերու նկատմամբ...: Ոչ մէկ բացատրութիւն ընդունելի է իրանոտայի մէջ երկու քրիստոնեայ եկեղեցիներու, - Կարողիկէ, Աւետարանական, - արիւնու կոիւները, որոնք որքան գոհեր խլած են երկուստեք, ինչպիսի՛ աւերներ գործած են հաւաքական կորուստներու կշիռով...:

Քրիստոսի հեզահամրոյր և բաղցրաբարոյ պատուէրը, - իրը սկզբունք, - ոչ միայն անգոսնուած է, այլև շատ պարագաներուն կոխկոտուած...:

Մարդկային ընկերութեան մէջ, - բոլոր խաերէն ներս, - ընդհանրացած է բամբասանքը, ուրիշը դատելու ամբարտաւանութիւնը, իր աշքին գերանը չտեսնելով ուրիշին աշքին շնորհ տեսնելու չարակամութիւնը...: Բոլոր մարդոց յատուկ այս անդարմանելի տկա-

բուրինը հայ գրողին կողմէ [Մուրացան] քնորոշուած է «Հոգեզուարն բամբասանք»։ Ուր երկու հոգի մէկտեղուած են, անպայման բացակայ երրորդի մը մասին, կամ ուրիշ բացականերու մասին կը բամբասեն, կը չարախօսեն, ճիշդ կամ սխալ դատումներ կ'ընեն։ Կը զուարնանան հոգեպէս ուրիշը բամբասելով...։ Ո՛չ ո՛ք զերծ է մարդկային այս տկարութենէն...։ Ո՛չ ո՛ք կընայ անմեղանալ այս առնչութեամբ...։

Քրիստոնէական սկզբունքը այս հարցով եւս խիստ է իր դրած պահանջմով։ «Մի դատէք, որպէսզի չդատուիք։ Վասնզի ինչ դատաստանով որ դատէք անով պիտի դատուիք. և ինչ չափով որ չափէք անով պիտի չափուիք նաև դուք։ Ինչո՞ւ կը տեսնես եղրօրդ աշխին շիւղը, և Տու աշխիդ մէջ եղած գերանը չես տեսներ»։

Գարեգին Յովսէփիան Կաթողիկոս, որ քրիստոնէական ապրուած կեանքի բարոյագիտութեան վաւերական մեկնիշներէն է, իր մեկնուրիւններէն մէկը խորագրած է. «Բամբասանքը Մեծ Մեղք է»։ Քրիստոնէական սկզբունքին վրայ հիմնուելով իր խորիրդածական տեսութեամբ կու տայ բամբասանքով գործուած մեղքին մեծուրիւնը. որ լստ առաքելական խօսին. «Ոչ գողերը, ոչ պոռնիկները, ոչ արբեցողները, ոչ ալ բամբասոյները Աստուծոյ Արքայուրիւնը պիտի ժառանգեն»։ Արդարև, Գարեգին Յովսէփիան Կաթողիկոս դատումի խիստ ոն կը գործածէ բամբասանքի տկարութեան մասին. «Որովհետեւ բամբասանքը, լինի վատ առվորութեամբ, թէ դիտաւորեալ կամ գիտակցաբար կատարած, շատ չարիքների աղբիւրն է և պատճառը։ Նոյնիսկ իրքև վատ սովորութիւն առանց հետեւանքի չէ՝ թէ բամբասոյի և թէ բամբասուոյի անձի համար։ Առաջնի համար նկարագրի պակասուրիւն է, որ լեզուին սանձ չի դնում և հակալշոի ենթարկում. երկրորդի՝ տարապարտուց անուանարկուրիւն և դատապարտուրիւն, հոգեկան վիշտ կամ նիւրական վնաս»։ Համանարակ հիւանդութեան պէս համատարած է բամբասանքի մեղքը, որ քրիստոնէական քարոզութեամբ թէ դաստիարակութեամբ կարելի սիստի ըլլայ՝ մարդը ձերբագատել նկարագրի այս բերութենէն... կամ պակասուրենէն...։ Մարդու քրիստոնեայ տիպարը կը կերտուի այս և ուրիշ դժուար սկզբունքներու գործադրութեամբ, կատարեալին հասնելու կարելի և անկարելի ձգտումով...։

20 Յուլիս, 2003

ԳԱԱՀԱՏԱՆՉՈՒԹԻՒՆ ՍԵՐԱԿԻ ԽՆԿԵԼԻ... (Ժար. էջ 3-ԷՇ)

ՅԱՅԿԱՋ ՅԱԿՈԲՅԱՆԻ

## ՄՊԻՏԱԿ ԼԴԵԼՎԵՅՄՆԵՐ

(ՈՌՈՅՆ ՍԵՎԱԿ)

ՎԵՐ

ԾՐԵՎԱՆ - ՆԱՐԴԻ - 1997

Համլէք Մովսիսյան և Հայկաց Թակորչան-  
եան, բոլորն ալ հայրենի գրողներ են, որոնք  
Հայաստանի մէջ, արժեուրելով հայ բանաս-  
տեղծ Ռուբէն Սեւակի հերոսական կեանքը՝  
գիրքի վերածեցին:

Խակ սփիւռքի մէջ, այդ մասին միակ գրողն  
եղաւ, մեծ Վարպետ Անդրանիկ Ծառուկեանը,  
որ 1987-ին, Պէյրութ հրատարակուած իր  
«ՍԵՐԸ ԵՐԵՌՆԻՆ ՄԵԶ» ծանօթ վեպով.  
1946-ք.ին, ԳՈՒՐԳԵՆ ՄԻՒԹԱՐԵԱՆԻ ԿԱՏԱ-  
ՐԱԾ ՆԱԽԱՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՅՑ:

Մեզը կը խոնարհեց՝ նահատակ բանաս-  
տեղծ Ռուբէն Սեւակի սիրալի կեանքը յաւեր-  
ժացնող և հայոց Մեծ Եղենի Պատմութեան  
հաւատարիմ մնացած հայ գրողներուն վաստակին առջեւ:

Կրկին Հայաստանի մէջ 1997-ին, Հայկաց  
Թակորչանեանի կողմէ հրատարակուեցաւ՝  
«ՍՊԻՏԱԿ ԷԴԵԼՎԵՅՄՆԵՐ» անունով վեպը:  
Հայկաց Թակորչանեանի այս վեպը կրկին  
Ռուբէն Սեւակի ողիսականն է: Եւ ան, այս  
վեպին մէջ, Ռուբէն Սեւակի ամբողջ կեանքը  
տուած է, իրական տուեալներու վրայ յենե-  
լով: Եւ եկած է մինչեւ Զանդըրը-ի ողբերգու-  
թեան, որուն մէջ մեծ յուզումով կը կարդանց  
հերոս նահատակ Ռուբէն Սեւակի կեանքին  
վերջին օրերու պատմութիւնը:

\*\*\*

ԳԵՂԱՄ  
ՍԵՎԱԿ,  
ՊԵՐԸ  
ԶԵՅ-  
ԹՈՒՆԳ-  
ԵԱԳ,

## Ա. ԾԱՌՈՒԿԵԱՆ

# Ս Ե Ր Բ Ե Ղ Ե Ռ Ն Ի Ն Մ Ե Զ

(ՎԵՐ)

ՔԵՐՈՎԱՐ  
1987

## ԱՅՍ ԱՇԽԱՐՀԸ ՊՂՄՈՂ, ԵՂՄԱՆՈՂ ՈՒ ԱԻԵՐՈՂԻՆ

ԲԻՒՇԱՆԴ Ճ.  
ԽԱՎԱՄԵԱՆ

Բնական է. բանաստեղծ որոշ տարիին մը յանդի.  
Մտայոց, կեանմին վերջին օրերը կը մտարերէ...  
Վա՞յն է արդեօք, կամ կորուաք իր կեանմի.  
Այս է օրէնքը... ի զար տեղը կը վեսախ:

Երբ որ մայր մը. արտասուարոր նստած կ'ողբայ.  
Իր խոշտանգուած ու մահացած որդույն վրայ.  
Անոր նարահատ եեկեկանմին չեմ դիմանա՛ր...  
Կ'երեւակայնմ... կարծես քէ ան մայրս չըլլար:

Ո՞վ իրապաշտ բանաստեղծ...  
Որման առ ապրիս, մահուանդ օրը մի՛ յիշեր...  
Գրէ՛, այն մանուկներուն, պատանի ու դեռաստի  
Որոնէ կ'ապրին դաման ժամեր օր ու գիշեր.  
Քար կ'արձակն... մեռնին ի՞նչ է՛ չեն զիտեր:

Բանաստեղծը իր կեանմին մէջ, պէտք չէ՛ յուսայմուի...  
Ճիշդն ու Արդարը խօսի. որ տկարը չ'կաշկանդուի...  
Լազ ու ողրալով մարդ տեղ չի հասնիր. կ'ընկնաւի.  
Կ'ուզէ՛ յաղբել. հարկ է որ իրաւունքն իր դոյսպնդէ:

Գրէ՛, անոնց մասին՝ որոնց տունը կը փլի.  
Խո՛ր Խունի մէջ իրենց զիխին յանկարծակի...  
Միրէ մենք մեզ կ'զգանք առաւել՝ լ արժանի  
Երբ... անմեղութիւնը չարաշար կանխամահացուի:

Մարզ ըսած՝ անասուն չէ. ոչ ալ սանձուած կենդանի.  
Այս... մարդը մարդուն հաւասար է. քառ օրէնի...  
Արգարութիւնը կ'որոշէ. ոչ քէ բռնութիւնը անպատկան.  
Այս աշխարիի և մարդկութեան դասաւորումը կեանի:

Այն ոքերը... որոնք մնացին առանց հայր ու մայրի.  
Կ'ապրին, նոյնիսկ երազներու մէջ լացավ ու նօրի...  
Գրէ՛, անոնց չարչարանին իրաւագրկութեան մասին.  
Որոնք, չունին տէր ու օգնական... այ՛ վիշտը

Զիս կաշկանդողը քէ հայրս ալ ըլլայ. չեմ ընդունիր.  
Զօրավիզ եմ զաւակներուս Արդար կեանմին...  
Հապա՞... ինչպէ՞ս ամքր՞ոզ ազգ մը բռնարարուի.  
Համայն Աշխարի նատած դիտէ կացութիւնը տմարդի:

տառապամի:

Ժամանակն է՛ ալլաս. բաց աչմերով տեսնել...

Առողջ Աշխարիը պապականող եղծանողին...

Մարգկային բարձր նկարագիրը պղծող ու տերողին...

Սիայն մայրս չիշեմ... լոյսերու մէջ բռ հանգի...

Եւ ոչ քէ նատի. տրտնչալ. լալ ու ողբալ... տրտմազին:

Զիի յուզութիւնը մահացան բաց աչմերով ու քարի.

Խագուկներն իրենց՝ յանձնելով գառն նակատազի:

2003. Հիրանան

ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՈՆԵՆՔ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԼՈՒԽՐԵԱԼՆԵՐՈՒՆ

ՎԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ  
ՄԱՍԻՆ

ՑՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
[ԿՐԵԺ ՌՈՒԲԵՆՆԵԱՆ]

Թ. Է Ռ Դ Ի Կ

ԱՄԱՆՎՈՐԱՆ  
ՏՎԱՐԵՑՈՅՑՔ  
1928

ԴՐԱՄԱԿԱՆԵՐ Թ. ՍԵՒԱԿԻ

Թ Է Ռ Դ Ի Կ

ԱՄԵՆՈՒՆ  
ՏՎԱՐԵՑՈՅՑՔ  
1928  
ՓԱՐԻԶ

ՆԱՄԱԿՆԵՐ  
Ռ. ՍԵՒԱԿԻ



Ռ. ՍԵՒԱԿԻ՝ բժշկ. ուսանող ի Լոզան

Լոգան 29 Ապրիլ 1912  
ՀՐԱՆՏՍ 〔ՆԱԶԱՐԵԱՆԾ〕

«...Եկուր տե՛ս, որ երիտասարդները  
չեն հասկնար այս բաները. Եւրոպա  
նետուիլ կ'ուզեն իսկոյն, մինչդեռ հոն 7  
տարի ապրող մը միայն կրնայ գիտնալ,  
թէ ի՞նչ է քաղաքակրթութիւնը, «զար-  
գացած կեանքը». ամէն բան սուստ ու  
կեղծիք, շպար ու ամօթ:

Ասիկա իմ համոզումս է:

Թոյդ՝ ՌՈՒԲԵՆ

*Եկուր տե՛ս որ  
երիտասարդները չեն  
հասկնար այս բաները.  
Եւրոպան նետուիլ կ'ու-  
զեն իսկոյն, մինչդեռ  
հոն 7 տարի ապրող մը  
միայն կրնայ գիտնալ  
թէ ի՞նչ է քաղաքաւ  
կրթութիւնը, «զար-  
գացած կեանքը»: ա-  
մէն բան սուստ ու կեղ-  
ծիք, շպար, ու ամօթ:  
Ասիկա իմ համոզումս  
է:*

\* \* \*

Դարձեալ՝ նոյն թուակիր նամակին  
մէջ, Ռուբէն կը գրէ իր մտերիմին...

«...Ու այս բոլորին վրայ, աւելցուր  
նաեւ Պոլսոյ մղձաւանջը, այն հորիզոնը  
որ քանի մը տարիէն իմինս պիտի ըլլայ,  
և ուր հեռուէն կը տեսնեմ արդէն Սոդո-  
մի մոլխն ու Գոմորի մեղքին բոցը(\*):

Թոյդ՝ ՌՈՒԲԵՆ»

(\*) Իր եղերական վախճանէն ճիշդ 3  
տարի առաջ կատարուած մարգարէա-  
շունչ յայտնատեսութիւն որ այսչափ  
կ'ըլլայ:

Ծանօթութիւն Ամենուն Տարեցոյցի:

...Ու այս բոլորին վրայ, աւելցո ւր նաեւ Պոլսոյ մղձուանջը, այն հորիզոնը որ քանի մը տարիէն իմի՞նս պիտի ըլլայ, եւ ուր հեռուէն կը տեսնեմ արդէն Սոդոմի մոռկին ու Գոմորի մեղքին բոցը(՝): Եւ ըսե՛լ թէ այս մենակեաց փելիսոփայութեան հասնելէս յետոյ, դեռ պէտք պիտի ըլլայ ինձ այդ գարչուզելի ոստանին ՄԵՋ ապրիլ, ամէնո՞ւն հետ, տմէնո՞ւն պէս...

ፍ.ዕ.ጥ. በአተፍኬን

(\*) Իր հղերական վախճանին նիշը Յ տարի առաջ կատարուած մարդկանց շաբանաւեսութիւնը որ այսպահ կ'ըլլաց : Ս. Ամ: Տարեց.

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԴԱՍԸՆԿԵՐՈԶԸ  
ՆԱՄԱԿ ԼոգաԲ 12 Փետրուար 1907

«Մ... Հոգիս,

Ես աւելի իրապաշտ եմ, ամէն բանէ առաջ իրականութիւնը զիս կը գրաւէ:  
Ամէն իրականութիւնէ վեր մէկ իրականութիւն մը կը ճանչնամ ես՝ ապրուած  
և զգացուած կեանքը և ոչ թէ երեւակայուած կեանքը....:

Ա. ԶԻԼԻՆԿԻՐ»

Ռ. ՍԵՒԱԿ- ԵՐԿԵՐ ՀԱՄՈՐ 2  
ԵՐԵՎԱՆ 1996

ԲԻՒԶԱՆԴ ԶԵՂԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ  
«ԽՍԱՄԱՆԱԼՈՒ ճԱՄԲՈՎ իՐ կԵԱՆՁԸ ազատելու առաջարկը մԵՐԺԵց, և  
«ԹՐՅԱՆԱԼԸ ՆՈՒԱՍՏԱՆԱԼ է» ըսաւ ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ:

«Յեղիկ-Այեցուն Տարեքարգ» - Կ. Պոիս 1922

ԲԺԻԾԿ ՎԱՀԱՆ ԱԼԹՈՒՆԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ  
ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻԿԻ ՄԱՍԻՆ

«Կամ պէտք է որ գրական անուանն պէս հոգիս ալ սեւցնեմ և կամ մեռնիմ: ՈՒԽՏԱԾ ԵՄ ՍԵՌՆԻԼ, ԲԱՑ ԵՐԲԵՔ ՀՈԳԻՍ ԶՍԵՒԾՆԵԼ» ըստ Ռուբեն Սեւակ:

«Հայ Բուժակ» - Կ. Պոլիս-1920

ԲԺԻՇԿ ՎԱՀԱՆ ԱԼԹՈՒԽԵԱՆ»

ԹԵՎԱՆ Ծ. ՎՐԴ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ  
ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ

«Այսպէս ալ՝ Սեւակ վախ ջունէր իր դահիճներէն։ Անոնք կրնային իր մարմինը անշնչացնել, բայց իր հոգին յափտենական պատգամներ պիտի ունենար հայութեան ականջին հնչեցնելիք։

«Հայաստանի Կոմիսար» - 1922 ԱՄԵՐԻԿԱ

\*\*

ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ԶՐՈՅ  
ՀԱՑԿԱՆՈՒԾ ԶԵՎԻԿԵԱՆԻ  
ԲԵՐԱՆԱՑԻ ՎԿԱՑՈՒԹԻՒՆԸ... ԻՐ  
ԵՂԲՈՐ՝ ՈՈՒԲԵՆԻՆ ԶԱՆԴՐԸ-Ի  
ՄԵԶ ԻՍԼԱՄԱՆԱԼՈՒ ՃԱՄԲՈՎ  
ԿԵԱՆԶԸ ԱԶԱՏԵԼ ՑԱԶՆԱՐԱՐՈԴ.

ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ ՏՈՒԱԾ

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՄԱՍԻՆ:

Ռուբէն, իր ընկերներուն սապես կը  
պատասխանէ...

«ՄԵՆԶ ՊԵՏԶ Է ՄԵՌՈՆԻՆԶ. ՈՐ  
ՄԵՐ ԱՐԵԱՆ ԳՆՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ  
ՎԵՐԱԿԱՆԳՆԻ. ՀԱՅՈՒԹԻՒՆԸ  
ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԷՍ ԱԶԱՏԻ:

ԱՄԵՆԶՍ ԱԼ ՄԵՌՈՆԻՆԶ. ՀԱՅՈՒ-  
ԹԻՒՆԸ ԱԶԱՏԵՆԶ»:

Զանդրը, 1915- ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿ:

Ռուբէն Սեւակի քրոջ՝ Հայկանուշ ԶԵ-  
ՎԻԿԵԱՆԻ (ՃԱՆԱԼ Զիլինկիրեան) բերա-  
նացի վկայութիւնը, որ Ճայնաերիզի  
վրայ արձանագրեցինք Փետրուար 1979-

ին, Աթենքի իր տան մէջ:

\*\*

ԱԶԳ ՄԸ ԻՐ ՀԵՐՈՍՆԵՐՈՎ ԿԱՊՐԻ:

ԱԶԳ ՄԸ. ՈՐ ՀԵՐՈՍՆԵՐ ԶՈՒՏԻ. ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱԽՈՒՆԶ ԶՈՒՏԻ:

ԱԶԳ ՄԸ. ՈՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ ԿԸ ՄՈՌՈՆԱՅՅ. ԻՆՅԵՆ ԱԼ ՄԵՌՈՆԵԼՈՒ  
ԴԱՏԱՊԱՐՏՈՒԱԾ Է:

«Ռ. ՍԵՎԱԿ և Փրցուելիք Ռուբէներ»- Փարիզ 1985

Յ. Զ.

\*\*

1992-թ. Աերուն էր, գրագիտուհի Ատրինէ Տատրեանին հետ այցելութեան գա-  
ցեր էինք Ծովասար Զարդարեանի (Ռուբէն Զարդարեանի կրտսեր զաւակը)  
Նիսի շրջակայքը գտնուող բնակարանը:

Այդ օր, Ծովասար Զարդարեան. իր հօրը մասին իր յիշատակները պատմեց.  
և այս առթիւ խօսեցաւ Ռուբէն Սեւակի մասին ալ: /Այս խօսակցութիւնը արձա-  
նագրեցինք տեսաերիզի վրայ/:

Ծովասար Զարդարեան. Ռուբէն Սեւակի «իսլամանալու ճամբով կեանքը  
ազատելու առաջարկը» մերժելուն մասին. սա շատ սրտաբաց արտայայտութիւ-  
նը ունեցաւ.

«ՊԻՏԻ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ. ՈՐ ԱՅԴ ԸԱԶՈՒԹԻՒՆԸ ԵՍ ՊԻՏԻ ԶՈՒՆԵՆԱՅԻ.  
ԵՒ ՊԻՏԻ ԸՆԴՈՒՆԵԻ ԻՍԼԱՄԱՆԱԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԸ»:

Ռուբէն Զարդարեանի արժանաւոր զաւկին՝ Ծովասար Զարդարեանի այս  
անկեղծ խօսքերը, շատ տպատրած են մեզի:

Ծատ ճիշդ է: Գիտակցաբար անմիջական և ստոյգ մահուան կուրծք տալը՝  
բոլոր մահկանացուներու յատուկ կարողութիւն մը չէ:

Ինչպէս որ, «ՆԱՅԻՐԻ»ի վերջին թիւրուն մէջ տեսանք արդէն. թէ՝ մեծագոյններ կարծուածները՝ Դանիէլ Վարուժան և Սիամանթօ. Զանդը-ի և Այշահի մէջ «տկարացած հոգիներու»ն մաս կը կազմէին:

Բայց Ռուբէն Սեւակ այն բացառիկ հերոսներէն էր, որ կուրծք տուաւ մահուան. և հերոսաբար գնաց դէպի «Դմացեալ մահուան». բայց՝ հայ ժողովուրդը չգնահատեց, չհասկցաւ Ռուբէն Սեւակի «արժեքը»:

\*\*\*

Ուրիշ ատեն ալ ըսած ենք... Հայ ժողովուրդին մեծագոյն թերութիւններէն մէկը իր «Երազատես» ըլլալն է: Ան կը սիրէ երազել. և չ'ուզեր իրականութիւնները տեսնել:

Հայ ժողովուրդին այս թերութեան մէջ, որոշ դեր ունեցած է Զրիստոնէական կրօնը, [իր դրական դերին հետ] Զրիստոնէական «Երազական Պատմութիւնները»: Օրինակ՝ հայերը, մինչեւ այսօր. կը փառաբանեն Գրիգոր Նարեկացին: Այս մէծ երազատես հզօր տաղանդը որ. իր գրութիւններով, բնաւ այս աշխարհի վրայ չէ ապրած կարծես, և միշտ 7 յարկ վեր՝ երկնային խալերու մէջ, «Աստուծոյ» հետ եղած է, անվերջանալի, շողշողուն նախաղասութիւնները ու նախաղասութիւններ, հազարաւոր տիտղոսներ ուղղած է Աստուծոյն «... Մարդ Աստուծոյ, քիչ մըն ալ ոտքերդ հողին վրայ դիր և շուրջդ նայէ...» չե՞ս ըսեր:

Բայց, Գրիգոր Նարեկացի-ին երազը իրականացաւ՝

Թուրքերը իր Ազգին պատկանող ամէն բան «օդը հանեցին»:

Այսօր, ո՞չ Նարեկացի-ին գերեզմանը գոյութիւն ունի, ոչ ալ այն սուրբ վանցերը ուր ինք ապաշխարած էր: Եւ Նարեկացի-ի հայրենիքը գրաւուած է թուրքերուն կողմէ: Եւ իր հայրենակիցներէն մէկ հոգի չկայ այդ հայկական հողերուն վրայ: Բոլորն ալ, թուրքերուն եաթաղանով,... Երկինք ուղարկուեցան:

Նարեկացի-ի երազական, շողշողուն գրութիւնները մէծ ազդեցութիւն գործեցին հայ մտաւորականութեան վրայ:

Առաջին օրէն մինչեւ այսօր, հայ մտաւորականներէն շատերուն ստեղծագործութիւններուն մէջ, կը տեսնուին անոր անիրատես «կաղապարները» և փայլուն բառերու մթերքը:

Եւ հայ գրականութեան մէջ, արուեստի չափանիշը՝ «Բանաստեղծական թոհջը» ունենալն է:

Ի՞նչ է բնաստեղծական թոհջը.

Նարեկացիի նման երազատես ըլլալ, և թոշիլ ու թոշի՞լ բառերու ամպերուն մէջ, և հեռանա՞լ իրականութիւններէ:

Այս հիւանդկախ մտայնութեան դէմ իր ընդվզումը կը յայտնէր Ռուբէն Սեւակ. դեռ 1907-ին, երբ 22 տարեկան էր:

Նայեցէք, թէ Ռ. Սեւակ ինչ կ'ըսէ Մերուժան Պարսամեանի նման երազատես բանաստեղծներուն համար, 12 Փետրուար 1907-ին, Լոզանէն՝ Պերպէրեան վարժարանի իր դասընկերոջը գրած նամակին մէջ.

«Անիկա յաւէտ պիտի ըլլայ երեւակայող ու օդային բանաստեղծը:

Ես, աւելի իրապաշտ եմ, ամէն բանէ առաջ իրականութիւնը զիս կը գրաւէ. ամէն իրականութենէ վեր մէկ իրականութիւն կը ճանչնամ ես՝ ԱՊՐՈՒԱԾ ԶԳԱՅ-ԻԱԾ ԿԵԱՆՔԸ ԵՒ ՈՉ ԹԻ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԱԾ ԿԵԱՆՔԸ»:

Մանաւանդ 1911-ին, Ռուբէն Սեւակի «Այլասերում» յօդուածին մէջ իր գրածները, հսկական ոռումբ մըն էին, պայթելու պատրաստ. հիւանդկախ մտային /→է, 3/

## ՎԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ... (Ծար. էջ 2-ԷԱ)

Կառոյց ունեցող մտաւրականներուն գլխուն վրայ:

Եւ այս գրութիւնը, մինչեւ այսօր, իր այժմէականութիւնը բնաւ չէ կորսնցուցած:

Եւ մենք, մեծ գոհունակութեամբ, պիտի նետենք այս «Ռումբ - յօդուածէն» մասեր, այսօրուան այլասերած, գիտակցաբար թէ անգիտակցաբար հայուն թշնամիներուն ծառայութեան մէջ եղող, հայկական մշակոյթի ժառանգը մախող ապազգային մտաւրականներուն գլխուն...

### «ԱՅԼԱՍԵՐՈՒՄ

Որբուկի պէս անտէր ցեղ մը հումկու, և լուսեղ ու սիրտրուխ բարբառի մըն է ծարաւ:

Իսկ մեր գրագէտները հանելուկային, առեղծուածային, խաւարակուու բաներ կ'ըսեն իրեն, ու մեր քերթողները գրիչնին հայ արեան մէջ թարխելէ վերջ՝ չհնարէն տաղեր կը գրեն որպէսզի մարդ չհասկնայ...»:

«Հեռու մենէ՝ ախտագին մտաւրականներ: Դուք ցեղին ուղեղն էք, բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորհիլ քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը, մենք պիտի փրցնենք այդ ուղեղը»:

«Այո, մեր ցեղը տարօրինակապէս կենսունակ ու աշխատող ցեղ մըն է: Այո. մեր հնամենի նաւը դեռ ջուրերուն վրայ կը ծփայ, դեռ չընկղմեցաւ: Բայց ի՞նչ է պատճառը որ երէկուան նաւակները մեզ արդէն անցան, ու մենք Ուրուական նաւին պէս կը ծածանինք դեռ, անխորասուզուելի, բայց և հաստատ ցամաքի մը հասնելու անկարող:

Սակայն, ստոյգ, ստոյգ կ'ըսեմ ծեզի, վտանգը մեծ է, շատ մեծ, աւելի մեծ, քան կրնանք ենթադրել:

Ժամանակն է հակազդելու, հակազդենք: Մեզի նոր Ոսկեդար մը պէտք է, նոր ոսկեդար մը: Այլասերո՞ւմ, ոչ՝ վերածնունդ:

Լոգան 1911

ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿ »

\*\*\*

Մենք, այստեղ, յայտնութիւն մը պիտի ընենք: Ռուբէն Սեւակի մայրենի լեզուն թրցերէնն էր: Որովհետեւ, Ռուբէն Սեւակի ոչ մայրը ոչ ալ հայրը հայերէն խօսիլ գիտէին: Անոնք, պարզապէս, թրցախոս էին:

Եւ շատ հետաքրքրական երեւոյթ մը կայ. Ռուբէն Սեւակի ծննդավայրը եղած Սիլիվրի գիւղաքաղաքը՝ Երոպական ցամաքամասին մաս կազմող թրակիոյ մէջ կը գտնուի:

Մինչեւ 1922-ք. Ռուբէն, թրակիոյ մէջ, մասնաւրապէս 5 հայաշատ աւաններ կային: Ռոտոսք, Էտիրնէ, Մալկարա, Չորլու և Սիլիվրի:

Այս աւաններէն՝ Ռոտոսք, Էտիրնէ և Մալկարա բնակող հայերը հայախոս էին:

Իսկ Պոլսոյ աւելի մօտ եղող գիւղաքաղաքներէն՝ Չորլու և Սիլիվրի բնակող հայերը՝ թրցախոս:

Այս տարբերութեան մասին, մասնագէտ անձերու կարծիքը հարցուցինք:

Մեզի սա տեղեկութիւնը տուին.

«Ռոտոսք, Էտիրնէ, Մալկարայի հայութիւնը՝ Նախիջեւանէն հոն գաղթած հայախոս հայեր են:

Մինչդեռ Չորլու-ի և Սիլիվրի-ի հայերը միջին ԱՅաթովիայէն գաղթած հայեր են, որոնք դարեր առաջ թուրք բարբարոսներու կողմէ լեզուները կտրուելու սպառնալիքով՝ թրցախոս եղած են»:

Այստեղ կը հրապարակնենք պատմական նամակ մը: Ռուբէն Սեւակի հօր՝ Թովհաննէս թակոր Զիլինկիրեանի կողմէ Սիլիվրիէն 1 [14] Մարտ 1914-ին, իր զակին՝ Տօքը. Ռուբէն Զիլինկիրեանի Լոգանի հասցէին դրկուած նամակ մըն է այս մէկը:

Ուշադրութիւն՝ այս նամակը գրուած է Հայերէն տառերով, բայց՝ թրցերէն

wifeyfif

બ્રહ્માણ્ડ રાજ્યના માનુષીય સાધનોની જીવની વિધાનો

1915 Aug 1/15 46669

*J. H. Gifford*

Սեւեկիւիւ եպիտոքմ Տօմար Ռութէն 3. Զիվիճներեան:

Փետրուար 22 [7] դարի վեցերորդ հայկական թագավորության մեջ պատմության հայկական բառի բառի էրախղինի սանա պիլտիքմիշտիմ, բազար կիւնիւ նէնազէ ալայը ինրա օլունտու: Համեմունք թագավորության մեջ պատմության հայկական բառի բառի էրախղինի սանա պիլտիքմիշտիմ, բազար կիւնիւ նէնազէ ալայը ինրա օլունտու:

1914. Մայ 1 [14] Սեպտեմբեր

«Սիրելի գաւառես՝ Տօքը Ռուբէն Յ. Զիլինկիրեան:

Փետրուար 22 [7] թուակիք նամակով, մեր սիրելի Հայկին հոգին աւանդած բայար ժեզի սեղեկացնուցած էի:

Կերտելի օրը, բայց ման արտազգութիւնը կատարվեցաւ...»:

\* \* \*

Այս տխուր նամակին անդրադարձած է Ռուբեն Սեւակ. իր «Բժիշկին Գիրքը Փրցուած Էջեր»ու շարքեց՝ «Ահաւոր Տարակոյսը» խորագրուած գրութեան մէջ. որ տարաբախտ իր եղբօր՝ Հայկ Զիլինկիրեանի կանխահաս մահուան եղերապատրուաց է 18Եմ՝ «Ռուբեն Սեւակ - եռեռ» ԱՀթիհաս, 1986, էջ՝ 387:;

Ռուբեն Սեւակ այս տիսուր եղելութեան մէջ, իր երիտասարդ եղբօր՝ Հայկին մահուան կսկիծը սրտին, «Կեանք» ըսուած առեղծուածին հանդէպ իր ընդվզումո կո լայտնէ:

Եզրակաց:

Ռուբեն Սեւակի  
հայրը լաւ հայերէն  
չէր գիտեր. բայց լաւ  
հայերէն... գրել գի-  
տէր:

Ռուբեն Սեւակի  
հայրը, իր յղած այս  
նամակով, հօր մը  
համար ամենէց ծանր  
պարտականութիւնն է  
որ կը կատարէ:

Այս նամակը՝ սեւով  
շրջանակուած սուգի  
նամակ մըն է: Իր  
զաւկին՝ Հայկին մահ-  
ւան և թաղման լուրը  
կու տայ՝ Լոզան  
գտնուող իր բժիշկ  
զաւկին՝ Տօքթ. Ռու-  
բեն Զիլինկիրեանին:  
Եւ. Միսիթարուելու  
համար՝ Ռուբենը իր  
մօտ կը կանչէ: Եւ այս  
հրաւերով հայրը. ան-  
գիտակցաբար ան-  
շուշտ. Ռուբեն Սե-  
ւակը Զանդըրը-ի  
դժոխքը առաջնոր-  
դած կ'որյա:

Այստեղ. պիտի  
ջանանք թարգմանել-  
այդ նամակեց մէկ  
բանի սող :

1914, Մարտ 1 [14]

Սիստեմ

TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORÜZ  
KİLİSTE HÜLYA AKPINAR İSİMLİ BİR TÜRK ÖĞRETMEN,  
ERMENİ SOYKIRIMI HAKKINDA SUAL SORDU DIYE,  
TÜRK SAVCI LİĞİ TARAFINDAN  
ÜÇBUÇUK SENE HAPIS TALEBIYLE MAHKEMEYE VERİLMİŞ.

NE SORMUS BU ÖĞRETMEN HANIM?

Յաջող ցուցահանդէս մըն էր՝ անկասկա՞ծ: Մեր արժէքները օտարներուն ծանօթացընելու մէջ շատ ենք թերացած և դե՛ռ կը յապաղինք ալ: Կը սպասենք, որ օտարները դան ու գտնեն մեզ և ո՛չ թէ մենք օգնենք որ անոնք մեզ ճանչնան: Յուսանք, որ այս ցուցահանդէսը, իր տեսակին մէջ, միակը չի մնար:

Ապա կը դիտենք Պիկասոյի Կուպիստական և վերջին շրջանի իր գծանկարները: Արագ կերպով կ'անցնինք գծանկարներուն առջեւէն, շատ ուշ և նախնական կը թուին ըլլալ, ոչ մէկ քաշողական, առինքնող, կեղրոնացնող և ուժ կամ խորհուրդ կը գտնենք: Արդեօ՞ք մենք չեն հասկնար և չենք ըմբռներ ստեղծագործ արուեստին իմաստը...: Գեղեցկութիւնը պարզութեան մէջ է կ'ըսեն: Արդեօ՞ք արտայայտուած պարզ գիծերուն՝ կոր թէ ուղիղ, ուղղանկիւն ու շեղ գծանկարներուն իմաստն ու արժէքը չենք ըմբռներ... կարող է:

Նոյն վայրին մէջ, արուեստի երեք ցուցահանդէսներ... ինչպիսի՝ զանազանութիւն, հակասութիւն, contrast, արուեստի ըմբռնողութիւն... մնայուն... և ժամանակաւո՞ր...:

Նիսի մէջ, իմ կեցութեան մնացեալ երեք օրերը, ամբողջութեամբ անցուցինք Պրն. Ցովհաննէս Չիլինկիրեանի հետ:

Ան զիս ազնուաբար պտտցուց ֆրանսայի Cote d'Azur-ի գրեթէ բոլոր ծովափնեայ վայրերը, Մոնթէ Կարլոյէն՝ Մանթօն, մինչեւ Խտալիոյ սահմանը, Անթիպ, Ժուանտըրէն, Քան, և այլ վայրեր: Ասկէ առաջ, քանի մը անգամներ, եղեր եմ այս վայրերը ընտանեօք: Սակայն այս անգամուանը կը մնայ գերազանց յիշարժան, անմոռանալի: Նատ ուրախ եմ, որ բարեկամական կապեր ստեղծուեցան Պրն. Ց. Չիլինկիրեանին հետ, մտերմութիւն մը անգնահատելի:

Երեք օրերուն ընթացքին մեր խօսակցութեան գլխաւոր նիւթերն եղան՝ Մեծ Նահատակ Ռուբէն Սեւակը, Հայ ժողովուրդի վերջին 100-150 տարուան ազատագրական պայքարի պատմական իրադարձութիւնները, օտար պետութիւններուն մեղրածորան խոստումները կատարուած մեր միամիտ և անփորձառու, նորահաս կուսակցական ուսուցիչներուն՝ կիսագրագէտ, քաղաքականութենէ չասկցող Հայրենասէր Հայուկներուն, ասոնց կուրօրէն Հաւատք ընծայելուն օտարներուն, ասոնց ընդդրկուիլը միջազգային Սիոնիստական Ազատ-որմնադրական «Եղբայրակցութեանց»... Հաւատք ընծայելով այդ զրասենեակներուն մէջ գործող բարձրատիճան օտար, մանաւանդ տէօնմէ թուրք, անգլիացի, գերմանացի թէ ֆրանսացի ու ամերիկացի ղեկավարներուն ստապատիր խոստումներուն և դաւաճանական «գործակցութեանց»:

Ցաւալի է այն, որ նոյն երեւոյթը կը կրկնուի ներկայիս, Գ. Հանրապետութեան անհեռատես, անքաղաքագէտ, փորձ չունեցող, նիւթապաշտ վաշխառուներուն ձեռքով: Կը կողոպտուի, կը քանդուի 80 տարիներու ընթացքին մեծ զոհութիւններով կառուցուածը: Այսօրուայ ղեկավարներուն բոլորին ալ Հայեացքները դէպի Արեւմուտք է ուղղուած: Չի՛ բաւեր, վերջին 300 տարիներուն ընթացքին, Արեւմուտքին մեզի դաւաճանելը, կորուստը մեր Արեւմտեան Հայաստանին: Այսօր, նոյն երազախարութեամբ

## ՌՈՒԹԵՆ ՍԵՒԱԿԻ ՏՈՒՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

ԵՒ ՑՈՎՀԱՆՆԵԼՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱՂԼԻԵԱՆ

է տարուած մեր պետական աւագանին: Ի՞նչ ունի այս փոքր Հայաստանը հրամցնելիք Արեւմուտքին ընչափաղց ծարաւը յագեցնող: Նա՞ֆթ, գա՞զ, ոսկի՞, աղամանդի հանքե՞ր, ջո՞ւր, ցորե՞ն, ծո՞վ... զինուորական բարձրարուեստ տեխնիկա՝, տնտեսական անապար շուկա՞յ [Հազիւ 2 մլն. բնակչութեամբ]... Մեր դրացիները մեզմէ շատ աւելին ունին տրամադրելիք, որմէ Արեւմուտքը անկասկած պիտի օգտուի թէ՛ նիւթապէս և թէ՛ քաղաքականապէս: Արեւմուտքին պէտք չեն parasite և բեռ եղող երկիրները: Յետադարձ Հայեացք մը նետենք մօտիկ անցեալի մեր թշուառ պատմութեան: Մեծն Բրիտանիայի վարչապետներ՝ Disraeli-ի, Gladstone-ի, Ամերիկայի նախագահ Woodrow Wilson-ի, Ֆրանսայի Anatole France-ի և նման շատ բարձրաստիճան մարդկանց խոստումներն ու... իրագործումները որոնք ցնորաթափ ըրին մեզ...

Ժամանակին ոգեւորութիւն ստեղծուած էր Հ.Գ.Բ.ի գործունէութեամբ, որ Հայ Դատին տոպօրուն խլած էր կուսակցութիւններուն ձեռքէն, որոնք իրեւ թմրեցուցիչ զայն իրենց էին վերապահած միայն: Սակայն Հ.Գ.Բ.ի սկզբնական շոնդալից յաջողութիւններուն ժողովրդականութիւնը խորթ աչքով դիտուեցաւ յայտնի կուսակցութեան կողմէ, որը, յետ չմնալու համար, ինքն ալ ստեղծեց իրը: Արեւմտեան աշխարհի պետական գաղտնի գործակալութիւնները, ամերիկացի Մոնթէ Մելքոնեանը որպէս «մոլ» ներթափանցել տուին Հ.Գ.Բ.ի մէջ լրտեսելու, երկպառակտելու, քայքայելու և անոր հիմնադիրը սպաննելու... ինչ որ եղաւ: Նատ շատերուն ծանօթ իրականութիւն է, որ նոյն անձը իր քայքայիչ գործունէութեամբ ներգործեց Ղարաբաղի ազատագրական շարժման մէջ, յատուկ միսիայով, և անծանօթ պարագաներու տակ սպաննուեցաւ ո՛չ թէ մարտերու ընթացքին: Խօսակիցս զարմանք կը յայտնէ ըսելով, որ այսօր Հայրենի իշխանաւորները այս խորհրդաւոր ամերիկացի անձանօթին հերոսացուցած են, Համահաւասար և աւելի բարձր դասած քան Ազգային Հերոս Զօր. Անդրանիկը, կանգնեցնելով անոր արձանը, տալով անոր փաղոցի մը անունը և այլն...: Եւ կ'աւելցնէ՝ «ԱՀաւասիկ Հայրենասիրութեան նորօրեայ գնահատականներն ու չափանիշները...»:

«Մեր փրկութեան, ապահովութեան և գոյութեան երաշխիքը Հիւսիսն է.— կ'ըսէ Յ. Զիլինկիրեան:— Այդպէս եղած է անցեալ դարերուն և այդպէս ալ է հիմա ու պիտի ըլլայ ապագային, եթէ կարենանք ճշգրիտ կողմնորոշումներ ունենալ ժամանակի հոլովոյթի ընթացքին, ճիշդ ընդունինք մեր ժամանակաշրջանի աշխարհաքաղաքական ձըդտումներն ու տեղաշարժերը: Նկատի առնելու ենք մանաւանդ Միջին Արեւելքի ներկայ իրադարձութիւնները, պէտք է ըլլանք զգուշ: Դաս առնենք: Լինել չլինելու եզրին կը գտնուինք... սխալ քայլ մը և... պատմութեան գիրկը կ'անցնինք... Քաղաքականութեան մէջ խղճմտանք, մարդկայնութիւն, արդարութիւն չկայ... կայ միայն շահ (inter est)»:

Նիս կեցութեանս վերջին գիշերը, ընթրիքի մը ելանք միասին: Ժամբան ըսաւ՝ տիկին մըն ալ պիտի ընկերանայ մեզի: Կանգ առինք շէնքի մը առջեւ: Դուան խօսափողով յայտնեց իր Հոն ըլլալը: Քիչ ետք շէկ, եւրոպացիի արտաքինով տիկին մը դուրս եկաւ շէնքին դունէն, 60-65 տարեկանի տպաւորութիւն ձգող: Ֆրանսերէնով զիս ծանօթացուց տիկնոջ, որպէս իր լիրանանահայ հիւրը: Իսկ յետոյ, դառնալով ինծի ըսաւ. «Մասնօթացիր, Նահատակ Ռուբէն Սեւակի դուստրը՝ Նամիրամ Սեւակն է»: Իսկական

Ugpfmu - 2003

«ԽՍՀԱԴՐ»  
ՎԱՐԴԱՎՎԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԾՈՒՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆ

(ՑԱՂԻ Դ Հ Ա Մ Ա Չ)

## ՀԱՎԱՐԱԿՈՎ ՀԱՆՉՎԵՎ ԾՎԱՐԿԱՑՆՎԵ

Lilyan - Swnhf 27-07-03

## ։ոգդան ո՞վորման

: ՈՐԱՆԻՇՎԱԳՈՒՅ ԱՊՐԻՎԾԻԱՑՈՒԽԵՎՈՒՄ ԱՊԾ

յունեն մէկ մարտուվում ոժովինքներ : ոչովագիշովիկ ոհուցուիսց ովալ մտառի նժջամո՞ի : իսլզիոմտումց մրոգթասուղզիզը ։ իսլզին ։ իսլզ

-ուրուց վր կ մմզուգոմտուրուց դվ-դրաց վիտունկց ոնու ։ Տ քոնուոյլ դուկոգթավու կը ից ։ ոչոյնուղուկումկ դոգթասմարտուն դուկոմվասու ։ աւոտ լզմազքմումզի դ աւզտուցոյն խաշվումուն ։ տվմուրց մկ մովից ։ ոչաւզմզ շմուռշու ոնու մմունումզի դուկուերանոյու ովնուի ։ նմոր ովկիոտուրուղ օգու նուշ քոնուումկումզ ։ Տ քումվասու իսխումզի ջնսովյու մմզովմուտ ։ Տ ովկնու ովկմուգի մկ մս ։ ոչաւնմուց ։ ոչաւնուշ մվեսուվիկ դուկուազես ննուա տոզորց տուն ոնու լվելվնոյուցումզի նուլլա վտվիո վլզցու ։ Տ ովկուուու լվելվնոյու ոհմասու մոյու ։ տուսուով նէ ։ մոյումարսեռշնսու ։ վիտու ովնուկունունո մս ։ Տ աւլզնմզի ոհմասունունու ովի Տ քուկ մրոգթասուունց ոհմուզգրու ։ բվոյիզը վտվիո ։ ովասուկ տօւուսա վովիւրաց օշ ։ վիտումկ

.....ալողորովն է մտնելու ամպօն և զուր

Հայոց կովկասիան

: իսքերակողը և իսնմասիսնաբ

η μρωφείας διατάξεων, η αποτατοποίηση και φυτοπάρασταση : Ιδιαίτερα σημαντική είναι η παραγωγή της αποτατοποίησης, η οποία πρέπει να γίνεται σε όλη την περιοχή, με στόχο την αποτατοποίηση των παραγόντων που προκαλούν την αποτατοποίηση.

## մըտգթրանհուն

Հազարամյակի պատմություն

ՂՈԳՎԿԱՎՈՎԸ ԱՎԱՐԺՆՈՒՄ ՎԳ  
ԵՐԻՊԹԵՐՑ ԴՎՍՏ ՎԿԹՎԳՈ ԵՎՑՎՄԸ

# Հ.Մ.Մ.Ի ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ...

1921-ԷՆ ՄԻՆՉԵՒ 1981

ԳՐԵՑ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆ

Մեր նախորդ յօդուածներով անդրադարձած էինք 1944 տարուան Հալէպի Տաւուտիէյի արուարձանի «Կարմիր Կիրակի»ի «Հայկական Օր»ի անմոռանալի միջոցառումին մասին, և ապա, 1945 տարուան Օգոստի վերջին, միջ-շրջանային հաւաքական ձեռնարկին՝ Զահլէի մէջ. Հ.Մ.Մ.Ի 25 ամեակի նշման նախօրէին կայացած դաշտագնացութեան և այդ առիթով «Գողթան» երգչախումբին ունեցած բացառիկ ելոյթին, և հուսկ՝ Հալէպի սկաուտներուն 15-օրեայ բանակումին շարունակութեան Պաալպէքի մէջ:

Այժմ ջանանք ամփոփեց, այդ՝ 1942-ԷՆ 1945 տարիներուն Միութեան հիմնական, անմոռանալի ձեռնարկները, որոնք Հ.Մ.Մ.Ի պատմութեան փառքի օրերն էին, և նաև, գաղութներէն ներս, Հայ

ըլլալու Հպարտութիւն և գոհունակութիւն պարզեւող եղելութիւններ Հանդիսացան ընդհանրապէս: Հայ Սփիւռքը քայլ մ'աւելի մօտեցընելով Մայր Հայրենիքին:

Հայ երիտասարդները՝ չարաբաստիկ եղեռնի և Բ. Համաշխարհային պատերազմին թողած մղձաւանջը ամբողջութեամբ թօթափած, դարձած էին աւելի վճռական, որ ապ-



1944-թ. Տաւուտիէյի բարձրունքին վրայ: Կեղրոնք՝ Արժ. Տէր Եղիշէ Քւնյ.  
Փանոսեան և Ընդհ. Խմբապետ Լ. Պայրամեան:

ըին և գոյատեւեն որպէս Հայ: Բ. Աշխարհամարտէն Հայաստանի յաղթական դուրս գալը, իր դաշնակիցներուն հետ, ասոր մղիչ ուժ Հաղորդեց:

Անոնք, նոր և յուսալի հեռանկարներով և մանաւանդ Մայր Հայրենիքի իրականութեամբը լիցքաւորուած, առաւել հաւատաւոր, գիտակցօրէն կը մասնակցէին միութենական աշխատանքներուն, Ազգին և Հայրենիքին ծառայելու ոգիով բռնկուն:

Ի՞նչ էին այդ վաւերական և հիմնական ձեռնարկները կամ միջոցառումները, որոնք Հ.Մ.Մ.Ի պատմութիւնը կը հարստացնէին և Հպարտանքի էջեր կը հանդիսանան: Ու նաև, մեկնակէտ եղան եկող տարիներուն, Հ.Մ.Մ.Ի ծաւալուն, Համագաղութային տարողութեամբ գործունէութեան:

Առաջինը՝ կազմակերպչական գետնի վրայ որդեգրուած արտակարգ ու հեռանկարային նախաձեռնութիւնն էր: Հ.Մ.Մ. Հանդիսացաւ Սփիւռքի Հայկական մարզական առաջին կազմակերպութիւնը որ, 1942-թին, գումարեց իր ընդհանուր Պատգամաւորական Ժողովը և Միութիւնը օժտեց իր անդրանիկ Կեղրոնական Վարչութեամբ:

Առաջին Կ.Վ. եան նախաձեռնութիւնը կազմեց, Միութեան համասփիւռքեան գոյութիւնը օրինականացնող և ամրապնդող Հ.Մ.Մ ի Մրագիր-Կանոնագրի մը պատրաստութիւնը, որ, յաջորդ Պատգամաւորական ժողովին կողմէ իսկ, պիտի վաւերացուէր, մեծ գոհունակութիւն պատճառելով Միութեան բոլոր մասնաճիւղերուն և անդամներուն։ Նաեւ՝ գետին պատրաստելով Միութեան ապագայ շինիչ և օրինական աշխատանքներուն առջև։



Պարբերի մրցում, Հայրենի և Հ.Մ.Մ եան կազմերուն միջն, Սահակեանի դաշտին վրայ, 1969-թին։

Աշխ ձախ՝ Տօրթ. Գէորգ Քեշիշեան, Տիգրան Սարաֆեան, Նորայր Աւետեան [Խ.Մ դեսպանատան Հայ կցորդ], Փրօֆ. Գէորգ Մելիք Յովսէփեան [Հայրենի խումբի նախագահ], Գնէլ Եպս. Ճերէճեան, Սարգիս Սարգիսեան, Ժիրայր Նայիրի, Հայր Գէորգ Վրդ. Կարպիսեան, Հայր Տարօն Վրդ. Ճերէճեան, Պարգեւ Թրաշեան...։ Բ. շարք՝ Կեղրոնը՝ Գարրիէլ Մոլոյեան, Յակոբ Պուճիգանեան, Սարգիս Կիւլիւճեան և ուրիշներ։

Երկրորդ յատկանշական ձեռնարկը եղաւ, անկասկած, Հ.Մ.Մ ի բոլոր շրջաններու մասնակցութեամբ, միջ-մասնաճիւղային մարզական Հանդիպումներու կայացումը Պէյրութի կամ Հալէպի մէջ։ Որոնց կը հետեւէին անմոռանալի և ոգեւորիչ տողանցքները, որոնցմով կ'եղրափակուէին մարզատօնահանդէսները։

Նշենք, որ երիտասարդական մարդութի այս ցուցադրութիւնը տեղի կ'ունենար բաց դաշտի վրայ։ Իրենց մասնակցութիւնը կը բերէին սպորտի բոլոր բնագաւառներու մարզիկներէն բացի, Օրիորդացի անդամուհիները և մանաւանդ՝ Գայլիկ, Արենուշ, Սկառտ, Երէցներ և Հուսկ՝ աննման փողերախումբը, ինքնին երկար փաղանգ կազմող։

Աւելցնենք, որ մարզահանդէսի եղրափակիչ յայտագրի կատարումը կը հովանաւորէին պետական դէմքեր, Հայ և օտար Հիւր անձնաւորութիւններ։ Բազմահազար ժողովուրդ կը լեցնէին «թրիպիւն»ները, դաշտին շրջապատը և մինչև անգամ՝ յարակից շնչքերու տանիքներն ու պատշգամները։

Գոհանանք 1944-45 և 46 տարիներու Հանդիսութեանց Հակիրճ նկարագրութեամբ։ Մանրամասնութիւնները տեղ կը գտնեն անշուշտ յետագային խմբագրուելիք Համապարփակ ու ամբողջական պատմագիրքին մէջ, իրենց տարեթիւներով, միջոցառումներու մանրամասն ներկայացումով և եղելութիւններու թուարկումով։

Երրորդ՝ ինչ որ աւելի կենսական և ուրախալի եղելութիւն էր, մարզական միութեան մը Համար Հիմնական նպատակ - ունենալ բարձրորակ ֆուտապոլի խումբ և ձգտիլ երկրի ախոյ-

եանութեան:

Ի պատիւ 1942-թէն 45 տարիներու ղեկավարութեան և Միութեան գաղափարական ոգիով մարզուած ու թըրծուած կորիւն մարզիկներուն ներդրած ջանք և կորովին, ոսկետառ արձանագրենք այստեղ, որ անոնք յաջողեցան 1945-թէն նուանել Լիբանանի ֆուտպոլի ախոյեանութիւնը և, նոյն ատեն, դառնալ Տարուան Բաժակակիրը:

Նոյն տարուան մէջ երկու բարձրագոյն տիտղոս նուանելը դիւրին չէր անշուշտ: Իրադարձութիւնը անսահման ուրախութիւն և Հպարտութիւն պատճառեց Միութեան անդամներուն և իրենց Համակիր զանգուածին:

Այս կրկնակի յաջողութիւնը Հ.Մ.Մ.ին բերաւ մեծ վարկ, պատիւ ու ժողովրդականութիւն ամբողջ Լիբանանի մէջ:

Չորրորդ՝ 1944-45 տարիներն են: Զմոռնալ Բ. Աշխարհամարտի տարիներու դժուարութիւնները որոնցմէ առաջին ազգուողները եղան, պատերազմի թատերաբեմ եւրոպան և ասոր մօտակայ երկիրները, Մերձ. Արեւելքը՝ ներառեալ:

Այդ դժուարին պայմաններուն մէջ անգամ, Հ.Մ.Մ. արձանագրեց յառաջընթաց: Հպարտառիթ եղելութիւն կազմեց, այդ տարիներուն Միութեան «Գողթան» երգչախումբին կազմութիւնը, շուրջ 100 անդամ-անդամուհիներով, որոնց վրայ կը գումարուէին նուագածուներն և մենակատարները, երգչախումբին մասնակիցներու Համրանքը Հասցնելով 150-ի. ինչ որ շատ պատկառելի թիւ կը ներկայացնէր: Մեծագոյն սրահներու բեմերն անգամ ներկու գային զանոնք պարփակելու:

Հինգերորդ՝ յատուկ Հպարտութեամբ արձանագրենք, որ տնտեսա-ընկերային այդ դժուակ օրերուն, երբ տպագրութեան ու թուղթի տագնապը մնայուն մտահոգութիւնը կը կազմէր երկրին ընդհանուր մամուլին, Հ.Մ.Մ. կ'ունենար իր պաշտօնաթերթը՝ «Կայծ»ը: Ան ունեցաւ կարճատև կեանք թէն, շուրջ 5-6 տարի, և սակայն, իր գոյութեան այդ միջոցը նշանաւորեց իր մարզա-ընկերային, ազգային և Հայրենասիրական ճոխ բովանդակութեամբ: Դարձաւ լուսատու փարոս: Հոգե-մտաւոր սնունդ ջամբեց յատկապէս երիտասարդութեան և զինք առաջնորդեց ճշմարիտ ազգասիրութեամբ: Եւ սակայն, իր Հոգեկենսաստու շողերը Հանելի չեղան խաւարին վարժ աչքերուն: Հայրենասիրութիւնը «մեղք» նկատողները իրենց զրպարտագրերը հոս ու հոն հասցնելով, խափանեցին անոր Հրատարակութիւնը, պետական վարչական արգելքով:

Վեցերորդ՝ Հ.Մ.Մ. ի կական շարժման բաժինը յատուկ գնահատութեան արժանացուց ինքինք, յատկապէս իր այդ տարիներու բեղուն գործունէութեամբ: Միութեան մէջ և ըստ Մրագիր-Կանոնագրին, անդամուհիները ունէին Հաւասար իրաւունք ու պարտաւորութիւններ: Իրենց գործունէութեամբ և նախաձեռնութիւններով անոնք ոչ միայն կը Հաւասարէին, այլև, տեղ տեղ, կը գերազանցէին իրենց այր միութենակիցներու աշխատանքը: Երբեմն կը հանդիսանային մղիչ ուժ ձեռնարկներու, անոնց գերազանց յաջողութեան մէջ ունենալով իրենց մեծ բաժինը:

Հ.Մ.Մ. ականուհիները աչքի զարկին յատկապէս պասբէթպոլի, Հեծելանիւի, Վինկլ-Վիոնվլի և ընկերային ընոյթի ձեռնարկներու կազմակերպման մէջ:

Վստահ ենք, որ Հ.Մ.Մ. ամբողջական պատմագիրքին մէջ, Միութեան իգական սիւը զնահատանքի իր յատուկ բաժինը պիտի ունենայ արժանաւորապէս:

Միութեան վերելքին և օգտաշատ գործունէութեան նպաստած, իր անուրանալի ներդըրումով, աղջակ մը կազմեց սկառտական շարժումը: Իրմով կ'ամբողջանայ թուարկումը Հիմնական այն բաժիններուն, որոնց Հաւաքական ընդհանուր աշխատանքը եղաւ փոտապակ մը՝ դրուած Հ.Մ.Մ. պանծալի անուան ճակատին:

Ցանախ ընդգծած ենք: Կրկնելու գնով շեշտենք սա անուրանալի ճշմարտութիւնը, թէ՝ Սկառտական, Հայ Արիական շարժումը բացառիկ կարեւորութիւն կը ներկայացնէ: Համազօր է «Պարոց-Համալսարան»ի, ազգայի Հայ յանձնառու, ազգային գիտակցութեամբ ու ոգիով սնուած-ուռնացած սերունդներու պատրաստութեան օգտին իր ունեցած ու դեռ բերելիք դերակատարութեամբ:

Սկառտական շարժումը իր դասակարգումներով կը նոյնանայ դպրոցի մը Մանկապարտէզի, Նախակրթարանի ու Երկրորդականի բաժիններուն հետ:

Այս իրողութեան գիտակցելով՝ պէտք է գուրգուրալ անոր վրայ, անաղարտ պահելու Համար Միութեան կորիզը, անոր Հիմը Հանդիսացող այս դասերը, Համապատասխան աղգային ու գաղափարական սնունդ մատուցելով անոնց:

Այս պարագային միացն կ'ունենանք իսկապէս ամրակուռ կազմակերպութիւն: Եւ յաւգոյնս օգտակար ըլլալ Հայ Երիտասարդութեան դաստիարակութեան ու կազմաւորման մէջէն՝ մեր Համազգային նպատակներուն իրականացման:

## ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾ Է, ԱՅՈ՛ ԲԺԻՇԿ, ԱՅՈ՛ ՄՏԱԽՈՐԱԿԱՆ, ԱՅՈ՛ ԻՐ ԶԵՌԱԳԻՐԷՆ ՑԱՅՏՆԻ Է...

Շատ մեծ տպաւորութիւն կրեցի կարդալով «ՆԱՅԻՐԻ»ի թիւ 201-ի մէջ, 31 Մարտ 1911-ին գրուած նամակը Ռուբէն Սեւակի, որ ուղղուած է իր երէց քրոջ՝ Եֆրիկի:

Նահատակ գրողին ազնուականութիւնը հայելիի պէս կը ցոլայ իր տողերուն մէջէն, իբրև ազգասիրութեան մարմնացում և մեծի հանդէաց ցուցաբերուած յարգանք:

Հայ մը կամ նոյնիսկ օտարական մը, տեսնելով այդ ձեռագիրը պիտի զմայլի, պիտի սիրահարուի հայկական գիրերուն: Այդպիսի գրիշներով է, որ կը յայտնուի արժէքը մեր լեզուին և տառերուն: Պարապ տեղ չէ ըսւած, որ գիրը, գրելածնը մարդուն նկարագիրն ու տիպարը կը յատկանըշէ:

Այսպիսի արժէքաւոր մարդիկ կու գային և կ'երթային անցեալին, Ու իրենց գրիշին ու իմաստութեան հետքերը կը ճգէին հայութեան վրայ: Բայց, ո՞չ հիմա՝ դժբախտաբար: Նման տիպարներ շատ հապուագիւտ են:

Ուրիշ շատ կարեւոր բան մը, իմաստուն խօսք մը աչքիս զարկաւ այդ գրութեան կամ նամակին մէջ: «Ազգը շէնցնելու համար նախ դպրոցը շէնցնելու է, իսկ դպրոցը շէնցնելու համար պէտք է որ Եկեղեցին շէննայ, որովհետեւ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԵՐՈՒՆ ՄԻՈՒԹԻՒՆ Է:

Հիմա ա՛լ աւելի հասկցանք, թէ որքա՞ն խելացի և կարեւոր անձնաւորութիւն մըն էր Ռուբէն Սեւակ, իր ազգին ու անոր արժէքներուն վրայ գուրգուրացող, անոնց գոյութեան ու ապահովութեան վրայ դողացող, որ թշնամին զայն նկատելով ուզած է Ռուբէն Սեւակի մէջտեղէն վերցուիլը, առանց որ ան Հայ Ազգի ոսկիներուն համար աւելի «Վտանգաւոր» տարր մը դառնայ: Եւ կրցան հաշուեյարդարի ենթարկել զինք ու նմանները:

Այս աստիճանի «խելացիութիւն ու հեռատեսութիւն» թուրքը չունի, չէր կրնար ունենալ: Բայց իր վարպետները՝ «տօնմէ»՝ այո՞....:

Նոյն «վարպետները» ներկայիս ալ, մեր ազգային կառույցները, Եկեղեցին սկսեալ, բաժնելու և քանդելու կ'աշխատին:

Մեր «մեծերուն» կ'իյնայ ելքի մասին մտածելը լուրջ ձեւով, ոչ անձնական նեղ հաշիւներով, ոչ եսասիրաբար, ոչ աթոռի սիրոյն... որ....:

...Հայութեան սրտին չհասնի այն դանակը որ, շատ տարիներէ ի վեր, կը սրեն....:

Հ. Փ.

ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՈՒԵՆՉ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԽՐԵԱԼՆԵՐՈՒՆ

ՀՐԵԱՅ ՓՐՕՖ. ԲԺԻՇԿԻ ՄԸ ԱՆԳՈՒԹ  
ԿԵՑՈՒԱԾՔԸ ՈՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԸ ԶԱՆՂԸՐԸ-Ի  
ԴԺՈՒՆՔԸ ՓՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐԵՆ  
ԿԱՏԱՐՈՒԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՆԴԵՊ

ՈՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆԵՐՈՉ ԳԵՐՄԱՆԱՅԻ  
FRANZ APPEL-ԻՆ ՈՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԸ ԱԶԱՏԵԼՈՒ  
ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐԱԾ ԴԻՄՈՒՄԻՆ ՀԱՆԴԵՊ ՊՐՕՖ.  
DR. ISRAEL-ԻՆ ՏՈՒԱԾ ԱՆԻՒՂՁ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(ԿՐԵԺ ՈՈՒԲԷՆԵԱՆ)

Յունուար 2003-Էն ի վեր,  
 «ՆԱՅԻՐԻ»ի էջերուն մէջ  
 հրապարակելու կը ջանանք մինչեւ հի-  
 մա անծանօթ մնացած՝ Ռուբէն Սեւակի  
 ողբերգական կեանքին պատմութիւնը:

Սենք կը հաւատանք, որ Ռուբէն Սե-  
 ւակի կեանքը, հայկական Եղեռնի պատ-  
 մութեան ամէնէն ողբերգական էջերն  
 են, որոնք դիւցազներգութեան մը նման  
 պիտի փոխանցուին հայ ապագայ սե-  
 րունդներուն:

«Նայիրի»ի այս թիւին մէջ ալ, Ռու-  
 բէն Սեւակի կեանքին բոլորովին անծա-  
 նօթ մէկ էջը հրապարակելու պիտի ջա-  
 նանք.....:

Ռուբէն Սեւակի կնոջ՝ Ժաննի-ի  
 ընտանիքին արխիկին մէջ կը գտնուէին  
 1915 թուակիր գերմաներէն նամակներ:

Բայց այս նամակները ծեռագիր և մանաւանդ գերմաներէն "GOTIK" տառե-  
 րով գրուած ըլլալնուն, երկար ատեն չկրցանք վերծանել:

Վերջապէս՝ 1990-թ. ներուն է, որ ծանօթացանք Ծամիրամ Սեւակի մօրաքրոջ  
 աղջկան՝ BARBARA PFISTER-ին:

Եւ ան վերծանեց այս գերմաներէն "GOTIK" գրութեամբ նամակները:

Ո՞վ է BARBARA PFISTER:

Ժաննի Սեւակին քրոջ՝ MINNA APELL-ին աղջիկն է:

Եւ MINNA անմիջականօրէն կապ ունի Ռուբէն Սեւակի և Ժաննի-ի ամուս-  
 նութեան հետ:

Գերմանիոյ ERFURT քաղաքը բնակող FRANZ և MARIE APELL ամոլը երկու  
 աղջիկ զաւակներ կ'ունենան՝ Միննա և Ժաննի:

17 տարեկանին Ժաննի Աբէլը կը դրկեն Լոզան, Գեղարուեստից վարժարանը  
 ուսանելու:

Իսկ իր քոյրը՝ Միննան ալ ժընեւ՝ վարժարան մը կը դրկուի:

Ժաննին, 1907-թ. ին, Լոզանի մէջ, կը ծանօթանայ Ռուբէն Սեւակին, եւ երկու  
 «երիտասարդ սիրտեր» մեծ սէրով մը կը փարին իրարու:

Բայց միջոց մը յետոյ, Ժաննի-ի դպրոցին տնօրէնութիւնը կը տեղեկանայ  
 կացութեան և էրֆուրթ բնակող անոր ընտանիքին կ'իմացնէ եղելութիւնը:

Եւ հայրը և մայրը, իրար անցած, անմիջապէս իրենց քով կը կանչեն  
 Ժաննին:

Եւ այդ օրէն ետք, Ռուբէնին ու Ժաննի-ին համար շատ տառապալից շրջան  
 մը կ'սկսի: Ռուբէն՝ Լոզան, Ժաննի՝ էրֆուրթ:

Այդ շրջանին գրուած հարիւրաւոր նամակները և բացիկները՝ իրարմէ հեռու  
 մնացած երկու երիտասարդ հոգիներուն բոցավառ սիրոյ արտայայտութիւններն  
 են... ... Եւ 4 Փետրուար 1908-թ. ին, Ռուբէն Սեւակ նամակ կը գրէ Ժաննի-ին ըն-  
 տանիքին:

Չատ յարգալից նամակ մը, որուն մէջ Ռուբէն Սեւակ իր նպատակներուն լուրջ ըլլալ կը յայտնէ ժաննի-ի կպակցութեամբ, և անոր հօրմէն և մօրմէն կը խնդրէ, որ իրեն ժաննի հետ ամուսնութեան արտօնութիւն տան միայն այն ատեն, երբ ինք բժշկութեան վկայականը ստանայ:

Բայց գերմանացի և մանաւանդ դասական Բրուսիայի APELL ընտանիքին համար՝ արեւելքի փեսայ մը [բժիշկ ըլլայ կամ ոչ] ունենալը անընդունելի բան էր:

Եւ ժաննի-ին աղազանքներն ու լացուկոծը որեւէ ազդեցութիւն չեն կատարեր իր հօր և մօր վրայ:

Բայց, բայց, կեանքի մէջ դիպուածները շատ բան կը փոխեն.....:

Ժաննի-ին քոյրը՝ Միննան ալ կը սիրահարուի օտարի մը, ժընելի մէջ: Եւ այս օտարը՝ հրեայ մըն է:

Եւ Աբէլ ընտանիքը, Միննային հրեայի հետ ամուսնութեան ալ «ոչ» կ'ըսեն: Եւ անխուսափելին կը պատահի:

Միննան, այս հրեայէն [առանց ամուսնանալու], մնաչ զաւակ մը կ'ունենայ... Եւ այս ցաւալի պատահարը պատճառ կ'ըլլայ, որ Աբէլ ընտանիքը ստիպողաբար ընդունի Ռուբէն Սեւակին ամուսնութեան առաջարկը ժաննի-ի հետ, երկրորդ «դժբախտութեն» է մը խուսափելու համար: ... Եւ 1908-ին, Ռուբէն և ժաննի՝ նշանուած կը համարուին և 1910-թ.ին ալ, Լոզանի մէջ, կ'ամուսնանան:

Գալով ժաննի-ին քրոջ, Միննային՝ անոր հրեայ սիրահարը, Միննային զաւակ մը աշխարհ բերելեն յետոյ, մէջտեղէն կը կորսուի: ... Եւ քանի մը տարի ետք, Միննան կ'ամուսնանայ զուիցերիացի DR. PFISTER-ի հետ և, 1910-թ.ին, BARBARA-G կը ծնի:

Պարպարա և Միննայի հրեայէն ունեցած մանչ զաւակը՝ Պերնարտը միասին կը մեծնան:

Բայց Պարպարային եղբայրը, իր 40 տարեկանին, անձնասպան կ'ըլլայ....:

Եւ մենք 1990-թ.ին, Պարպարայի Պալ քաղաքի տան մէջ տեսանք, իր անձնասպան եղած հրեայ եղբօր քանդակած եօթը թեանոց հրեական աշտանակ մը, զոր Պարպարան, իր եղբօրմէն մնացած միակ յիշատակը որպէս, մօտը պահած էր:

Ռուբէնի և ժաննի-ի ընտանիքներու կեանքի պատմութիւնը, դժբախտութիւններով լեցուն իսկական վէպ մըն է:

Եւ դժբախտութիւնները կը շարունակուին Պարպարայի կեանքին մէջ ալ:

Իր եղբօր անձնասպան ըլլալեն ետք, Պարպարա սիրոյ յուսախաբութիւններ կ'ունենայ:

Եւ կ'ապրի առանց ընտանիք մը կազմելու և առանց զաւակ մը ունենալու:

Բժիշկի զաւակ Պարպարայի կեանքը կ'անցնի հիւանդներու և կարօտեալներու օգնելով:

Մեր զինքը ճանչցած շրջանին, Պարպարան 85 տարեկան էր, և այդ տարի-քին, ան Պալ քաղաքի կոյրերու հիւանդանոցը կ'երթար, և կոյրերը մխիթարելու համար, անոնց ուզած գիրքերէն ընթերցանութիւններ կը կատարէր:

Այս բարեսիրտ կինը մեզի նուիրեց, ինչ որ ունէր իր մեծ հօր և մեծ մօրմէն [այսինքն ժաննի-ի հօր և մօրմէն] իբր արխիւ նամակներ, նկարներ և փաստաթուղթեր:

Եւ ամէնէն կարեւորը՝ վերծանեց այն կօթիկ տառերով ձեռագիր նամակները, որ իր մեծ մայրը և մեծ հայրը գրած էին զանազան անձերու, իրենց փեսան՝ Ռուբէն Սեւակը փրկելու համար թրքական բարբարոսութիւննեն:

Այս վեհանձն կնկան բարի յիշատակը՝ մեր սրտին մէջ վառ կը մնայ՝ իբր Ռուբէն Սեւակի ընտանիքին ողբերգական կեանքէն էջ մը:

\*\*\*

Այստեղ պարտք կը զգանք, մեր խորին շնորհակալութիւնները յայտնելու

Փրօֆ. Վահագն Տատրեանին, որ Պարպարայի մեջ՝ նագրած գերմաներէն նամակները հայերէնի թարգմանելու ազնուութիւնը ունեցաւ:

Ռուբէն Սեւակի արխիւս, առանց Վահագն Տատրեանին քանի տարիներէ ի վեր մեզի ուղարկած վաւերագիրներուն, շատ անկատար պիտի մնար:

Ան էր, իր խորաթափանց պրատումներով, գերմանական արխիւներուն մէջէն գտած և Ռուբէն Սեւակին վերաբերեալ փաստաթուղթերը մեզի ուղարկողը:

Եւ՝ Վահագն Տատրեանը, մինչև այսօր կը շարունակէ ուղարկել, Ռուբէն Սեւակի մասին վաւերագրեր և գրութիւններ, մեծապէս հարստացնելով Ռուբէն Սեւակի արխիւս:

\*\*\*

11 Փետրուար 2003-թ.ին, «Նայիրի»ի մէջ հրապարակած էինք, հեռագիրի մը պատճենը, որ Ռուբէն Սեւակի Չանդըրը աքսորուած գիշերը ժաննի Սեւակ Պոլսէն, 23 Յունիսի 1915-թ.ին, Լոգան՝ իր մօր կ'ուղարկէր, որ մայրը անմիջապէս Պոլիս գայ:

Եւ ժաննի Սեւակի մայրը՝ MARIE APELL շաբաթ մը յետոյ Պոլիս կը հասնի՝ օգնելու համար իր աղջկան դժբախտ օրերուն:

Եւ ժաննի ու իր մայրը կը դիմեն նախ Պոլսոյ գերմանական դեսպանատունը, և նաեւ Օսմանեան բանակին այն ատենուան իշխանաւորը եղող՝ գերմանացի VONDER GOLTZ փաշա-յին (իսկական անունով՝ GENERAL FELD MARSCHALL COL-MAR VON DER GOLTZ):

Գերմանացիները, բաւական ձգձգումներէ յետոյ, իբր թէ յանձն կ'առնեն օգնելու ժաննի-ին և իր մօրը:

Եւ գերմանական իշխանութիւններուն մեղսակցութեամբ թուրքերը, ըստ իրենց սովորութեան, սուստ խոստումներով կ'օրօրեն ժաննի-ն և մայրը:

Եւ օր մը ալ, թուրքերը անոնց կ'ըսեն, թէ՝ Ռուբէն Սեւակը կրնան ազատ արձակել պայմանաւ, որ Ռուբէն Գերմանիա երթայ և հոն հիւանդանոց մը աշխատի, և մինչև պատերազմի վերջաւորութիւնը Գերմանիայէն չհեռանայ:

Այս խոստումն շատ ուրախացած՝ ժաննի-ին մայրը՝ Մարի Աբէլ իր ամուսին՝ Ֆրանց Աբէլին նամակ մը կը գրէ Լոգան, որ ան անմիջապէս Գերմանիոյ մէջ Ռուբէնին, իբր բժիշկ աշխատելու համար հիւանդանոցի մը մէջ պաշտօն մը գտնէ:

Ֆրանց Աբէլն ալ, այս բարի լուրէն շատ ոգեւորուած, դիմումներ կը կատարէ:

Եւ նոյն ատեն կը յիշէ թերթերուն մէջ վերջերս կարդացած մէկ լուրը: Թերթերը արձագանգ եղած էին հետեւեալ եղելութեան.

«Օսմանեան Կայսրութեան Սուլթանը վերջերս Պոլսոյ մէջ, Վիրաբուժական յաջող գործողութեան մը կ'ենթարկուի գերմանացի փրօֆեսօր բժիշկ Խորայէլի կողմէ»:

Եւ թուրք իշխանութիւնները լեծ երախտագիտութեամբ շնորհակալութիւն կը յայտնեն [իբր թէ] գերմանացի Փրօֆ. Տք. Խարավէլին:

Եւ Ֆրանց Աբէլ, մեծ յոյսերով լի, նամակով մը կը դիմէ Փրօֆ. Տք. Խորայէլիին  
աղաչելով անոր, որ իր հիւանդա-  
նոցին մէջ պաշտօն մը տայ իր  
փեսային՝ Բժ. Ռուբէն Սեւակին, որ  
ան փրկուի Զանդըրը-ի աքսորա-  
վայրէն:

Այստեղ կը հրապարակենք այս  
ցաւալի եղելութեան վերաբերեալ  
փաստաթուղթերէն մասեր.

Ռուբէն Սեւակին աներոջ՝  
Ֆրանց Աբէլին 15-8-1915 թուակիր  
Լոզանէն Գերմանիա՝ Փրօֆ. Խարա-  
յէլին գրած գերմաներէն նամակը:

Այս նամակին BARBARA PFISTER-ի կողմէ վերծանուած և մեքենագրուած պատճենը:

Նոյն նամակին, Վ.  
Տատրեանի կողմէ կա-  
տարուած գերմանե-  
րէնէ հայերէն թարգմա-  
նութեան պատճենը:

«15 ՕԳՈՍՏՈՒ 1915 -  
ՓՐՈՅ. ՏՈՎՔ. ԻԶՐԱԵԼ

Բարեհաճեցէք ներո-  
ղամիտ ըլլալ, որ ձեզի  
քոլորովին անծանօթ  
անձ մը, կը Համարձակի  
ձեր թանկագին ժամա-  
նակը քանի մը վայրկեա-  
նի Համար խլել ձեզմէ:  
Խնդրոյ առարկայ է  
գործ մը որ, ինձի և իմ  
ընտանիքիս Համար, յոյժ  
կարեւոր է: Թերթերէն  
նկատեցի, որ կանչուեր է  
բարձր խաւերու մէջ գերս  
տեւեալ պարագաներու Ճ

Իմ դուստրս... ի Հայ բժիշկ Ռ. Զ ի Հետ, որ Հոս ուսանելէ և բժշկական ճիւղը աւարտելէ յետոյ աշխատեցաւ Պրն. Փրոֆ. Տոքթ. Ռուի Հսկողութեան տակ, և գործեց իրրեւ նահանդային բժիշկ. 1914 Մայիսին զոյգը փոխադրուեցաւ Կոստանդնոպոլիս ուր կարճ ժամանակի մէջ իմ փեսաս յաջողեցաւ բարեյոյս ասպարէզ մը կերտել, նոյնպէս, Ռուբէն Սեւակ ծածկանունով ան իրրեւ Հայ բանաստեղծ իրեն անուն մը Հանեց, զանազան Հայ լրագիրներու մէջ, ինչպէս և պատկերազարդ Հանդէս Հայաստանի մէջ, որ իր նկարն ազ տպեց, իր գործերը լոյս տեսան. երբ պատերազմը պայթեցաւ ան մոռաւ Բրբակման առողջապահական զինագունդին մէջ և իրրեւ բժիշկ ծառայեց ...ին և

Wir hoffen von nun gütige Freundschaft, dass  
wir für unsere Angehörigen ein Beispiel in  
Angewandter Kunst, die dennoch falls  
notwendig ist als originaler und  
höchst wertvoller. Würden Sie uns nicht hier  
eine griffbare Form zu minne und alle X  
gern mögen. Deinde erhalten.

Prof. Dr. IsraeL

15. 8. 1915

Verzeihen Sie gütigst wenn ein Ihnen völlig Unbekannter es wagt Ihre kostbare Zeit auf einige Minuten in Anspruch zu nehmen. Es handelt sich darum eine für mich und meine Familie höchst wichtige Angelegenheit. Aus den Zeitungen ersah ich, dass Sie berufen worden waren S.A. den Sultan zu operieren und Sie in höchsten türkischen Kreisen das grösste Vertrauen geniessen und dies gab mir den Mut Ihnen Nachfolgendes vorzutragen.

Ich bitte sehr um gütige Nachsicht, dass ich Sie mit meiner Angelegenheit so lange in Anspruch nahm, aber der ernste Fall musste möglichst eingehend erörtert werden. Würden Sie geneigt sein hier eingreifen können, so wären wir alle Ihnen zum inbigsten Danke verounden.

Umwegen Sie die Versicherungen ausgezeichnete Hochachtung mit der ich zeichne

ganz gehorchenst

FRANZ APOLL.

## ՀՐԵԱՅ ՓՐՈՒԹ. ԲԺԻՇԿԻ ՄԸ ԱՆԳՈՒԹ... (Ծար էջ 2-էթ)

Կոստանդնոպոլսոյ մէջ, ատեն մը առաջ Կովկասի մէջ ծագում առած Հայկական շարժումը դժբախտաբար եւրոպական թուրքիոյ մէջ ապրող կարգ մը Հայերը կասկածի տակ ձգեց, կասկած մը որ Հակառակ իր անմասնակից ըլլալուն, ընդզրկեց նաեւ զինքը մանաւանդ երբ ան առողջապահութեան մասին Հրապարակային գանազան դասախոսութիւններ տուաւ մինչեւ Յունիսի կէսը: Մենք իմ դուստրէս և թունիկներէս լաւ լուրեր կը ստանայինք երբ Յունիս ամսու վերջերը յանկարծ իմ կինս թէ՛ իմ դուստրէս և թէ՛ կայսերական գերմանական դեսպանատունէն հեռագրով կը պահանջուէր որ անմիջապէս Կոստանդնոպոլիս գայ: Պատճառ մը ցոյց չէր տրուեր և իմ հեռագրային Հարցապնդումիս վրայ ստացայ միայն սա պատասխանը՝ «վաստ բան չկայ»: Յունիս 27-ին կինս մեկնեցաւ, եւ երբ Յունիս 6-ին Կոստանդնոպոլիս Հասաւ, կայսերական դեսպանատան և այստեղի հիւպատոսի միջոցաւ ինծի լուր դրկեց, որմէ ես իր ճամբորդութեան պատճառը Հասկցայ:

Բարեհաճօրէն թոյլ տուէք որ իմ կնոջս՝ պարոն հիւպատոս Ֆիլզինկէրի ուղղած գրութիւնէն կարգ մը Հատուածներ ձեր արեւելումին Համար կցեմ այս գրութեան. [Ներփակեալ]:

Վերոյիշեալ տողերը կարդալէ յետոյ ներողամիտ պիտի ըլլագ որ ես իմ Հարցովս ձեզի դիմեմ, մեծայարդ պարոն, և Հայցեմ ձեր թելադրութիւնը և կամ ձեր բարեսիրտ բարեխօսութիւնը:

Խորհեցայ որ այս դժուարին Հարցը կարելի է լուծել եթէ իմ փեսան գէթ սկզբնական շրջանի մը Համար ձեր վարած Հաստատութեան մէջ, առանց թոշակի, իբրև բժիշկ ընդունուի որպէսզի, ան ազատ ձգուի և դէպի Գերմանիա ուղարկուի: Զեր անունը վստահաբար բոլոր դժուարութիւնները պիտի յաղթահարէ Կոստանդնոպոլսոյ մէջ և կարելի է նոյնիսկ, որ կեանք մը վրկէ:

..... ուսերէն վերցնել:

Գալով իմ անձիս ինքնութեան, պատիւը ունիմ ձեզի Հաղորդելու որ ես, նախապէս, էրֆուրթի մէջ իբրեւ արքունիքի գոհարավաճառ գործ մը ունէի:

..... կը պատկանիմ և 1870 - 1871-ի գինուորական արշակին մասնակցած եմ ..... և այն ատեն ..... կայսերական ..... Վեհափառ Հրամանով պարզեւատրուեցայ Ռազմական շքանշանով էրֆուրթի մէջ, ինչպէս և անունը ..... նոյնինքն գերման հիւպատոս Ֆիլզինկէր հոս պիտի .....

..... իմ մասիս տան, որով իմ երաշխաւորութիւնը կրնայ հիմնաւորուիլ:

Հատ կը խնդրեմ, որ բարի ըլլագ ներողամտութիւն ցոյց տալու իմ ձեզի իմ խնդիրովս այսքան երկարօրէն զբաղեցնել տալուս Համար: Բայց ծանր կացութիւնը կը Հարկադրէ, որ Հարցը կարելի եղածին չափ մանրամասնօրէն քննարկուի: Եթէ եռանդով կարենաք միջամտել, մենք բոլորս ալ ձեզի յաւէտ երախտապարտ պիտի մնանք:

Թոյլ տուէք, որ մեր ամենամեծ յարդանքի Հաւաստիքը տանք ձեզի. որով ես, խոնարհաբար, կը վերջացնեմ գրութիւնս

Գերմանացի [հրեայ] Փրօֆ. Խորայէլին 21-8-1915-ին Գերմանիայէն Ֆրանց Արէլին ուղղած գերմաներէն նամակը:



KLUMPP'S HOTEL BELLE-VUE  
BADEN-BADEN  
TELEFON No. 38  
MFT  
ELEKTR. LICHT  
ZENTRALELEKTR.  
Finestes Leben und service. Wohl.

Wildbad, den 21. Aug. 1915  
(Allem.)  
E. 27/2.

Sehr geehrter Herr

Heute erate wenige und wir sind hier und von  
Berlin aus versuchen zu Ihnen ein möglichst ist;  
und Ihnen unter Beihilfe zu geholfen lassen.  
Es wie wichtig, um Sie aus der Ort, in dem  
Ihr Schwiegersohn interniert ist, genau angeben.  
Sie nennen Kengari, und fügen hinzu "vielleicht Xangri oder  
Angora". Diesen auf exakt festzustellen  
ist nicht.

Hochachtungsvoll

Prof. Israel  
(PROF. ISRAEL)

Այս նամակին BARBARA PFISTER-ի կողմէ վերծանուած և մերենազրուած պատճենը:

Wildbad, den 21. Aug. 1915

Sehr geehrter Herr,

Ihren Brief habe ich hier erhalten, wo ich mich zur Kur  
aufhalte um am 10. September nach Berlin zurückzukehren.  
Hätten Sie sich an mich gewandt solange ich in Constanti-  
nopol war, hätte ich mit mehr Aussicht auf Erfolg für Ihre  
Sache wirken können. Die Schwierigkeit liegt in der ge-  
forderten Garantie, dass Ihr Schwiegersohn Deutschland wäh-  
rend des Krieges nicht verlässt. Diese Garantie kann  
keiner geben, selbst wenn Ihr Schwiegersohn eine Anstellung  
in Deutschland finde würde. An meine Klinik kann ich ihn  
nicht anstellen, wenn er die Deutsche Sprache nicht beherrscht.

weniger werde ich von hier und von Berlin aus  
versuchen zu thun was möglich ist; und Ihnen weitere Mit-  
teilungen zugehen lassen. Es wäre wichtig, wenn Sie mir den  
Ort, in dem Ihr Schwiegersohn interniert ist, genau angeben.  
Sie nennen Kengari, und fügen hinzu "vielleicht Xangri oder  
Angora". Dieses muss exakt festgestellt werden.

Hochachtungsvoll ergebenst

Prof. Israel

Նոյն նամակին Վահագն Տատրեանի կողմէ (→էջ 4)

## ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԻԳՖԱՅԱՅԻՆ ՄԱՅՐԱՎԱՆՔ ՎԵՐԱԴԱՐՁԱԿ

Այսու կը յայտնեմ մեր ժողովուրդի գաւականերուն, որ Շարար, 4 Հոկտեմբեր 2003ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Միարանուրիւնը Պիգֆայայի հովոցէն վերադարձաւ Անթիւսախ մայրավանքը: Անցեալ Կիրակի, 28 Սեպտեմբերին, ամառնային եղանակի վերջին Սուրբ Պատարագը Պիգֆայայի Ս. Աստուածածին Մատրան մէջ մատուցուեցաւ:

## ՈՒՐԲԱԹՈՐԵԱՅ ՊԱՏԱՐԱԳՆԵՐ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ ՄԷԶ

Մեծի Տանն Կիլիկիոյ կարողիկոսուրիան դպրեվանքի բացումէն ետք, Ուրբար, 17 Հոկտեմբեր 2003էն սկսեալ ամէն Ուրբար երեկոյեան ժամը 5:00-ին, Պիգֆայայի Ս. Աստուածածին Մատրան մէջ պիտի մատուցուի Ս. Պատարագ, որուն հրաւիրուած են մասնակցելու շրջանի մեր հաւատացեալները:

## ՀՈԳԵՒՈՐ ԼՍԱՐԱՆ ՀԱՅ ԵՐԻՑԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Կարողիկոսարանի Քրիստոնէական Դաստիարակուրիան բաժանմութիւն և դպրեվանքի տեսչուրիան հետ գործակցարար, Հայ Եկեղեցասիրաց Եղբայրակցուրիւնը Զորեքշարքի, 8 Հոկտեմբեր 2003էն սկսեալ, կազմակերպած է հոգեւոր լարաններու շարք մը, որ տեղի պիտի ունենայ երկու շարարը անգամ մը դրութեամբ: Նիւրերը կ'ընդգրկեն հոգեւոր, բարոյական ու ընկերային խորագիրներ, յատկապէս երիտասարդ սերունդին համար:

Կը հրաւիրեմ մեր հաւատացեալները մասնակից դառնալու համար Եկեղեցւոյ հոգեպարար արարողուրիւններուն և հոգեւոր լսարաններուն:

ԴԻԴԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ

**“ÜMITLERIM HEP KIRILDI”**

BİZİM GENÇLİĞİMİZDE, İSTANBULDA ÇOK YAYGIN OLAN BİR SARKI VARDI.

ÇOK ÜZGÜN VE ROMANTİK BİR SARKI İDİ. BU SARKIYI HER DINLE YİSIMİZDE ÜZÜLÜR VE AGLAMAKLı OLURDUK.

BU SARKININ İSMİ “ÜMITLERIM HEP KIRILDI” İDİ.

3 EKİM 2003 TARİHLİ “MILLİYET” GAZETESİNDEN YAYINLANAN, AMERİKANIN TÜRKİYE İLE DUBAI-DA İMZALADIGI SEKİZ BUÇUK MİLYAR DOLARLIK AMERİKAN YARDIMİNİN SARTLARINI OKUYUNCA, BU SARKIYI HATIRLADIK.

AMAN EFENDİM AMAN. AMERİKA SEKİZBUÇUK MİLYAR DOLAR VERMEK İÇİN NE SARTLAR KOYMUS, NE SARTLAR.

BİZİM ANLADIGIMIZ, BUNA “KISKACA ALMAK” DERLER.

“MILLİYET” GAZETESİ, BU SARTLARIN DOKUZUNU SIRALAMIS.

FAKAT BİZİM İÇİN EN MÜHİMİ 6 NUMARALI SART.

“6.- AMERİKA DISİSLERİ BAKANLIĞI TÜRKİYENİN İRAK’TA İSBİRLİĞİ YAPMADIGINI VEYA KUZEY İRAK’A TÜRK ASKERİNİN “TEK TARAFLı” GİRDİĞİNİ Veya İNSANI KONULARDA İSTENİLEN YARDIMLASMANIN SAGLANAMADIGI RAPOR EDERSE KREDİ VERİLMİYECEK”.

BU DEMEKTİR Kİ, TÜRKİYE BUNDAN SONRA (1974-DE KİBRİSTA YAPTIĞI GİBİ) BİR BAHANE BULARAK KUZEY İRAKTA KURULAN YARI RESMI KURT DEVLETİNE HÜCUM EDİP, KÜRTLeri TEMİZLEYEMİYECEK.

ÖYLE ANLASILİYOR Kİ, AMERİKA, 11 EYLÜL 2001-DE NEW YORK FACIASINA SEBEP OLAN SUUDİ-ARABİSTANIN SÜNNİ MÜSLÜMANLARINI CEZALANDIRMAK İÇİN, SII MÜSLÜMANLARI KUVVETLENDİRMEK SIYASETİNİ TATBIK EDİYOR.

AMERİKA, İRAKTA SÜNNİ SADDAM HÜSEYİN İKTİDARINI YIKTI, VE YERİNE İRAKTA ÇOGUNLUK OLAN SİLERİ İKTİDARA GETİRDİ.

BU ARADA ÇOK SIMARAN VE İRAK HARBINDE AMERİKLİLARA GEÇİS İZNI VERMIYEN TÜRKİYЕİ DE CEZALANDIRIYOR.

KUZEY İRAKTA KURULAN KÜRT DEVLETİNİ AMERİKA BUGÜN AÇIKÇA DESTEKLEMEDİTİR.

VE KUZEY İRAKTA, BAGIMSIZ BİR KÜRT DEVLETİNİN İLAN EDİLMESİ ARTIK BİR KAÇ SENE MESELESİ.

AMERİKANIN SEKİZ BUÇUK MİLYAR DOLARLIK YARDIMINA KARŞI, TÜRKİYENİN KUZEY İRAKA GİRMEMEYİ KABUL ETMESİ, TÜRKİYENİN KÜRT DEVLETİNİ “DI FACTO” KABUL ETMESİ DEMEKTİR.

HALBUKİ TÜRKİYE, İRAK HARBI BASLAMADAN. NE RÜYALAR GÖRÜYORDU.

TÜRKİYE, KERKÜK PETROLLERİNİ ELE GEÇİRECEK VE 1915-DE ERmenileri TEMİZLEDİĞİ GİBİ, “HARPIE OLUR BÖYLE SEYLER” DIYEREK KUZEY İRAKTAKİ KÜRTLeri TEMİZLEYECEKTİ. ÇOK YAZIK OLDU.

GEL DE, BU DURUMDA, “ÜMITLERIM HEP KIRILDI” SARKISINI SÖYLEME.

3. Q.

**ԿԵ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԹԵՐՈՒՆ [ԻՖԻ ԹԷ]. ՀԳԻՏՑԱՇ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
«ԲԼԼՈՐ ՑՈՑՍԵՐՄ ԿՈՏՐՈՒԵՑԱՆ»**

Մեր երիտասարդութեան տարիներուն, Պոլսոյ մէջ շատ ընդհանրացած երգ մը կար:

Շատ յուզիչ և ռոմանողիկ երգ մըն էր:

Այս երգը, ամէն անգամ որ մտիկ կ'ընէինք, կը յուզուէինք և աչքերնիս կ'արցունքուէր:

Այս երգին անունը՝ «Բոլոր Յոյսերս Կոտրուեցան» էր:

Յ հոկտեմբեր 2003 թուակիր "MILLIYET" թերթին մէջ հրատարակուած, Ամերիկային թուրքիոյ հետ DUBAI-ի մէջ ստորագրած ութուկէս միլիառ տոլարնոց Ամերիկեան օգնութեան պայմանները երր կարդացինք, այս երգը յիշեցինք:

Ամերիկան, թուրքիոյ ութուկէս միլիառ տոլար օգնութիւն կատարելու համար, ալ ի՞նչ պայմաններ դրեր է, ի՞նչ պայմաններ:

Մեր գիտցածով՝ այս վիճակին կ'ըսեն՝ «աքցանի մէջ առնել»:

"MILLIYET" թերթը այս պայմաններուն ինը հատը շարեր է:

Բայց, մեզի համար, ամէնէն կարեւորը 6 թուակիր պայմանն է՝

« 6.— Ամերիկեան ԱԴ նախարարութիւնը, եթէ ստուգէ, որ թուրքիան իրաքի մէջ չի գործակցիր, և կամ թուրք զինուորը «միակողմանի» չիւսիսային իրաք մտած է, և կամ մարդկային հարցերու մէջ պահանջուած փոխադարձ օժանդակութիւնը չէ ապահովուած, և ԱՄՆ-ի Ա 9 նախարարութիւնը այս պարագան տեղեկագրէ՝ օգնութիւնը չի տրուիր»:

Այս ըստ է, թէ՝ թուրքիան ասկէ յետոյ [1974-թ.ին Կիպրոսի մէջ ըրածին նման] պատրուակ մը գտնելով, չիւսիսային իրաքի մէջ կազմուած կէս պաշտօնական քրդական պետութեան վրայ յարձակելով, քիւրոերը պիտի չկարենայ մաքրագործել:

Երեւոյթներէն դատելով՝ այնպէս կը կարծենք. թէ Ամերիկան 11 Սեպտեմբեր 2001-թ.ի NEW YORK-ի ողբերգութեան պատասխանատուները եղած Սառտի Արապիոյ սիւնի միւսիւմանները պատժելու համար. շիի միւսիւմանները զօրացնելու ուազմավարութիւնը կը գործադրէ:

Ամերիկան՝ իրաքի մէջ, սիւնի եղող Սատտամ չիւսէյնի իշխանութիւնը կործանեց և իրաքի մեծամասնութիւն եղող շիիները իշխանութեան բերաւ:

Եւ նոյն ատեն, շատ շփացող և իրաքի պատերազմին Ամերիկացիներուն իր հողերէն դէպի իրաք արշաւելու իրաւունք չտուող թուրքիային ալ՝ պատժել սկսած է:

Չիւսիսային իրաքի մէջ կազմուած քրդական պետութեան՝ Ամերիկան այսօր բացայայտորէն թիկունք կը կանգնի:

Եւ չիւսիսային իրաքի մէջ քրդական անկախ պետութեան մը հոչակուիլը՝ այլեւ քանի մը տարւան հարց է:

Ամերիկային տուած ութուկէս միլիառ տոլարնոց օգնութեան դիմաց, թուրքիոյ չիւսիսային իրաք չխուժելը ընդունիլը՝ քրդական պետութիւնը "DI FACTO" ճանշնալ ըստ է:

Մինչդեռ, իրաքի պատերազմը չ'սկսած՝ թուրքիա ի՞նչ երազներ կը տեսնէր:

Թուրքիան թէրքիւկի քարիւղի հանքերը ճեռք պիտի անցընէր, և 1915-թ.ին հայերը մաքրագործելուն նման, «պատերազմի ընթացքին այս տեսակ բաներ կ'ըլլան» ըսելով, չիւսիսային իրաքի մէջ գտնուող քիւրդերը պիտի մաքրագործէր:

Շատ մեղք եղաւ:

Եկուր, այս վիճակին մէջ, «Բոլոր Յոյսերս Կոտրուեցան» երգը մի՛ երգեր:

## ՀԱՅՐԵՆԱԿԱՆ

### ԱՌԱՆՑ ՍԻՐՈՅ, ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ ԱՆԻՄԱՍ Է ԳՐԵՑ՝ ՎԱՐԴԱՆ Ա. ՔՀՆՅ. ՏԻՒԼԿԵՐԵԱՆ

Հայ ժողովուրդին ցեղային առանձնայատկութիւններուն մէջ, ակնառու տեղ կը գրաւէ ԱՆՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ սեաբոյլ արատը: Եւ այս բարոյական ախտանիշը, գրեթէ ամէն հայու Ծկարագրին վրայ բացայալու կ'երեւայ, երբ հատուածական մոլուանդ համոզումներով շյապյուած մարդիկ, գաղափարական տարակարծութիւններով կը բանավիճին ու չեն կրնար արմատական լուծում տալ ազգային կեանքը ալեկոծող հանգուցային հարցերում:

Հայուն այս ապերասան ու անբարտաւան ԵՍ-ը, հատուածամոլութեան վրայ ժայռանիստ յենած, երբեք չի տկարանար, չի ծոփր, չի փոխուիր, չի տժգումիր, մինչեւ անգամ ակներեւ իրողութիւններու դիմաց կը մնայ կամակոր ու աննահանչ:

Հազարամեակներու ընթացքին, այս կոյլ եսականութիւնը կը յարատեւէ հայավընաս փլուզումներով:

Այսօր ալ, առաւել սաստկութեամբ կը շարունակէ մրճանարել հայուն եղերաբախտ ճակատագիրը, տարագրելով անոր կեանքէն ազատափրութեան և միասնականութեան ոգին:

Անմիաբանութեան որոմը՝ փշաստանի վերածած է հայրենի երկիրը և գաղութային կեանքը, ուր կոսակցութիւններու միջեւ բացուած խորարմատ հերձուածը, բնարատրութիւն չի տար, որ եկեղեցիներու, կազմակերպութիւններու և հայերու միջեւ համագործակցութիւնը տիրապետէ:

Գաղափարախօսութիւններու և հակամարտութիւններու մոլեռանդ պայքարը, այն աստիճան շիկացած է ղեկավարներու միջեւ, որ հայրենիքի բարոյական կյաման ապականութիւն կը բուրէ:

Պետական պաշտօնեաներու շահագործումներու հետասպառ վազքը, նորանոր կեղեցումներով կը խորացնէ կիսաքաղց ժողովուրդին թշուառութիւնը և շատերու հոգին ու գիտակցութեան մէջ կը հրանիէ արտագաղթի հրէշային մտածումը:

Հանրապետութեան նախագահն ալ՝ իր իշխանութիւնը անսասան պահելու մեծամոլութենէ մղուած, անուղղակի կը յորդորէ ժողովուրդը, որ ուզածը ընէ, բայց չդպչի իր նախագահութեան:

Այս տագնապայի ու շփոք կացութեան մէջ, գողութեան և յափշտակութեան հակամէտ մարդիկ, բռնած եց անիրատութեան շահաբեր ճամբան և որսորդի նշանառութեամբ կը վազնէ մէկզմէկու ետեմէն, զիրար որսալու և կողոպտելու անպարարութեամբ:

Ալ, ոչ մէկուն հոգն է, թէ զո՞վ կը խաբէ և որմէ կը խարուի, զո՞վ կը զրպարտէ և որմէ կը զրպարտուի: Մարդկային բարոյականը իշած է երկրէն ալ ցած տեղ մը:

Սանձարձակութիւնը, ասազակութիւնը, զեղծարարութիւնը, առաւ-փախատութիւնը և այս կարգի բոլոր մոլութիւնները՝ ամէն ասպարէզի մէջ կը ցուցադրեն իրենց պըժգայի տգեղութիւնը:

Ամօրին ու մեղքին գիտակցութիւնը մթագնած է շատերու մօտ, և այդ է պատճառը որ ամէնէն սարսափազդու ոճիրները կը գործեն, առանց ամենափոքր խղճանարութեան:

Սուտը հաւատարմօրէն կը հետեւի անոնց քայլերուն և կը խրախուսէ անոնց եպերելի արարքները:

Ժողովորթութիւնը, այնքան երբազգած ծեզծեզումներով կը մօտենայ իր զոհերուն, որոնք շատ դիւրին կը բակարդուին հոյակապօրէն լարուած ծուղակներու մէջ:

Մարդկային բորբոսած բարքերուն մէջ հազուադէպ կը հանդիպիս վստահելի գործընկերի մը, որ քեզ չխաբէ և պարկեշտութեան ճանապարհով շահի ու շահեցնէ քեզ:

\* \* \*

Անկախութիւնը իր յաղթապանծ ժամանումով չփառատրեց հայրենիքը, այլ ստուերացուց զայն նախկին իր բոլոր շքեղութիւններէն ու առաւելութիւններէն:

Որքան ատեն՝ անկախութիւնը երազ էր, գաղափար էր, բառ էր, հայուն ազատամեր հոգին կարօտով կը տոչորէր և ակնդէտ կը սպասէր ու կը յուսար ազատութեան արեաձագին:

Այսօր, որ հազարամետակներու երազը հասած է իր լուսապայծառ հանգրուանին և ինքնուրոյն պետութեամբ հայրենիք մը ունինք, դժբախտաբար շիշած հրաբուկի մը տպատրութիւնը կը բողու հոգիններու մէջ:

— Կարմիր վարչակարգի տիրապետութեան տարիններում, — կ'ըսէ հայրենի մտատրական մը, — հակակշռուած ազատութեան մէջ, ապրուստի և գործազրկութեան մտահոգութիւններէն ձերբազատուած՝ ապահով էր մեր կեանքը: Ծաշասեղաններուն վրայ կաթը, կարագը, հակիթը, մեղրը և պտուղներու բոլոր տեսակները բրգացած՝ կը գրգուէին մեր ախորժակը: Դրամը և տարիններու մեր խնայողութիւնը կ'երաշխատրէին մեր ապագայ դժուարութիւնները: Նուազագոյմ՝ ամէն ընտանիք կրնար ամենայն դիւրութեամբ կերկարել բազմանդամ բերաններ: Ներկայիս, հին օրերու հանգըստամէտ կեանքին բարիքներէն բոլորովին զրկուած, աղքատութեան մէջ կը հիւծի ժողովուրդը, յուսալքուած հայրենի իշխանութեանէն ու իր ափսոսայի վիճակէն: Կ'ապրինը ներկայ և ապագայ ժամանակներու անստգութեան անձկութիւններով: Անկախութիւնը թաղեց մեր երջանիկ անցեալը և խաղաղամէտ կեանքը: Զրկեց մտատրականութիւնը իր լաւակենցաղ պայմաններէն և ճնունդ տուաւ արտագաղթի հեղեղային հոսանքին: Անկախութեան չարիքներէն միակ օգտուտղները եղան պետութեան անպարկեցտ պաշտօնեամները, վաշխառումները, շողոքորթները, կաշառակերութեան ախոյնանները և չարագործութիւնը իրենց իտէալ ըրած շահատակները:

\* \* \*

Ծշմարտութեան համար օթեւան չկայ երկրի վրայ, ոչ մէկ տեղ: Սուտը իր արբանեակներով տարածած է իր մենատիրութիւնը հինգ ցամացամասերուն վրայ:

Երկինքը գոց է մարդոց կեանքին վերեւ և ծշմարտութեան արեւը ամպերուն ետեւ կը մնայ ընդմիշտ սքողուած:

Քրիստոնէական քաղաքակրթութեան կերտած ու նովրագործած բոլոր արժէքները իրենց յաւերժալոյս իմաստէն պարպուած, կը ներկայանան շրջուած պատկերի մը դիրքով:

Ոչ մէկ ժողովուրդ՝ իր ազգային բարոյականին վրայ, այնքան բազմանառագայթ շողարձակում տուած չէ անմիաբանութեան, որքան հայութիւնը իր ազգաքանդ անշատումներով:

Հիմա, որ հայրենի իշխանութեան թոյլտուութեամբ վերելք և աճում կու տան խոլվարար տարրերը իրենց սայթաքումներուն, շատ դիւրին կրնանք նախատեսել հայրենիքին ապագային վիճակուած մեծ վտանգը:

Գաղտնիք չէ, ոչ մէկ հայուն, որ մեր մեծ պարտութիւնները, ծանրակշիռ կորուստները և շարունակական կոտորածները, առաւելապէս հետեւանք են ներքին խոլվայոյգ կացութիւններու և եսական պայքարներու:

Հայրենիքի մէջ, շատ ուսումնարաններ կան զարգանալու և մասնագիտանալու

ամէն մարզի մէջ, բայց՝ ափսոսալի է, որ չկայ դպրոց մը, ուր մարդիկ յաճախեն և միասնականութեան դասեր առնեն ու... հայանան:

★ ★ ★

Կա՞յ մարդկային լեզուին մէջ ուրիշ բառ մը, որ ազատութիւն բառին ձգողական հմայքը ունենայ և ատոր սիրոյն մարդիկ զոհին ու զոհուին հոգեկան բարձրագոյն պատճեներու վրայ:

Կա՞յ աշխարհի տարածքին հայ մը, որ չսիրէ իր հայրենիքը և չ'ուզէ ունենալ ժողովուրդին ու իր ազատութիւնը:

Յեղափոխութիւնները, ապստամբութիւնները, ընկերային յեղաշրջումները կը կատարուին ժամանակի յարմարութիւններով և ոչ թէ բոպէական յախուն պոռեկումներով:

Սովորաբար, հայերս կը հաշուենք հայութեան ուժը թիւրով, թէ քանի միլիոն են աշխարհի բնակչութեան մէջ:

Միաւ է քանակի վրայ յենով և ճշդել իր գօրութիւնը: Աստուծոյ համար ընդունելի չէ մարդահամարը, որովհետեւ իր մէջ կը պարփակէ մարդկային ինքնասիրութիւնը:

Երբ Դափիք թագաւորը ուզեց գիտնալ, թէ ո՞րքան է իր ժողովուրդին թիւը: Աստուծոյ հանելի չթունցաւ և խստօրէն պատժեց խրայէլի ժողովուրդը:

Այս հաշուտվ կը ջնջենք զԱստուած և իր ամենակարողութիւնը ու կը կոթենք մարդկային տուեալներու վրայ:

Հայութեան պարագային մեր ուշադրութեան կեղրոն պէտք է դարձնենք, ոչ թէ մարդահամարին ուժաչափը, այլ որակին գօրութիւնը:

Հայերը համրանքով քիչ են կամ շատ են, Եշանակութենէ զուրկ է: Էական այն է, թէ որակաւորները հոգեկան և բարոյական ի՞նչ գօրութիւն կը բարացուցեն:

Ինչպէս մարդկային մարմինը միակտուր ամբողջութիւն է և ունի շատ մը անդամներ, այնպէս ալ հայերը շատ են գաղափարական բաժանումներով, բայց կը կազմեն մէկ մարմին:

Մեղքին և ամօթին գիտակցութիւնը մթագնած է շատերուն մօտ և այդ է պատճառը, որ ամէնէն սարսափազու ոնիրները կը գործեն, առանց փոքր խղճահարութեան:

Մեծ պահքի շրջանին, ծերունի վարդապետ մը կը քարոզէ սատանային և փորձութիւններու մասին: Կին մը յանկարծ ոտքի կ'ելլէ և քարոզչին խօսքը ընդմիջելով կը բացականչէ,

– Հայր Սուրբ, այդ ձեր ըսած սատանան մտեր է ամուսինիս մէջ և աւեր կը գործէ: Քանի կը փորձեմ զինքը հաւատքի բերել՝ գազան կը դառնայ և կը սպառնայ տունէն հեռանալ: Ծուարած վիճակ մը ունիմ, ինծի համար շատ դժուար է կենակցի անհաւատ մարդու հետ:

– Տիկին, ձայնդ կտրէ, – կը սաստէ վարդապետը կնոջ անտեղի ելոյթէն զայրացած: – Թող տուր ամուսինի օծիկը և դուն մէկ կողմ քաշուէ: Աստուած գիտէ, անոր հաշիւը ինչպէս պիտի կարգադրէ: Քու գործդ չէ սատան դուրս հանել անոր մէջէն:

Երկու շաբաթ վերջ, կինը եկեղեցի կու գայ և քարոզի միջոցին կ'աղաղակէ,

– Հայր Սուրբ, հրաշալի լուր մը ունիմ քեզի տալու: Ամուսինս, որ ըսի թէ սատանայ մըն է, հիմա հրեշտակ դարձած է: Ալ ինծի պէս կը հանատայ ու կ'աղօթէ: Խրատդ մտիկ ըրի և Աստուծոյ յանձնեցի զինքը:

Ի՞նչ լաւ կ'ըլլայ, եթէ մենք ալ Աստուծոյ վստահինք հայ անմիաբաններու պարագան:

Գուցէ օր մը անոնց մէջ ալ կը սթափի հայրենասէր հայը և կը մեծագործէ:

կատարուած գերմաներէնէ հայերէն թարգմանութեան պատճենը:

Վիլտպատ, 21 Օգոստոս 1915

ստացուած՝

23 Օգոստոսին

Մեծայարդ Պարոն,

Զեր նամակը ստացայ Հոս, ուր դարմանումի Համար կը մնամ՝ Սեպտեմբեր 10-ին Պերլին վերադառնալու նպատակաւ: Եթէ Կոստանդնոպոլիս գտնուած միջոցիս ինձի դիմած ըլլայիք, ես յաջողութեան աւելի մեծ Հեռանկարով, ձեր խնդրոյն ի նպաստ կրնայի միջամտել: Դժուարութիւնը այն պահանջուած երաշխաւորականին մէջ է, որով պայման կը դրուի որ ձեր փեսան պատերազմի տեւողութեան Գերմանիային չհեռանայ: Այս երաշխաւորութիւնը ոչ ոք կրնայ տալ, նոյն իսկ եթէ ձեր փեսան Գերմանիոյ մէջ պաշտօն մը գտնայ: Խմ բուժարանիս մէջ ես իրեն պաշտօնի չեմ կրնար կոչել, քանի որ ան գերմաներէն լեզուին չի տիրապետեր....:

Հոսկէ և Պերլինին աւելի դժուար պիտի ըլլայ փորձել, ընելու այն ինչ որ Հնարաւոր է և ձեզի յաւելեալ տեղեկութիւններ տալու: Կարեւոր է որ ինձի՝ ձեր փեսային արգելափակուած տեղին ճշգրիտ անունը տաք: Զայն Քէնկարի կը կոչէք, աւելցնելով որ «թերեւս Քանկի է՝ Անկորայի մօտ»: սա պէտք է նախ ճշգրտորէն ստուգուի:

Յարգանօք, խոնարհաբար՝

ՓՐՈՒ. ԻԶՐԱՅԻԼ,

Մենք կը հաւատանք, որ Վերը հրապարակուած երկու նամակներուն յէջ, 24 Ապրիլ 1915-ի Եղենին բոլոր յոյզերը կը ցոլանան:

Առաջին նամակին մէջ, Ռուբէն Սեւակին աները իր փեսին կեանքի պատմութիւնը կու տայ ամենայն հարազատութեամբ: Եւ կ'ըսէ, թէ իբր բժիշկ ան օգնած է բոլորին և որեւէ յանցանք չէ գործած Զանուրը աքսորուելու համար:

Եւ, Փրօֆ. Խորայէլէն կը խնդրէ, որ Ռուբէնի իր հիւանդանոցին մէջ իբր բժիշկ և առանց թոշակի աշխատիլը ընդունի, որ իր փեսան ազատ արձակուի Զանուրը-էն, և Գերմանիա ուղարկուի:

Ֆրանց Աբէլին այս աղաչական նամակին իբր պատասխան. հրեայ Փրօֆ. Խորայէլին գրած նամակը՝ կարճ, անգութ և վճռական ծեւով մերժողական գրութիւն մըն է:

Փրօֆ. Խորայէլ, դիմումը մերժելու համար իբր պատրուակ կ'ըսէ, թէ՝ «Զեր փեսան գերմաներէն լեզուին չի տիրապետեր»:

Մինչդեռ, շատ ծանօթ իրականութիւն մըն է, թէ բժշկութեան մէջ գործածուած բառերը միջազգայնացած են, և աշխարհի բոլոր կողմերը նոյն մասնագիտական բառերը կը գործածուին:

Հրեայ Փրօֆ. Խորայէլի մերժողական պատասխանը անհեթեթ, անխիղճ և իր անունին վայել անմարդկային արտայայտութիւն մըն է:

1915-ին Պոլսոյ մէջ, թուրք սուլթանը դարմանած հրեայ Փրօֆէսօր Խորայէլին այս անգութ նամակը (որով ան կը մերժէ փրկել Ռուբէն Սեւակը) կարդալէ յետոյ, մենք շատ աւելի համոզուեցանք, որ հայկական ցեղասպանութեան առաջնակարգ պատասխանատուները հրեաներն են:

Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոցի Տնօրէնութիւնը, սաները, մանկավարձներն ու ծնողական խորհուրդը, կրթական վերամուտի սեմին և հաստատութեան քարերար, ներկուն մտաւորական, խիզախ ու հեռատես հրապարակագիր Յովհաննէս Զիլինկիրեանի տարեդարձի առթիւ, յղած են շնորհաւորութեան սրտագին խօսք տիպար հայրենասէրին:

Ներկայ թիւով լոյս կ'ընծայենք - նաև համաձայն անուանի այս կրթօնախի տնօրէնութեան ցանկութեան - երկու շնորհաւորագիր, մնացեալները վերապահելով «ՆԱՅԻՐԻ»ի յաջորդ թիւն:

«ՆԱՅԻՐԻ»ի խմբագրութիւնը իր հերթին, կը մասնակցի այս շնորհաւորանքին, նաև կիսելով մաղթանքը դպրոցի տնօրէնութեան և ծնողական խորհուրդին, որ իրենց սրտարուխ և անկեղծ քարեմաղթանքը մեծայարգ քարերարին ուղղուին ի՞ր ներկայութեան, Ռուբէն Սեւակ կրթարանի յարկին տակ, ուր կը փողփողի նշմարիտ սիրոյ և նուիրումի ջակը հայրենասիրութեան, արժանի պատիւ մը ընծայած ըլլալու համար Երախտաւորին, որուն մասին շատո՞նց մտածած ըլլալու էր ՀՀ-ի Ազգային՝ Կրթութեան նախարարութիւնը, երէ ժիշ մը նուազ կողմնակալ և Երախտամոռ գտնուած ըլլար: Չե՞ս ափսոսար բացակայութիւնը նախկին Սփիտք-Կոմիտէին, որ գիտէր պատշաճ յարաբերութիւն մշակել Սփիտքի հետ:

Խմբ. «ՆԱՅԻՐԻ»ի

#### Մեծարգոյ Պարոն Ժիրայր Թօսունեան - Նայիրի

Երեւանի Ռուբէն Սեւակի անուան թիւ 151 դպրոց - վարժարանի աշխատակազմը, դիմելով Ձեզ, խնդրում է տպագրել ներկայացուող գրութիւնները «ՆԱՅԻՐԻ» Շաբաթաթերթի առաջիկայ համարում:

Կանխալայտ շնորհակալութեամբ և յարգանքներով

Երեւանի Ռուբէն Սեւակի անուան

Թիւ 151 դպրոց-վարժարանի տնօրէն՝ [Ձ. ՂԱԶԱՐԵԱՆ]

#### ՄԵԾԱՐԳՈՅ ՊԱՐՈՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Երեւանի Ռուբէն Սեւակի անուան թիւ 151 դպրոց-վարժարանի մանկավարձները, աշակերտութիւնը և ծնողական համայնքը շերմօրէն շնորհաւորում են Ձեզ ծննդեան օրուայ առթիւ և մաղթում հաշառողջութիւն, երկար և բեղմնաւոր կեանք:

Մենք շատ հպարտ ենք, որ մեր դպրոցը կրում է Ձեր հօրեղջօր՝ հերտս բանաստեղծ Ռուբէն Սեւակի անունը, հպարտ ենք և ուրախ, որ Ռուբէն Սեւակի միջոցով գտել ենք Ձեզ նման ազնիւ քարեկամ: Սա մեզ համար ոչ միայն մեծ պատիւ է, այլև մեծ պատասխանատուութիւն:

Սիրելի բանաստեղծի հայրենասիրական գաղափարներն ու հերտսական կեանքի պատմութիւնը մեզ համար վառ օրինակ և կեանքի ուղեցոյց են...

Անուրամալի մեծ է Ձեր դերը Ռուբէն Սեւակի գաղափարների տարածման և սերունդների հայրենասիրական դաստիարակութեան ազգանուելք գործում: Մենք մեր աշխատանքները կազմակերպում ենք առաջնորդուելով այդ գաղափարների սկզբունքով մանկան մէջ դաստիարակել նախ և



Յովհաննէս Զիլինկիրեան

առաջ ազգային արժանապատութեան և հայրենասիրութեան բարձր զգացում:

Մեծ պատասխանատութեամբ ենք վերաբերում մեր մեծերի և մասնաւրապէս Ռուբէն Սեւակի բողած ժառանգութեանը՝ մեր դպրոցական առօրեան լցնելով նրանց բառ ու բանով, խօսք ու երգով, նրանց նուիրուած գրական հանդէսներով:

Թէեւ ճակատագրի բերումով Դուք ապրել էք հայրենիքից հեռու, բայց Զեր սիրութրովի է Հայրենիքի զարկերով, ապրել էք ու գործել յանուն հայրենիքի, յանուն հայ ժողովրդի և այսօր Դուք Հայաստանում Զեր տունը ունեք, Ռուբէն Սեւակի անուան դպրոցը, որի աշակերտները իրենց ուսուցիչների հետ միասին երազում են հիւրընկալել Զեզ...

Մենք շատ երախտապարտ ենք, որ Դուք հեռուից հետեւում էք մեր դպրոցի կեանին, ուրախանում էք մեր յաջողութիւններով և Զեր կողմից հնարաւոր ամէն ինչ անում, որ մենք աշխատենք և սպորենք զեղեցիկ, յարմարաւէտ դպրոցական շենքում:

Այսօր մենք Ռուբէն Սեւակի անուան դպրոցի աշակերտներս, Զեր ծննդեան օրուայ առթիւ, որպէս նուէր խոստանում ենք Զեզ լաւ սպորել, աւելի շատ կարդալ սիրելի բանաստեղծի ստեղծագործութիւնները, սիրել մեր հայրենիքը և ամէն ինչ անել, որպէսզի մեծանալով օգուտ բերենք Հայրենիքին և հայ ժողովրդին...

Շնորհաւոր ծնունդի գրչի հերոս:

**ԵՐԵՒԱՆԻ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ԹԻՒ 151**

Դպրոց-վարժարանի սաներ, մանկավարժներ, ծնողական խորհուրդ

\*\*\*

### ՄԵԾԱՐԳՈՅ ՊԱՐՈՆ ՅՈՎՃԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻ ՐԵԱՆ

Երեւանի Ռուբէն Սեւակի անուան թիւ 151 վարժարանի տնօրէնութիւնը և դպրոցական խորհուրդը երախտագիտութեան և հապատութեան ազնիւ զգացումներով լցուած, ի խորոց սրտի շնորհաւորում ենք Զեզ ծննդեան տարեղարձի առիթով: Մեր բոլորիս սրտագին բարեմաղքանենները Զեզ: Մենք գիտենք, որ շնորհաւորանի խօսք ենք յուս շատ հարազատ մի մարդու, որը կարծես միշտ մեր կողմին է եղել, ում հետ աշխատել ենք, կիսել մեր մտորումները, յոյզերը: Բազմազան են մեր զգացումները, ասելիքը՝ շատ: Տարիների ընթացքում որքան շատ իմացանք Զեր կատարած գործերի մասին, Զեր բարերարութիւնների մասին [վկան՝ մեր կրթօնախին նորոգ ու բարմացած տեսքը], այնքան աւելացան յարգանքը, սէրն ու հիացմունքը Զեր հանդէա:

Այսօր Դուք Սփիւրքի ամենանանացուած մտաւորականներից էք, որի խօսն ու գործը միշտ միաձոյլ են եղել: Դուք, որ մեր պատմական յիշողութեան կրողն էք, նորովի ոգեկոչեցիք Ռուբէն Սեւակի անմահ հոգին: Այդ ոգին արդէն յաւերծ ապրելու է իր հայրենիքում, ուր կայ և գործում է նրա սուրբ կրող կրթօնախը:

Դուք Սփիւրքում հայ մնացիք և հարազատ ժողովրդի ցաւը կրեցիք Զեր հոգում, հաւատարիմ մնացիք Զեր արմատներին, մնացիք միշտ և կաք Հայաստանի մեծ զաւակը, հաւատացիք, որ վաղ քէ ուշ պիտի յաղթանակեն արդարն ու ճշմարիտը:

Մենք այն երջանիկներից ենք, որ բախտ ունեցանք վայելելու Զեր բարեկամութիւնն ու հովանաւորութիւնը: Դուք, Զեր բուռն ազգային-հայրենասիրական գործունէութեամբ, շատերի համար ազգին ծառայելու օրինակ էք, որ միշտ կանխատեաւմ է իրադարձութիւնները և նիշտ եզրայանգումներ անում: Դուք, Զեր մէջ կրեցիք, Ռուբէն Սեւակի երազն ու պյտ երազը ստանդում էք սերունդներին: Անհանգիստ, որոնող ու պրայը

տող է եղել ողջ կեանքում: Ապրել է այրուելով ու լոյս տալով, կատարելով հայրենասէր մտաւորականի Զեր ամէնօրեայ աշխատանքը:

Յարգարժան Պրն. Զիլինկիրեան, յոյս ունենք, որ մի օր մեր կրթօնախի նորոգուած



**Ռուբէն Սեւակի անուան դպրոցը - Երեւան: Աշխն՝ Ազգային Հերոսի մարմարէ կիսանդրին բարձրացուած պատուանդանի վրայ, որուն շուրջ միշտ բարձ մեխակներ կան:**

Դակինում կը կայանայ վաղուց սպասուած մեր հանդիպումը: Որքան կուզենայինք այսօր՝ Զեր յորելեանի օրը Զեր կողէին լինել և կենաց բաժակ բարձրացնել, շնորհաւորանքի շերմ խօսեր ասել: Համակուած Զեր հանդէա խորին յարգանքով և ակնածանքով՝ կրկին շնորհաւորում ենք Զեզ՝ վաստակաշատ գործիչին և ասում. «Ապրեցէ՞ երկար, սիրելի՝ Զիլինկիրեան, Զեր սիրով ու շերմութեամբ տաֆացրէ՞ շատերին, շատերին վարակէ՞ Զեր հայրենարադա շնչով»:

Ցանկանում ենք, որ դեռ երկար տարիներ ապրէ՞ և գործէ՞ ի վառս մեր ազգային ինքնուրեան:

Երախտագիտութեան և իիացման զգացումով՝

ԵՐԵՒԱՆԻ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԱՆՈՒԱՆ ԹԻՒ 151  
Դպրոց-Վարժարանի Տնօրէնուրիւն, դպրոցական խորհուրդ

## ԶԵԽ ԹԱՐԳՄԱՆ ԶՈՒՀԻ ՎԵՐԱ ՊՈՌԻ ՐՈՎԱՅԻ ՆԱՄԱԿԸ «ՆԱՅԻՐԻ»ԻՆ

Մ.Խ. Մեր ուշադիր ընթերցողները հանելի անակնկալ մունեցան եք «ՆԱՅԻՐԻ»ի Օգոստոս 12 և 26 համարներուն մէջ կարդացին չեխ բարգմանչունի, հայասէր, Վ. Սարոյեանի գործերու բարգմանիչ, շատ համակրելի Վերա Պոռուրովայի մասին:

Մեզի համար պատիւ և ուրախալի էր իր բարգմանչական գործունեութեան մասին կարդալ Պրահայի Կարլի անուան համալսարանի փիլիսոփայութեան ֆակուլտետի հայագիտութեան բաժնի դասախոս Վաղարշակ Նահինեանի յօդուածը:

Այնպէս կը քուի, որ այս «գործակցութեան» առքած գոհունակութիւնն ու հանոյեր երկուստեք զգացուած է....

Այս մասին կը վկայէ հետեւեալ յուզիչ նամակը, որ Վերա Պոռուրովա դրկած է «ՆԱՅԻՐԻ»ի խմբագրութեան:

### ՄԵԺԱՐԳՈՅ ՊԱՐՈՆ ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻ

Նախ թոյլ տուէք օգտուել առիթից և առաջին իսկ նախադասութեամբ Զեզ, Զեզ գրչակից խմբագիրներին և յատկապէս ձեր պահանջկուտ ու բարձրաճաշակ ընթերցողներին յղել շատ հասարակ, բայց նաեւ շատ թանկ ու իր մէջ աշխարհ պարունակող մի գեղեցիկ բառ՝ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ, Վ. Սարոյեանի չեխսերէն թարգմանութիւնների առմիւր իմ մասին Զեր պատկառելի թերթում յօդուած զետեղելու համար: Զեմ չափազանցում, իմ մասին շատ են գրել: Գրել են անգլերէն, չեխսերէն, Փրանսերէն, ռուսերէն, նկարահանել են, և այլն: Բայց մեսրոպատառ գեղեցիկ հայերէնը մի ուրիշ հմայք ու հնչեղութիւն ունի: Ինձ թող ների իմ ժողովուրդը, բայց ինձ թուում է, որ հայերէնը աշխարհի լեզուների թագուհին է....

Երբ Պր. Վ. Շահհնեանը՝ մեր ընդհանուր բարեկամը [այժմ հաստատ կարող եմ նրան այդպէս կոչել], ինձ ուղարկեց «ՆԱՅԻՐԻ»ի Օգոստոսի 12 և 26 համարները, շատ յուզուեցի ու հենց առաջին միտքը, որ ծագեց, վճռեցի որոնել, փնտուել, գտնել հարկաւոր բառեր, որով հարաւոր կը լինի երախտագիտութիւնս յայտնելու Զեզ այդ հաճելի անակնկալի համար, սական ոչ մի բռնարանում այդքան թանկ բառ չկայ, ինչպիսին հայերէնի շնորհակալութիւնն է:

Այս պահին ձեռքիս է Դոկտ. Սիսակ Վարժապետեանի «Հայերը Լիբանանի մէջ» արժանապիշտակ աշխատութիւնը, որը ինձ տրամադրել է մեր բարեկամը: Զեզ՝ Հերոս ժողովուրդ անուանելը քիչ է: Այս ի՞նչ ճակատագիր է բաժին ընկել աշխարհով մէկ սփոռուած Զեր տաղանդաւոր զաւակներին: Ինչեւէ, սա խօսակցութեան այլ թեմա է, երկու տողով ոչինչ չեմ ասի: Զեմ ցանկանում այս անկապ երկտողս աւարտել տիսուր նոտայով: Թող Բարձրեալը ուժ ու եռանդ ներարկի ամէն հայի, կորով ու համբերութիւն՝ իր նպատակին հասնելու ճանապարհին:



Երախտագիտությամբ և բարեկամական

մաղթանքներով՝

Վերա Պոռուրովա

քաղ. Պրահա, Չեխական Հանրապետություն

25-ը սեպտեմբերի, 2003 թվականի

ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԶՈՒԵՆՔ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԵԱԼՆԵՐՈՒՆ

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆ ՌՈՒԲԵՆ  
ՍԵՒԱԿԻ ԿՆՈԶ՝ ԺԱՆՏԻ ՍԵՒԱԿԻՆ  
27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1915-ԻՆ ԼՈԶԱՆԷՆ  
ՊՈԼԻՍ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ  
ՈՒՂԱՐԿԱԾ ՄԵԿ ՆԱՄԱԿԸ, ՈՐՈՒՆ ՄԵԶ,  
ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԻԲՐ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝  
ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԷ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(ԿՐԵԺ ՈՂԻՔՆԵԱՆ)

1985-թ. Ռուբեն ի վեր մեր  
գրութիւններուն հետեւող-

Ռուբեն նկատած են թերեւս, որ 1915-ի  
հայկական ցեղասպանութեան մէջ իբր  
պատասխանատու ամբաստանած ենք  
թուրքերուն չափ և նոյնիսկ թուրքերէն  
ալ աւելի՝ Գերմանացիները և անոնց  
ետեւ գտնուող Սիոնիստները:

1985-ին հրատարակուած մեր «Ռու-  
բեն Սեւակ և Փրցուելիք ուղեղներ»  
գիրքին մէջ, առաջին անգամ ըլլալով  
հրապարակեցինք մեծ հայասէր կարծը-  
ւած Johannes Lepsius-ի գերմանական  
վաւերաթուղթերու գիրքէն հատուած-  
ներ, որոնց մէջ Johannes Lepsius, Ռուբեն  
Սեւակին կնոց ժաննի Սեւակին և անոր  
մօր՝ Մարի Աբէլին հայկական ցեղաս-  
պանութեան իբր պատասխանատու գեր-  
մանացիները ամբաստանող մասերը չեին հրատարակուած:

1919-թ. ին, Պերլինի մէջ լոյս տեսած ժ. Լեփսիուս-ի այս գիրքը շատ մը հայ  
մտարականներու ծանօթ էր: Բայց ոչ մէկ հայ գրող, 1919-էն մինչեւ 1985-թ. ը.,  
Լեփսիուս-ի գիրքին մէջ գտնուող Ռուբեն Սեւակի վերաբերեալ վաւերաթուղթե-  
րու մասին արտայայտուած էր:

Հակառակ որ ժ. Լեփսիուս-ի այս գիրքին մէջ, Ռուբեն Սեւակ 1915-ի եղեռնի  
նահատակ միակ բանաստեղծն էր, որուն նահատակութեան մասին (անկատար  
ըլլալով հանդերձ) շատ կարեւոր վաւերագրեր կային:

Աւելին՝ Լեփսիուս-ի վաւերագրերու այս գիրքը՝ ֆրանսերէնի ալ թարգման-  
ուած էր: Եւ մենք, ապշութեամբ նկատեցինք, որ այս թարգմանութեան մէջ,  
Ռուբեն Սեւակի մասին վաւերագրերը չեին հրատարակուած:

Այստեղ կրկին պիտի ըսենք՝ թէ Ռուբեն Սեւակ, մանաւանդ դաշնակցական-  
ներուն կողմէ գիտակցաբար անտեսուեցաւ, և նպատակաւոր, մոռացութեան  
ենթարկուեցաւ, և Ռուբեն Սեւակի դիւցազնական և զարհուրելի կեանքի պատ-  
մութիւնը, քօղարկուեցաւ:

Որովհետեւ այս կուսակցութեան ղեկավարները, այդ շրջանի մանաւանդ,  
մասոնական-սիոնիստական իշխանութեան ենթարկուած էին, և անոնց հրա-  
հանգները կը գործադրէին:

\*\*

Այստեղ կը հրապարակենք բացառիկ փաստաթուղթ մը:

Այս փաստաթուղթին մէջ Ռուբեն Սեւակին կինը՝ ժաննի Սեւակ, իր ձեռագ-  
րով կ'ամբաստանէ գերմանացիները, իբր պատասխանատու հայկական ցեղաս-  
պանութեան:

Այս գրութիւնը, ժաննի Սեւակին Լոզանէց 27 Հոկտեմբեր 1915-ին, Պոլսու՝ գերմանական դեսպանատուն ուղարկած մէկ նամակն է:

Ժաննի Սեւակ, Պոլսոյ մէջ, գերմանական դեսպանատունէն իր ամուսինին նահատակութեան լուրին տեղեկանալէ յետոյ, 18 Սեպտեմբեր 1915-ին, Պոլսէն կը մեկնի իր երկու զաւակներուն և մօրը հետ, դէպի Զուհցերիա:

Եւ ժաննի Սեւակ, Լոզան հասնելէ միջոց մը ետք, ամուսինին ցաւը սրտին մէջ ըլլալով, այս անգամ նամակով մը կը դիմէ Պոլսոյ գերմանական դեսպանատունը, որ գերմանացիները գոնէ ազատեն ՄՆԱՅԵԱԼ ՀԱՅԵՐԸ, ԹՐՋԱԿԱՆ ԲԱՐԲԱՐՈՍԻԹԵՆԵՆ:

Ժաննի Սեւակին այս նամակը՝ վեհանձնութեան և բարեսրտութեան բացառիկ մէկ արտայայտութիւն է:

Ժաննի Սեւակին ծեռագիր նամակին պատճէնը [ուղղուած Պոլսոյ գերմանական դեսպանատուն] մեզի նուիրեց Փրօֆ. Վահագն Տատրեանը 5-10-1992-ին: Զայն, իր պրատուլմներուն շնորհիւ, գտած էր այն ատենուան Գերմանիոյ մայրաքաղաքը եղող Յոնո-ի պետական արխիւներուն մէջ:

Այստեղ, կրկին մեր խոր երախտագիտութիւնը կը յայտնենք Փրօֆ. Վահագն Տատրեանին:

- 9. Nov. 1915

9701

10 12

179

An die Kaiserlich Deutsche Botschaft in Konstantinopel.

Folgende Bitte gestatte ich mir ganz ergebenst einzutragen:

Bitteien Sie um Gütte, hielten durch regelmäßiges allererstgeichstes Einbreiten bei der türkischen Behörde, die Unschärheit dieser furchtbaren Anschuldigung. Richten Sie durch definitiven Befehl, was noch zu retten ist. Das Blut der Unschuldigen, Frauen, Kinder, Kranken und Greis schreit zum Himmel, da Deutschland mit einem Flüche treffen könnte, wenn es nicht alles tut was in seinen eigenen Kräften steht.

Um Liefster Erfordert  
zeichne ganz ergebenst,

j.

III

Heleno Klingsorien ges. Quell.

322.

Խառնեն 27. October 1915.

BTK97 2

Կը հրապարակենք նախ սյս գերմաներէն նամակին հայերէն թարգմանութիւնը (Գերմաներէնէ հայերէն թարգմանութիւնը կատարեց Զուլցերիոյ հայ Առաքելական եկեղեցին հոգեւոր հովիւը՝ Արժանապատիւ Տէր Աբէլ քահանայ Մանուկեան, որուն կը յայտնենք մեր շնորհակալութիւնները):

Լոզանի մէջ, ժաննի Սեւակին հոգեկան չարչարանքը՝ կրկնակի էր: Ան կը տառապէր, Ռուբէն Սեւակի նահատակութեամբ: Եւ ան կ'ողբար իր ամուսինին կորուստը:

Բայց, նոյն ատեն, իր սրտին մէջ ունէր այն զարհութելի մղձաւանջը, որ Ռուբէն Սեւակի նահատակութեան և հայ ազգին ցեղասպանութեան ենթարկուելուն պատասխանատուները՝ գերմանացիներն

### Կայսերական Գնրմանիոյ Դնսպամութիւնն ի Կոստանդնուպոլիս

Թոյլ տուեք համակ նուիրումով ննրկայացնել հետևեալ խնդրանքը

Թրքական պաշտօնեութեան մօտ ամենաագրու կնրպավ նորէն միջամտելով, ի սկզ Աստուծոյ, ասսացուցէք այս սարսափնլի գրպարտութիւնները: Վճռական երամանուկ մը սազատեցէք, ինչ որ կարծի է փյկել: Անմնη կանանց, նրմխամերու, հիւանդներու և ծննդրու արիւմը, որ մինչն նրկինք կը պոռայ, Գնրմանիոյ վրայ նզովք, Գնրմանիոյ վրայ ամէծք կրմայ քերիլ, եթէ ան չ'ընէ այն ամէնո, ինչ որ կը գտնուի իր նրկաթեայ ուժնուն ննրքոյ:

Ամենախսրին յարգանքով,  
Կը ստորագրեմ քալորամուելի՝

Լօգոսն, 27 Հոկտեմբեր 1915

Հելեն Չիլինկիրնան, ծնեալ Ապնլ

Էին, այսինքն՝ իր ցեղակիցները, իր արիւնը կրող իր եղբայր ազգակիցները:

Եւ ժաննի Սեւակ չէր ուզեր հաւատալ այս սարսափելի իրականութեան:

Թէեւ, Պոլսոյ մէջ, իր ապրած վերջին տառապալից օրերուն, Պոլսոյ Գերման իշխանաւորներուն իր ամուսինը փրկելու համար որեւէ ազդու միջամտութիւն չկատարելը տեսնելով, հասկցած էր իրականութիւնը:

Բայց արդեօ՞ք... միշտ հարցական մը կար իր մէջ:

Իբր գերմանացի իր մէջ ունեցած այս յանցապարտի զգացումը. տեւական կը չարչարէր զինքը:

Այդ պատճառով, այս հոգեկան ընդվզումով գրեց Պոլսու. իր ազգակիցներուն. Պոլսոյ գերմանական դեսպանատան որ ապացուցանեն, եթէ կրնան, թէ սուս է, սարսափելի զրպարտութիւն այն ամբաստանութիւնը, որ հայ Ազգին ցեղասպանութեան պատասխանատուները գերմանացիներն են:

Եւ «ԶՐՊԱՐՏՈՒԹԵԱՆ» սուտ, անհիմն ըլլալուն ապացոյց - հաստատուածին սպասելով հանդերձ, իր այս նամակով կը խնդրէր նաև, Պոլսոյ գերմանական իշխանաւորներէն, որ գոնէ հրամանով մը փրկեն մնացեալ հայերը. ուր «ԱՆ-ՄԵԴ ԿԻՆԵՐՈՒՆ, ԵՐԱԽԱՆԵՐՈՒՆ, ՀԻՒԱՆԴՆԵՐՈՒՆ ԵՒ ԾԵՐԵՐՈՒՆ ԱՐԻՒՆԸ ԵՐԿԻՆԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ»:

Եւ կրօնային ընել գերմանացիները՝ այս ամենակենսական մարդկային միջամբ տութիւնը, երբ 1915-ին, գերմանիոյ «ԵՐԿԱԹԵԱՅ ՈՒԺԸ» ամենազօր իշխանաւորն էր Թուրքիոյ մէջ:

Եւ ժաննի Սեւակ մարգարէական նախատեսութեամբ մը զգուշացուց գերմանացիները՝

Եթէ, ձեր ունեցած երկաթեայ ուժով [Թուրքիոյ մէջ 1915-ին, գերմանացիներն էին այդ երկրին տէրն ու տիրականը] չփրկէք մնացեալ հայերը. անոնք անէծք պիտի տեղացնեն ձեր գլխուն:

Եւ 1939-էն սկսեալ մինչեւ այսօր, գերմանիան ենթարկուած է ժաննի Սեւակի նախատեսած անէծքին: Այսօր գերմանիան, ամէն օր, կ'ապրի «Հոլոքոսթ» ըսուած մղձաւանքը:

\*\*

Եւ գերմանացիներու «Երկաթեայ ուժը», որեւէ բան չըրաւ ազատելու համար հայերը:

Ընդհակառակը:

Գերմանացիները, մինչեւ 1918-ը թիկունք կանգնեցան հայերուն դէմ կատարուած թրքական բարբարոսութիւններուն:

Եւ Արեւմտահայաստանը «Գողգոթա»յի մը վերածուեցաւ:

Որովհետեւ այսպէս որոշած էին Սիոնիստները:

Հայաստանը պիտի ոչնչացուէր, որ անոր տեղը զօրաւոր և միակտուր Թուրքիա մը ստեղծուի:

Այսպիսի Թուրքիա մը անհրաժեշտ էր իրենց ապագայ «Մեծն Խրայէլ»ի ստեղծման համար:

\*\*

Ժաննի Սեւակ տեսաւ և շատ լաւ հասկցաւ կատարուած սադրանքները:

Հեռացաւ գերմանացիներէն և գերմանիյէն:

Եւ մինչեւ վերջին շունչը ֆրանսա ապրեցաւ՝ իբր հայ: Եւ մանաւանդ՝ գերմանական անցագիրը նետեց և նախընտրեց իր ամուսնին՝ Ռուբէն Սեւակին պատկանած «Ազգ»ին հպատակութեամբ ապրիլ:

\*\*

Մենք այսօր ֆրանսայի մէջ, կը տեսնենք ու կ'ապրինք ժաննի Սեւակին, գերմանացիներու յատուկ կեցուածքին արդիւնքը եղող եղելութիւնը:

Ռուբէն և ժաննի Սեւակներու որբացած երկու զաւակները՝ Լետնը և Շամիրամը ֆրանսա կապրին:

Մանաւանդ՝ Շամիրամ Սեւակը, որ Նիս կ'ապրի, միշտ տեսնելու առիթը կ'ունենք:

Եւ ամէն անգամ որ Շամիրամին կը հանդիպինք, իր մէջ կը տեսնենք ժաննի Սեւակին, գերմանացիները հայկական ցեղասպանութեան պատասխանատու նկատելով գերմանական արմատներէն հեռանալը, և այդ պատճառաւ ալ իր զաւակներուն գերմանին սորվեցուցած չըլլալուն արդիւնքը:


(→է, 3)

ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ ՈՈՒԹԵՆ ՍԵՒԱԿԻ ԿՆՈԶ ԺԱՆՆԻ ՍԵՒԱԿԻՆ ... (Օպէ 2-ԷԳ)



Lausanne, le 28 mars 1919.

CERTIFICAT de NATIONALITE



Le BUREAU de la COLONIE ARMENIENNE de LAUSANNE ,atteste que le porteur  
de la présente:

Mme Semiramis Tchilinguiian originarie de Երևան (Ալեմայք)  
né . le . . . . . I. 9. 0 est de par son mariage


De NATIONALITE ARMENIENNE acquise.

en foi de quoi le présent certificat lui a été délivré.  
Mme Semiramis Tchilinguiian, née à Consalé en 1914, et le petit Leon Vahakn  
Tchilinguiian, né à Lourou en 1912. Nationalité arménienne.  
Lausanne le 28 mars 1919

Le Secrétaire:



Le Président:



Այսօր Շամիրամ, և նոյնպէս Լեւոն մէկ բառ գերմաներէն չեն գիտեր:  
Մանաւանդ, Շամիրամը բոլորովին վերադարձած է իր հօրը, այսինքն հայկական արմատներուն:  
Շամիրամը այսօր, 90 տարեկան է:

Եւ ան, գրեթէ ամէն տարի, Հայաստան կ'այցելէ:

Միշտ եերկայ կ'ըլլայ Ռուբէն Սեւակի անուան դպրոց-վարժարանին հանդիսութիւններուն:  
Շամիրամը իր հայրը՝ Ռուբէն Սեւակը չէ ճանչցած. անոր նահատակութեան տարին ինք մէկ տարեկան էր:

Եւ Շամիրամ, Երեւանի Ռուբէն Սեւակի անուան դպրոցին մէջ, իր ճանչցած հօրը կարօտը կ'առնէ:

Բացադիկ երեւոյթ մըն է, Շամիրամը 90 տարեկանին բոլորէս ալ աւելի երիտասարդ է՝ թէ՝ երեւոյթով և թէ՝ աշխուժութեամբ:

Եւ իր բանաստեղծական ծիրքերով ու պերճախօսութեամբ՝ ձեւով մը իր հայրը կը մարմնացնէ:  
Թուրքերը սպացնեցին Ռուբէն Սեւակը իր 30 տարեկանին:

Բայց Շամիրամ, իր 90 տարեկանին մէջ, ձեւով մը Ռուբէն Սեւակի վերածնունդն է:

Բնութիւնը հրաշալիք մըն է՝ իր անբացատրելի երեւոյթներով:

TÜRKLERİN (SÖZ DE) BILMEDİKLERİ GERÇEKLERİ AÇIKLIYORUZ

## *TÜRK BASINI VE EDIRNEKAPIDAKI ÇINGENE MAHALLESINDE PARA VERILEREK OYNATILAN, TIYATROVARI ÇINGENE KAVGALARI*

NE DENSE, TÜRKÇE GAZETRELERİ OKUYUNCA, AKLIMIZA, BIR ZAMANLAR EDIRNE-  
KAPIDAKI ÇINGENE MAHALLESİNDEKİ GOSTERMELIK KAVGALAR AKLIMIZA GELİR.

MEDIA GAZETELERİNİN HERGÜNKÜ BASLIKLARI, 20 SANTIMLIK PUNTOLARLA.

VE NE ARGO KELIMELER. VE BILHASSA NE PALAVRALAR NE YAYGARALAR. TAM EDIR-  
NEKAPIDAKI ÇINGENE KAVGASI AYARINDA YAZILAR.

FAKAT BAZEN TÜRKÇE GAZETELERDE ÇOK CİDDİ YAZILAR DA GÖRÜRÜZ..

18 EKİM 2003 TARİHLİ HÜRRIYET GAZETESİNİN "BASINDAN SEÇMELER" SAHI-  
FESİNDEN İSMET BERKANIN "IRAKTAKI KIRK TILKI" BASLIKLI YAZISI O CİDDİ YAZILAR-  
DAN BIRİ.

İSMET BERKAN BU YAZISINDA, IRAKDAKI BUGÜNKÜ DURUMU ÇOK İYİ TESMIS EDE-  
REK DIYOR Kİ.

"AMERİKA SIYASETİNİN AMACI, SUNNILERİ VE ŞİİLERİ BIRBİRİNE VURDUTARAK,  
IRAKTA UZUN MÜDDET KALMAKTIR".

ÇOK DOGRU. MALÜMYA, MESHUR DEYİMDİK. "PARÇALA VE HÜKMET".

DÜNYAYA HAKIM OLAN KUVVETLERİN BASLICA SIYASETİDİR BU.

SON ZAMANLarda AMERİKANIN YUGOSLAV BİRLİĞİNİ PARCALIYARAK KÜCÜK KÜ-  
CÜK DEVLETLERE BÖLMESİ BU SIYASETİN SONUCUDUR. BU PARÇALANAN BALKAN  
DEVLETLERİNDE BUGÜN EN BÜYÜK AMERİKAN ASKERİ ÜSLERİ KURULDU.

DÜNYA DÖNÜYOR VE DEVAMLI DEĞİSIYOR. BÜYÜK KUVVETLERİN STRATEJİSİ DE  
DEĞİSİYOR.

BÜYÜK DEVLETLER, DÜNYA HAKİMIYETLERİNİ DEVAM ETTİRMEK İÇİN, BAS KALDI-  
RAN, ÇOK KUVVETLENEN VE SIMARANLARIN BASINA VÜRMAYA MECBURDURLAR.

UYANAN ISLAM TEHLİKESİNE KARSı AMERİKA, AFGANİSTANI VURDU, İRAKİ PARÇALADI.  
YARIN SIRA KİMDƏ?

BİZ ZANNEDİYORUZ Kİ SIRA TÜRKİYEYE GELECEK.

TÜRKLER YARIN 100 MİLYON OLMA RÜYASINI GÖRÜYORLAR.

TÜRKLERİN TURANCILIK VE ISLAMCILIK IDEALLERİNİ DE, HERKES BİLİR.

AMERİKA BU TEHLIKEYE KARSı, İLK IS OLARAK KUZEY İRAKTA BIR KÜRT DEVLETİ  
KURUYOR.

SONRA? SONRASINI BİLMEK İÇİN MÜNECCİM OLMIYA LÜZUM YOK.

SIRA TÜRKİYEDEKİ YIRMI MİLYONDAN FAZLA OLAN KÜRTLERE GELECEK.

8. Q.

**ԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՆՔ ԹՈՒՐԹԵՐՈՒՆ [ԻԲԲ ԹԷ] ԶԳԻՏՑԱՌ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ԹՐՔԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ ԵՒ ԷՏԻՐՆԵԳԱՓՈՒԻ ՄԷջ  
ԳՆՉՈՒՆԵՐՈՒ ԹԱՂԱՄԱՍԸ, ԴՐԱՄ ՏՐՈՒԵԼՈՎ ԿԱՏԱՐՈՒՈՂ,  
ԳՆՉՈՒՆԵՐՈՒ ՃԻՆՇՈՒ ԿՈՒԻՆԵՐԸ**

Ի՞նչ է պատճառը, չենք գիտեր: Թրքերէն թերթերը եթէ կարդալու ըլլանք, մեր միտքը կու գայ՝ ժամանակ մը առաջ, ետրինէզափուի գնչուներու թաղամասին մէջ կատարուող գնչուներուն շինծու կոհիւները: Թրքական ժողովրդական թերթերուն ամէնօրուայ վերտառութիւնները 20 սանդիմնոց (PUNTO) ներով է:

Եւ ի՞նչ գոնիիկ խօսքեր, և մանաւանդ՝ ի՞նչ պոռոտախօսութիւններ, ի՞նչ պոռչտուքներ:

Եւ ետրինէզափուի գնչուներուն կոհիւներուն մակարդակով գրութիւններ:

Բայց, երբեմն, թրքական թերթերուն մէջ, շատ լուրջ գրութիւններ ալ կը տեսնենք:

18 հոկտեմբեր 2003 թուակիր HÜRRIYET թերթին, «մամուլէ հատընտիրներ» էջին մէջ, ISMET BERKAN-ին «իրաքի մէջի քառասուն աղուէսները» վերնագրով գրութիւնը, այս լուրջ գրութիւններէն մէկն է:

Խսմէթ Պերքանը, այս գրութեան մէջ, իրաքի կացութիւնը շատ լաւ ախտածանաչելով կ'ըսէ թէ՝

«Ամերիկան քաղաքականութեան նպատակը այսօր, Առևնիները և միիները իրարու դէմ հանելով, իրաքի մէջ երկար ատեն մնալ է»:

Ճատ Ֆիշդ է. ինչպէս որ գիտէք, ճանօթ կարգախօս է՝ «Բաժանէ և իշխէ»:

Աշխարհի իշխանութեան տէրերուն առաջնակարգ քաղաքականութիւնն է այս:

Վերջին շրջաններուն, Ամերիկային եռւկոսլաւիոյ միութիւնը քանդելով զայն մանր-մանր պետութիւններու վերածնելը՝ այս քաղաքականութեան արդիւնքն է: Այս բաժանուած Պալքանեան երկիրներուն մէջ այսօր, Ամերիկան շատ մեծ զինուորական խարիսխներ կառուցուեցան:

Աշխարհ կը շարունակէ դառնալ, և տեւարար փոփոխութիւններ կը կատարուին: Խոյնպէս՝ մեծ պետութիւններուն ռազմավարութիւններն ալ կը փոխուին:

Մեծ պետութիւնները, իրենց աշխարհակալ իշխանութիւնը կարենալ շարունակելու համար, ըստիպուած են՝ գլուխ վերցնողներուն, շատ ուժնացողներուն և «շփացած» ներուն գլխուն զարնել:

Ամերիկան «արթնցող» իսլամական վտանգը կանխելու համար՝ Աֆղանիստանը զարկաւ, և իրաքը կտոր-կտոր ըրաւ:

Վաղը, կարգը որո՞ւն պիտի գայ:

Մենք կը կարծենք, թէ կարգը Թուրքիոյ պիտի գայ:

Թուրքերը, միջոց մը յետոյ, 100 միլիոն ըլլալու երազը կը տեսնեն:

Թուրքերուն, թուրանական և իսլամական իտէալներն ալ՝ բոլորին ճանօթ են:

Ամերիկան, այս վտանգին դէմ, առաջին գործ ըլլալով, չիւսիսային իրաքի մէջ, քրդական պետութիւն մը կազմելու վրայ է:

Ցետո՞յ: Ցետոյ ի՞նչ ըլլալիքը գիտնալու համար, «գուշակ» ըլլալու պէտք չկայ:

Կարգը, Թուրքիոյ մէջ գտնուող, ըսան միլիոնէ աւելի եղող քիւրտերուն պիտի գայ:

8. 2.

**ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԵԻ  
«Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՇՔԱՆՇԱՆ  
ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆԻՆ**

Կիրակի, 12 Հոկտ. 2003, երեկոյեան ժամը 8-ին, Հ.Բ.Ը.Մ. Տեմիրճեան Կեդրոնին մէշ [Նաֆքաշ], նախաձեռնութեամբ Հ.Բ.Ը.Մ.-Հ.Ը.Ը. «Անդրանիկ» Մշակք. Միութեան, տեղի ունեցաւ մեծարանքի հանդիսութիւն նուիրուած վաստակաշատ գրող, հրատարակիչ, հասարակական գործիչ, վաւերական հայրենասէր Թորոս Թորանեանի:

Բացման խօսքը կատարեց Մարաք Մազաքեան որ հակիրճ ելոյթով մը բացատրեց հանդիսութեան բնոյքը, երախտաւոր մը մեծարելու անհրաժեշտութիւնը և ողջունեց ներկայութիւնը Թ. Թորանեան յորելեարին:

Առաջին բանախօսն էր Կարօ Արրահամեան որ ներկայացուց թժ. Թ. Թորանեան յանձնառու մտաւորականը, գրողը և հրապարակախօսը, որ հետեւողականորէն և եռանդով ծառայած է հայ մշակոյքին ու գրականութեան, հայրենասիրութիւնը դարձուցած գաղափարախօսութիւն: Անդրադարձաւ իր արձակ, բանաստեղծական և հրապարակագրական վաստակին և բարգմանչական գործերուն և անքի յօդուածներուն որոնք, երէ ամփոփուելու ըլլան, կը նան նոր հատորներ կազմել և բարդուիլ արդէն հեղինակած շուրջ հարիւր գիրենրուն վրայ:

Իգապէջ Գայայեանէ ետք որ դաշնակի վրայ յաջորդաբար կատարեց Առնօ Պապանանեանի ու Պերովէնի գործերէն, խօսք առնաւ երկրորդ բանախօսը՝ Բանաստեղծ գրող ու հասարակական գործիչ Պէտք Սիմոնեանը որ բարձր գնահատեց թժիշկ Թորոս Թորանեանը զինք անուանելով զլխագիր Մարդ որ տարած է հրատարակչական ծանրակշիռ աշխատանք, ունեցած մշակութանուելու և ազգօգուտ գործունեութիւն, անսպառ եռանդով ու հաւատալից, աշխատակցելով միաժամանակ բազմաբիւ բերքերու:

Եծանուելէ յետոյ որ գրականութեան, մամուլին, տիպ ու տառին ծառայելը Թ. Թորանեանի տարերքը կը կազմէ, Պէտք Սիմոնեան բնորոշեց յորելեարը ըսելով, որ ան չի կը նար ապրիլ առանց գրելու, ինչպէս կարելի չէ գոյատել առանց չուրի և օդի:

Տիգրան Խաչատութեան Զուրակի վրայ նուազեց «Քամանչա» և «Արաբս» կտորները: Իսկ Արփի Բարդիկեան - Աւետիքեան ընթերցեց Թ. Թորանեանէն ակնարկ մը՝ «Կարօս մնացի հայերէնին»:

Կարդացուեցան ստացուած շնորհաւորական հեռագիրներ՝ Լիրանանէն և այլ երկիրներէ:

Ապա բեմ բարձրացաւ Գերաշ. Տ. Նարեկ Եպս. Ալեմէզեան որ կարդաց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կարողիկոսի Կոնդակը, որով յորելեար Թ. Թորանեան կը պարզեւատրուէր Մեծի Տանն Կիլիկիոյ Կարողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով, որուն յանձնումէն ետք բեմ բարձրացաւ Հ.Ը.Ը. Կեդրոնական Վարչութեան Ա. Պետ Կարօ Ճղղլեան որ, առ ի գնահատութիւն Յորելեարին, հանդիսութեան յուշատախտակը նուիրեց անոր:

\* «ՆԱՅԻՐԻ» ԿԸ ՇՆՈՐՁԱԽՈՐԷ ԻՐ ԱՇԽԱՏԱԿԻՑ ՈՒ ՎԱՂԵՄԻ ԲԱՐԵԿԱՄ ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆՆ «Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՏԱՏՐՈՒԵԼՈՒՆ ԱՌԹԻՒ ԵԻ ԿԸ ՄԱՂԹԵ ԻՐԵՆ ԱՆՍՊԱՌ ԿՈՐՈՎ ՈՒ ՄՇՏԱԴԱԼԱՐ ԳՐԻՑ:

Մի. «Նայիրի»ի նախորդ թիւվ հրատարակած էինք ողջոյնի և շնորհաւորութեան գիրքը, Երեւանի Ռուրէն Սեւակի անուան դպրոցի տնօրէնութեան, ծնողական խորհուրդի և ուսանողութեան կողմէ յղուած հաստատութեան քարերար, Ռ. Սեւակի եղբօրորդի, անոր ազգային-հայրենասիրական ոգիի ու գաղափարներու ժառանգորդ և մերօրեայ արտայայտիչ Յովհաննէս Զիլինկիրեանին, ներկուն մտաւորականին տարեդարձին տորի:

Ստորեւ լոյս կ'ընծայենք, նոյն առքի և պատեհութեամբ դրկուած մէկ հանի ուրիշ շնորհաւորագրեր ալ, որոնք, իրենց բովանդանկութեամբ կը վկայեն, որ Նոր Արարկիրի [Երեւան] Ռուրէն Սեւակի թիւ 151 դպրոց-վարժարանը Ազգային Հերոսի անունին և գաղափարական վեհութեան վայել ու հաւատարիմ կրթական օնախ մըն է:

## ԽՕՍՔ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԱԽՏԻՔԻ

### ՑԱՐԳԼԻ ՊԱՐՈՆ ԶԻԼԻ ՆԿԻՐԵԱՆ

Սրտանց շնորհաւորում եմ Ձեր ծննդեան տարելիցը՝ ցանկանալով առողջութիւն, աշխատանքային սիրանքներ, յաջողութիւններ Ձեր անձնական կեանքում:

Թող հայրենասէրի Ձեր ոգին միշտ վատուի հայրենիքի քարօրութեան ճանապարհին, բող լուսաւոր էջեր քացուեն Ձեր հայրենակարօս ոգու կայծկլտումներից:

Եղէք միշտ մեզ հետ, մեր կողքին, և թէկուզ հայրենիքից հեռու, մենք կը զգանք Ձեր հոգու կորովը, ուժը, սէրը, նուիրումը, և մենք էլ կ'աշխատենք լինել Ձեզ նման ուժեղ, կենսախինդ և հայրենասէր:

Ձեզ յարգող՝ Ռուրէն Սեւակի անուան վեցերորդ կարգի մրցանակակիր, Ռուրէն Սեւակի անուան թիւ 151 դպրոց-վարժարանի հայոց լեզուի  
և գրականութեան ուսուցչուի

ԱՐՄԷՆՈՒՀԻ ԲՈՒՐՄԱՆԵԱՆ

\*\*\*

Դեռ մանկութիւնից ես սիրել եմ կարդալ: Այդ աշխարհն ինձ աննկատելիօրէն ճգել է դէպի իրեն: Այնտեղ ես տեսել եմ քարձր գաղափարներ, վեհ զգացմունքներ, որոնք ինձ լույսան տարել են իրենց ետեւից: Նման քարձր քաների իրականութեան մէջ միշտ հանդիպում, քայց հանդիպում ենք: Սակայն դրանցով ոգեւորում ու դաստիարակում ենք այն ժամանակ, երբ դրանք սոսկ գաղափարներ չեն, այլ գործ, ինքնամոռաց նուիրում: Այդ գործն ու այդքան անշահախնդիր նուիրումը մենք Երեւանի Ռ. Սեւակի անուան թիւ 151 դպրոց-վարժարանի սաներս, տեսել ենք Ձեր հայրենանուէր գործունէութեան մէջ ու հիացել ենք Ձեր մարդկային քարձր յատկանիշներով, զարմացել ենք, որ տարածութեամբ այսքան հեռու գտնուող հայր ոչինչ չի խնայում իր հայրենիքին, իր ժողովրդին ինչ-որ քանով, ո՛չ, նիշտ չասացի, շատ մեծ քանով օգտակար լինելու հարցում:

Մենք Ձեզ նկատում լցում ենք իոր ակնածանքով, երբ դուք տիրում էք Ձեր հայրենիքի «ուտքը քարին դիպչելիս», երբ ուրախանում էք հայրենիքում որեւէ ծաղիկ կրկին ծաղկելիս: Ձեր ողջ գործունէութիւնը ազգասէր սերունդ դաստիարակելու լաւագոյն միշոց է:

Դրա վկայութիւնը մեր՝ Ռ. Սեւակի անուան դպրոց-վարժարանի մանկավարժների և ողջ աշակերտութեան մտածելակերպն է ու այդ մտածելակերպին լիովին համապատասխան անձնանուէր գործունէութիւնը:

Մենք բոլորս այսօր մեծագոյն երախտագիտութեամբ ենք յիշում Զեզ, որովհետեւ Դուք շանք չեք խնայել, որ մենք սովորենք բարեկարգ դպրոցում, որ դաստիարակուենք հայրենասիրական ոգով ու դառնանք հայրենիքին պիտանի մարդիկ:

Անձամբ ես իմ մտաւոր ու հոգեւոր աշխարհում մի ներքին, բարձրածայն շատուած որոշում ունեմ իմ ողջ կեանքի ընթացքում հայրենիքի համար Զեր արածի գոնէ մէկ տոկոսի չափով պէտք զալ հայրենիքին:

Ես իմ ընկերների և իմ անունից շնորհաւորում եմ Զեզ ծննդեան օրուայ առքիւ: Մենք ցանկանում ենք, որ դուք քաշառող լինեք, միշտ այդպէս եռանդուն և միշտ շատ ուրախ: Իսկ այս ամէնը, զիտենք, պայմանաւորուած է ոչ միայն անձնական, այլեւ հայրենիքի, մեր ու համայն մարդկութեան երջանկութեամբ: Զեր մարդասիրութիւնը յայտնի է ամէնին և ամէնուր: Ինչ լաւ կը լինէր, եթէ Զեզ պէս հայերը շատ լինէին աշխարհում:

Փառք Զեզ և բոլոր նրանց, ովքեր Զեզ պէս են մտածում ու գործում, մեծարգոյ Պրօ. Զիլինկիրեան:

**Ռուբէն Սեւակի անուան թիւ 151 դպրոց-վարժարանի**

8-րդ դասարանի աշակերտուիկի

ՅԱՍՄԻԿ ՔՈՉԱՐԵԱՆ

\*\*

Ես շատ ուրախ եմ և երախտապարտ «ՆԱՅԻՐԻ» Շարարաբերքին, որ հնարաւորութիւն է ընձեռնել արտայայտելու իմ սրտի խօսքը մեր ժամանակի լաւագոյն հայերից՝ ազնուագոյն մտաւորականի ու ճշմարիտ հայրենասէրի՝ Ցովիաննես Զիլինկիրեանի ծննդեան օրուայ առքիւ:

Սիրելի՝ Պրօ. Զիլինկիրեան [թոյլ տուէք Զեզ այդպէս կոչել] ի խորոց սրտի շնորհաւորում եմ Զեզ ծննդեան օրուայ կապակցութեամբ, մաղրում եմ քաշառողջութիւն և երկար-երկար տարիների կեանք, քանի-որ Զեր ապրած ամէն մէկ օրը, ամէն մէկ տարին ազգօգուտ, հայրենանուէր գործունէութեամբ է յազեցած...

Մեր կորօնախը Ռուբէն Սեւակի անունով կոչուելուց յետոյ պարտաւորուած զգացինք աւելի խորութեամբ ուսումնասիրել մեծ քանաստեղծի ժառանգութիւնը և հերսական կեանքի պատմութիւնը. մեր առջեւ քացուեց նոր աշխարհ և այդ աշխարհի ամենախաշատեղեակ ու նուիրեալ առաջնորդը եղաւ Ցովիաննես Զիլինկիրեանը, մարդ, որ արեան կանչով էր զգում Ռուբէն Սեւակի պոէզիան, ազգային մտածողութիւնը և ինքն էլ ժառանգորդն էր այդ մտածողութեան ու զաղափարների, ժառանգորդն էր նրա հերոսական ոգու...

Զիլինկիրեանի 1986թ. և 1989թ. լոյս տեսաւ «Ռուբէն Սեւակ և Փրցուելիք Ռւդեղներ» և «Ռուբէն Սեւակի անուան յիշատակի տուն...» գրքերը քացայայտում են Ռուբէն Սեւակ երեւոյրի ազգային մտածողութեան անկրկնելի խորութիւնը:

Այդ գրքերը մեր պատմութեան, յատկապէս Արեւմտահայութեան վերջին դարերի պատմութեան իւրովի մեկնարանութեամբ, Ապրիլ 24-ին յանձեցնող մեր պարտութիւնների պատճառների քացայայտումով, համարձակ ու ճշմարիտ դատողութիւններով, հարուստ փաստերով ու տրամարանուած եզրայանցումներով ինձ համար յայտնութիւն էին: Եւ որ աւելի կարեւոր էր, այդ գրքերում [յետագայում նաև յօդուածներում] ես յայտնաբերեցի սրտի անհուն ցաւ ու ազնուութիւն, մեծ հայրենասէրի տառապալից, խարազանող, բայց անկեղծ շատազող ազնուութիւնը, որով քննադատում են «հեղինակաւոր տեսակէտներն» ու «հեղինակութիւնները»:

Եւ այնուհետեւ «ՆԱՅԻՐԻ» Շարարաբերքում պարբերաբար տպագրուող յօդուածները ընթերցելը ինձ համար դարձան պահանջմունք:

Զիլինկիրեանի ամենատսես աշխն ու միտքը քափանցում են աշխարհում տեղի ունեցող քաղաքական ու տնտեսական երեւոյրների խորքը, և մէկը միւսի հետեւից

տպագրում են ամենատարրեր թեմաներով յօդուածներ, միշտ նոյն անկաշառ ու ազ-  
նիւ գրիչը, նոյն հարուստ գիտելիքներն ու հզօր տրամարանուրիւնը: Եւ իւրաքանչիւր  
յօդուածից մեր առաջ պատկերանում է մեծ մարդասէրը, որի սիրտը ցաւում ու ըմ-  
բռուսանում է ունահսպուած արտարութեան համար, որի պայմարը յանուն նշարտութեան  
և արդարութեան է, ընդդէմ կեղծիքի, ստի ու բռնուրեան...

Իր յօդուածներում Զիլինկիրեանը բազմիցս անդրադարձել է Հայաստանի վերջին  
տասնամեակի իրադարձուրիւններին, մեր նոր ողբերգուրեանը՝ արտագաղրին, մեկ-  
նարանել տարրեր երեւոյքներ ու վեր հանել մեր արատները, բննադատել սեփական  
ժողովրդի խաղաքական անհեռատետրիւնն ու սխալները, բայց միշտ մնացել որպէս  
իր ժողովրդին սիրող որդի, որի համար բանկ է ժողովրդի ամէն մի բեկորը, ամէն մի  
թիզ հողը, որի համար բանկ է ու կեանեի իմաստ Հայ Դատը...

Կարդում ես այդ յօդուածները ու մտածում. «Երէ մեր պատմութեան ընթացքում  
անցեալ ու ներկայ գործիչներից, խաղաքական այրերից շատերը այսպէս մտածէին  
[այսպէս են գործել - Վարդանանք], ապա այսօր տարրեր կը լիներ Հայաստանի ու հայ  
ժողովրդի վիճակը...»:

Այդ մտածողուրիւնը, որ շարունակուրիւնն է Ռուբէն Սեւակի գաղափարականի,  
մեր պատմութեանը այլ ընթացք, այլ ուղղուրիւն կը տար, և այդ ուղղուրեամբ առաջ-  
նորդուելիս գուցէ մենք կը խուսափէինք Ապրիլ 24-ից և չկինք ունենայ նոր պարտու-  
րիւններ...

«ՆԱՅԻՐԻ»ի թիւ 201-ում կարդացի Զիլինկիրեանի յօդուածը, որտեղ նա սրտի  
տառապանելով է խօսում երկրի այսօրուայ դրութեան մասին, որ, ցաւօֆ, հեռու չէ  
իրականուրիւնից...»

Ակամայ յիշեցի կոստան Զարեանի հետեւեալ խօսքերը. «Խելօֆ է մեռնել անկախու-  
թեան համար, բայց անկախուրիւն ձեռք բերել մեռնելու համար, յիմարուրիւն է»...

Սեպտեմբերի 21-ը նաեւ մեր երրորդ հանրապետութեան անկախուրեան օրն է:  
Այդ անկախուրիւնը որքան էլ տառապալից է, չեմ հաւատում, որ մեռնելու համար է  
մեզ տրուած: Որքան էլ օտարածին և օտարամուտ ուժերը ազգադաւ ուժերի հետ մի-  
ասին փորձեն մեռցնել մեզ, միեւնոյն է, ժողովրդի հաւաքական գենը կը մէկտեղուի  
և դուրս կը շարտի մոլախոտը իր միշից:

«Այն ժողովուրդը, որ չի կամենում մեռնել, չի մեռնի»: Վկան Ռուբէն Սեւակի  
մարմարէ ներկայութեամբ Մասիսներին նայող դպրոցի ամէնօրեայ պարզ ու տմնալից  
աշխատանքով, հայեցի խօսք ու զրոյցով յագեցած աշխատանքային առօրեան...

Վկան Սեպտեմբերի 21-ին՝ Անկախուրեան օրը ծնուած Յովիաննէս Զիլինկիրեան  
հայորդին, որի խօսքը հեռուից հեռու սրտեր է բռրքում և՝ աշխարհասիւռահայու-  
թեան մէշ, և՝ Հայաստանում, վկան այն կենսունակ գենը, որ կոչւում է Հայ, Արմէն...

Որքան էլ «Աստծոյ ընտրեալ ազգը» գատի համաշխարհային տիրապետութեան,  
միեւնոյնն է, նոյան Տապանը Արարատի վրայ է հանգրուանել, ուրեմն և Արարատից  
է կեանքը յորդել երկրագնդի չորս ծագերը... Ինչպէս կարող է կեանեի աղրիւրը ցա-  
մանել...»:

Ես հաւատում եմ մեր ժողովրդի իմսատութեանը, ես հաւատում եմ նրա անմա-  
հուրեանը, որովհետեւ առանց հաւատի անհնար է ապրել այս հոդի վրայ...

Այդ հաւատով եմ ես ամէն առաւօտ դասարան մտնում և սկսում եմ իմ դասը հա-  
յի ու հայրենասիրութեան, հայերէնի ու հայ մշակոյթի մասին...

Մեր ժողովուրդը հարուստ է սրի հերոսներով, սակայն նրա ինքնութեան ճանա-  
պարհին սրի հերոսներից մեծ գործ են արել գրի հերոսները...

Եւ այսօր նրանցից մէկի՝ Հայ Դատի շերմ պաշտպան, տաղանդաւոր պատմարան-  
իրապարակախոս, նշարիտ հայրենասէր, աշխարհի թիւ 1 սեւակագէտ Յովիաննէս Զիլինկիրեանի  
ծննդեան օրն է... Շնորհաւոր ծնունդի, Գրչի մեծ հերոս. Թող Աստծոյ  
ամէնակարող աշը պահապան լինի Քեզ, Գերդաստանիդ և Տառապեալ ազգիդ...

Ռուբէն Սեւակի անուան թիւ 151 դպրոց-Վարժարանի

Հայոց լեզուի և գրականութեան ուսուցչուիի՝

ՄԱՐՕ ՄՈՎՍԻՍԵԱՆ

## ՀԱԴՐՈԴԱԳՐՈՒԹԻՒՆ

**«ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ» 22-ՐԴ  
ՀԱՏՈՐԻ ԵՐԵՒԱՆԻ ԾՆՈՐՀԱՀԱՆԴԵՍԸ ԵՒ  
«ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ՎԻՇԱԿԸ ԵՒ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ» -  
ՄԻԶԱՋԴԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ  
«ՀԱՆԴԵՍ»Ի ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ**

Մասնակցելու համար «ՀՀ»ի 22-րդ հատորի Երեւանի մէջ կայանալիք շնորհահանդէսին, և ներկայացնելու համար «Հանդէս»ը Հայագիտական Ա. Համաժողովին, 8 Սեպտեմբեր 2003-ին «Հանդէս»ի խմբագրական կազմին կողմէ Պր. Արմէն Խորենական մեկնեցաւ Երեւան:

Չորեքշաբթի 10 Սեպտեմբեր 2003, կ. ետք ժամը 2-ին, Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան և Արուեստի Թանգարանի սրահին մէջ տեղի ունեցաւ շնորհահանդէսը ներկայութեամբ 60-է աւելի մտարականներու, «ՀՀ»ի տարբեր հատորներուն աշխատակցած հայագէտներու, Հայաստանի մէջ գործող Հայ Աւետարանչական Ընկերակցութեան պատասխանատուններու, զանազան գիտառութեանական հաստատութիւններէն հրաիրեալներու: Ներկայ էին հեռատեսիլի կայաններու և թերթերու թղթակիցներ:

Բացման խօսքը կատարեց «Հանդէս»ի Հայաստանի ներկայացուցիչ՝ Արծուի Բախչինեանը, որմէ ետք ելոյթ ունեցաւ Արմէն Խորենական, որ ներկայացուց «Հայկազեան Հայագիտական Հանդէս»ը, ընդգծելով «Հանդէս»ի հիմնական ուղղութիւններէն երեքը՝ գիտականութիւն, նիւթերու տեսականի և առարկայականութիւն: Ան ամփոփ գիծներով ներկայացուց նաև հայագիտութիւնը այժմէական գիտութեան մը վերածելու խմբագրական կազմի մտահոգութիւնները:

Ելոյթ ունեցան նաև Պատմական Գիտութիւններու Դոկտոր, Փրոֆեսէօր Պարոյ Մուրատեան և Հրանոյշ Խառատեան: Զոյգ ելոյթ ունեցողներն ալ մեծապէս դրուատեցին «Հանդէս»ի տարբեր բաժինները: Դրական արտայալութիւններ եղան նաև հայագիտութիւնը այժմէականացնելու «Հանդէս»ի շանքերուն վերաբերեալ: Առաջարկուեցաւ աւելի տեղ տալ Հայաստանի մէջ ցարդ անկալտ մնացող, բայց սփիտքին քաջածանօթ հայագէտներու աշխատանքներուն ու անոնց վաստակի ուսումնասիրութեան, սփիտքահալ կեանքի ու մտահոգութիւններու գիտական վերլուծումը լատուկ ուշադրութեան առարկալ դարձնել, ուսումնասիրել հայոց մասին օտար հեղինակներու գործերը և... «Հանդէս»ը հրատարակել տարին երկու անգամ:

Ելոյթ ունեցաւ նաև Հայ Աւետարանչական Ընկերակցութեան Հայաստանի ներկայացուցիչ Վերապատուելի Ռընէ Լեւոնեան, որ ներկայացուց Հայկազեան Համալսարանը իբր Հ.Ա.Հ.-ի իրագործումներէն մին,

ՄԵՐ ԱՅՍ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԲ ԶՈՆԵՆՔ. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐԵԱԼՆԵ

**ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ԿԵԱՆՔԻՆ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԷՆ ՄԷԿ ԷԶԸ ԻՍԿԱԿԱՆ  
ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է**

**ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ՔՐՈԶ ՀԱՑԿԱՆՈՒԾ ԶԵՎԻԿԵԱՆԻ  
[ԾՆԵԱԼ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ] ԱԿԱՆԱՏԵՍԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ**

«ՀԱՅՐՍ, ԵՐԲ ԻՄԱՅԱԻ, ԹԷ ՈՈՒԲԵՆ ՕՏԱՐ  
ԱՂՋԿԱՆ ՄԸ ՍԻՐԱՀԱՐՈՒԱԾ Է, ԾԱՏ ԲԱՐԿԱՅԱԻ ԵԻ  
ԱՆՈՐ ԴՐԱՄ ՈՒՂԱՐԿԵԼԸ ԴԱԴՐԵՑՈՒՅ:  
ԵԻ ԱՅՍ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՄԷԶ ԸՍԱԻ ԹԷ՝  
“O, ARTIK BENİM OGLUM DEGIL” –  
«ԱՆ, ԱՅԼԵՒՍ ԻՄ ԶԱՒԱԿՍ ԶԷ»

«ՎԵՐՋԱՊԵՍ, ՍԷՐԸ ՄԻՇՏ ԿՈՅՐ Է,  
ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ ՕՐԵՆՔ ԶԻ ՃԱՆՉՆԱՐ:  
ԵԻ ՍԱԿԱՅՆ, ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿ, ԾԱՏ ՀԱՑՐԵՆԱՍԵՐ ԵԻ  
ԱԶԳԱՍԵՐ ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԸԼԼԱԼՈՎ, ԱՅՍ  
ՊԱՐԱԳԱՆ ՊԱՐՏ ԷՐ ԶՄՈՌՆԱԼ: ՀԱՅ ԿՈՂԱԿԻՅ ՄԸ  
ՊԵՏՔ ԷՐ ԸՆՏՐԵՐ ԻՐԵՆ: ԲԱՑՅ, ԱՆ ՍԻՐԱՀԱՐԵՅԱԻ  
ԱՅՍ ԳԵՐՄԱՆԱՅԻ ԱՂՋԿԱՆ»:  
«ՈՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆԸ» Փարիզ-1989-Էջ14- Յ. Չ.

ՅՈՎԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ  
(ԿՐԵԺ ՈՈՒԲԵՆԵԱՆ)

Այստեղ, ձեր ուշադրութիւնը կը հրահիրենք՝ 100 տարի իրամէ հեռաւորութեամբ երկու հայ անհատներու՝ օտար ամուսնութիւն կատարած իրենց զաւակներուն մասին ունեցած արտայայտութիւններուն՝

1.— 1909-թ.ին, Ռուբէն Սեւակի հայրը, որ օտարի մը սիրահարած իր զաւակին դեմ իր զայրոյթը կը յայտնէ ըսելով՝ «ԱՆ ԱՅԼԵՒՄ, ԻՄ ԶԱՒԱԿՍ ՉԵ»:

2.— Եւ այս քուականէն 100 տարիներ յետոյ ուրիշ հայ մը, Նարլ Ազնաւուր անունով, որ Սփիւթի մէջ «Հայոց Քագաւորը» կը միատեսի, իր զաւակներուն և քուներուն օտարներուն հետ ամուսնանալուն պատճառաւ, իր գոհունակութիւնը հետեւեալ խօսքերով կ'արտայայտէ... «Հրեայ քուներ ունիմ, աղջիկ մը որ կէս մաղքեացի զաւկի մը մայր պիտի ըլլայ: Ամուսնացած եմ քողոքականի մը հետ շուտացի], Առաքելական եմ, տղայ մը ունիմ որ կէս Հայիրիցի կնոշ մը հետ կ'ելլէ: Միւս տղուս ըսի որ երէ Զինացիի մը հանդիպի, աշխարհի ամէնէն գեղեցիկ պատկերը կը կազմուի»:

«Մարմարա» - Պոլիս - 24-9-2002-էջ 3»

Մենք կը հաւատանք, որ հարիւր տարիներու տարբերութեամբ այս երկու հայերու արտայայտութիւններուն մէջ շատ դիւրութեամբ կրնանք տեսնել՝ «Հայկականութեան» ոգիին անկումը և կործանումը:

Մինչեւ հարիւր տարիներ առաջ հայերը, իբր մեծ ազգի մը շառաւիղները և ժառանգորդները, սուրբ մասունքներու նման կը պահպանէին իրենց նախնիքներէն փոխանցուած բոլոր աւանդութիւնները և մանաւանդ՝ հոգեկան «Արժէքները»:

Եթէ Շոյնիսկ. թրքական քարքարոսութեան պատճառաւ, հայերէն չէին խօսեր, բայց իրենց հոգիներուն մէջ, հայկականութեան հուրը միշտ վառ էր:

Մինչեւ այսօր հայերը, առանց թրքական եաթաղանին սպառնալիքին ենթակայ ըլլալու, պարզապէս աւելի լաւ պայմաններու մէջ ապրելու երազով, իրենց հայրենի բնօրրանը կը լցեն, և օտար հողերու վրայ, հոգիով և մարմնով հայութենէ կը հեռան և կ'այլասերին:

Արդեօք հայ ժողովուրդը, հարիւր տարիներու ընթացքին, ինչպէ՞ս ենթարկուեցաւ այս ահուելի գաղափարական և հոգեկան անկումին:

Բնական է՝ ասոր առաջնակարգ պատճառը 1.— Մասնաւորապէս 19-րդ դարուն սկսած և 1915-ին իր գագաթնակէտին հասած թուրքերուն կատարած Եղեռնը է, որ մեր հայրենիքը քանդեց և հայութիւնը ոչնչացուց: 2.— Մեր համոզումով, երկրորդ պատճառը՝ Սովորական Միութեան մէջ Խրուշչեևի սկսած, արեւմտեան նորաձե-

տութեամբ կեղծ «ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ» շարժումն է, որ Սովետական ժողովուրդներուց մէջ սպաննեց իսկական Կոմունիզմի իտէալը և հաւատքը: Եւ ասոնց տեղ, Սովետական ժողովուրդներուն մէջ ներմուծեց՝ եսասիրութիւնը և ի գին ամէն բանի անձնական շահ դիզելու և անոր կառչելու գաղափարները: Յ. Եւ Սփիտքի մէջ ալ, հայութեան իր աւանդական ազգային արժեքները կորսնցնելուն պատճառը, բնական է՝ նախ օտար հողին պարտադրած այլասերման օրէնքները են:

Բայց, մեզի համար, ամէնէն կարեւոր պատճառը՝ Սփիտքի մէջ, հայուն թշնամիներուն սադրիչ ծրագիրներուն հետեւանքով, հայ քաղաքական կեանքին ենթարկուած պառակտումն է:

Որուն ազդեցութեամբ՝ հայկական միացեալ հայրենասիրական ճակատ մը չկըրցանք ստեղծել:

Եւ սփիտքի քաղաքական կեանքին վրայ իշխեցին՝ օտարներուն ծրագիրները գործադրող կեղծ ազգայնական շարժումները, որոնց կեղրոնը [մեզի համար ցաւալի է կրկնելը] Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնն է:

\*\*\*

Մենք, շատ անգամ կը մտածենք, թէ ինչպէ՞ս Ռուբեն Սեւակի նման հայրենասէր և ազգասէր մտաւորական մը, գերմանուրի մը սիրած և անոր հետ ամուսնացած է:

Ասոր պատճառը կը կարծենք, թէ մարդկային բոլոր զգացումներէն վեր, «Սէր» ըսուած հզօրագոյն հոգեկան զգացումն է:

Այս «Սէր»ը, մանաւանդ երիտասարդական տարիներուն, ոչ մէկ օրէնքի կ'ենթարկուի, և ոչ մէկ տրամաբանութեան կանոնի կը/հետեւի:

Ռուբեն Սեւակի պարագան կրնանք բացատրել միայն անոր ենթարկուած «Կայծակնային Սէր»ով, զոր միայն կ'զգան հոգեկան բարձր արժանիքներ ունեցող անձնաւորութիւններ:

Ռուբենի և ժաննի հոգեկան կապին որ «Բարձրագոյն Սէր» կ'որակենք, իրենց այս աննախընթաց սիրոյն բոլոր հոգեկան արտայայտութիւնները կը տեսնենք Ռուբենի Լոգանէն Գերմանիոյ Երֆուրդ քաղաքը՝ ժաննին ուղարկած նամակներուն մէջ:

Իշխացքով մը Պոլսոյ դժոխքէն փրկուած այս նամակներուն պատմութիւնը՝ ասկէ առաջ, «ՆԱՅԻՐԻ»ի մէջ, մանրամասնութիւններով հրապարակած էինք: Ռուբեն Սեւակի սիրային նամակներուն պատճենները այսօր կը գտնուին երեւանի Գրականութեան և Պատմութեան թանգարանը, իսկ բնագիրները՝ Նիսի Ռուբեն Սեւակի անուան Ցիշատակի Տան մէջ: Ֆրանսերէն լեզուով գրուած Ռուբեն Սեւակին այս նամակները արեւմտահայերէնի թարգմանեց՝ Արրահամ Ալիքեան: Եւ Ալեքսանդր Թոփչեանի խմբագրութեամբ 1996-ին Երեւանի մէջ հրատարկուեցաւ՝ Ռուբեն Սեւակ՝ «ԵՐԿԵՐ»՝ հատոր 2 անունով:

Ռուբեն Սեւակի նամակը մանաւանդ, 15 Դեկտեմբեր 1909-ին Լոգանէն Երֆուրդ՝ ժաննին գրուած, 8 էջնոց, սիրահար զոյգին համար շատ կարեւոր և ճակատագրական մտերմագիր մըն է:

Այս նամակէն յայտնի կ'ըլլայ, որ 18 տարեկան ժաննին փափաքն էր՝ դերասանուրի ըլլալ:

Եւ Ռուբեն Սեւակ, իր պատճառաբանութեամբ՝ բոլորովին հակառակ էր անոր դերասանուրի ըլլալու փափաքին:

Ռուբեն Սեւակի այս նամակը՝ ծեւով մը սիրային վերջնագիր էր:

Ժաննի վերջնականապէս հրաժարելու էր դերասանուրի ըլլալու փափաքէն, այլապէս՝ իրենց կապը վերջ պիտի գտնէր:

Բայց, մեզի համար, այս նամակին ամէնէն կարեւոր մասը այն է, ուր Ռուբեն Սեւակ կը պատմէ, որ ինք ժաննին «սիրոյն համար» նախընտրած է նոյնիսկ «քաժնուիլ իր ծնողընքէն»:

Ռուբեն Սեւակի ժամանից  
ուղղած իր 8 էջնոց նամակին  
ամեն մեկ տողը՝ իսկական «կեանքի փիլի-  
սոփայութիւն» մըն է:

Ռուբեն Սեւակ ժամանից ծանօթացած էր  
1907-ին. Լոգանի մէջ:

Սենք. այս 15 Դեկտեմբեր 1909 թուակիր  
նամակին մէջ, Ռուբեն Սեւակին յայտնած  
գաղափարներուն հետեւելով կ'ենթադրենք.  
որ Ռուբեն, ժամանից հետ իր ծանօթանակն  
2 տարի յետոյ, այլևս մտածել սկսած էր  
իրենց ապագայ կեանքին մասին: Եւ կ'ու-  
զէր ժամանից երիտասարդական ցանկու-  
թիւններուն վերջ մը տալ, և զինք ուղղել  
դէպի իր ծրագրած կեանքին ճամբան:  
Եւ այդ թուականնեց յետոյ գրուած նամակ-  
ներէն հետեւցնելով կը տեսնենք. թէ ժան-  
նի բոլորովից ընդունած է Ռուբեն  
Սեւակին տեսակէտները:

Այստեղ կը հրապարակենք Ռուբեն Սեւա-  
կի ծեռագրով 15 Դեկտեմբեր 1909-թ. նա-  
մակին առաջին և վերջին էջերը (իբր վկա-  
յութիւն), իսկ նամակին հայերէն թարգմա-  
նութիւնը՝ կու տանք ամբողջութեամբ:

\*\*

*Clin' Tanci,  
Tu devrais me refaire déführéer en  
celle question :*

*1° Tanci fait prison d'école  
2° Il t'a fait faire la punition à son tour dimanche  
3° Il t'a fait punir et le voisin lui a mis.*

*Or, vas-tu garder une punition ? Ou vas-tu  
la renvoyer ?*

*(T'as fait je n'aurai pas à faire l'école.  
Tu devrais laissons faire ou je n'aurai pas  
l'école, mais je ne veux pas être cloué !)*

*C'est bien sûr... Tu sais... Tanci prend toute  
ce que tu as fait. Il ne va pas faire une  
malice. On connaît, je fais ce qui  
réalise. Et voilà comment !*

*À Cluny, je parle avec lui, et  
on voit que dit lui de clin' fille  
et il est... C'est autre, tu as dit aussi  
que tu voulais être autre. Ce n'est pas*

Սիրելի ժաննի,

Դուն իմ վերջնական պատասխաններս  
կը խնդրես հետեւեալ հարցերուն շուրջ.

1.— Ես սիրոյ խօսք էի տուած:

2.— Խօսք էի տուած քեզի, թէ կրնաս  
դերասանուհի դառնալ:

3.— Խօսք էի տուած ցկեանս ծառայել  
քեզի:

Արդ, կ'ուզե՞մ արդեօք այս խոստում-  
ներս յարգել, թէ՞ դրժել զանոնք:

Ըստի՞ քեզի չեմ ներեր «դրժել» բառը:

Պէտք է լաւ կշռադատէիր, որ ես ոչ թէ  
ղրծել կ'ուզեմ, այլ՝ ուրիշ բան]:

Այո՛, ես եմ խոստացած քեզի այդ բո-  
լորը և դեռ չեմ մոռցած: Ընդհակառակը,  
կը ջանամ իրագործել զանոնք: Եւ ահա,  
թէ ինչպէս:

Նամբերիին մէջ, զրուցելով, մենք բա-  
ւական խենթ ու արբեցուցիչ բաներ ըսինք  
իրարու: Ի միջի այլոց, դուն յայտնեցիր  
նաև, թէ կ'ուզէիր դերասանուհի դառնալ:  
Առաջին անգամ չէ, որ ես նման բաներ կը  
լսէի: Գրեթէ բոլոր տասնվեցամեայ աղ-  
ջիկները խոստովանած էին ինծի, թէ կը  
սիրեն երազներու աշխարհը, թէ Խոհալին  
ծառայելու, մարդկութիւնը դաստիարա-  
կելու, մարդիկը հիացնելու և դեռ չեմ գի-  
տեր ի՞նչ խենթ ու խելառութիւններու  
համար կը փափաքին նուիրուիլ բեմին:  
Պատանութեան, նորաձեւութեան յատուկ  
խօսքեր են ասոնք: Ժամանակի ընթացքին  
մարդ կը մոռնայ այս բոլորը և երկրային  
ու անցողիկ կեանքին մէջ ընտանեկան բարեկեցիկ օջախ մը ստեղծելով կը գոհանայ...:

Կարծեցի, թէ դուն ալ պիտի մոռնաս: Այն ատեն չուզեցի քեզ վշտացնել, ուստի դէմ  
չգացի բաղձանքիդ, քանզի կը տեսնէի, որ շատ ջղային ես և հոգիով հիւանդ: Խնայեցի  
քեզի:

### Ա.Հա՛ եղած-չեղածը:

Սիրոյ երկուք ու կէս տարիներու ընթացքին դուն այլևս բերանդ չբացիր պնդելու հա-  
մար, թէ կ'ուզէիր անպայման դերասանուհի դառնալ: Միակ բանը, զոր միշտ, ամէն  
վայրկեան և բացարձակօրէն ցանկացած ես, իմ կինս ըլլալդ է եղած:

### Ճի՞շդ է, թէ ոչ:

Բայց ահա, երկու ամիսէ ի վեր, դժբախտացուցիր զիս հազար ու մէկ անգամ կրկնուած  
միակ նախադասութեամբ. «Կ'ուզեմ դերասանուհի դառնալ, կ'ուզեմ դերասանուհի  
դառնալ, կ'ուզեմ դերասանուհի դառնալ...»:

Այն ատեն, ես ուզեցի երրորդ խոստումս յարգել. «Ցկեանս ծառայել քեզի»:

Ի՞նչ պէտք է ընէի քեզի ծառայելու համար: Եթէ միամտօրէն քաջալերէի քեզ դերա-  
սանուհի դառնալու ցանկութեանդ մէջ, մինչև աւարտն օրերուդ քեզ ԱՆԴՈՒՆԴԻՆ մէջ  
հրած պիտի ըլլայի:

Եւ ամէն ինչ ըրի գահավիժելուդ արգելք հանդիսանալու համար:

Չարութի՞ւն կը կոչես ասիկա: Կը կոչես ղրժո՞ւմ:

Է՛ս ուրեմն, կեցցե՛ս, ժաննի՛:

Հիմա, որ բացատրեցի ամրող հարցը, կ'ուզեմ աւելցնել մէկ հատիկ կէտ մըն ալ, զոր  
դուն կ'անգիտանաս:

Գիտես, ո՞ր ծնողքս շատ կը սիրեն զիս, և որ ես ալ ամբողջ սրտով կը սիրեմ զիրենք:  
Բայց ճշդիւ չես գիտեր, թէ քու պատճառովիդ ի՞նչ անցաւ-դարձաւ իմ և ծնողքիս միշն:  
[Չվշտացնելու համար սիրտդ, երբեք չէի ուզեցի խօսիլ քեզի այս մասին]: Միայն գիտցիր,  
որ ես նախընտրեցի բաժնուիլ ծնողքէս, քան քեզմէ...»

Բայց ահա, հիմա կը հարցնեմ ինքզինքիս. ահա աղջիկ մը, զոր կը սիրեմ: Իր գեղեց-  
կութեան համար չէ, որ կը սիրեմ զայն [քանզի ճանչցած եմ աւելի գեղեցիկներ, որ կը սի-  
րէին զիս]: Չեմ սիրեր դրամին համար [չէ՞ որ այնքան հարուստ հարսնացուներ (→էր 3)]

νιστ στη λεωφ., il t'ακούει, il  
f'ακούει πριν το μελλον για τη  
απειλή, il το γενικό λόγο  
της στάσης, ή Επίσημη απόσταση  
της Δημόσιας Διοίκησης  
το Στρατό

le 15 dec. 197

Καναρά

D. S. - On cette dernière condition,  
L'État n'offre la force pour la  
défense, et donc le moyen à faire  
des actes (c'est à dire viol). Telle  
en latin.

Πατέντες

## ՈՌԻԲԵՆ ՍԵՒԱԿԻ ԿԵԱՆՁԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՄԷՆ... (Ծար Հջ 2-էթ)

**մերժեցի:** Չեմ սիրեր աղքային զգացումիս պատճառով [քանզի դուն զերմանուհի մըն և միայն]: Ուրեմն կը սիրեմ պարզապէս ԽԾԷԱԼԱԿԱՆՆ ՍԻՐՈՑ համար: Արդ, ի՞նչ կը տեսնեմ: Կը տեսնեմ, որ այդ աղջկան պատճառով բացարձակապէս դժբախտ դարձուցի նոողքս ու զիս: Բայց այս հանգամանքը չէր երեւեր աշքիս: Կ'ուղէի ամէն ինչ զոհել յանուն այս Սիրոյ: Հիմա կը հարցնեմ ինքովինքիս: ինչո՞ւ զոհեմ նոողքս ի սէր աղջկայ մը, որ չ'ուզեր նոյնիսկ թատերական քմայք մը զոհել ինծի համար....:

Ուրեմն...

Եւ յետոյ՝ դուն կը մոռնաս ուրիշ բան մըն ալ: Գրեթէ ամէն նամակիդ մէջ կը գրէեր, թէ կարելիդ պիտի ընես երջանկացնելու համար նոողքս:

Դերասանուհի դառնալո՞վ կ'ուզես երջանկացնել զանոնք....:

Աւարտելու համար՝ ուշադրութիւնն կը հրահրեմ ամենակարեւոր կէտին վրայ: Եթէ դերասանուհի ըլլալ պնդես, կը դառնաս աշխարհի ամենաեսասէր արարածը: Քանզի ուշադրութեան չես առներ որեւէ մէկը, բայց քեզմէ: Ուշադրութեան չես առներ հարազատ նոողքդ [քանզի շատ դժողով են], ուշադրութեան չես առներ իմ հարազատ նոողքս [որ այդ պատճառով շատ դժբախտ պիտի զգան իրենք զիրենք], և բնաւ ուշադրութեան չես առներ զիս, որ ահա երկու ամիսէ ի վեր կ'աղաղակեմ, թէ այդ մտադրութիւնդ զիս չափազանդ կը վշտացնէ....:

Կը տեսնես, որ այս պայմաններուն մէջ, ՍէՐԸ անկարելի կը դառնայ, կատարելապէս եսասէր էակի մը հետ:

Սէրը զոհութիւն կը պահանջէ, ինկ դուն չես ուզեր ոչինչ զոհարերել:

Հիմա, չո՞ւտ պատասխանէ ինծի. կ'ուզե՞ս դերասանուհի ըլլալ, այո, թէ՞ ոչ:

